Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Լալ
795

2009

№ 787

7·95

Ի. ՏՈՒՐԳԵՆԵՒ

ՀԱՅՐԵՐ ԵՒ ԶԱՒԱԿՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՄՈՒՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

(Արտատպած «Լումայ» երկամսեայ հանդիսից)

2145

ԹԻՖԼԻԶ
Տպարան Տ. Ռօտինեանց
1904

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библ.
ՀԱՅԿ-ССР

Дозволено цензурою, Тифлисъ. 23-го января 1903 года.

795-2009

(48,75-59)

48792

ՀԱՅՐԵՐ ԵՒ ԶԱՒԱԿՆԵՐ

I

Հ՞ը, ինչ է Պետր, դեռ չե՞ն երեւում։

Այս ասողը քառասունն անց մի տղամարդ էր, որ 1859 թ. մայիսի 20-ին, գլուխը բաց, փոշոտ վերարկուով ու վանդանկար վարտիկ հագած, դուրս եկաւ *** տանող խճուղու վրայ շինած քարվանսարայի ցածլիկ պատշգամբն ու հարցրեց իւր ծառային։ Ծառան երիտասարդ էր, ուռած թշերով, սպիտակուուն աղուամաղը ծնօտին ու մանրիկ մարած աչքերով։ Ամեն բանից — թէ փիրուզէ օղից, թէ օծած բազմագոյն մազերից, թէ քաղաքավարի շարժումներից, մի խօսքով ամեն բանից երեւում էր, որ ծառան նորագոյն, կատարելագործուած սերնդի մարդ էր։ Նա ներողամտաբար նայեցաւ ճանապարհի երկարութեամբ և պատասխանեց.

—Ոչ, չեն երեւում։

—Չե՞ն երեւում,—կրկնեց աղան։

—Չե՛ն երեւում,—նորից պատասխանեց ծառան։

Աղան հառաչեց ու նստաւ փոքրիկ նստարանի վրայ։ Մինչ նա ոտները տակը ծալած նստած է ու մտախոհութեամբ չորս կողմը նայում, մենք ընթերցողին ծանօթացնենք նըրա հետ։

Նրա անունը Նիկալայ Պետրովիչ Կիրսանով է։ Քարվանսարից մի 15 վերստ հեռու գտնւում է նրա պատուական կալուածքը, որ բաղկացած է երկու հարիւր հոգուց, կամ ինչպէս նա ինքը, գիւղացոց ու իւր հողի սահմանները որոշելուց և «ագարակ» հաստատելուց յետոյ ասում էր, երկու հազար դեսեատին հողից։ Նրա հայրը, որ 1812 թ. պատերազմին մասնակցած գեներալ էր, մի կիսակիրթ, կոպիտ, բայց բարի ռուս մարդ, իւր բոլոր կեանքը ծառայութեան մէջ էր անցկացրել, նախ գնդի, ապա և վաշտի հրամանատար էր եղել

և չարունակ ապրում էր գաւառում, ուր իր աստիճանի շնորհիւ բաւական ազդեցիկ դեր ունէր։ Նիկալայ Պետրովիչը իր եղբօր Պաւլի նման, որի մասին յետոյ կխօսենք, ծնուել էր հարաւային Ռուսիայում և մինչև տասնչորս տարեկան հասակը տանն էր դաստիարակութիւնը ստացել՝ էժանագին դաստիարակներով, համարձակ, բայց շողոմարար ադիւտանտներով և ուրիշ զինուորական զանազան անձերով շրջապատուած։ Նրա մայրը, որ Կալեազինների տոհմիցն էր, և աղջիկ ժամանակը Agathe, իսկ գեներալի կին լինելուց յետոյ Ագաֆոկլէա Կուզմինիչնա Կիրսանովա էր դարձել, բարի կին էր, փառահեղ գլխազարդեր ու խշխշած մետաքսէ շորեր էր հագնում, եկեղեցում խաչ համբուրելու առաջինը ինքն էր մօտ գալիս, խօսում էր շատ ու բարձր, թոյլ էր տալիս որ առաւօտները երեխաները ձեռքը համբուրեն, իսկ երեկոները օրհնում էր նրանց,—մէկ խօսքով քէֆին ապրում էր։ Նիկալայ Պետրովիչը, չնայելով որ ոչ միայն մի առանձին քաջասրտութիւն չունէր, այլ մինչև անգամ վախկոտի անուն էր ստացել, որպէս գեներալի որդի, պէտք է, իր եղբօր Պաւէլի նման, զինուորական ծառայութեան մտնէր. բայց հէնց այն օրը, որ տեղեկութիւն եկաւ, թէ նա ծառայութեան մէջ ընդունուած է, ոտքը կոտրուեց և երկու ամիս անկողնին ծառայելուց յետոյ ողջ կեանքը «կաղլիկ» էլ մնաց։ Հայրը ձեռք վերցրեց նրանից ու թոյլ տուաւ, որ ուրիշ գործի լինի։ Հէնց որ տասնութ տարեկան եղաւ, հայրը նրան Պետերբուրգ տարաւ ու համալսարան տուեց։ Եւ իսկ այդ միջոցին եղբայրն էլ գուարդիայի մէջ սպայութիւն ստացաւ։ Երիտասարդները մէկ տան մէջ ապրում էին միասին իրենց մօր կողմից ազգական Իլիա Կալիազինի հեռաւոր հսկողութեան տակ, որ մի նշանաւոր պաշտօնեայ էր։ Նրանց հայրը վերադարձաւ իր գործին և իր ամուսնու մօտ, և երբեմն-երբեմն միայն մի քառորդ թերթ գորշ թղթի կտոր էր ուղարկում, որ լցրած էր լինում գրագրի յատուկ խոշոր-խոշոր գրերով։ Այդ թղթի կտորների տակ հոգածութեամբ ստորագրած էր լինում. «Պիօտըր Կիրսանոֆ, գեներալ-մայիոր»։ Նիկալայ Պետրովիչը 1835 թ. կանդիդատի կոչումով աւարտեց համալսարանը, և նոյն տարին էլ գեներալ Կիրսանովը, որ անաջող զօրախաղ անելուն համար արձակուած էր պաշտօնից, կնոջը հետ բնակութեան համար Պետերբուրգ եկաւ։ Նա նոր էր Տաւրիկեան այգու մօտ տուն

վարձել ու անգլիական ժողովարանի էլ անդամ գրուել, որ յանկարծ կաթուածահար եղաւ, մեռաւ։ Շուտով Ագաֆոկլէա Կուզմինիչնան էլ հետևեց նրան.—նա չկարողացաւ ընտելանալ մայրաքաղաքի խուլ կեանքին. անցեալ կեանքի կարօտը նրան մաշեց։ Իսկ Նիկալայ Պետրովիչն արդէն, դեռ ծնողների կենդանութեանը և ի մեծ ցաւ նրանց, սիրահարուել էր իր տանտիրոջ, պաշտօնեայ Պրեպալովենսկու աղջկանը, որ մի սիրունատես ու, ինչպէս ասում են, զարգացած աղջիկ էր՝—նա ամսագրերի մէջ «գիտութիւն» բաժնի լուրջ յօդուածներն էր կարդում։ Հէնց որ սգոյ օրերն անցան, պսակուեցաւ և, պետական կալուածոց մինիստրութիւնը թողնելով, ուր հայրը հովանաւորների շնորհիւ զետեղել էր նրան, իր Մաշայի հետ երջանիկ օրեր էր անց կացնում նախ Անտառային ինստիտուտի մօտակայքը վարձած ամառանոցում, ապա քաղաքում, ուր մաքուր աստիճաններով ու սառն ընդունարանով փոքրիկ ու պատուական բնակարան էր վարձել, վերջապէս գիւղում, ուր նա վերջնական կերպով բնակութիւն էր հաստատել և ուր շուտով մի որդի ունեցաւ, Արկադի անունով։ Ամուսինները խաղաղ ու շատ լաւ կեանք էին վարում՝—համարեա երբէք միմեանցից չէին հեռանում, միասին կարդում էին, միասին չորս ձեռքով դաշնամուր ածում, երկուսով երգում. կինը ծաղիկներ էր խնամում և հաւանոցի վրայ հսկում, իսկ ինքը երբեմն որսի գնում և պարապում էր տնտեսութեամբ. իսկ Արկադին աճում էր հա աճում—նոյնպէս լաւ ու հանդարտ։ Տասը տարին երազի պէս անցաւ։ 1847-ին Կիրսանովի կինը վախճանեցաւ։ Կիրսանովը հազիւ դիմացաւ այդ հարուածին և մի երկու շաբաթուայ մէջ ալեւորեցաւ. միշտը փոքր ինչ մոռանալու համար ուզում էր արտասահման գնալ... բայց վրայ հասաւ 48 թուականը։ Ակամայ վերադարձաւ գիւղ և բաւական երկար ժամանակ անգործ մնալուց յետոյ սկսաւ տնտեսական բարեփոխութիւններով զբաղուել։ 55 թուին նա որդուն համալսարան տարաւ. երեք ձմեռ համարեա թէ առանց տնից դուրս գալու ապրեց նրա հետ՝ աշխատելով բարեկամութիւն հաստատել Արկադիի նորատի ընկերների հետ։ Վերջին ձմեռս չէր կարողացել գնալ,—և ահա 1859 թ, մայիսին նրան տեսնում ենք բոլորովին սպիտակած, փափլիկ և փոքր ինչ կզացած՝—նա իր որդու ճամբան է նա-

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

յում, որը, ինչպես մի ժամանակ ինքը, կանդիդատի կոչում էր ստացել։

Ծառան վայելչութիւնից դրդուած, կամ գուցէ և չցանկանալով աղայի աչքի առաջ լինել, դարպասի տակը մտաւ ու չիբուխը վառեց։ Նիկոլայ Պետրովիչը գլուխը քաշ գցած նայում էր պատշգամբի խարխուլ աստիճաններին՝—մի խոշոր խայտաբղէտ ճուտ ծանր-ծանր ման էր գալիս աստիճանների վրայ ու իր խոշոր, դեղին ոտներով բարձր-բարձր թխթխկացնում. մի աղտոտուած կատու, կողքը պատշգամբի վանդակին դէմ տուած, անբարեմտութեամբ նայում էր նրան։ Արևն այրում էր. քարվանսարայի կիսամութ նախասենեակից նոր թխած սև հացի հոտ էր գալիս։ Մեր Նիկոլայ Պետրովիչը անուրջների մէջ էր թաղուած։ «Որդիս... կանդիդատ... Արկաշան...» շարունակ պտոյտ էր գալիս նրա գլխի մէջ։ Նա ուզում էր մի ուրիշ բանի վրայ միտք անել, բայց դարձեալ նոյն մտքերն էին գալիս խառնւում։ Միտքն ընկաւ լուսահոգի կինը...։ «Չարժանացաւ» թախծութեամբ շշնջաց նա...։ Մի հաստ կապտառ աղաւնի թռաւ եկաւ ճանապարհի վրայ ու շտապով գնաց ջրհորի մօտ լճակից ջուր խմելու։ Նիկոլայ Պետրովիչը սկսաւ աղաւնուն նայել, բայց ականջին արդէն հասել էր մօտեցող անիւների ձայնը...

—Հէնց գիտենաս նրանք են,—ասաց ծառան դարպասի տակից դուրս գալով։

Նիկոլայ Պետրովիչը վեր թռաւ տեղից և աչքը ճանապարհին ձգեց։ Փոստի ձի լծած եռաձի տարանտաս երևաց. կառքի մէջ փայլեցին ուսանողական գլխարկի շրջապատը, թանկագին դէմքի ծանօթ գծերը...

—Արկաշա, Արկաշա,—կանչեց Կիրսանովը, և վազեց, և ձեռները թափահարեց...

Մի քանի րոպէ անց նրա շրթունքները հպած էին երիտասարդ կանդիդատի անմօրուս, փոշոտ ու արևառ թշին։

II

—Հայրիկ, թող մի շորերս թափ տամ,—ճանապարհից փոքր ինչ խզուած, բայց պատանեկական զիլ ձայնով ասում էր Արկադին՝ ուրախ-զուարթ հօր փաղաքշանքին պատասխան տալով,—տես, քեզ էլ կփոշոտեմ։

—Վնաս չունի, վնաս չունի,—խանդակաթ ժպիտն երեսին ասում էր Նիկոլայ Պետրովիչը, և մի երկու անգամ ձեռքով խփեց որդու վերարկուի օձիքին ու իր վերարկուին։ —Հապա մի տեսնեմ, հապա մի տեսնեմ,—ասաց նա հեռու քաշուելով, ու յետոյ անմիջապէս շտապ քայլերով դէպի քարվանսարան գնաց խօսելով. «ահա այստեղ, այստեղ։ Շուտով ձիանը պատրաստեցէք»։

Նիկոլայ Պետրովիչը իր որդուց աւելի յուզուած էր երևում. ասես թէ փոքր ինչ շշմել էր, փոքր ինչ շշկլուել։

Արկադին նրան կանգնեցրեց։

—Հայրիկ,—ասաց նա,—արի քեզ ծանօթացնեմ իմ լաւ բարեկամ Բազարովի հետ, որի մասին այնքան շատ-շատ գրել եմ քեզ։ Նա այնքան բարի էր, որ համաձայնեցաւ մեզ հետ գալ։

Նիկոլայ Պետրովիչը շտապով շուռ եկաւ և մօտենալով մի երկարահասակ պարոնի, որ փնջաւոր երկայն վերնաշորը հագին նոր էր կառքից դուրս եկել, պինդ հուպ տուեց նրա մերկ, կարմիր ձեռքը. սակայն օտարականը իր ձեռքը իսկոյն չմեկնեց նրան։

—Սրտանց ուրախ եմ,—ասաց նա,—և շնորհապարտ, որ ուզեցել էք մեզ այցելել. յուսամ... խնդրեմ ձեր անուն-հայրանունն ասէք։

—Եւգենի Վասիլև,—ծոյլ, բայց այրական ձայնով պատասխանեց Բազարովը և յետ անելով իր վերնաշորի օձիքը, իր ամբողջ դէմքը ցոյց տուեց Նիկոլայ Պետրովիչին։ Նրա դէմքը երկայն էր և լղար, լայն ճակատով, վերը լայն իսկ ներքևը սուր քթով, կանաչաւուն խոշոր աչքերով և աւազագոյն, կախ ընկած այտմօրուսներով. հանդարտ ժպիտը կենդանութիւն էր տալիս նրա դէմքին, որ ինքնավստահութիւն ու խելք էր արտայայտում։

—Յուսամ, սիրելի Եւգենիյ Վասիլիչ, մեզ մօտ չէք ձանձրանայ,—շարունակեց Նիկոլայ Պետրովիչը։

Բազարովի բարակ շրթունքները հազիւ շարժուեցան. բայց նա ոչինչ չպատասխանեց և միայն փոքր ինչ գլխարկը վերցրեց։ Նրա երկայն և խիտ մուգ-դեղձան մազերը չէին ծածկում ընդարձակ գանգի խոշոր ուռոյցները։

—Ուրեմն ինչպէս անենք, Արկադիյ,—նորից խօսեց Նի-

կալայ Պետրովիչը որդուն դառնալով,—ձիանը հիմի լծել տանք։ Թէ՞ կուզէք հանգստանալ։

—Տանը կհանգստանանք, հայրիկ, ասա թող լծեն։

—Այս րոպէիս, այս րոպէիս,—վրայ տուեց հայրը։—Է՛յ, Պեօտր, լսեցի՞ր։ Դէ, ախպեր ջան, կարգադրիր, շուտ։

Պեօտրը, որ որպէս կատարելագործուած ծառայ, իր երիտասարդ աղայի աջը չէր առել, հապա միայն հեռուից գլուխ էր տուել, նորից դարպասի ներքև անհետացաւ։

—Ես ուղեկառքով եմ եկել, բայց ձեր տարանտասի համար էլ երեք ձի կայ,—հոգածութեամբ ասում էր Նիկոլայ Պետրովիչը, մինչ Արկադին ջուր էր խմում երկաթէ թասից, որ բերել էր քարվանսարայի տանտիկինը, իսկ Բազարովը չիբուխը վառեց և մօտեցաւ կառապանին, որը ձիանն էր յետ անում։

—Միայն իմ կառքս երկու հոգու տեղ ունի, չգիտեմ թէ բարեկամիդ ինչպէս անեմ..

—Նա տարանտասով էլ կգայ,—ցած ձայնով ասաց Արկադին։—Խնդրեմ նրա համար շատ հոգս մի քաշիր։ Հրաշալի երիտասարդ է, զարմանալի պարզ—այ, կտեսնես։

Նիկոլայ Պետրովիչի կառապանը դուրս բերեց ձիանը։

—Դէ, շարժուիր, հաստամօրուս,—ասաց Բազարովը կառավարին։

—Լսեցի՞ր, Միտիւխա,—վրայ բերեց միւս կառապանը, որ ձեռները մուշտակի քամաքի ճեղքուածքին դրած կանգնած էր այդտեղ,—աղէն ինչ ասաց։ Հէնց հաստամօրուս էլ ես, որ կաս։

Միտիւխան միայն գլխարկը շարժեց և քրտնքած միջնակ ձիու վրայից քաշեց, հանեց սանձը։

—Դէ, դէ, տղերք, դուք էլ օգնեցէք,—բացականչեց Նիկոլայ Պետրովիչը։—Ընծայ կտամ։

Մի քանի րոպէից ձիանը լծած պատրաստ էին. հայր ու որդի ուղեկառքը նստան. Պեօտրը կառապանի կողքին տեղաւորուեցաւ. Բազարովը թռաւ մտաւ տարանտասը, գլուխը թաղեց կաշուէ բարձի մէջ,—և երկու կառքերն էլ առաջ շարժուեցան։

III

—Ուրեմն աւարտեցիր, էլի. այժմ կանդիդատ ես, ու

տուն ես վերադառնում,—ասում էր Նիկոլայ Պետրովիչը ձեռքը Արկադիի երբեմն մէջքին և երբեմն ծնկանը կպցնելով։—Վերջապէս։

—Ի՞նչպէս է, հօրեղբայրս լա՞ւ է,—հարցրեց Արկադին, որ չնայելով անկեղծ, համարեա մանկական ուրախութեանը, որով լցուած էր, ուզում էր շուտով այդ յուզիչ խօսակցութիւնը սովորական խնդիրների վրայ դարձնել։

—Առողջ է։ Ուզում էր հետս քեզ դիմաւորելու գալ, բայց չգիտեմ ինչու յետոյ միտքը փոխեց։

—Իսկ դու վաղո՞ւց է ինձ սպասում էիր։

—Մօտ հինգ ժամ կլինի։

—Բարի հայրիկ։

Արկադին աշխուժութեամբ շուռ եկաւ հօր կողմը և չմփալի համբուրեց նրա երեսը։ Նիկոլայ Պետրովիչը կամացուկ ծիծաղեցաւ,

—Քեզ համար ինչ ձի եմ պատրաստել,—սկսեց նա.—այ, կտեսնես։ Սենեակիդ պատերն էլ պաստառել եմ տուել։

—Բազարովի համար էլ կա՞յ սենեակ։

—Նրա համար էլ կգտնենք։

—Խնդրեմ, հայրիկ, քաղցր աչքով նայիր նրան։ Չեմ կարող խօսքով հասկացնել, թէ ինչքան գնահատում եմ նրա բարեկամութիւնը։

—Նորե՞րս ես հետը ծանօթացել։

—Նորերս։

—Գիտեմ որ անցեալ ձմեռ տեսած չեմ, ինչո՞վ է պարապում։

—Նրա գլխաւոր առարկան—բնական գիտութիւններն են։ Բայց նա ամեն բան էլ գիտէ։ Եկո՞ղ տարի ուզում է բժշկի քննութիւն տալ։

—Հ՛ը՛ը, բժշկակա՞ն բաժնումն է,—նկատեց Նիկոլայ Պետրովիչն ու լռեց։—Պեօտր,—ասաց նա ու ձեռքը մեկնեց։—Այս եկողները մեր գեղացիները հօ չեն։

Պեօտրը աղայի ցոյց տուած կողմը նայեցաւ։ Մի քանի սայլեր, սանձարձակ ձիեր լծած, նեղ ճանապարհով արագութեամբ առաջ էին գլորւում։ Ամեն մէկ սայլի մէջ մէկ-մէկ, կամ շատ-շատ երկու-երկու հոգի էին նստած, մուշտակի կրծքները բաց։

—Այո, մեր գեղացիներն են,—ասաց Պեօտրը։

—Այդ ծուռ են գնում, քաղաք են գնում, ինչ են անում։

—Պէտք է ենթադրել, որ քաղաք են գնում։ Օղետուն,—աւելացրեց նա արհամարհանքով և թեթևակի կառապանի կողմը ծռուելով, կարծես նրան վկայ էր կանչում։ Բայց սա տեղից անգամ չշարժուեց՝—դա հին մարդկանցից էր և նոր աշխարհահայեացքների կուսակից չէր։

—Այս տարի մեծ գլխացաւ մէջ եմ գիւղացիների հետ,—շարունակեց Նիկոլայ Պետրովիչը որդուն դառնալով։—Տուրք չեն վճարում։ Ի՞նչ կանես։

—Իսկ վարձու մշակներից գո՞հ ես։

—Այո,—ատամների արանքից ասաց Նիկոլայ Պետրովիչը։—Ցաւն այն է, որ նրանց էլ տակը լցնողներ կան և դեռ մի առանձին ջանք էլ ցոյց տուած չկան։ Ձիու սարքերը փչացնում են։ Ասենք վարածները վատ չէր։ Էհ, ձուկը ջրում կմեծանայ։ Բայց միթէ այժմս տնտեսական գործերը հետաքրքրում են քեզ։

—Ցաւն այն է, որ դուք ստուերոտ տեղ չունիք,—նկատեց Արկադին առանց վերջի հարցման պատասխանելու։

—Հիւսիսային կողմը պատշգամբի վրայ մի մեծ հովանոց եմ շինել տուել,—ասաց Նիկոլայ Պետրովիչը.—այժմ կարելի է բաց օդումն էլ ճաշել։

—Այդ բանը մի քիչ ամառանոցի կերպարանք պիտի տայ... Էհ, ասենք, այդ բոլորը չնչին բաներ են։ Բայց ինչ օդ է այստեղի օդը։ Ի՛նչ անուշ հոտ։ Ճիշտ եմ ասում, ինձ թւում է, թէ աշխարքիս երեսին այստեղրանքի նման անուշ հոտ ունեցող երկիր չկայ։ Այստեղի երկինքն էլ...

Արկադին յանկարծ կանգ առաւ, ծուռ հայեացք ձգեց ետեւը և լռեց։

—Իհարկէ,—ասաց Նիկոլայ Պետրովիչը,—այստեղ ես ծնուել, այդ պատճառով այստեղի ամեն բանն էլ մի ջոկ բան է թւալու...

—Ոչ, հայրիկ, ասենք այդպէս չէ, մարդս որտեղ էլ ծնուած լինի, նրա համար ամեն տեղ էլ մէկ բան է...

—Ախր...

—Ոչ, բոլորովին մէկ բան է։

Նիկոլայ Պետրովիչն աչքի ծայրովը որդուն նայեցաւ, և կառքը կէս վերստի չափ անցած կլինէր, որ նորից խօսակցութիւն սկսուեց։

—Չգիտեմ գրել եմ թէ չէ, որ քու դայեակդ, Եգորովնան մեռաւ,—սկսեց Նիկոլայ Պետրովիչը։

—Միթէ։ Խեղճ պառաւ։ Իսկ Պրոկոֆիչը կենդանի՞ է։

—Կենդանի է և ամենևին էլ փոխուած չէ, էլի շարունակ դողվում է։ Առ հասարակ Մարինոում մի առանձին փոփոխութիւն չես նկատիլ։

—Էլի միևնոյն գործակատարն է։

—Ոչ, մենակ այդ է, գործակատարին փոխել եմ։ Վճռել եմ ծորտութիւնից ազատուած ընդոծիններից մօտս մարդ չպահել, գոնէ նրանց ոչ մի պատասխանատու պաշտօն չտալ։ (Արկադին աչքով Պետրին ցոյց տուաւ)։ Il est libre, en effet,—ցած ձայնով նկատեց Նիկոլայ Պետրովիչը,—բայց ախր նա սենեկապան է։ Այժմ իմ գործակատարս քաղաքացի է. ինչպէս երեւում է աչքաբաց մարդ է։ Տարեկան երկու հարիւր յիսուն ռուբլի եմ նշանակել։ Ասենք,—աւելացրեց Նիկոլայ Պետրովիչը ճակատն ու ունքերը շփելով, որը միշտ նրա ներքին շփոթութեան նշան էր,—հէնց նոր ասացի, որ Մարինոում փոփոխութիւն չես տեսնիլ...։ Այդ լրիվին ուղիղ չէ։ Պարտքս եմ համարում քեզ նախազգուշացնելու, որ թէպէտ...

Նա մի րոպէ կմկմաց ու յետոյ շարունակեց ֆրանսերէն։

—Խստապահանջ բարոյագէտը իմ անկեղծութիւնս կարող է անտեղի համարել, բայց նախ որ այդ բանը թագցնել կարելի չէ, իսկ երկրորդ էլ քեզ յայտնի է, որ միշտ առանձին սկզբունքներ եմ ունեցել հօր և որդու յարաբերութեան մասին։ Ասենք դու իրաւունք կունենաս ինձ դատապարտելու։ Այս տարիքում...։ Մէկ խօսքով, այն... այն աղջիկը, որի մասին դու, հաւանօրէն, արդէն լսած կլինիս։

—Ֆենիչկան,—անհոգաբար հարցրեց Արկադին։

Նիկոլայ Պետրովիչը կարմրեց։

—Ի սէր Աստուծոյ անունը բարձր մի տալ...։ Այո... Նա այժմ իմ մօտս է ապրում։ Տանը երկու մանր սենեակներ կային... Այնտեղ եմ տեղաւորել։ Ասենք այդ ամենը կարելի է դեռ փոխել։

—Ինչի՞, հայրիկ, ինչ հարկ կայ։

—Բարեկամդ մեզ մօտ հիւր է լինելու... ամօթ է...։

—Խնդրեմ Բազարովի վերաբերմամբ մի անհանգստանալ։ Նա այդպիսի բաներից բարձր է։

—Է՞հ, դու էլ,—ասաց Նիկոլայ Պետրովիչը։—Ցաւն այն է, ջոկ տունն էլ յարմար չէ։

—Զարմանալի մարդ ես, հայրիկ, կարծես թէ դու ներողութիւն ես խնդրում,—վրայ բերեց Արկադին։—Զես ամաչում։

—Ի հարկէ պէտք է ամաչեմ,—ասաց Նիկոլայ Պետրովիչը աւելի ու աւելի կարմրելով։

—Հերիք է, հերիք, հայրիկ ջան։—Արկադին անուշ ժպտաց։ «Տես ինչ բանի համար է ներողութիւն խնդրում» մտածեց նա ինքն իրեն, և դէպի իւր բարի ու կակուղ հօրը տածած վեհանձն քնքշութեան զգացմունքը, միախառնուելով մի տեսակ ծածուկ գերակշռութեան զգացողութեան հետ, լցրեց նրա հոգին։

—Հերիք է, ի սէր Աստուծոյ,—նորից կրկնեց նա ակամայ զուարճանալով իւր զարգացած ու ազատ լինելու գիտակցութեամբ։

Նիկոլայ Պետրովիչը շարունակում էր շփել իւր ճակատն ու մատների արանքովը որդուն էր մտիկ տալիս, և մի բան ծակեց նրա սիրտը...։ Բայց իսկոյն էլ նա ինքն իրեն մեղադրեց։

—Ահա, սրանք արդէն մեր արտերն են,—ասաց նա երկարատև լռութիւնից յետոյ։

—Իսկ այդ դիմացինը կարծեմ մեր անտառն է,—հարցրեց Արկադին։

—Այո։ Բայց անտառը ծախել եմ։ Այս տարի կտրելու են։

—Ինչո՞ւ էիր ծախում։

—Փող էր պէտք. մանաւանդ որ այդ հողն էլ գեղացոց է անցնելու։

—Այն, որ հարկ չեն տալիս։

—Այդ իրանց բանն է. բայց հո մի օր տալու են։

—Ափսոս անտառ,—նկատեց Արկադին և սկսաւ չորս բոլորքը դիտել։

Այդ տեղերքը, որով նրանք անցնում էին, կարելի չէ ասել, թէ գեղանկար տեղեր էին։ Շարունակ, մինչև հորիզոն դաշտեր, անվերջ դաշտեր էին ձգուած, որոնք միայն թեթևակի բարձրանում էին ու նորից իջնում. տեղ-տեղ երևում էին փոքրիկ անտառակներ, և ցանցառ ու ցածլիկ թփերով ծածկուած ոլորապտոյտ ձորակներ, որոնց նմանը

իսկապէս նկարուած երևում են Եկատերինայի ժամանակները քաշուած յատակագծերի վրայ։ Պատահում էին նաև խորը փորուած ափերով գետակներ, և անպէտք ամբարտակներով կազմուած լճակներ, և գիւղակներ, որոնց ցածլիկ խրճիթների կտուրները սևացած, յաճախ կիսով չափ քամուց բացուած էին երևում, և ցախահիւս պատերով կալ անելու ծռուած շինութիւններ և դատարկ մնացած մարագի կողքին բացած ահագին դարպաս, և եկեղեցիներ, ոմանք աղիւսաշէն ու տեղ-տեղ ծեփը թափուած, և ոմանք փայտաշէն, վրայի խաչը թեքուած ու կողքի գերեզմանը ամայացած։ Արկադիի սիրտը կամաց կամաց ճմլւում էր։ Հակառակի պէս հանդիպող գիւղացիներն էլ բոլորը գզլուած էին, անպէտք քոնձրոտ ձիերով. ճանապարհի կողքին բուսած եղևնիներն էլ ցնցոտի հագած աղքատների էին նմանում, կեղևները պլոկած, ճիւղերը կոտրատած. լղար, փրչոտ, կարծես կրծոտած կովերն ագահութեամբ արածում էին առուների մէջ բուսած արօտը. այնպէս էր թըւում, թէ ասես հէնց նոր ազատուած լինէին մէկի դաժան, մահաբեր ճիրաններից—և այս ուժասպառ կենդանիների կերպարանքը, մի այսպիսի գարնանային պատուական օր, մարդու աչքերի առաջ, որպէս ուրուական, պատկերացնում էր անմխիթար, անվերջ ձմեռը իւր բուքերով, սառնամանիքներով ու ձիւներով... «Չէ,—մտածեց Արկադին,—աղքատ երկիր է այս, և ոչ աշխատանք է երևում և ո՛չ ունեւորութիւն. ոչ, ոչ, կարելի չէ այսպէս թողնել, անհրաժեշտ է բարեփոխութիւններ մտցնել... բայց ինչպէ՞ս անել այդ... որտեղից սկսել»...

Այսպէս էր մտածում Արկադին... և մինչդեռ նա խորհում էր, գարունն իւր անելիքն անում էր։ Չորս կողմն ամեն բան կանաչել էր ոսկեւուն, ամեն բան ընդարձակ ու քնքոյշ կերպով յուզւում էր ու պսպղում ջերմ քամու շունչով, ամեն բան—ծառ, թուփ, արօտ, ամեն տեղ անվերջ ու հնչուն հոսանքի նման գեղգեղում էին արտոյտները. վայրի սիրամարգները մէկ ճչում էին հարթ մարգագետինների վրայ սաւառնելիս, մէկ՝ լուռ ու մունջ անց կենում կոշտերի վրայով. տուլաշները գրօսնում էին դեռ ցածլիկ գարնանացանի մէջ և քնքոյշ կանաչի միջև սիրուն կերպով սևին տալիս, նրանք կորչում էին հաճարի մէջ, որ արդէն թեթևակի սպիտակել էր, և երբեմն-երբեմն միայն գլուխներն էին երևում ցանի

ծխացող ալիքների միջից։ Արկադին նայում էր, նայում, և նրա մտքերը կամաց-կամաց թուլանալով անհետ էին լինում...։ Նա մի կողմ ձգեց վերարկուն և մի այնպիսի զուարթ կերպարանքով, մի այնպիսի ջահել տղի նման մտիկ տուեց հօրը, որ սա կրկին գրկախառնուեց նրան։

—Շուտով կհասնենք,—նկատեց Նիկոլայ Պետրովիչը,—հէնց որ այս բլրակը բարձրացանք, տունը կերևայ։ Քէֆ կանենք, Արկաշա. թէ որ չձանձրանաս, ինձ կօգնես տնտեսական գործերի մէջ։ Այժմ հարկաւոր է, որ մենք իրար մօտենանք, միմեանց լաւ հասկանանք, այնպէս չէ՞։

—Իհարկէ,—ասաց Արկադին,—բայց ինչ հրաշալի օր է այսօր։

—Քու գալուդ պատճառով է, հոգիս։ Այս, գարնան ամենալաւ միջոցն է։ Ասենք ես համաձայն եմ Պուշկինին,—յիշում ես Եւգենիյ Օնեգինի մէջ.

Դու ինձ համար թախիծ ես բերում,
Սիրոյ եղանակ, ով գարուն, գարուն.

Ի՛նչ...

—Արկադիյ,—կանչեց Բազարովը տարանտասի միջից,—լուցկի ղրկեա, լուցկի չկայ որ չիբուխս կպցնեմ։

Նիկոլայ Պետրովիչը լռեց, իսկ Արկադին, որ սկսել էր փոքր ինչ զարմացած, բայց և փոքր ինչ համակրանքով ականջ դնել հօրը, շտապով գրպանից արծաթէ տուփով լուցկին հանեց ու Պետրի միջոցով ուղարկեց Բազարովին։

—Սիգար կուզես,—դարձեալ կանչեց Բազարովը։

—Ղրկի՛,—պատասխանեց Արկադին։

Պետրը վերադարձաւ և տուփի հետ Արկադիին տուաւ նաև մի հաստ, սև սիգար. Արկադին իսկոյն սիգարը կպցրեց և իր չորս կողմը սկսաւ մի այնպիսի սուր ու թթու ծխախոտի հոտ փռել, որ Նիկոլայ Պետրովիչը, որ ամենևին ծխելու սովորութիւն չունէր, ակամայ, բայց որդուն չվիրաւորելու համար աննկատելի կերպով, քիթը միւս կողմ էր շուռ տալիս։

Քառորդ ժամից երկու կառքն էլ կանգ առաւ նոր կառուցուած փայտաշէն տան պատշգամբի առաջ. տունը ներկած էր մոխրագոյն ներկով, իսկ երկաթապատ կտուրը-կարմիր։ Հէնց այս էլ Մարյինոն էր, նոյնը Նոր-Շէնը, կամ թէ չէ, գիւղացոց լեզուով, Աղքատ-Ագարակը։

IV

Աղաններին դիմաւորելու համար տնասուն ծառաների բազմութիւնը չեկաւ, պատշգամբ չթափուեց. մենակ մի տասներկու տարեկան աղջիկ երևաց, իսկ նրա ետևից էլ տնից դուրս եկաւ մի երիտասարդ, որ շատ նման էր Պետրին, և հագած էր բաճկոնակի ձևի սպիտակ, արծուեդրոշ կոճակներով մոխրագոյն համազգեստ. սա Պաւէլ Պետրովիչ Կիրսանովի սպասաւորն էր։ Նա անխօս բաց արաւ ուղեկառքի դըռնակը ու յետ արաւ տարանտասի զոգնոցը։ Նիկոլայ Պետրովիչը որդու և Բազարովի հետ անցաւ մութ և համարեա դատարկ դահլիճով, որի դրան ետևից հարևանցի կերպով երևաց մի կանացի երիտասարդ դէմք, և մտաւ ընդունարան, որ արդէն նորագոյն ճաշակով էր կահաւորուած։

—Ըհը, այս էլ մեր տունը,—ասաց Նիկոլայ Պետրովիչը գլխարկը հանելով ու մազերը թափահարելով։—Այժմ առաջին բանն այն է, որ մի լաւ ընթրենք ու հանգստանանք։

—Յիրաւի, վատ չի լինիլ որ մի բան ուտենք,—ձգձգուելով ասաց Բազարովն ու ընկաւ գահաւորակի վրայ։

—Այո, այո. շո՛ւտ, շուտ արէք, ընթրիք բերէք։—Նիկոլայ Պետրովիչն առանց մի ակնյայտնի պատճառի ոտքը գետնին խփեց։—Ահաւասիկ, ի դէպ, Պրակոֆիչն էլ եկաւ։

Ներս մտաւ մի վաթսուն տարեկան ալեոր, լղար և թուխ մարմնով մարդ. նա հագել էր պղնձէ կոճակներով դարչնագոյն պոչապգեստ և վզին վարդագոյն թաշկինակ փաթաթել։ Նա շրթունքները բացած ժպտաց, մօտեցաւ Արկադիի ձեռքը համբուրեց և, հիւրին գլուխ տալով, գնաց քաշուեցաւ դրան մօտ ու ձեռները ետևը դրած կանգնեց։

—Մի լաւ մտիկ տուր, Պրակոֆիչ,—սկսեց Նիկոլայ Պետրովիչը։—Վերջապէս եկաւ... Հ՛ը, ինչպէ՞ս է։

—Շատ լաւ է, ասաց ծերունին ու նորից ժպտաց, բայց և իսկոյն թաւ յօնքերը կիտեց։—Հրամայէ՞ք, սեղան պատրաստեմ,— ասաց նա լուրջ կերպով.

—Այո, այո, խնդրեմ։ Բայց դուք նախ ձեր սենեակը չէ՞ք գնայ, Եւգենիյ Վասիլիչ։

—Ոչ, շնորհակալ եմ, կարիք չկայ։ Մենակ պատուիրեցէք, որ ճամպրուկս տանեն սենեակս. այ մէկ էլ այս շորս,—աւելացրեց նա վրայի երկար շորը հանելով։

—Շատ լավ։ Պրոկոֆիչ, վեր առ նրանց վերարկուն։

Պրոկոֆիչը կարծես տատանուելով վերցրեց Բազարովի «շորը» և, գլխից վերև բռնած, ոտքի մատների վրայ հեռացաւ։

—Իսկ դու, Արկադի, մի րոպէ քու սենեակդ կերթա՞ս։

—Այո, պէտք է փոքր ինչ մաքրուել, — պատասխանեց Արկադին և արդէն քայլերն ուղղել էր դրան կողմը, բայց այդ րոպէին ներս մտաւ միջակ հասակով, անգլիական մութ զգեստ հագած մարդ՝ վզին նոր ձևի ցածլիկ փողպատ, ոտներին լաքաւոր կօշիկ․ այդ Պաւէլ Պետրովիչ Կիրսանովն էր։ Ըստ երևոյթին նա քառասունհինգ տարեկան կլինէր՝—կարճ խուզած սպիտակ մազերը, նոր արծաթի նման, մութ փայլ ունէին․ դէմքը, որ մաղձոտ էր, բայց կնճիռներից ազատ և սովորականից դուրս կանոնաւոր ու մաքուր, այնպէս որ կարծես նուրբ ու հմուտ անդրիագործի ձեռքից դուրս եկած լինէր, զարմանալի գեղեցկութեան հետքեր ունէր՝—մանաւանդ շատ սիրուն էին պայծառ, սև, երկարաւուն աչքերը։ Արկադիի հօրեղբօր ամբողջ կերպարանքը, որ գեղանկար և ազնուատոհմ պատկեր ունէր, պահպանել էր իւր պատանեկական վայելչակազմութիւնը և այն՝ հողից հեռանալու, դէպի վերև գնալու ձգտումը, որ մեծ մասամբ քսան տարեկանից յետոյ անհետանում է։

Պաւէլ Պետրովիչը վարտիքի գրպանից հանեց երկար, կարմրագոյն եղունգներով զարդարուած գեղեցիկ ձեռքը, որ արևակնեայ կոճակաւոր բաղպանի քնքոյշ սպիտակութեան պատճառով աւելի ևս գեղեցիկ էր թւում, և մեկնեց եղբօր որդուն։ Նախ եւրոպական «shake hands»-ը կատարելուց յետոյ նա երեք անգամ, ռուսական սովորութեամբ, համբուրուեցաւ նրա հետ, այսինքն իւր հոտեր քսած պեխերով երեք անգամ կպաւ նրա թշերին ու ասաց․ «բարի եկար»։

Նիկոլայ Պետրովիչը նրան Բազարովին ներկայացրեց՝— Պաւէլ Պետրովիչը իւր ճկուն իրանը խոնարհեց ու թեթևակի ժպտաց, բայց ձեռք չտուեց և մինչև անգամ ձեռքը նորից գրպանը դրեց։

—Արդէն սկսել էի կարծել, թէ այսօր այլ ևս չէք գայ, —հաճելի ձայնով ասաց նա՝ սիրալիր շօրօրով, ուսերը վեր գցելով ու սպիտակ, սիրուն ատամները ցոյց տալով։—Ճանապարհին հօ բան չպատահեց…

—Ի՛նչ պիտի պատահէր․— պատասխանեց Արկադին—

ճանապարհին փոքր ինչ (յետաւանք) քսաս տուինք։ Դրա համար էլ այժմ գայլի նման քաղցած ենք։ Հայրիկ, ասա Պրոկոֆիչը շուտ անի, իսկ ես այս րոպէիս կգամ։

—Սպասի՛, ես էլ հետդ գամ,— բացականչեց Բազարովը տեղից վեր թռչելով։ Երկու երիտասարդները դուրս եկան։

—Ո՞վ է,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Արկաշայի ընկերն է․ նրա ասելով մի շատ խելօք մարդ։

—Մեզ մօտ է մնալու։

—Այո։

—Այս երկարամազը։

—Այո, այո։

Պաւէլ Պետրովիչը եղունգներով սեղանին չխչխկացրեց։

—Ինձ թւում է, թէ Արկադին cést dégourdi, [1]—նկատեց նա։—Ուրախ եմ նրա գալուն։

Ընթրիքին քիչ խօսեցին։ Մանաւանդ Բազարովը համարեա թէ ոչինչ չէր ասում, բայց ուտում էր շատ։ Նիկոլայ Պետրովիչը զանազան դէպքեր էր պատմում իւր, ինչպէս ինքն էր ասում, ագարակում վարած կեանքից, խօսում էր առաջիկայում կառավարութեան ձեռք առնելիք միջոցների մասին, մասնաժողովների, պատգամաւորների, մեքենաներ մտցնելու և այլ խնդիրների մասին։ Պաւէլ Պետրովիչը ծանր-ծանր յետ ու առաջ ման էր գալիս սեղանատան մէջ (նա երբէք ընթրիք չէր անում), երբեմն-երբեմն բերանին էր տանում կարմիր գինով լի փոքրիկ բաժակը, մի կում առնում, և շատ հազիւ մի որ և իցէ նկատողութիւն կամ, աւելի շատ, այսպիսի բացականչութիւն անում․ «հ՛ը, ը՛հ՛ը․ հմ»։ Արկադին մի քանի նորութիւններ հաղորդեց Պետերբուրգի կեանքից, բայց նա իրեն փոքր անյարմար դրութեան մէջ էր զգում, դա այն անյարմարութիւնն է, որ սովորաբար ամեն երիտասարդ էլ զգում է, երբ արդէն երեխայ լինելուց դեռ նոր դադարած, վերադառնում է այն տեղը, ուր նրան սովոր էին երեխայ տեսնել ու համարել։ Նա աւելորդ տեղը ձգձգում էր իւր խօսքը, խոյս էր տալիս «հայրիկ» ասելուց և մինչև իսկ մի անգամ դրա տեղ «հայր» ասաց, թէպէտ նա այդ բառը քթի տակ արտասանեց․ աւելորդ համարձակութեամբ իւր բա-

---

1) Փոխուել է (դէպի լաւը)։ Ծ. Թ.

ժակի մեջ ավելի գինի լցրեց, քան թե կուզեր, և բոլոր գինին խմեց։ Պրոկոֆյիչն աչքը նրանից չէր հեռացնում և միայն չրթունքներն էր ծամծմում։ Ընթրիքից հետո ամենքն էլ անմիջապես բաժանվեցան։

—Ի՞նչ տարօրինակ մարդ է եղել հորեղբայրդ,—ասում էր Բազարովը գիշերազգեստը հագին Արկադիի անկողնի մոտ նստած ու կարճ չիբուխը ծծելով։—Ի՛նչ տնզրություն է գյուղի մեջ։ Հապա եղունգները. իսկը ցուցահանդես ուղարկելու բան։

—Դու, իհարկե, չգիտես,—պատասխանեց Արկադին,—թե նա ինչ անուն է ունեցել իր ժամանակին։ Ուրիշ անգամ նրա պատմությունը կպատմեմ քեզ։ Ախր ինչ գեղեցիկ տղամարդ է եղել, ինչքան կանայք գժվացրել։

—Հա՛ա՛։ Ասել է այդ հին հին հիշողության մնացորդներն են։ Բայց ափսոս որ այստեղ մարդ չկայ, որ գրավէ։ Ես բոլոր ժամանակը նրան էի դիտում—ինչ զարմանալի օձիք ունի, կարծես քարից լինի շինած, կզակն էլ մաքուր ածիլած։ Ծիծաղելի բան չէ, Արկադի՛ Նիկոլայիչ։

—Ասենք հա, բայց, ճշմարիտ, լավ մարդ է։

—Դա արդէն հնության մնացորդ է։ Իսկ հայրդ պատվական մարդ է։ Բայց ի զուր է ոտանավորներ կարդում, և դժվար թե տնտեսությունից էլ մի բան հասկանալիս լինի։ բայց բարի մարդ է։

—Հայրս իսկը ոսկի է։

—Նկատեցի՞ր քաշվածը։

Արկադին գլխով արավ, որպես թե ինքը չէր քաշվում։

—Զարմանալի մարդիկ են այս հնավուրց ռոմանտիկները,—շարունակեց Բազարովը։—Իրենց նեարդային դրությունն այնքան կզարգացնեն, որ գրգռման սահմանին հասնի... և դրանով էլ խանգարում է հավասարակշռությունը։ Սակայն, մնաս բարով։ Իմ սենեակումս անգլիական լվացարան է դրված, մինչդեռ դուռը գոց չունի։ Բայց և այնպես պէտք է այդ բանը քաջալերել—անգլիական լվացարանը, այսինքն առաջադիմությունը։

Բազարովը գնաց, իսկ Արկադիին համակեց բերկրության զգացմունքը։ Ինչքան քաղցր բան է քնել հայրենի կտրան տակ, ծանոթ անկողնի մեջ, այն վերմակի տակ, որի վրայ աշխատել են սիրելի ձեռներ, գուցէ և դայեակի ձեռները, այդ բարի, քնքուշ ու անխոնջ ձեռները։ Արկադին հիշեց Եգորով-

նային և հառաչեց, և ողորմիս տուաւ...։ Նա իրա համար չէր աղօթում։

Նա էլ, Բազարովն էլ շատ շուտով քնեցին, բայց տունը եղողներից միւսները դեռ երկար ժամանակ չէին քնում։ Որդու վերադարձը յուզել էր Նիկոլայ Պետրովիչին։ Նա անկողին մտաւ, բայց ճրագը չմարեց և, գլուխը ձեռքին յենած, խորը միտք էր անում։ Եղբայրը կէս գիշերը վաղուց անց նստած էր իր առանձնասենեակում, բազկաթոռի մեջ, բուխարու դիմաց, որի մեջ կամաց-կամաց քարածուխ էր այրւում։ Պաւէլ Պետրովիչը չէր հանուել, միայն լաքաւոր տռնամանը հանած չինական անկրունկ կարմիր շասեր էր հագել։ Ձեռին բռնած էր galignani-ի վերջին համարը, բայց չէր կարդում. նա աչքը յառած նայում էր բուխարուն, որի մեջ երբեմն մարելով և երբեմն բորբոքուելով պլպլում էր կապտաւուն բոցը...։ Աստուած գիտէ, թէ որտեղերանք էին թափառում նրա մտքերը. բայց նրանք միայն անցեալի մեջ չէին թափառում՝—նրա դէմքի արտայայտութիւնը մռայլ էր և ուշադիր, իսկ լոկ անցեալի յիշողութիւններին անձնատուր եղած մարդ այդպիսի արտայայտութիւն չի ունենում։ Իսկ ետևի փոքրիկ սենեակում, մեծ սնդուկի վրայ, կապոյտ բաճկոն հագած, մուգ մազերի վրայից սպիտակ թաշկինակ ձգած, նստած էր մի նորատի կին, Ֆենիչկան և երբեմն ականջ էր դնում, երբեմն նիրհում, երբեմն էլ մտիկ տալիս բաց դռանը, որի միւս կողմը երևում էր մանկական մահճակալ և լսւում քնած մանկան համաչափ շնչառութիւնը։

V

Միւս օրն առաւօտեան Բազարովն ամենքից վաղ զարթնեց և դուրս եկաւ տնից։ «Վա՛հ» մտածեց նա իր չորս կողմը նայելով, «այս էլ գիւղ է էլի»։ Երբ որ Նիկոլայ Պետրովիչը իր գիւղացիներից բաժանուելով հողերի սահմանները որոշեց, հարկադրուեցաւ իր ագարակի համար մի չորս դեսեատին բոլորովին տափարակ ու լերկ գետին յատկացնել։ Նա տուն, ագարակ և ծառաների համար բնակարաններ շինեց, պարտէզ գցեց, լճակ ու երկու հոր փորեց. բայց ծառերը լաւ չէին բռնում, լճակում խիստ քիչ ջուր հաւաքուեց, իսկ ջրհորների ջուրը շորահամ էր։ Մենակ յասմիկի ու ակացիայի թփերով շրջապատուած զովանոցն էր աճողուել. այդտեղ երբեմն-եր-

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ... ՀԱՅԿ-ССР ... им. А. Мясникяна

քեմս թէյ էին խմում և ճաշ ուտում։ Բազարովը մի քանի րոպէի մէջ անցաւ բոլոր ուղիներով, դոմ ու ախոռ մտաւ, երկու ընդոծին երեխայ գտաւ և նրանց հետ խօսելն էլ բարեկամացաւ ու հետները միասին վեր կացաւ գնաց, ագարակից մի վերստ հեռու, փոքրիկ ճահճուտը գորտ բռնելու։

—Գորտն ինչիդ է, աղա,—հարցրեց տղերանցից մէկը։

—Այ ինչիս է,—պատասխանեց Բազարովը, որ մի առանձին ընդունակութիւն ունէր ստորին կարգի մարդկանց վստահութիւնը գրաւելու, թէպէտ երբէք նրանց քէֆովը չէր շարժւում և հետները արհամարհանքով էր վարւում,—ես գորտը տափկացնում եմ ու սկսում եմ նայել, թէ ինչ է կատարւում նրա ներսը. և որովհետև ես էլ, դու էլ միևնոյն գորտն ենք, միայն թէ մենք ոտների վրայ ենք գալիս, այդ պատճառով էլ կարող եմ իմանալ, թէ ինչ է լինում նաև մեր ներսը։

—Էդ ինչիդ է պէտք։

—Որպէս զի, երբ որ հիւանդանաս ու ես բժշկելու լինիմ, չսխալւեմ։

—Դու դխտուր ես, ինչ է։

—Հապա։

—Վասկա, լսում ես, աղէն ասում է, թէ մենք էլ միևնոյն գորտն ենք։ Զարմանք բան։

—Ես գորտից վախում եմ,—ասաց Վասկան, որ մի եօթ տարեկան, վուշի նման սպիտակ մազերով երեխայ էր. նա ոտաբոբիկ էր, իսկ հագին ցից եղած օձիքաւոր բաճկոն։

—Ի՞նչ կայ վախենալու, հո չեն կծում։

—Դէ, մտէք ջուրը, փիլիսոփաներ,—ասաց Բազարովը։

Այդ միջոցին Նիկոլայ Պետրովիչն էլ վեր էր կացել ու գնացել Արկադիի սենեակը. Արկադին արդէն հագնւած, պատրաստ էր։ Հայր ու որդի դուրս եկան պատշգամբ, հովանոցի տակը. վանդակապատի մօտ սեղանի վրայ, լամբկի երկու խոշոր փնջերի միջև արդէն եռ էր գալիս հեշտաեռը։ Դուրս եկաւ երէկուայ աղջիկը, որ առաջին անգամ նրանց պատշգամբում հանդիպել էր, ու բարակ ձայնով ասաց.

—Ֆէդոսիա Նիկոլաևնան մի քիչ հիւանդ են, չեն կարող գալ. հրամայեցին որ ձեզ հարցնեմ, ինքներդ կհաճիք թէյ անել, թէ Դունիաշին ուղարկի։

—Ես, ես ինքս կանեմ,—շտապով վրայ բերեց Նիկոլայ

Պետրովիչը։—Դու թէյը ինչո՞վ ես խմում, Արկադիյ, սերո՞վ թէ լիմոնով։

—Սերով,—պատասխանեց Արկադին, և փոքր ինչ լռելուց յետոյ հարցական եղանակով ասաց,—հայրիկ։

Նիկոլայ Պետրովիչը շշկլւած կերպարանքով նրան նայեցաւ։

—Ի՞նչ է,—ասաց նա։

Արկադին աչքերը ներքև գցեց.

—Ներիր, հայրիկ, թէ որ հարցմունքս քեզ անտեղի թըւայ,—ասաց նա,—բայց դու ինքդ քու երէկուայ անկեղծութեամբ ինձ էլ ստիպում ես անկեղծ լինել… հո չես նեղանայ։

—Ասա։

—Ինձ համարձակութիւն ես տալիս քեզ հարցնելու…։ Արդեօք Ֆեն… արդեօք նրա թէյ անելու չեկածը այն պատճառով չէ՞, որ ես այստեղ եմ։

Նիկոլայ Պետրովիչը թեթևակի շուռ տուեց երեսը։

—Գուցէ,—ասաց նա վերջապէս,—նա կարծում է… նա ամաչում է…։

Արկադին աչքն արագութեամբ հօր վրայ ձգեց։

—Իզուր է ամաչում։ Նախ որ քեզ արդէն յայտնի է իմ մտածութեանս եղանակն (այս խօսքերն ասելիս Արկադիի խիստ դուրն էր գալիս), իսկ երկրորդ էլ—մի՞թէ ես մի մազի չափ անգամ կուզեմ խանգարել քու կենցաղավարութիւնդ, քու սովորութիւններդ։ Մանաւանդ թէ համոզւած եմ, որ դու կարող չէիր վատ ընտրութիւն անել. թէ որ նրան թոյլ ես տուել, որ քեզ հետ միևնոյն յարկի տակ ապրի, ասել է, որ այդ բանին արժանի է. ինչ էլ որ լինի՝ որդին հօր դատաւորը կարող չէ լինել, մանաւանդ ես, նամանաւանդ քեզ նման մի հօր, որ ոչ մի ժամանակ և ոչ մի բանի մէջ իմ ազատութիւնս չես ճնշած։

Սկզբում Արկադիի ձայնը դողդողում էր՝-զգում էր, որ իւր արածը վեհանձնութիւն է, բայց միևնոյն ժամանակ էլ հասկանում էր, որ հօրը գլխին խրատի պէս մի բան է կարդում. բայց մարդուս իրա ձայնը սաստիկ ազդում է իւր վրայ և Արկադին վերջին խօսքերը հաստատուն, նոյն իսկ ազդու կերպով արտասանեց։

—Շնորհակալ եմ, Արկաշա,—խուլ ձայնով ասաց Նիկոլայ Պետրովիչը և նրա մատները դարձեալ սկսան ճակատի և

յոնքերի վրայ չարժուել։—Քու ենթադրութիւններդ, արդարեւ ուղիղ են։ Իհարկէ, եթէ այդ աղջիկն արժանի չլինէր...։ Սա մի թեթև հաճոյքի համար չէ արուած։ Ինձ համար ծանր է այս մասին քեզ հետ խօսել. բայց հասկանում ես իհարկէ, որ նրա համար դժուար էր քո եղած ժամանակդ, այն էլ հէնց առաջին օրը, այստեղ գալ։

—Թէ որ այդպէս է, ապա ես ինքս կգնամ նրա մօտ,—ասաց Արկադին մեծահոգութեան նոր հոսանքով բռնուած և տեղից վեր թռաւ։—Ես նրան կհասկացնեմ, որ ամենևին ինձանից քաշուելու բան չկայ։

Նիկոլայ Պետրովիչն էլ վեր կացաւ։

—Արկադիյ,—ասաց նա,—ախր... ինչպէս կարելի է... այնտեղ...։ Քեզ չեմ ասել, որ...։

Բայց Արկադին այլ ևս նրա ասածը չէր լսում և վազեց գնաց պատշգամբից։ Նիկոլայ Պետրովիչը նրա ետևից նայելով մնաց շփոթուած և նստաւ տեղը։ Նրա սիրտը բաբախում էր...։ Արդեօք այդ րոպէին նրա առաջ իր և որդու ապագայ յարաբերութեան անխուսափելի տարօրինակութիւնը պատկերացաւ, թէ հասկացաւ, որ Արկադին աւելի յարգանք ցոյց տուած կլինէր իրեն, թէ որ բոլորովին այս խնդիրը շօշափած չլինէր, կամ թէ գուցէ նա ինքն իրեն կշտամբում էր իր թուլամորթութեան համար—դժուար էր ասել. այս բոլոր զգացմունքներն էլ կային նրա մէջ, բայց իբրև զգացողութիւն—և այն էլ իբրև անորոշ զգացողութիւն. իսկ երեսի կարմրութիւնը չէր գնում, և սիրտը բաբախում էր։

Շտապ քայլերի ձայներ լսուեցան և պատշգամբ եկաւ Արկադին։

—Հայր, մենք ծանօթացանք,—բացականչեց նա և նրա դէմքի վրայ փայլեց փաղաքուշ և բարի յաղթանակի արտայայտութիւնը։—Ճիշտ որ, Ֆեդոսիա Նիկոլաևնան մի քիչ լաւ չէ այսօր, և մի քիչ ուշկեկ կգայ։ Բայց ինչպէ՞ս է որ չէիր ասել, թէ ես եղբայր էլ եմ ունեցել։ Թէ որ իմանայի հէնց երեկոյեան էլ կգնայի, կհամբուրէի նրան, այ ինչպէս որ այժմ համբուրեցի։

Նիկոլայ Պետրովիչն ուզում էր մի բան ասել, ուզում էր վեր կենալ տեղից և գիրկը բանալ...։ Արկադին ինքը նրա վզովը փաթաթուեց։

—Այս ինչ է, դարձեալ գրկախառնուել էք,—նրանց քամակից լսուեց Պաւէլ Պետրովիչի ձայնը։

Հայր ու որդի երկուսն էլ ուրախ էին նրա գալուն. լինում են սրտալոյզ դրութիւններ, որոնց միջից բայց և այնպէս մարդ կցանկանայ շուտով դուրս գալ։

—Ի՞նչ կայ զարմանալու,—ուրախ-ուրախ ասաց Նիկոլայ Պետրովիչը։—Այս ինչքա՜ն ժամանակ է Արկաշայի կարօտն էի քաշում...։ Երէկուանից դէսը սկի ժամանակ էլ չէ եղել, որ մի լաւ վրան նայեմ, կշտանամ։

—Ամենևին չեմ զարմանում,—նկատեց Պաւէլ Պետրովիչը,—ես ինքս էլ պիտի ուրախութեամբ հետը ողջագուրուեմ։

Արկադին մօտեցաւ հօրեղբօրը և նորից երեսին զգաց նրա հոտաւէտ բեխերի շօշափումը։ Պաւէլ Պետրովիչը սեղանի մօտ նստեց։ Նա անգլիական ճաշակի նրբանկար չոր էր հագել, գլխին փոքրիկ թաս դրել։ Այս թասն ու անհոգ կապած փողպատը նշան էին գիւղական կեանքի ազատութեան. բայց շապկի պինդ օձիքը, որ ճշմարիտ է, սպիտակ չէր, հապա խալտապղէտ, ինչպէս որ վայել է առաւօտեայ զգեստին, ըստ սովորականին անողորմ կերպով դէմ էր ընկել սափրած կզակին։

—Ո՞րտեղ է նոր բարեկամդ,—հարցրեց նա Արկադիին։

—Տանը չի. սովորաբար նա վաղ է վեր կենում և մի որևիցէ տեղ գնում։ Ամենևին պէտք չէ նրա վրայ ուշադրութիւն դարձնել—նա շատ դէս ու դէն անել չգիտէ։

—Այո, երևում է։—Պաւէլ Պետրովիչն առանց շտապելու սկսաւ հացին կարագ քսել։—Շա՞տ է այստեղ մնալու։

—Տեսնենք։ Նա հօրն էր գնում և ճամբին եկաւ մեզ մօտ։

—Իսկ հա՞յրը որտեղ է ապրում։

—Մեր նահանգում, մեզանից մի ութսուն վերստ հեռու։ Այնտեղ մի փոքրիկ կալուածք ունի։ Առաջ զինուորական բժիշկ է եղած։

—Հա՜մ...։ Ես էլ ասում եմ ծանօթ ազգանուն է—Բազարով...։ Յիշո՞ւմ ես, Նիկոլայ, կարծեմ հայրիկի գնդում Բազարով ազգանունով մի բժիշկ կար։

—Կարծեմ կար։

—Այո, այո։ Ուրեմն այդ բժիշկը սրա հա՞յրն է։ Հըմ։—Պաւէլ Պետրովիչը բեխերը շարժեց։—Իսկ ինքը, պարոն Բազարովն ինքն ինչ բան է իսկապէս,—հարցրեց նա որոշակի։

—Բազարովն ինչ բան է։—Արկադին ժպտաց։—Ուզում էք, հօրեղբայր, ասեմ նրա իսկապէս ինչ բան եղածը։

—Խնդրեմ, շնորհ արա։

—Նա նիհիլիստ է։

—Ի՞նչ,—հարցրեց Նիկոլայ Պետրովիչը. իսկ Պաւէլ Պետրովիչը օդի մէջ բարձրացրեց դանակը, որի ծայրին մի կտոր կարագ կար, և մնաց անշարժ։

—Նիհիլիստ է,—կրկնեց Արկադին։

—Նիհիլիստ,—ասաց Նիկոլայ Պետրովիչը։— Ինչքան խելքս կտրում է, դա լատիներէն nihil, ո չ ի ն չ բառից է. հետևաբար այդ բառը նշանակում է այնպիսի մի մարդ, որ... որ ոչինչ չէ ընդունում։

—Ասա՝ որը ոչինչ չի յարգում,—վրայ բերեց Պաւէլ Պետրովիչը, և նորից սկսաւ հացին կարագ քսել։

—Որը ամեն մի բանի քննողաբար է վերաբերւում,—նկատեց Արկադին։

—Մէկ բան չէ, ինչ է.—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Ոչ, մէկ բան չէ։ Նիհիլիստը մի այնպիսի մարդ է, որ ոչ մի հեղինակութեան առաջ չի խոնարհւում, ոչ մի սկզբունք, ինչքան էլ այդ սկզբունքը յարգանքի արժանացած լինի, չի ընդունում լոկ հաւատքով։

—Եւ ինչ է, այդ լաւ բան է։—ընդհատեց Պաւէլ Պետրովիչը։

—Նայելով թէ ում համար։ Ոմանց համար դա լաւ է, իսկ ոմանց համար՝ շատ վատ։

—Միթէ։ Էհ, ինչպէս տեսնում եմ, դա մեր խելքի բանը չէ։ Մենք հին դարու մարդ ենք և կարծում ենք, որ առանց պրինսիպների (Պաւէլ Պետրովիչն այդ բառը ֆրանսիացոց նման փափուկ, «պրինսիպ» էր արտասանում, մինչդեռ Արկադին, ընդհակառակն, արտասանում էր «Պրը՛նցիպ» և առաջին վանկի վրայ չէշտում), առանց, ինչպէս դու ես ասում, լոկ հաւատքով ընդունուած, պրինսիպների աչք բանալ, շունչ քաշել կարող չենք։ Vons avez changé tout cela [1]) Աստուած տայ առողջ լինիք, իսկ մենք մոտիկ կտանք ձեզ ու կուրախանանք, պարոնայք... ինչպէս Էր։

—Նիհիլիստներ,—որոշակի ասաց Արկադին։

[1]) Դուք ամեն բան փոխել էք, տակն ու վրայ արել։ Ծ. Թ.

—Հա։ Առաջ կային հեգելիստներ [2]), իսկ այժմ՝ նիհիլիստներ։ Տեսնենք թէ ինչպէս էք դատարկութեան, օդազուրկ տարածութեան մէջ ապրելու. իսկ այժմ խնդրեմ եղբայր, Նիկոլայ Պետրովիչ, զանգը խփիր, արդէն կակաօ խմելու ժամանակ է։

Նիկոլայ Պետրովիչը զանգը խփեց և գոռաց. «Դունիաշա»։ Բայց Դունիաշայի փոխարէն Ֆենիչկան ինքը դուրս եկաւ։ Դա մի քսան երեք տարեկան, սպիտակ ու փափլիկ կին էր, թուխ մազով ու աչքերով, կարմիր, մանկական-փքած շրթունքներով ու քնքուշ ձեռներով։ Նա չթէ մաքուր զգեստ էր հագել, կապտագոյն նոր ծածկոցը թեթևակի ձգել կլոր ուսերին։ Նա մի մեծ գաւաթով կակաօ բերեց և, Պաւէլ Պետրովիչի առաջը դնելով, շատ ամաչեց՝ ջերմ արիւնը յորձանք տուեց նրա սիրուն դէմքի նուրբ մորթի տակով, և նրա երեսը կարմրատակեց։ Ֆենիչկան աչքերը խոնարհեց և կանգ առաւ սեղանի կողքին և բոլորովին մատների ծայրերով յենուեցաւ սեղանին։ Թւում էր, թէ նա համ քաշւում էր, որ եկել էր, համ էլ ասես թէ զգում էր, թէ իրաւունք ունէր գալու։

Պաւէլ Պետրովիչը խստութեամբ յօնքերը կիտեց, իսկ Նիկոլայ Պետրովիչը շշկլուեց։

—Բարև, Ֆենիչկա,—ասաց նա ատամների արանքով։

—Աստուծու բարին,—պատասխանեց Ֆենիչկան ոչ-բարձր, բայց հնչուն ձայնով և, աչքի ծայրովը նայելով Արկադիին, որը բարեկամաբար ժպտում էր նրան, կամացուկ դուրս գնաց։ Նա փոքր ինչ շորորալով էր ման գալիս, բայց այդ էլ էր նրան սազ գալիս։

[2]) Գէորգ Վիլհէլմ Ֆրիդրիխ Հեգելը (1770—1831 թ.) գերմանացի յայտնի փիլիսոփայ է. նրա վարդապետութեան հիմք կազմում է այն գաղափարը, թէ ամբողջ տիեզերքս պէտք է նկատել մի գեղեցիկ ամբողջութիւն, որի մէջ ոչ միայն ոչ մի անհաշտելի բան չկայ, հապա չկայ նաև մաքառումն, և ամենայն ինչ միայն արտայայտութիւն է զարգացման, ուր մի ձև մշտապէս փոխւում է միւս ձևի. տիեզերքս մի ներդաշնակ միութիւն է կազմում, մի օրգանիզմ. ուստի և Հեգելը ամեն մի երևոյթի մէջ որոնում է ընդհանուր կապը միւս երևոյթների հետ։ Հեգելի վարդապետութիւնը 30—40-ական թուերին խիստ տարածուած էր Մոսկուայի ինտելիգենտ հասարակութեան մէջ. «սլաւիանոֆիլ» և «զապադնիկ» կոչուած ուղղութիւնները իւրաքանչիւրը իւր տեսակէտով էր ըմբռնում Հեգելի վարդապետութիւնը...։ Ծ. Թ.

Մի առ վայրկեան պատշգամբում լռութիւն տիրեց։ Պաւէլ Պետրովիչը իւր կակաոն էր խմում, և յանկարծ գլուխը բարձրացրեց։

—Ահաւասիկ պարոն Նիհիլիստն էլ շնորհ է բերում այստեղ,—ասաց նա ցած ձայնով։

Ցիրաւի, պարտիզում, ծաղկանոցների վրայից անցնելով, գալիս էր Բազարովը։ Նրա կտաւէ վերարկուն ու վարտիքը ցեխոտուել էին. ճահճային կպչուն բոյսը փաթաթուել էր նրա հին, կլոր գլխարկին. աջ ձեռքին բռնած էր մի փոքր տոպրակ. տոպրակի մէջ մի կենդանի բան էր շարժւում։ Նա արագութեամբ մօտեցաւ պատշգամբին և, գլխով անելով, ասաց.

—Բարով ձեզ, պարոններ. ներեցէք, որ թէյի ուշացայ. այս րոպէին կգամ. հարկաւոր է այս գերիներին տեղաւորել։

—Այդ ինչ է, տզրուկ է,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Ոչ, գորտ է։

—Գորտն ուտում էք թէ բազմացնում։

—Փորձի համար է,—անտարբերութեամբ պատասխանեց Բազարովն ու տուն գնաց։

—Նա այդ գորտերը պիտի սկսի կտրատել,—նկատեց Պաւէլ Պետրովիչը։—Պրինցիպի չի հաւատում, իսկ գորտի հաւատում է։

Արկադին ցաւակցաբար մտիկ տուաւ հօրեղբօրը, Նիկոլայ Պետրովիչն էլ ծածուկ ուսերը վեր ցցեց։ Պաւէլ Պետրովիչը ինքն էլ հասկացաւ, որ արածը անաջող սրախօսութիւն էր, և սկսաւ խօսել տնտեսութեան ու նոր կառավարչի վրայ, որը նախօրեկին եկել, գանգատուել էր, թէ բանուոր Ֆոման արբեցութիւն է անում և բոլորովին խարար է եղել...։

VI

Բազարովը եկաւ, սեղանի առաջ նստեց և սկսաւ շտապով թէյ խմել։ Երկու եղբայրներն էլ լուռ նրան էին նայում, իսկ Արկադին աչքի տակով մէկ հօրն էր մտիկ տալիս, մէկ հօրեղբօրը։

—Հեռու գնացիք,—հարցրեց վերջապէս Նիկոլայ Պետրովիչը։

—Այստեղ, ձեր կաղամախի պուրակի մօտի ճահճուտը։ Մի

հինգ հատ կտցար թռան առաջիցս. Արկադի, կարող ես սպանել։

—Իսկ դուք որսորդ չէ՞ք։

—Ոչ։

—Դուք իսկապէս բնագիտութեամբ էք զբաղւում,—իւր հերթին հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Բնագիտութեամբ, այո. առ հասարակ բնական գիտութիւններով։

—Ասում են վերջին ժամանակներս գերմանացիները խիստ առաջ են գնացել այդ կողմից։

—Այո. գերմանացիներն այդ կողմից մեր վարժապետներն են,—անհոգաբար պատասխանեց Բազարովը։

—Այդքան բարձր համարում ունիք գերմանացիների վրայ,—վերին աստիճանի քաղաքավարութեամբ ասաց Պաւէլ Պետրովիչը։ Նա սկսել էր ներսից զայրանալ։ Բազարովի չափազանց ազատ վարմունքը վրդովում էր նրա ազնուական բնաւորութիւնը։ Այս հաքիմի որդին ոչ միայն չէր քաշւում, հապա մինչև անգամ պատասխանն էլ ակամայ և կարճ էր տալիս, և ձայնի մէջ էլ մի տեսակ կոպիտ, յանդուգն բան կար։

—Այնտեղի գիտնականներն իրենց գործը հասկացող մարդիկ են։

—Լաւ, լաւ։ Հապա ռուս գիտնականների մասին, այդքան լաւ համարում չունի՞ք իհարկէ։

—Հէնց այդպէս էլ է։

—Այդ խիստ գովելի անձնուրացութիւն է, ասաց Պաւէլ Պետրովիչը իրանն ուղղելով ու գլուխը յետ ցցելով։—Հապա ինչ էր Արկադիյ Նիկոլայիչը նոր ասում, թէ ոչ մի հեղինակութիւն չէք ընդունում։ Գերմանացի բնագէտներին չէ՞ք հաւատում։

—Ես ինչու պիտի հեղինակութիւն ընդունեմ։ Ես ինչ բանի պիտի հաւատամ։ Թէ որ խելքի նստելու մի բան կասեն՝ կհամաձայնեմ. պրծաւ գնաց։

—Իսկ գերմանացիները բոլորն էլ խելքի նստելու բան են ասում,—ասաց Պաւէլ Պետրովիչը, և նրա դէմքը մի այնպիսի անտարբեր, անհոգ արտայայտութիւն ստացաւ, որ կարծես ամբողջապէս խորասուզուած լինէր երկնային բարձունքների մէջ։

—Ոչ, ամէնքը չէ,—փոքր ինչ յօրանջելով պատասխա-

նեց Բազարովը, որ ակնյայտնի կերպով չէր ցանկանում վէճը շարունակել։

Պաւէլ Պետրովիչը Արկադիին նայեցաւ, կարծես ուզում էր ասել. «խօսք չունիմ, շատ մարդավարի բարեկամ ես ունեցել»։

—Իսկ ինչ վերաբերում է ինձ,—նորից խօսեց նա աշխատելով իրեն զսպել,—ես, ինչ մեղքս պահեմ, գերմանացիներին չեմ սիրում։ Էլ ռուսական գերմանացիների մասին չեմ խօսում, արդէն յայտնի է նրանց ինչ պտուղ եղածը։ Հէնց Գերմանիայի գերմանացիներին էլ չեմ հաւանում։ Առաջուայ գերմանացիները դեռ էլի մէկ բան էին. այն ժամանակ ունէին Շիլլեր, Գ է օ տ է է, ինչ է...։ Մանաւանդ եղբայրս առանձնապէս սիրում է նրանց...։ Իսկ այժմս դուրս են եկել ինչ որ քիմիկոսներ ու մատերիալիստներ (նիւթապաշտներ)...

—Կարգին քիմիկոսը քսան անգամ օգտակար է ձեր բանաստեղծներից,—ընդհատեց Բազարովը։

—Մի՛թէ,—ասաց Պաւէլ Պետրովիչն ու, ասես թէ քնի մէջ ընկնելով, յօնքերը մի՛ քիչ վերև բարձրացրեց։—Ասել է դուք գեղարուեստ չէ՞ք ընդունում։

—Փող վաստակելու արուեստը, կամ թթխատի վախճանը,—արհամարհական ծաղրով բացականչեց Բազարովը։

—Լաւ է, լաւ է։ Ուրեմն այսպիսի հանաքներ էլ էք գիտացել։ Ասել է թէ դուք այս ամենը մերժո՞ւմ էք։ Լա՛ւ։ Ուրեմն դու՛ք մենակ գիտութեա՛ն էք հաւատում։

—Արդէն ձեզ ասացի, թէ ոչնչի չեմ հաւատում. և ինչ բան է գիտութիւն ասածդ—ընդհանրապէս գիտութիւնը։ Կան գիտութիւններ, ինչպէս որ կան նաև արհեստներ, կոչումներ. իսկ ընդհանուր առմամբ գիտութիւն ասած բանդ բոլորովին գոյութիւն չունի։

—Շա՛տ լաւ։ Իսկ հապա՞ ուրիշ, մարդկային կենցաղավարութեան մէջ ընդունուած հաստատութիւնները, դրանց վերաբերմամբ էլ այդպիսի բացասական ուղղութեան էք հետևում։

—Սա ի՞նչ բան է, հարց ու փո՞րձ է,—հարցրեց Բազարովը։

Պաւէլ Պետրովիչը թեթևակի սպրդնեց...։ Նիկոլայ Պետրովիչը հարկ համարեց խօսակցութեանը միջամտել։

—Այդ մասին, սիրելի Եւգենիյ Վասիլիչ, մի ուրիշ անգամ աւելի մանրամասն կերպով կխօսենք. ձեր կարծիքներն էլ կիմանանք, մերն էլ կյայտնենք։ Շատ ուրախ եմ, որ բնա-

կան գիտութիւններով էք պարապում։ Լսել եմ, որ Լիբիխը [1]) զարմանալի գիւտեր է արել հողը պարարտացնելու վերաբերմամբ։ Դուք կարող էք ինձ գիւղատնտեսութեանս մէջ օգնել, կարող էք մի որևիցէ օգտակար խորհուրդ տալ։

—Ես պատրաստ եմ, Նիկոլայ Պետրովիչ, բայց մենք որտե՞ղ, Լիբիխը որտեղ։ Առաջ պէտք է դեռ այբ ու բենը սովորել, որ յետոյ ձեռներս գիրք բռնել կարողանանք. իսկ մենք դեռ սևը սպիտակից ջոկել չենք կարողանում։

«Ինչպէս տեսնում եմ, ճիշտ որ դու նիհիլիստ ես եղել» մտածեց Նիկոլայ Պետրովիչը։—Բայց և այնպէս թոյլ տուէք որ հարկաւոր դէպքում ձեր օգնութեան դիմեմ,—աւելացրեց նա բարձր ձայնով։—Իսկ այժմ, եղբայր, վեր կաց գնանք կառավարչի հետ բաններս տեսնենք։

Պաւէլ Պետրովիչը վեր կացաւ աթոռից։

—Հա՛,—ասաց նա առանց որևէ մէկի՛ն նայելու,—կատարեալ դժբաղդութիւն է այսպէս մի հինգ տարի գիւղում, հանճարներից հեռու ապրելը։ Ախմախ էլ կմնաս։ Դու աշխատում ես չմոռանալ այն, ինչ որ սովորել ես, բայց, մէկ էլ տեսար բանից դուրս եկաւ, որ այդ ամենը անմիտ բաներ են եղել, որ խելօք մարդիկ այդպիսի չնչին բաների վերայ գլուխ չեն ցաւացնում, և թէ մենք մի անպէտք փալաս ենք դարձել։ Ի՛նչ արած։ Երևի երիտասարդութիւնը, արդարև, մեզանից խելօք է։

Պաւէլ Պետրովիչը կրնկի վրայ ծանր-ծանր շուռ եկաւ ու ծանր-ծանր էլ դուրս գնաց. Նիկոլայ Պետրովիչն էլ նրա ետևից գնաց։

—Ի՞նչ է, նա միշտ այսպէս է,—սառն կերպով հարցրեց Բազարովը, երբ որ երկու եղբայրների քամակից դուռը փակուեց։

---

[1]) Եուստուս Լիբիխը (1803—1873 թ.) գերմանացի հռչակաւոր քիմիկոս է, որի ձեռքի տակ կրթուել ու անուն են ստացել ներկայիս նշանաւոր քիմիկոսներից շատերը։ Լիբիխը իւր հետազօտութիւններով ու գիւտերով հսկայական զարկ տուա՛ւ ոչ միայն քիմիայի, այլ և բնախօսութեան և գիւղատնտեսութեան առաջադիմութեան, և դժուար թէ լինի մի այլ գիտնական, որ այնքան մեծ և անմիջական ներգործութիւն ունեցած լինի մարդկանց կեանքի նիւթական պայմանները բարւոքելու վրայ, ինչքան Լիբիխը։ Ծ. Թ.

—Գիտես', Եւգենի, դու էլ չափազանց խիստ կերպով վարուեցիր հետը,- նկատեց Արկադին:-Նրան վիրաւորեցիր:

—Ոչ, այդ էր պակաս, որ հիմի դրանց, այդ գաւառական ազնուականներին էլ երես տալ: Ախր չգիտես, այդ բոլորը անձնասիրութիւն է, առեւծային սովորութիւններ, անձնահաճութիւններ են: Թէ որ այդպիսի ձգտումներ ունի, թող այն ժամանակ Պետերբուրգ մնար...: Էհ, տէրը նրա հետ: Գիտես, մի հազուագիւտ ջրային միջատ, Ditiscus marginatus եմ գտել: Ցոյց տամ:

—Քեզ խոստացել էի նրա պատմութիւնը պատմել,- սկսեց Արկադին:

—Միջատի պատմութիւնը:

—Հերիք կատակ անես: Հօրեղբօրս պատմութիւնը: Կտեսնես, որ նա այն չէ, ինչ որ կարծում ես: Նա աւելի ցաւակցութեան արժանի է, քան ծաղրի:

—Չեմ վիճում: Բայց ինչ ես դրա եախից կպել:

—Պէտք է արդարամիտ լինել, Եւգենի:

—Ա՞յդ ինչից է հետեւում:

—Ոչ, լսիր...

Եւ Արկադին պատմեց իւր հօրեղբօր պատմութիւնը: Ընթերցողն այդ պատմութիւնը յաջորդ գլխում կ'գտնի:

VII

Իւր կրտսեր եղբօր Նիկոլայի նման Պաւէլ Պետրովիչ Կիրսանովն էլ իւր նախնական կրթութիւնը ստացել է տանը, իսկ յետոյ ուսել է զինուորական ուսումնարանում (Պաժեսկի կորպուս) [1]: Մանկութիւնից զարմանալի գեղեցիկ էր. մանաւանդ որ նաև անձնավստահ էր, փոքր ինչ հեգնող և մի տեսակ զուարճալի—մաղձոտ—նա չէր կարող դուր չգալ: Հէնց որ սպայ դարձաւ, սկսաւ ամեն տեղ էլ մտնել-դուրս գալ: Նրան ձեռքէ ձեռք էին խլում և նա ինքն էլ իրեն երես էր տալիս, մինչև անգամ չարութիւններ էր անում, մինչև անգամ

[1] Ալէքսանդր I-ի օրով Պետերբուրգում հիմնուած զինուորական ուսումնարան, ուր ընդունւում են միայն վաստակաւոր անձանց զաւակները՝ կայսերական հրամանով: Ուսումնարանը վեցամեայ դասընթաց ունի և աւարտողները սպայ են դուրս գալիս: Ծ. Թ.

կոտրատում էր: Բայց այդ էլ էր նրան սազ գալիս: Կանայք ետեւիցը գժւում էին, տղամարդիկ նրան անձնահաճ էին անուանում ու իրենց սրտումը նախանձում: Ինչպէս արդէն ասած է: Նա իւր եղբօրը հետ միատեղ մի բնակարանում էր ապրում և նրան անկեղծօրէն սիրում էր, թէպէտ ամենեւին նրան նմանութիւն չունէր: Նիկոլայ Պետրովիչը թեթեւակի կաղին էր տալիս, ունէր մանր ու հաճելի դիմագծեր, բայց մանր, փոքր ինչ թախծալի սև աչքեր ու ցանցառ մազ. նա հաճութեամբ ծուլանում էր, բայց և մեծ հաճութեամբ էլ ընթերցանութեամբ պարապում, և հասարակութեան մէջ մտնելուց վախենում էր: Պաւէլ Պետրովիչը ոչ մի երեկոյ տանը չէր մնում, համարձակ և ճարպիկ մարդու հռչակ ունէր (բարձր հասարակութեան երիտասարդների մէջ մարմնամարզութիւնը նրա շնորհիւ մոդ էր դարձել) և ընդ ամենը հինգ, վեց հատ ֆրանսերէն գիրք էր կարդացել: Քսանութ տարեկան միջոցին արդէն կապիտան էր. փայլուն ապագայ կար առաջը: Յանկարծ ամեն բան փոխուեց:

Այդ միջոցներին Պետերբուրգի բարձր կարգի հասարակութեան մէջ երբեմն-երբեմն երեւում էր մի կին, որին մինչեւ օրս էլ չեն մոռացել. իշխանուհի կին էր: Նա բարեկիրթ ու վայելուչ, բայց փոքր ինչ պակասամիտ ամուսին ունէր, բայց երեխայ չունէր: Այդ իշխանուհին մէկ տեսար՝ յանկարծ արտասահման կգնար, մէկ էլ տեսար՝ յանկարծ Ռուսիա կվերադառնար, մի խօսքով տարօրինակ կեանք էր վարում: Նա թեթեւամիտ ու նազկթող կնոջ անուն ունէր, մեծ յափշտակութեամբ անձնատուր կ'լինէր ամեն տեսակ զուարճութիւնների, մինչև թալկութեան աստիճանի կ'պարէր, հանաքներ կանէր ու կչկչալի կծիծաղէր երիտասարդների հետ, որոնց կընդունէր ճաշերեքից առաջ կիսախաւար ընդունարանում, իսկ գիշերները լաց կ'լինէր և կ'աղօթէր, ոչ մի տեղ հանգիստ չէր գտնիլ, իսկ շատ անգամ էլ մինչև լոյս իւր սենեակի մէջ դէս-դէն կ'ընկնէր, թախծագին ձեռները կ'ոլորէր, կամ թէ չէ, բոլորովին դժգոյն ու սառը, կ'նստէր, սաղմոս կ'կարդար: Բայց գիշերն անցաւ թէ չէ, նա դարձեալ նոյն աշխարհիկ կինն էր, դարձեալ հիւր կ'գնար, կ'ծիծաղէր, կ'շատախօսէր և ասես թէ ընդառաջ կ'սլանար ամեն բանի, որ իրեն կարող էր ամենաչնչին հաճոյք պատճառել: Զարմանալի գեղեցիկ կազմուածք ունէր՝ ոսկու նման ծանր ոսկեգոյն հիւսը ծնկերից ցած էր

փչնում, բայց ոչ ոք նրան գեղեցկուհի չէր անուանի. ամբողջ դէմքի վրայ միակ գեղեցիկը նրա աչքերն էին, և նոյն իսկ բուն աչքերն էլ չէին-աչքերը մանր էին ու գորշ-հապա աչքերի հայեացքը. արագ և խորը, խիզախութեան աստիճան անհոգ և թախծութեան աստիճանի մտախոհ,-խորհրդաւոր հայեացք։ Մինչև անգամ այն ժամանակ, երբ նրա լեզուն ամենադատարկ խօսքեր էին բլբլում, նրա հայեացքի մէջ մի տարօրինակ բան էր փայլում։ Հագնուածքը շատ նուրբ էր։

Պաւէլ Պետրովիչը նրան հանդիպեցաւ մի պարահանդեսի մէջ, հետը մազուրկա պարեց, որի միջոցին իշխանուհին ոչ մի խելացի խօսք չասաց, բայց Պաւէլ Պետրովիչը սաստիկ սիրահարուեցաւ նրան։ Յաղթանակների սովոր լինելով, նա այստեղ էլ շուտով իր նպատակին հասաւ, բայց յաղթութեան հեշտութիւնը չսառեցրեց նրան։ Ընդհակառակն, աւելի ևս չարատանջ, աւելի ևս պինդ կերպով կապուեցաւ այն կնոջ հետ, որի մէջ, մինչև անգամ այն միջոցին, երբ նա անդարձ կերպով անձնատուր էր լինում, կարծես դեռ դարձեալ մնում էր մի տեսակ բղձալի և անմատչելի բան, որին ոչ ոք կարող չէր արժանանալ։ Ի՞նչ էր բնակուած այս հոգու մէջ—Աստուծուն է յայտնի։ Թւում էր թէ նա գտնւում էր իրեն էլ անյայտ խորհրդաւոր զօրութիւնների իշխանութեան տակ, այդ զօրութիւնները ինչպէս ուզէին, այնպէս էլ խաղ կանէին հետը. նրա մանրիկ ուղեղը չէր կարողանում դրանց քմահաճոյքներին դիմադրել։ Նրա բոլոր վարմունքն անհեթեթութիւնների մի շարք էր. միակ նամակները, որ կարող էին ամուսնու արդարացի կասկածը յարուցանել, նա գրել էր մի մարդու, որ համարեա թէ իրեն անծանօթ էր, իսկ սէրը նրա մէջ միայն թախիծ էր առաջացրել՝ այլ ևս չէր ծիծաղում և հանաքներ չէր անում այն մարդու հետ, որին ընտրել էր, և նրա ասածներին ականջ դնելու ու նրան մտիկ տալիս վարանման մէջ էր ընկնում։ Երբեմն, մեծ մասամբ յանկարծակի այդ վարմունքը սառն սարսափի էր փոխարկւում. դէմքը մեռելատիպ և վայրենի արտայայտութիւն էր ստանում. նա քաշւում էր իր ննջարանը, դուռը փակում, և սպասուհին ականջը դրան կպցրած կլսէր նրա խուլ հեկեկանքը։ Կիրսանովը, շատ անգամ, քնքուշ տեսակցութիւնից տուն վերադառնալուց յետոյ, իր մէջ զգում էր այն դառն ու սրտամաշուկ ցասումը, որ մարդուս սրտում առաջանում է, երբ որ նա վերջնական

անաջողութեան է հանդիպում։ «Էլ ինչ եմ ուզում», հարցնում էր նա ինքն իրան, իսկ սիրտը շարունակ մարմաջում էր (խոստում էր)։ Նա մի անգամ իշխանուհուն նուիրեց մի մատանի, որի ակի վրայ սփինկսի պատկեր էր փորագրած։

—Այս ինչ է,—հարցրեց իշխանուհին,—սփինկս է։

—Այո,—պատասխանեց նա,—և այդ սփինկսը՝ դուք էք։

—Ե՞ս,—հարցրեց իշխանուհին, և իր խորհրդաւոր հայեացքը դանդաղ կերպով բարձրացրեց նրա վրայ։—Գիտէ՞ք, որ ինձ համար շատ նպաստաւոր է այդ բանը,—աւելացրեց նա թեթև հեգնութեամբ, իսկ հայեացքը դարձեալ նոյն տարօրինակութիւնն էր արտայայտում։

Ծանր էր Պաւէլ Պետրովիչի վիճակը մինչև անգամ այն ժամանակ, երբ իշխանուհի Ռ-ը նրան սիրում էր. բայց երբ որ իշխանուհին սառեց, իսկ այդ բանը բաւական շուտ պատահեցաւ, քիչ էր մնում նա խելքը կորցնէր։ Նա տանջւում էր ու լրւում, և իշխանուհուն հանգիստ չէր տալիս ու ամեն տեղ ետևից թրև գալիս. այդ բանը ձանձրացրեց իշխանուհուն և նա արտասահման գնաց։ Պաւէլ Պետրովիչը, չնայելով իր բարեկամների խնդիրներին, իր մեծաւորների խրատներին, թողեց պաշտօնն ու իշխանուհու ետևից գնաց. չորս տարի օտար աշխարհներում անցկացրեց, որի միջոցին նա երբեմն սլանում էր սիրուհու քամակից, իսկ երբեմն էլ դիտմամբ նրա հետքը կորցնում. նա ինքն իրենից ամաչում էր, իր փոքրոգութեան վրայ զայրանում... բայց ինչ օգուտ, իշխանուհու կերպարանքը, այդ անհասկանալի, համարեա անխորհուրդ, բայց դիւթական կերպարանքը չափազանց խորն էր տպաւորուած նրա հոգու մէջ։ Բադենում նրանք նորից առաջուայ նման մօտեցան իրար. թւում էր, թէ երբէք իշխանուհին այդպէս բուռն կերպով սիրած չէր նրան... բայց մէկ ամսից արդէն ամեն բան վերջացած էր՝—բոցը մի վերջին անգամ էլ բորբոքուեց և առ միշտ հանգաւ։ Զգալով, որ անջատումն անխուսափելի է, Կիրսանովն ուզում էր, որ գէթ բարեկամ մնայ, կարծես թէ կարելի էր մի այսպիսի կնոջ հետ բարեկամութիւն հաստատել...։ Իշխանուհին թաքուն հեռացաւ Բադէնից և այնուհետև միշտ խոյս էր տալիս նրանից։ Պաւէլ Պետրովիչը վերադարձաւ Ռուսիա, փորձեց առաջուայ նման կեանք վարել, բայց այլ ևս նախկին ընթացքը չկարողացաւ բռնել։ Նա մկնդեղ կուլ տուած մարդու նման

չարունակ մէկ տեղից միւս տեղ էր թափառում. Նա դեռ այցելութիւններ էր անում, պահպանել էր աշխարհիկ մարդու բոլոր սովորութիւնները, կարող էր իւր երկու, երեք նոր յաղթանակներով պարծենալ. բայց այլ ևս ոչ մի նոր բան չէր սպասում ոչ իրենից, ոչ ուրիշներից, և ոչ մի բանի չէր ձեռնարկում։ Նա ծերացաւ, ալեւորուեց. իրիկունները նստել կլուբում, մաղձոտ տրամադրութեան մէջ ձանձրանալ, ամուրիների շրջանում անտարբեր կերպով վիճաբանել—նրա համար կարիք էր դարձած,—որ, ինչպէս յայտնի է, վատ նշան էր։ Իհարկէ, ամուսնանալ մտքովն անգամ չէր անցկացնում։ Տասը տարի անցաւ այսպէս անգոյն, անպտուղ և արագ, չափազանց արագ։ Ոչ մի տեղ ժամանակն այնպէս արագ չի վազում, ինչպէս Ռուսիայում. ասում են, որ բանտում ժամանակն աւելի ևս արագ է անցնում։ Մի անգամ ժողովարանում ճաշի ժամանակ Պաւէլ Պետրովիչն իմացաւ, որ իշխանուհի Ռ-ը վախճանուել է։ Վախճանուել էր Պարիզում համարեա խելագարութեան մօտիկ վիճակում։ Պաւէլ Պետրովիչը վեր կացաւ սեղանից և երկար ժամանակ թափառում էր ժողովարանի սենեակներում, արձանացած կանգնում թուղթ խաղացողների սեղանների մօտ, բայց սովորականից վաղ տուն չվերադարձաւ։ Մի քիչ ժամանակից յետոյ նա իւր հասցէին մի ծրար ստացաւ.—ծրարի մէջ իշխանուհուն նուիրած մատանին էր։ Իշխանուհին սֆինկսի վրայ խաչ էր քաշել և պատուիրել էր նրան ասելու, որ սֆինկսի բացատրութիւնը—խաչն է։

Այս բանը պատահեցաւ 48 թուականի սկզբին, հէնց այն միջոցին, երբ Նիկոլայ Պետրովիչը ամուսնուց զրկուելով Պետերբուրգ էր եկել։ Համարեա այն օրուանից, որ Նիկոլայ Պետրովիչը բնակութիւն էր հաստատել գիւղում, Պաւէլ Պետրովիչը համարեա թէ իւր եղբօր հետ տեսնուած չէր՝—Նիկոլայ Պետրովիչի պսակադրութիւնը եղել էր հէնց այն օրերին, որ Պաւէլ Պետրովիչը նոր էր ծանօթացել իշխանուհու հետ։ Արտասահմանից վերադառնալուց յետոյ նա գնացել էր իւր եղբօր մօտ, որպէս զի մի երկու ամիս մնայ այնտեղ, նրա երջանկութեամբը ուրախանայ, բայց միայն մի շաբաթ էր կարողացել մնալ։ Երկու եղբայրների դրութեան մէջ տարբերութիւնը խիստ մեծ էր։ 48 [1]) այդ տարբերութիւնը պակասեց՝

[1]) 1848 թուականը Եւրոպայում ընդհանուր յեղափոխու-

Նիկոլայ Պետրովիչը իւր կնոջն էր կորցրել, Պաւէլ Պետրովիչը՝ իւր յիշողութիւնները. իշխանուհու մահուանից յետոյ աշխատում էր նրա վրայ չմտածել։ Բայց Նիկոլայի մէջ կար կանոնաւոր անցկացրած կեանքի զգացմունքը և որդին էլ իւր աչքի առաջ մեծանում էր, իսկ Պաւէլը, ընդհակառակն, մենակեաց ամուրի լինելով, ոտք էր դնում այն անորոշ, աղջամղջային ժամանակի մէջ, ժամանակ ափսոսանքների, որ նման են յոյսերի, յոյսեր, որ նման են ափսոսանքների, երբ երիտասարդութիւնն անցել է, իսկ ծերութիւնը դեռ չէ կոխել։

Այդ ժամանակն ոչ ոքի համար այնքան ծանր չէր, ինչքան Պաւէլ Պետրովիչի համար՝ անցեալը կորցրած լինելով, կորցրել էր ամեն բան։

— Ես այժմ քեզ Մարյինօ չեմ հրաւիրում,—Նիկոլայ Պետրովիչը մի անգամ ասաց նրան (իւր գիւղի անունը իւր կնոջ անունովն էր դրել),—դու հանգուցեալի կենդանի ժամանակն էլ ձանձրանում չէիր, իսկ այժմ հո կարծում եմ ձանձրոյթից կմեռնես։

թեան տարի էր։ Ֆրանսիայում, 1789 թ. առաջին մեծ յեղափոխութիւնից և հասարակապետութիւն հաստատուելուց յետոյ 1848 թ. փետրուարին տեղի ունեցաւ երկրորդ յեղափոխութիւնը և երկրորդ հասարակապետութեան հաստատութիւնը։ Նոյն թուի մարտին յեղափոխութիւն եղաւ Գերմանիայում. 1848—1849 թթ. Աւստրիան ոչնչանալու մեծ վտանգի մէջ էր. որովհետև երկրի գերմանացիներն ուզում էին միանալ Գերմանիային, Իտալական նահանգներն ապստամբած անկախութեան համար չէին կռւում և ուզում էին միանալ Իտալիայի միւս մասերի հետ, որոնք նոյնպէս ազատութեան համար մեծ խլրտման մէջ էին. Հունգարիան անկախ էր իրեն հրատարակել. չեխերը, լեհացիներն ապստամբել էին, միւս սլաւ ցեղերը նոյնպէս գլուխ էին բարձրացրել։ Նոյն թուին Նիդերլանդիայում նոր սահմանադրութիւն հրատարակուեցաւ. Զուիցերիան փոխանակ պետութիւնների դաշնակցութեան, դարձաւ դաշնակցական պետութիւն. Բելգիայում յեղափոխութիւնը մեծ ծաւալ չստացաւ շնորհիւ ժամանակի առաջադէմ մինիստրութեան. Սպանիայում հասարակապետականների յեղափոխութիւն եղաւ, Իրլանդիայում ապստամբական շարժում առաջացաւ. մինչև անգամ Անգլիայում բանուորական խնդիրը, թէպէտ խաղաղ ընթացքով, յաջողուեցաւ։ Յեղափոխական շարժումից զերծ չմնացին նաև բալկանեան ազգերը և յոյները։

Տ. Թ.

— Ես այն ժամանակն յիմար էի ու անհանգիստ,— պատասխանեց Պաւէլ Պետրովիչը,— Նրանից դէսը խելքս գլուխս է եկել, հանդարտուել եմ։ Այժմ, ընդհակառակն, եթէ թոյլ տաս, առ միշտ պատրաստ եմ քեզ մօտ ապրելու։

Նիկոլայ Պետրովիչը պատասխանելու փոխարէն գրկեց նրան, համբուրեց. բայց մինչև Պաւէլ Պետրովիչը իւր այդ մըտադրութիւնը կ՛գործադրէր, տարիւ կէսուանից աւելի ժամանակ անցաւ։ Բայց դրա փոխարէն էլ մի անգամ գիւղ փոխադրուելուց յետոյ այլ ևս գիւղից չհեռացաւ, մինչև անգամ այն երեք ձմեռները, երբ Նիկոլայ Պետրովիչը Պետերբուրգ, որդու մօտ անցկացրեց։ Նա սկսաւ ընթերցանութեամբ պարապել, կարդում էր աւելի անգլիերէն գրուածքներ. և առհասարակ նա իւր բոլոր կեանքը անգլիական ճաշակով սարքեց, հարևանների հետ հազիւ էր հանդիպում և միայն ընտրութիւնների մասնակցելու համար էր դուրս գնում, և ընտրութիւնների ժամանակն էլ նա մեծ մասամբ լուռ էր մնում, բայց մէկ մէկ միայն իւր ազատամտական վարմունքներով գրգռում ու վախեցնում էր հին կարգի կալուածատէրերին, իսկ նոր սերընդի ներկայացուցիչների հետ չէր միանում։ Թէ մէկը և թէ միւսները նրան գոռոզ մարդ էին համարում, թէ սրանք և թէ նրանք նրան յարգում էին իւր ազնուական գերազանց շարժումների, նրա տարած յաղթանակների մասին տարածուած լուրերի պատճառով, այլ և այն պատճառով, որ նա շատ լաւ հագնւում էր և միշտ լաւ հիւրանոցի ամենալաւ սենեակումն իջնում, որ առհասարակ լաւ ճաշ էր ուտում, իսկ մի անգամ էլ նոյն իսկ Լուի-Ֆիլիպպի մօտ Վելլինգտոնի հետ էր ճաշել. որ ամեն տեղ իւր հետ տանում էր իսկական արծաթէ նեսեսեր ու ճանապարհի լոգարան. որ միշտ վրայից մի տեսակ անսովորական, զարմանալի «ազնիւ» օծանելիքների հոտ էր գալիս, որ շատ վարպետ վիստ էր խաղում ու միշտ էլ տանուլ էր տալիս. վերջապէս նրան յարգում էին նաև նրա անբասիր ազնուութեան համար։ Կանայք նրան զմայլելի մելամաղձիկ էին անուանում, բայց նա կանանց հետ ծանօթութիւն չունէր։

— Տեսա՞ր, Եւգենի,— ասաց Արկադին իւր պատմութիւնն աւարտելով,— ինչքան անիրաւ կերպով ես դատում հօրեղբօրս։ Էլ չեմ ուզում յիշել, որ նա քանի քանի անգամ հօրս ազատել է նեղութիւնից, իւր ունեցած բոլոր փողը տուել է նրան, — իսկ կալուածքը, գուցէ դու չես էլ իմանում, որ դեռ բաժա-

նած չենք,— նա պատրաստ է ամէն մի մարդու էլ օգնելու և, ի միջի այլոց, միշտ գիւղացոց կողմն է բռնում. ուղիղ է՝ նրանց հետ խօսելիս դէմքը կնճռոտում է և օդեկոլոն է հոտոտում։

— Անշուշտ. նեարդերն են գրգռւում,— ընդհատեց Բազարովը։

— Գուցէ. բայց շատ բարի սիրտ ունի։ Եւ շատ էլ խելօք մարդ է։ Ինչպիսի օգտակար խորհուրդներ է տուել ինձ... մանաւանդ կանանց հետ վարուելու վերաբերմամբ։ Չալ օձ տեսնողը՝ չալ չաթուից կ՛վախենայ։ Գիտենք։

— Դէ, մի խօսքով,— շարունակեց Արկադին,— Նա խիստ անբաղդ է, հաւատա խօսքիս. յանցանք է նրան արհամարհելը։

— Ո՞վ է նրան արհամարհել,— պատասխանեց Բազարովը։— Բայց ես դարձեալ պիտի ասեմ, որ մի մարդ, որ իւր բոլոր կեանքը կանացի սիրոյ հետ է կապել, և երբ այդ կապը կըտրուելով նա թթւում է ու մինչ այն աստիճանի ընկնում, որ ոչ մի բանի պիտանացու չի լինում, այդպիսի մարդը-տղամարդ չէ, արու չէ։ Ասում ես, թէ դժբաղդ է. իհարկէ, դու այդ բանը աւելի լաւ կարող ես իմանալ. բայց նրա գլխից դեռ բոլոր հոպոպները չեն դուրս եկել։ Հաւատացած եմ, որ նա արդարև իրեն գործի նման անձն է համարում, որովհետև Գալինիանիի լրագիրն է կարդում և ամիսը մի անգամ էլ գիւղացուն մարմնական պատժից ազատում։

— Յիշիր նրա ստացած դաստիարակութիւնը, այն ժամանակամիջոցը, երբ ապրում էր,— նկատեց Արկադին։

— Դաստիարակութիւնը,— վրայ բերեց Բազարովը։— Ամեն մարդ պարտաւոր է ինքը իրեն դաստիարակել,— այ, հէնց ես օրինակ. իսկ ինչ վերաբերւում է ժամանակին, ինչու պէտք է ես նրանից կախուած լինեմ։ Աւելի լաւ է, թող նա ինձանից կախուած լինի։ Չէ, եղբայր, այդ ամենը մեղկութիւն է, դատարկութիւն։ Եւ ինչ խորհրդաւոր յարաբերութիւն կարող է լինել տղամարդու և կնոջ մէջ։ Մենք, բնախօսներս գիտենք, թէ այդ ինչ յարաբերութիւն է։ Հապա մի աչքի կազմութիւնը ուսումնասիրիր, այդ տեղ ինչ գործ ունի, ինչպէս դու ես ասում, խորհրդաւոր հայեացքը։ Այդ բոլորը լոկ ռոմանտիզմ է. բոշ բան, փտած բան, գեղարուեստ։ Աւելի լաւ է գնանք բըզէզը դիտենք։

Եւ երկու բարեկամ վեր կացան։ Բազարովի սենեակը գնացին, ուր արդէն իսկ մի տեսակ բժշկա-անդամահատական

հոտ էր տիրել, որ խառնուել էր էժանագին ծխախոտի հոտին։

VIII

Պաւէլ Պետրովիչը եղբօր և կառավարչի խօսակցութեանը երկար ժամանակ ներկայ չեղաւ։ Կառավարիչը բարձրահասակ, նիհար, թոքախտաւորի ձայնով ու խարդախ աչքերով մի մարդ էր և Նիկոլայ Պետրովչի ամեն մի նկատողութեանը պատասխանում էր «ինչ խօսք, յայտնի բան է», և աշխատում էր գիւղացիներին արբեցող ու գող դուրս բերել։ Դեռ վերջերս կազմակերպած նոր ձևի տնտեսութիւնը ճռճռում էր, ոնց որ իւղ չքսած անիւ, ճռնչում՝ որպէս խամ փայտից շինած կարասիք։ Նիկոլայ Պետրովիչը չէր յուսահատւում, բայց յաճախ հառաչում էր ու մտքի մէջ ընկնում —զգում էր, որ առանց փողի բան առաջ չի գնալ, իսկ ունեցած փողը համարեա բոլորն էլ մսխուած էր։ Արկադիյն ուղիղն էր ասել՝—Պաւէլ Պետրովիչը քանի քանիցս օգնել էր եղբօրը՝ քանի քանիցս տեսնելով, թէ ինչպէս եղբայրը չարչարւում էր, գէս ու գէն ընկնում աշխատելով մի ելք գտնել, Պաւէլ Պետրովիչը ծանր քայլերով մօտեցել էր պատուհանին և ձեռները գրպանը դրած, ատամների արանքից փնթփնթացել «mais je puis vous donner de l'argent», **) և նրան փող էր տուել. բայց այդ օրը նա ինքն էլ փող չունէր, ուստի լաւ համարեց հեռանալ, տնտեսական գլխացաւանքը նրան ձանձրոյթ էր պատճառում. մանաւանդ որ նրան միշտ թւում էր, թէ Նիկոլայ Պետրովիչը, չնայելով իւր եռանդին ու աշխատասիրութեան, գործը ինչպէս որ պէտքն է, այնպէս չի տանում, թէպէտ ինքն էլ կարող չէր ցոյց տալ, թէ որն է Նիկոլայ Պետրովիչի սխալը։

«Եղբայր,—մտածում էր նա,—գործնական մարդ չէ. նրան խաբում են»։ Իսկ Նիկոլայ Պետրովիչը, ընդհակառակն, մեծ համարում ունէր Պաւէլ Պետրովիչի գործնական մարդ լինելու վրայ և միշտ նրանից խորհուրդ էր հարցնում։ «Ես կակուղ, թոյլ մարդ եմ, ողջ կեանքս խուլ անկիւնում եմ անցկացրել, —ասում էր նա,— իսկ դու իզուր չես հո մարդկանց մէջ երկար ապրել, նրանց շատ լաւ կճանաչես. դու արծուի հայեացք ունես»։ Պաւէլ Պետրովիչը ի պատասխանի այս խօսքերին շուռ էր գալիս, բայց եղբօր կարծիքը չէր աշխատում փարատել։

Նիկոլայ Պետրովիչին առանձնասենեակում թողնելով, նա անցաւ միջանցքով, որը տան առաջին մասը զատում էր յետին բաժնից և, ցածլիկ դրանը հասասրուելով, մտախոհութեամբ կանգ առաւ, բեխերը ձգեց ու բաղխեց դուռը։

—Ո՞վ է, մտէ՛ք,—լսուեց Ֆենիչկայի ձայնը։

—Ես եմ,—ասաց Պաւէլ Պետրովիչը և ներս մտաւ։

Ֆենիչկան վեր թռաւ աթոռից, որի վրայ երեխան նըստած էր և, երեխան տալով աղջկայ ձեռքը, որը նրան իսկոյն սենեակից դուրս հանեց, շտապով գլխի շորը շըտկեց։

—Ներեցէք, թէ որ խանգարեցի,—սկսաւ Պաւէլ Պետրովիչն առանց նրա երեսին մտիկ տալու,—ես միայն ուզում էի ձեզ խնդրել... կարծեմ այսօր մարդ են ուղարկում քաղաք...։ Հըրամայեցէք, որ ինձ համար կանաչ թէյ գնեն։

—Շատ բարի,—պատասխանեց Ֆենիչկան։—Ինչքա՞ն կուզէք։

—Մի կէս ֆունտ առնեն հերիք է կարծեմ։ Այստեղ, ձեր սենեակում ինչպէս տեսնում եմ փոփոխութիւն է եղել,—աւելացրեց նա արագ հայեացք ձգելով չորս կողմը և Ֆենիչկայի դէմքի վրայ։—Ահաւասիկ նոր վարագոյրներ ունիք,—ասաց նա տեսնելով, որ Ֆենիչկան իւր ասածը չի հասկանում։

—Այո, նոր են. Նիկոլայ Պետրովիչը մեզ նուիրեց. և վաղուց է, որ կախ է տուած։

—Ասենք ես էլ վաղուց է ձեր սենեակը մտած չեմ։ Այժմս շատ լաւ է սարքած։

—Նիկոլայ Պետրովիչի շնորհիւ,—շշնջաց Ֆենիչկան։

—Այստեղ աւելի լաւ է, քան թէ առաջուայ տանը։—հարցրեց Պաւէլ Պետրովիչը քաղաքավարութեամբ, բայց առանց ժպտի։

—Իհարկէ լաւ է։

—Այժմ ո՞վ է ձեր տեղը։

—Լուացք անող կանայքն են։

—Հը՛։

Պաւէլ Պետրովիչը լռեց. «հիմա կ'գնայ» մտածեց Ֆենիչկան։ Բայց նա չէր գնում և Ֆենիչկան արձանի նման կանգնած էր նրա առաջը, թեթևակի մատները շարժելով։

—Ինչո՞ւ ասացիք, որ ձեր փոքրին դուրս հանեն,—խօսեց վերջապէս Պաւէլ Պետրովիչը։—Ես երեխայ սիրում եմ։ Հապա մի ցոյց տուէք։

Ֆենիչկան շփոթուելուց և ուրախութիւնից բոլորովին կարմրատակեցաւ։ Նա Պաւէլ Պետրովիչից վախենում էր՝— սա համարեա երբէք նրա հետը չէր խօսում։

—Դունիաշա,—կանչեց նա,—հապա մի Միտիային բերէք։ (Ֆենիչկան տանը ամենքի հետ էլ դուքով էր խօսում։) Կամ թէ չէ, սպասեցէք, պէտք է շորերը փոխել։—Ֆենիչկան դէպի դուռը գնաց։

—Վնաս չունի,—նկատեց Պաւէլ Պետրովիչը։

—Այս րոպէին,—պատասխանեց Ֆենիչկան և արագ դուրս գնաց։

Պաւէլ Պետրովիչը մենակ մնաց և այս անգամ առանձին ուշադրութեամբ դիտեց սենեակը։ Դա մի փոքրիկ, ցածլիկ սենեակ էր, որ շատ մաքուր էր ու խպտիկ։ Սենեակի յատակը նոր էր ներկած և ներկի հոտը խառնուած էր երիցուկի ու խնձադեղի հոտի հետ։ Պատերի երկարութեամբ շարած էին քնարաձև մէջքով աթոռներ։ Այդ աթոռները դեռ հանգուցեալ գեներալն էր գնել Լեհաստանում, արշաւանքի միջոցին, մի անկեանը դրած էր մանկական մահճակալ չղարշեայ վարագոյրով սքօղած՝ կողքին մի երկաթապատ սնդուկ բոլորակ խուփով, հանդիպակաց անկեանը Նիկողայոս Հրաշագործի մեծ, սևացած պատկերի առաջ կանթեղ էր վառած. սուրբի կրծքին կախած էր լախճապակեայ մի փոքրիկ ձու, որի կարմիր ժապաւէնը սրբի ճառագայթներին էր կպցրած. պատուհանների մէջ շարուած էին անցեալ տարուայ եփած մուրաբաները, որոնց ապակեայ բղուղները կանաչ գոյն էին ստացել, բղուղների բերանին հոգածութեամբ կապած թղթէ բոլորակների վրայ Ֆենիչկան ինքը իր ձեռքով խոշոր տառերով գրել էր՝ «կրուժովնիկ»։ Նիկոլայ Պետրովիչն աւելի այս մուրաբան էր սիրում։ Առաստաղից երկայն երիզով կախ արած վանդակի մէջ փակած էր մի պոչատ դեղձանիկ, որ շարունակ թռչկոտում էր ու ճռուողում. իսկ վանդակը անդադար օրորւում էր ու դողդողում, որից կանեփի սերմերը թեթև չրխկոցով ընկնում էին յատակի վրայ։ Երկու պատուհանի արանքում, պահարանից վերև, պատի վրայից կախած էին Նիկոլայ Պետրովիչի բաւական անաջող լուսանկար պատկերները, զանազան դիրքով նկարած, որ մի պատահական լուսանկարիչ էր պատրաստել. այդ տեղ էր կախած նաև հէնց Ֆենիչկայի պատկերը, որ խիստ անաջող էր դուրս եկած՝—մի ինչոր աչազուրկ դէմք լարուած ժպտում

էր սև շրջանակի միջից—ուրիշ ոչինչ կարելի չէր ջոկել։ Իսկ Ֆենիչկայի վերևը կախած էր եափնջաւոր Երմոլովը, որ դէմքը կնճռոտած, ահարկու հայեացքն ուղղած Կովկասեան հեռաւոր սարերի վրայ, նայում է մի մետաքսեայ ոտնամանի տակից, որ յատկացրած է գնդասեղի և կախ էր ընկած ուղիղ Երմոլովի ճակատին։

Հինգ րոպէ անցաւ. կողքի սենեակում խշխշոց ու շշունջ էր լսւում, Պաւէլ Պետրովիչը պահարանի վրայից վերցրեց մի ձիթոտած գիրք, որ Մասալսկու բաժան-բաժան արած Стрѣльцы-ի հատորն էր, մի քանի թերթ շուռ տուաւ...։ Դուռը բացուեցաւ և Ֆենիչկան, Միտեան գրկին ներս մտաւ։ Նա երեխային հագցրել էր կարմիր շապիկ, որի ձեռքին ոսկէթել ժապաւէն էր կարած, մազը սանրել, երեսը լուացել, երեխան ծանր շունչ էր առնում, ամբողջ մարմնով առաջ սլանում ու թաթիկները շարժում, ինչպէս որ անում են բոլոր առողջ երեխաները։ Բայց ինչպէս երևում է շքեղ շապիկը նրա վրայ ներգործել էր՝—գոհութեան զգացմունքը երևում էր նրա բոլոր փափլիկ կերպարանքի վրայ։ Ֆենիչկան իր մազն էլ էր շտկել և գլխի ծածկոցն էլ կարգի բերել, բայց նա կարող էր ինչպէս որ էր, այնպէս էլ մնալ։ Եւ ճշմարիտ, միթէ աշխարքիս երեսին կայ մի բան, որ այնքան հրապուրիչ լինի, որքան նորատի գեղեցիկ մայրը՝ առողջ երեխան գրկին։

—Մի այս տղիկին տեսէք,—ներողամտաբար ասաց Պաւէլ Պետրովիչը և ցուցամատի երկայն եղունգի ծայրով խըտուտ ածեց Միտիայի կրկնակի բուղախը, երեխան աչքը յառեց դեղձանիկին և ծիծաղեցաւ։

—Այս հօրեղբայրն է,—ասաց Ֆենիչկան երեխայի վրայ խոնարհելով և նրան թեթևակի ցնցելով, մինչ այդ միջոցին Դունիաշան պատուհանի մէջ, կոպէկանոցի վրայ դնում էր վառած հոտաւէտ մխոցքը։

—Քանի ամսական է,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Վեց ամսական. շուտով ամսի տասնմէկին եօթը կ՚մտնի։

—Ութը չպիտի մտնի որ, Ֆեդոսիա Նիկոլաևնա,—քաշուելով մէջ մտաւ Դունիաշան։

—Ոչ, եօթը կ՚մտնի. ինչպէս թէ ութը։—Երեխան նորից ծիծաղեցաւ, աչքը սնդուկին յառեց, և յանկարծ բոլոր հինգ մատներով չանչեց մօր քիթն ու շրթունքները։—Չարաճճի,—ասաց Ֆենիչկան առանց երեսը նրա մատներից հեռացնելու։

—Եղբօրն է նմանում,—նկատեց Պաւէլ Պետրովիչը։ «Բաս էլ ումն էր նմանելու», մտածեց Ֆենիչկան։

—Այո,—կարծես ինքն իրեն խօսելով շարունակեց Պաւէլ Պետրովիչը,—բոլորովին նման է։—Նա ուշադրութեամբ, համարեա տխուր կերպով նայեցաւ Ֆենիչկային։

—Հօրեղբայրն է,—կրկնեց Ֆենիչկան արդէն շշնջալով։

—Հա՛, Պաւէլ, այստեղ ես եղել,—յանկարծ լսուեց Նիկոլայ Պետրովիչի ձայնը։

Պաւէլ Պետրովիչը շտապով ետեւը դարձաւ և խոժոռուեցաւ. բայց եղբայրն այնպէս ուրախ-ուրախ, մի այնպիսի երախտագիտութեամբ էր նայում նրան, որ չկարողացաւ չժպտալ։

—Շատ լաւ երեխայ ես ունեցել,—ասաց նա ու ժամացոյցին նայեցաւ.—եկել էի, որ թէյի համար բան ասեմ..։

Եւ, անտարբեր կերպարանք ստանալով, Պաւէլ Պետրովիչն իսկոյն դուրս գնաց սենեակից։

—Ի՞նքն եկաւ,—հարցրեց Ֆենիչկային Նիկոլայ Պետրովիչը։

—Իրանք. դուռը խփեցին ու մտան։

—Հապա Արկաշա՞ն, էլ չի՞ եկել։

—Չէ։ Լաւ չի՞ լինիլ, Նիկոլայ Պետրովիչ, որ նորից միւս տունը փոխադրուեմ։

—Ինչո՞ւ։

—Միտք եմ անում, թէ արդեօք առ այժմ այդպէս աւելի լաւ չի՞ լինիլ։

—Չէ...,—կակազելով ասաց Նիկոլայ Պետրովիչը և ճակատը շփեց։—Պէտք էր առաջ անել... բարև, տիճոր,—ասաց նա յանկարծ կենդանացած, ու երեխային մօտենալով նրա թուշը համբուրեց. յետոյ նա փոքր ինչ կռացաւ և շրթունքները կպցրեց Ֆենիչկայի ձեռքին, որը Միտիայի կարմիր շապկի վրայ կաթի նման սպիտակ էր երեւում։

—Այս ի՞նչ էք անում, Նիկոլայ Պետրովիչ,—շշնջաց նա և աչքը խոնարհեց, յետոյ կամացուկ վեր բարձրացրեց... Հրաշալի էր նրա աչքի արտայայտութիւնը, երբ որ նա կարծես թէ ունքերի տակից էր նայում ու փաղաքուշ և փոքր ինչ անմիտ կերպով քմծիծաղ էր տալիս։ Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկայի հետ հետևեալ կերպով էր ծանօթացել։ Մի անգամ, սրանից երեք տարի առաջ, ստիպուած էր եղել գաւառական մի հեռաւոր քաղաքում մնալ ու իջևանում գիշերել։ Նա ապշել-մնացել էր տեսնելով իր սենեակի մաքրութիւնն ու անկողնու սպիտակեղէնի նորութիւնը՝—տանտիկինը հո գերմանուհի չէ՞, մտածեց նա. բայց դուրս եկաւ, որ տանտիկինը մօտ յիսուն տարեկան, մաքուր հագնուած, վայելչակազմ, խելացի դէմքով և խոհեմ խօսակցութեամբ, մի ռուս կին էր։ Թէյի ժամանակ նա խօսքի բռնուեց այդ կնոջ հետ և խիստ հաւանեց նրան։ Այդ միջոցին Նիկոլայ Պետրովիչը նոր էր իր նոր ագարակը փոխադրուել և, չցանկանալով իր մօտ ճորտերից պահել, վարձու մարդիկ էր փնտրում. միևնոյն ժամանակ յիշեալ կինն էլ գանգատւում էր, թէ քիչ մարդ է գալիս քաղաք, ծանր ժամանակներ են. Նիկոլայ Պետրովիչը նրան առաջարկեց իր մօտ տնտես մտնել. կինը համաձայնեցաւ։ Նրա մարդը վաղուց էր մեռած և թողել էր մի աղջիկ, Ֆենիչկային։ Մի երկու շաբաթից յետոյ Արինա Սաւիչնան (այդպէս էր նրա տնտեսուհու անունը) իր աղջկայ հետ եկաւ Մարյինօ և բնակութիւն հաստատեց բակի տանը։ Նիկոլայ Պետրովիչը աջող ընտրութիւն էր արել։ Արինան տունը կարգի ձգեց։ Ֆենիչկայի մասին, որ այդ ժամանակ տասն եօթն տարեկան էր, ոչ ոք չէր խօսում, և քչերն էին նրան տեսնում՝—շատ սուս ու փուս, համեստ կեանք էր վարում, և միայն կիրակի օրերն էր, որ Նիկոլայ Պետրովիչը ծխական եկեղեցում մի անկիւնում տեսնում էր նրա սպիտակ դէմքի նուրբ կիսապատկերը։ Մի տարուց աւելի անցաւ այսպէս։

Մի առաւօտ Արինան եկաւ նրա առանձնասենեակը և ըստ սովորականին խոնարհ գլուխ տալով հարցրեց, թէ արդեօք կարող չէ՞ օգնել իր աղջկանը, որի աչքի մէջ վառարանից կայծ էր թռել ընկել։ Նիկոլայ Պետրովիչը, ինչպէս բոլոր տնից դուրս չեկող մարդիկ, բժշկութիւն էլ էր անում և մինչև անգամ հոմեօպատային դեղարան էր բերել տուել։ Իսկոյն պատուիրեց որ հիւանդին իր մօտ բերեն։ Երբ որ իմացաւ, թէ աղան իր մօտ է կանչել, Ֆենիչկան շատ վախեցաւ, բայց դարձեալ մօրը ետևից գնաց։ Նիկոլայ Պետրովիչը նրան մօտ տարաւ պատուհանին և գլուխը երկու ձեռքի մէջն առաւ։ Նրա կարմրած ու բորբոքուած աչքը մի լաւ զննելուց յետոյ պատուիրեց, որ աչքին թրջած շոր դնէ, և հենց տեղն ու տեղը, թաշկինակը պատառեց ու ցոյց տուաւ, թէ ինչպէս պէտք էր այդ բանն անել։ Ֆենիչկան լսեց ասածը և ուզում էր գնալ. «Աղայի ձեռքը պաչի, յիմար», ասաց Արի-

նան։ Նիկոլայ Պետրովիչը ձեռքը չտուեց և, շշկըլուած, ինքը համբուրեց նրա խոնարհած գլխի առուն։ Ֆենիչկան շուտով առողջացաւ, բայց Նիկոլայ Պետրովիչի վրայ նրա թողած տպաւորութիւնը շուտ չանցաւ։ Շարունակ նրա աչքի առաջն էր գալիս այդ մաքուր, քնքոյշ, երկչոտութեամբ վերև բարձրացրած դէմքը. իր բռան մէջ զգում էր այդ փափուկ մազը, տեսնում էր այդ անմեղ, մի քիչ բաց շրթունքները, որոնց արանքից արևի առաջ թաց փայլում էին սատափի նման սպիտակ ատամները։ Նա սկսաւ եկեղեցում աւելի ուշադրութեամբ դիտել նրան, աշխատում էր հետը խօսել։ Սկզբում աղջիկը նրանից փախչում էր, և մի անգամ իրիկնապահին, երբ որ անց էր կենում մի նեղ կածանով, որ անցորդները բաց էին արել տերեփուկ ու օշինդրով բուսած հաճարի արտի միջից, հանդիպեցաւ Նիկոլայ Պետրովիչին և որպէս զի նրա աչքին չընկնի, մտաւ բարձր ու խիտ արտի մէջ։ Նիկոլայ Պետրովիչը հասկերի ոսկեգոյն ցանցի միջից տեսաւ նրա գլուխը, որ փոքրիկ գազանի նման իրեն էր մտիկ տալիս, և քնքշութեամբ ձայն տուեց։

—Բարև, Ֆենիչկա։ Մի վախիր, ես մարդ ուտող չեմ։

—Աստծու բարին,—շշնջաց աղջիկը առանց իր թաքստից դուրս գալու։

Ֆենիչկան կամաց կամաց սկսաւ նրան ընտելանալ, բայց էլի նրա առաջ քաշւում էր, երբ որ յանկարծ մայրը խոլերայից մեռաւ։ Ո՞ւր գնար։ Նա իր մօրից ժառանգել էր կարգապահութիւն, խոհեմութիւն ու ծանրաբարոյութիւն. բայց խիստ նորատի էր, բոլորովին մենակ։ Նիկոլայ Պետրովիչը ինքն էլ խիստ բարի էր ու համեստ...։Հարկ չկայ մնացածը պատմելու։

—Ուրեմն եղբայրս հէնց ա՛յնպէս ուղղակի ներս մտաւ էլի,—հարցնում էր Նիկոլայ Պետրովիչը։—Դուռը խփեց ու մտա՞ւ։

—Այո։

—Այդ լաւ բան է։ Հապա Միտեային մի ինձ տուր, մի քիչ էլ ես խաղացնեմ։

Եւ Նիկոլայ Պետրովիչը սկսաւ երեխային վեր-վեր ձգել, համարեա մինչև առաստաղին հասցնել, որից մանուկը սաստիկ ուրախանում էր, իսկ մայրը անհանգիստ լինում ու ամէն անգամ որ երեխան վեր էր թռչում, ձեռքը մեկնում էր նրա մերկ ոտներին։ Իսկ Պաւէլ Պետրովիչը վերադարձաւ իր նըր-

բաճաշակ առանձնասենեակը, որի պատերին մոխրագոյն գեղեցիկ պաստառ էր կպցրած, պարսկական երփներանգ գորգի վրայով զէնքեր էին կախած. կահ-կարասիքը ընկուզի փայտից էր՝ երեսին մուգ-կանաչ կտոր քաշած. սենեակում կային renaissance-ի ճաշակով շինած հին, սև կաղնուց գրադարան, փառահեղ գրասեղանի վրայ արոյրէ արձանիկներ, բուխարի...։ Նա վեր ընկաւ գահաւորակի վրայ, ձեռները ծալեց գլխի ետևը և մնաց անշարժ, համարեա յուսահատ հայեացք ձգած առաստաղին։ Արդեօք հէնց պատերից էլ ուզում էր ծածուկ պահել այն, ինչոր կատարւում էր իր դէմքի վրայ, թէ մի այլ պատճառով, միայն թէ նա վեր կացաւ, պատուհանների ծանր վարագոյրները բաց թողեց, և նորից վեր ընկաւ գահաւորակի վրայ։

IX

Նոյն օրը Բազարովն էլ ծանօթացաւ Ֆենիչկայի հետ։ Նա Արկադիյի հետ ման էր գալիս պարտիզի մէջ ու նրան հասկացնում, թէ ինչէ պատճառը, որ մի քանի ծառեր, մանաւանդ կաղնիները, արմատ չեն բռնել։

—Այստեղ պէտք է աւելի արծաթատերև կաղամախ ու եղևնի, մէկ էլ գուցէ լօրի տնկել ու մի քիչ սևահող աւելացնել։ Տես, զովանոցը լաւ է եղել,—աւելացրեց նա,—որովհետև յասմիկն ու ակացին լաւ թփեր են, շատ մեծապահանջ չեն։ Վա՛հ, այստեղ մարդ կայ։

Զովանոցում նստած էր Ֆենիչկան Դունիաշայի ու Միտեայի հետ։ Բազարովը կանգ առաւ, իսկ Արկադին Ֆենիչկային, իբրև հին ծանօթի, գլխով արաւ։

—Այս՞ ով է,— հարցրեց Բազարովը հէնց որ հովանոցի կողքիցն անցաւ։—Ի՜նչ սիրուն կին է։

—Այդ ում մասին է խօսքդ։

—Ո՞ւմ պիտի լինի՛—այդտեղ քանի գեղեցիկ կին կայ որ։

Արկադին փոքր ինչ շփոթուած կարճ խօսքով բացատրեց, թէ ով էր Ֆենիչկան։

—Ըհը՛,—ասաց Բազարովը.—Հայրդ իր բերանի համը իմացել է։ Բայց, ճիշտ եմ ասում, հայրդ ինձ դուր է գալիս։ Ղոչաղ մարդ է։ Սակայն պէտք է այս կնոջ հետ ծանօթանալ,—աւելացրեց նա քայլերը դէպի զովանոց ուղղելով։

—Եվգենիյ,— վախեցած կանչեց Արկադիյն նրա ետևից, —ի սէր Աստուծոյ, զգոյշ կաց։

—Մի յուզուիր,—ասաց Բազարովը,—մենք քաղաքներում ապրած, եփուած մարդ ենք։

Բազարովը Ֆենիչկային մօտ գնալով գլխարկը հանեց։

—Թոյլ տուէք ներկայանամ,—ասաց նա քաղաքավարութեամբ գլուխ տալով,—Արկադիյ Նիկալայիչի ընկերը և մի խոնարհ մարդ։

Ֆենիչկան նստած տեղից վեր կացաւ ու լուռ նրան էր մտիկ տալիս։

Ի՛նչ հրաշալի երեխայ է,—շարունակեց Բազարովը։—Մի՛ վախենաք, կեանքումս մարդու աչքով տուած չեմ։ Այս ինչո՞ւ են թշերը կարմրել։ Ատամ հո չի՞ հանում։

—Այո,—ասաց Ֆենիչկան,—արդէն չորս ատամ է հանել, իսկ այժմ լնդերքը դարձեալ ուռել են։

—Հապա մի ցոյց տուէք... մի՛ վախենաք, ես բժիշկ եմ։

Բազարովը գրկեց երեխային, որ ի զարմանս մօր և Դունիաշայի ոչ վախեցաւ և ոչ ընդդիմացաւ։

—Տեսնում եմ, տեսնում...։Ոչինչ, ամեն բան կանոնաւոր է—լաւ ատամներ պիտի ունենայ։ Թէ որ մի բան պատահի, իմաց տուէք ինձ։ Իսկ դուք ինքներդ առո՞ղջ էք։

—Փառք Աստուծոյ, առողջ եմ։

—Փառք Աստուծուն—ամենից լաւն է։ Ի՞սկ դուք,—աւելացրեց Բազարովը Դունիաշային դառնալով։

Դունիաշան, որ աղայի տանը շատ խստաբարոյ էր, իսկ դուրսը սաստիկ ծիծաղկոտ, պատասխան չտուեց և միայն փրթկաց։

—Շատ լաւ. վերառէք ձեր հսկան։

Ֆենիչկան մանկանը իւր գիրկն առաւ։

—Զարմանք բան, որ հանգիստ էր ձեր գրկում—ցած ձայնով ասաց նա։

—Բոլոր երեխաներն էլ այդպէս հանգիստ են մնում իմ գրկում,—պատասխանեց Բազարովը,—ես դրա գաղտնիքը գիտեմ։

—Երեխաներն զգում են, թէ ով է իրենց սիրում,—նըկատեց Դունիաշան։

—Այդ բանն ուղիղ է,—հաստատեց Ֆենիչկան։—Այ հէնց մեր Միտեան. ոմանց ամենևին չի գնայ։

—Իսկ ինձ կ'գա՞յ,—հարցրեց Արկադիյն, որը մի քիչ ժամանակ փոքր ինչ հեռու կանգնելուց յետոյ, մօտ էր եկել զովանոցին։

Նա Միտեային կանչեց իւր մօտ, ուզեց վեր առնի, բայց Միտեան գլուխը յետ գցեց ու ճչաց, որով և խիստ շփոթեցրեց Ֆենիչկային։

—Ուրիշ անգամ—երբ որ ընտելանայ,—ներողամտաբար ասաց Արկադիյն, և երկու բարեկամները հեռացան։

—Ի՞նչպէս էր անունը,—հարցրեց Բազարովը։

—Ֆենիչկա... Ֆեդոսիա,—պատասխանեց Արկադիյն։

—Իսկ հայրանունը՞։ Այդ էլ պէտքէ գիտնալ։

—Նիկօլաևնա։

—Bene. ինձ դիւր եկաւ այն, որ նա շատ չքաշուեցաւ։ Մէկ ուրիշը, ով գիտէ, հէնց այդ բանն էլ չհաւանէր։ Ի՛նչ յիմարութիւն է. ի՞նչ կայ քաշուելու։ Նա մարդ է—դէ իրաւունք ունի։

—Ասենք նա իրաւունք ունի,—նկատեց Արկադիյն,—բայց, այ, հայրս...։

—Նա էլ իրաւունք ունի,—խօսքը կտրեց Բազարովը։

—Է՛, ոչ, իմ կարծիքովս չունի։

—Ինչպէս երեւում է աւելորդ ժառանգը քեզ համար մի այնքան էլ դիւրեկան բան չէ՞։

—Չե՞ս ամաչում, որ այդպիսի բան ես մտածում իմ մասին,—տաքացած վրայ բերեց Արկադիյն։—Այդ տեսակէտից չէ, որ հօրս անիրաւ եմ համարում. իմ կարծիքով նա պարտաւոր էր նրա հետ պսակուել։

—Էհէ-հէ՜,—հանդարտ կերպով ասաց Բազարովը։—Ի՛նչ մեծահոգի մարդ է եղել։ Մի՞թէ պսակին նշանակութիւն ես տալիս. քեզանից այդ բանը չէի սպասում։

Երկու բարեկամ մի քանի քայլ լուիկ առաջ գնացին։

—Ես գնացի ման եկայ, հօրդ բոլոր տնտեսութիւնն էլ տեսայ,—նորից սկսեց Բազարովը։—Տաւարը անպիտան, ձիերըն ուժասպառ։ Շինութիւնները ծռուել են, բանուորները սարսափելի ծոյլ մարդիկ, իսկ կառավարիչը հո կամ յիմարի մէկն է, կամ խաբեբայ է, այդ դեռ չեմ որոշել։

—Այսօր դու շատ խիստ ես դատում, Եվգենիյ Վասիլիչ։

—Եւ անպատճառ գեղացիք էլ պիտի խաբեն հօրդ։ Հո գիտէ ռուսական առածը. «ռուս գեղացին Աստուծուն էլ կ'ծախէ»։

—Ես սկսում եմ հօրեղբօրս հետ համաձայնել,—նկատեց Արկադիյն.—դու բոլորովին վատ կարծիք ունես ռուսաց վրայ։

—Մեծ բան։ Ռուսը հէնց նրանով է լաւ, որ հէնց ինքը շատ վատ կարծիք ունի իր մասին։ Գլխաւորն այն է, որ երկու անգամ երկու չորս կանէ, իսկ մնացեալը բոլորը դատարկ բան է։

—Բնութիւնն էլ դատարկ բան է,—ասաց Արկադիյն մտախոհութեամբ հեռաստանի գոյնզգոյն արտերին նայելով, որոնք գեղեցիկ ու քնքոյշ լուսաւորուած էին արդէն բաւական խոնարհած արևի լոյսով։

—Այն մտքով, ինչ մտքով որ դու ես հասկանում, բնութիւնն էլ դատարկ բան է։ Բնութիւնը տաճար չէ, հապա արհեստանոց, իսկ մարդ նրա մէջ մշակ է։

Հէնց այդ միջոցին տան կողմից նրանց ականջին հասան վիօլոնչէլի դանդաղ հնչիւնները։ Մէկը, թէպէտ անփորձ ձեռքով, բայց զգացմունքով ածում էր Շուբերտի Անհամբերութիւնը, և քաղցրահունչ մեղեդին անոյշ կերպով ղեղւում էր օդի մէջ։

—Ա՞յս ինչ է,—զարմացած ասաց Բազարովը։

—Հայրս է։

—Հայրդ վիօլոնչէլ է ածում։

—Այո։

—Բայց քանի՞ տարեկան է հայրդ։

—Քառասուն չորս։

Բազարովը յանկարծ բարձրաձայն ծիծաղեց։

—Ինչո՞ւ ես ծիծաղում։

—Ախր ինչպէ՞ս չծիծաղեմ. քառասուն չորսը եկած մի մարդ, pater-familias, *** գաւառում—վիօլոնչէլ է ածում։

Բազարովը շարունակում էր քրքջալ. բայց Արկադիյն, թէպէտ շատ էլ իր ուսուցչից ակնածելիս լինէր, այս անգամ մինչև իսկ չժպտաց։

X

Մօտ երկու շաբաթ անցել էր։ Մարյինօում կեանքը իր կարգով առաջ էր գնում՝—Արկադին հեշտանքի մէջ էր, Բազարովն աշխատում։ Տանը ամենքն էլ ընտելացել էին նրան, նրա անհոգ ձևերին, նրա հակիրճ կցկտուր խօսքերին։ Մանաւանդ Ֆենիչկան այն աստիճանի ընտելացել էր նրան, որ

մի գիշեր մարդ ուղարկեց, որ նրան տեղից վերկացնեն՝—Միտեային ջղաձգութիւն էր պատահել. և Բազարովը եկաւ և ըստ սովորականին կէս հանաք, կէս յօրանջելով մօտ երկու ժամ նստեց այնտեղ ու Միտեային դարմանեց։ Մինչդեռ Պաւէլ Պետրովիչը հոգու բոլոր զօրութեամբ ատեց նրան—գոռոզ, լիրբ, չնաբարոյ, տրուկ էր համարում նրան. կասկածում էր, որ Բազարովն իրեն չէ յարգում և նոյն իսկ համարեա թէ արհամարհում է իրեն—իրեն Պաւէլ Կիրսանովին։ Նիկոլայ Պետրովիչը երիտասարդ «Նիհիլիստից» վախենում էր և կասկածում էր, որ նա կարող լինէր Արկադիի վրայ բարերար ազդեցութիւն ունենալ. բայց սիրով ականջ էր դնում նրան, սիրով էլ ներկայ լինում նրա ֆիզիքական ու քիմիական փորձերին։ Բազարովը հետը խոշորացոյց էր բերել և ամբողջ ժամերով զբաղւում էր դրանով։ Ծառաներն էլ էին նրան կապուել, չնայելով որ նրանց վրայ ծիծաղում էր՝—նրանք զգում էին, որ ինչքան էլ չլինի, էլի նա իրենցից է, աղա չէ։ Դունիաշան հաճութեամբ նրա հետ խօսում էր, ծիծաղում և ամեն անգամ մօտիցն արագութեամբ անցնելիս աչքի պոչովը խորհրդաւոր հայեացք ձգում վրան։ Պեօտրը, որ մի չափազանց անձնասէր ու անխելք մարդ էր և միշտ ճակատը մտախոհ խորշոմներով էր պատած, մի մարդ, որի բոլոր արժանիքն այն էր, որ քաղաքավարի կերպարանք ունէր, վանկ-վանկ կարդալ գիտէր և խոզանակով էլ յաճախ իր սերթուկը մաքրում,—մինչև անգամ նա էլ լուռ ծիծաղում էր ու երեսը բացւում էր, հէնց որ Բազարովը վրան ուշադրութիւն էր դարձնում՝ ընդօծին երեխաները, շան նման, «դոխտուրի» քամակից էին վազում։ Մենակ ծերունի Պրոկոֆյիչն էր, որ չէր սիրում նրան, ճաշի ժամանակ մռայլ կերպարանքով նրան կերակուր էր մատուցանում, աննպաստ անուն տալիս և հաւատացնում էր, թէ նա իր այտմօրուսներով կատարեալ թփի մէջ պառկած խոզի է նմանում։ Պրոկոֆյիչն էլ, իր տեսակին, ազնուական էր և Պաւէլ Պետրովիչից յետ չէր մնայ։

Տարուայ ամենալաւ օրերը հասան – յունիսի առաջին օրերը։ Պատուական եղանակ էր. ճիշտ է, խոլերան հեռուից սպառնալիք էր տալիս, բայց *** նահանգի բնակիչներն արդէն նրա այցելութիւններին սովորել էին։ Բազարովը շատ վաղ վեր էր կենում տեղից և երկու, երեք վերստ գնում էր, զբօսնելու չէ—նա աննպատակ զբօսանքը տանել չէր կարող—արտա-

ներ, միջատներ հաւաքելու։ Երբեմն հետը վերցնում էր նաև Արկադիյին։ Վերադարձին սովորաբար նրանց մէջ վէճ էր ծագում, և սովորաբար Արկադիյն յաղթւում էր, թէպէտ և ընկերից աւելի էր խօսում։

Մի անգամ նրանք սովորականից ուշացել էին. Նիկալայ Պետրովիչը նրանց ընդառաջ գնաց պարտէզ և, զովանոցին հասնելով, յանկարծ արագ քայլերի ձայն ու երկու երիտասարդների խօսակցութիւնը լսեց. զովանոցի միւս կողմից էին գալիս և կարող չէին իրան տեսնել։

—Դեռ հօրս լաւ չես ճանաչում,—ասում էր Արկադիյն։

Նիկալայ Պետրովիչը թագ կացաւ։

—Հայրդ լաւ մարդ է,—ասաց Բազարովը,—բայց արդէն ժամանակից յետ է մնացել, նրա բանը պրծած է։

Նիկալայ Պետրովիչը ուշադրութեամբ ականջ դրեց...։Արկադիյն ոչինչ չպատասխանեց։

«Ժամանակից յետ մնացած մարդը» մի երկու վայրկեան կանգնեց անշարժ և կամաց կամաց դէպի տուն գնաց։

—Տեսնեմ անցեալ օր Պուշկին է կարդում,—շարունակեց Բազարովը։—Ի սէր Աստուծոյ նրան հասկացրու, որ այդ դատարկ բան է։ Երեխայ հո չէ. ժամանակ է անմիտ բանից ձեռք քաշելու։ Եւ ինչ շահ կայ ներկայ ժամանակումս ռոմանտիկ լինելուց, չեմ հասկանում։ Նրան կարդալու համար մի կարգին բան տուր։

—Ի՞նչ տամ արդեօք,—հարցրեց Արկադիյն։

—Կարծում եմ, որ առ այժմ լաւ կ՚լինի տաս Բիւխների, Stoff und Kraft»ը։

—Ինքս էլ եմ այդպէս կարծում,—հաւանութիւն տուեց Արկադիյն։—Stoff und Kraft-ը հասկանալի լեզուով է գրած։

—Այ քեզ բան,—ասում էր Նիկալայ Պետրովիչը նոյն օրը ճաշից յետոյ իւր եղբօր առանձնասենեակում նստած,—ես էլ, դու էլ, եղբայր ջան, ժամանակից յետ ենք մնացել, մեր բանը պրծած է։ Ի՞նչ արած։ Գուցէ Բազարովի ասածն ուղիղ է, բայց, ճիշտն ասած, մի բան է միայն սրտիս ցաւ տալիս՝—յոյս ունէի որ մանաւանդ այժմս աւելի սերտ, աւելի բարեկամական կապեր կ՚հաստատեմ Արկադիյի հետ, բայց բանից դուրս է գալիս,որ ես յետ եմ մնացել, և մենք իրար հասկանալ կարող չենք։

—Ինչու պէտք է նա մեզանից առաջ գնացած լինի։ Եւ

ինչով է մի այդքան մեզանից տարբերւում,—անհամբերութեամբ բացականչեց Պաւէլ Պետրովիչը։—Բոլորը, բոլորը այդ պարոնի, այդ նիհիլիստի բանն է. նա է որդուդ գլուխը լցրել։ Ինչպէս ատում եմ այդ հաքիմին. իմ կարծիքով դա ուղղակի խաբեբայի մէկն է. հաւատացած եմ, որ նա իւր բոլոր գորտերով հանդերձ, բնագիտութեան մէջ էլ շատ առաջ գնացած չըպիտի լինի։

—Ոչ, եղբայր, այդ բանը մի ասի՝—Բազարովը խելօք ու հասկացող մարդ է։

—Եւ ինչպիսի զզուելի ինքնասիրութիւն ունի,—դարձեալ ընդհատեց Պաւէլ Պետրովիչը։

—Այո—նկատեց Նիկալայ Պետրովիչը.—ինքնասէր մարդ է։ Բայց, ինչպէս երևում է, առանց դրան կարելի չէ. միայն մէկ բանի խելքս չի հասնում։ Կարծեմ թէ ես ամեն բան անում եմ, որպէս զի դարից յետ չմնամ՝—գիւղացիներին ճորտութիւնից ազատեցի, տուն ու տեղի տէր արի, ագարակ հիմնեցի, այնպէս որ մինչև անգամ բոլոր նահանգում ինձ կարմիր են անուանում. կարդում եմ, ուսանում, առհասարակ աշխատում եմ ժամանակակից պահանջներին համապատասխան լինել,—իսկ նրանք ասում են, թէ արդէն բանս պրծած է։ Ի՞նչ անեմ, եղբայր, ինքս էլ եմ սկսում կարծել, թէ ճիշտ որ բանս պրծած է։

—Ինչից ես կարծում։

—Այ՛ ինչից։ Այսօր նստած Պուշկին էի կարդում...։ Որքան յիշում եմ, բաց էի արել «Цыгане»...։Մէկ էլ տեսնեմ Արկադիյն մօտեցաւ ինձ և, անխօս, փաղաքուշ ցաւակցութեան զգացմունքը դէմքին, գիրքը կամացուկ վեր առաւ ձեռքիցս, ոնց որ երեխին են անում, և առաջս դրեց մի ուրիշ, գերմաներէն գիրք... ժպտաց ու գնաց, և Պուշկինն էլ հետը տարաւ։

—Մի՞թէ։ Այդ ինչ գիրք էր տուածը։

—Ահա, այս գիրքը։

Եւ Նիկալայ Պետրովիչը սերթուկի ետևի գրպանից հանեց Բիւհների յայտնի գրքոյկի իններորդ հրատարակութիւնը։

Պաւէլ Պետրովիչը վեր առաւ գրքոյկն ու շուռ ու մուռ տուեց։

—Հմ,—մռնչաց նա։—Արկադիյ Նիկալայևիչը հոգ է տանում քու դաստիարակութեան վրայ։ Հը՛, ինչ է, փորձեցիր կարդալ։

—Փորձեցի։

—Յետո՞յ։

—Կամ ես եմ յիմարը, կամ թէ չէ այս բոլորը—անմիտ բաներ են։ Երևի ես եմ յիմարը։

—Միթէ գերմաներէնդ մոռացած չես,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Գերմաներէն հասկանում եմ։

Պաւէլ Պետրովիչը դարձեալ ձեռքի մէջը շուռ ու մուռ տուեց գիրքն ու աչքի տակովը եղբորը նայեցաւ։ Երկուսն էլ լռեցին։

—Հա, ի դէպ,—սկսեց Նիկոլայ Պետրովիչը ցանկանալով խօսքը փոխել։—Կոլիազինից նամակ ստացայ։

—Մատվէյ Իլյիչից։

—Այո։ *** է եկել նահանգի գործերը քննելու։ Այժմս նա մեծ մարդ է դարձել և ինձ գրում է, թէ իբրև ազգական ուզում է հետներս տեսնուիլ և ինձ, քեզ ու Արկադիյին քաղաք է հրաւիրում։

—Պիտի գնա՞ս,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Ոչ, դո՞ւ։

—Ես էլ չեմ գնայ։ Շատ հարկաւոր է յիսուն վերս քաշ գամ, թէ ինչ է՝ դրա երեսն եմ տեսնելու։ Mathieu-ն ուզում է, որ իւր բոլոր փառքը տեսած լինենք. սատանան տանի երեսը. սաղ նահանգում ինչ որ խունկ են ծխելու, այն էլ հերիք է նրան, առանց մերինին էլ եօլա կ'գնայ։ Մեծ բան, գաղտնի խորհրդական է դարձել։ Թէօր ես ծառայութիւնս շարունակած լինէի, այդ յիմար լուծը քաշտալի, այժմս գեներալ-ադիւտանդ դարձած կ'լինէի։ Այս էլ կայ, որ արդէն ես էլ, դու էլ յետ մնացած մարդիկ ենք։

—Այո, եղբայր. երևի ժամանակ է, որ դագաղ շինել տանք ու ձեռներս էլ կրծքներիս խաչենք,—հոգոց հանելով նկատեց Նիկոլայ Պետրովիչը։

—Չէ՛, ես այդպէս շուտով չեմ կոտրուի,—մրթմրթաց եղբայրը։—Դեռ այդ հաքիմի հետ մենք կ'տեսնուենք. ես այդ զգում եմ։ Ընդհարումը նոյն օրը երեկոյեան թէյի միջոցին պատահեցաւ։ Պաւէլ Պետրովիչը որ ընդունարան եկաւ, արդէն պատրաստուած էր կռուի. նա գրգռուած էր և վճռական։ Միայն առիթ էր փնտրում, որ թշնամու վրայ յարձակուի. բայց երկար ժամանակ առիթ չէր ներկայանում։ Բազարովն առհասարակ «ծերուկ Կիրսանովների» ներկայութեամբ սակաւ էր խօսում. (նա «ծերուկ էր կոչում երկու եղբայրներին), իսկ այդ երեկոյեան հոգու վատ տրամադրութեան մէջ էր և լուռ ու մունջ թէյը բաժակ բաժակի ետևից դատարկում։ Պաւէլ Պետրովիչը անհամբերութիւնից այրւում էր. վերջապէս նրա ցանկութիւնը կատարուեց։ Հարևան կալուածատէրներից մէկի վրայ խօսք բացուեց։ «Անպէտք, ազնուականիկ է», անտարբեր կերպով նկատեց Բազարովը, որ նրան Պետերբուրգում էր տեսել։

—Ներեցէք հարցնեմ,—սկսեց Պաւէլ Պետրովիչը և նրա շրթունքները դողդողացին։—Ձեր հասկացողութեամբ «անպէտք» և «ազնուական» բառերը միևնոյն միտքն ունին։

—Ես «ազնուականիկ» ասացի,—պատասխանեց Բազարովը դանդաղ կերպով թէյի ումպը կուլ տալով։

—Շատ լաւ. բայց կարծում եմ, որ ազնուականների մասին էլ նոյն կարծիքին էք ինչ որ և ազնուականիկների։ Պարտաւորութիւնս եմ համարում ձեզ յայտարարելու, որ ես այդ կարծիքին չեմ։ Համարձակւում եմ ասել, որ ամենքն էլ ինձ ճանաչում են որպէս մի լիբերալ (ազատամիտ) և պրոգրես (առաջադիմութիւն) սիրող մարդ. և հէնց դրա համար էլ ես յարգում եմ իսկական արիստոկրատներին (ազնուականներին)։ Յիշեցէք, մեծարոյ պարոն (այս խօսքերի վրայ Բազարովը աչքը Պաւէլ Պետրովիչի վրայ բարձրացրեց), յիշեցէք մեծարոյ պարոն,—կրկնեց նա զայրացած,—անգլիական արիստոկրատներին։ Նրանք իրենց իրաւունքներից մի նշանախեց անգամ չեն զիջանում, և այդ պատճառով էլ յարգում են նաև ուրիշների իրաւունքները. նրանք պահանջում են, որ կատարուին դէպի իրենց եղած պարտաւորութիւնները, ուստի և իրենք էլ իրենց պարտաւորութիւններն են կատարում։ Արիստոկրատիան էր Անգլիային ազատութիւն տուողը ու նա է նրան պահպանողը։

—Մենք այդ երգը շատ ենք լսել,—պատասխանեց Բազարովը,—բայց դրանով ինչ էք ուզում ապացուցանել։

—Էստոնք ասելով ուզում եմ ապացուցանել, մեծարոյ պարոն (Պաւէլ Պետրովիչը երբ որ նեղանում էր, դիտմամբ էր էստոնք ասում, թէպէտ շատ լաւ գիտէր, որ գրական լեզուի քերականութեան մէջ կարելի չէր այդպիսի ձև գործածել։ Բայց դա մնացորդ էր Ալէքսանդրեան շրջանի աւանդութիւն-

ների, երբ ժամանակի ականաւոր անձինք, հազարից մէկ մայրենի լեզուով խօսած միջոցին այդպիսի և նման տարօրինակ ձևեր էին գործածում, որպէս զի ցոյց տան, թէ իրենք ժողովրդի կեանքով են ապրում...) էստոնք ասելով ուզում եմ ապացուցանել, որ եթէ մարդուս մէջ արժանապատուութեան զգացմունք չլինի, եթէ մարդս դէպի իւր անձը յարգանք տածելու չլինի—իսկ արիստոկրատների մէջ այդ զգացմունքները զարգացած են,—ոչ մի հաստատուն հիմք չկայ հասարակաց bien public *)...հասարակաց շէնքի համար։ Անհատը, մեծարգոյ պարոն,—ահա որն է գլխաւորը. մարդկային անհատը պէտք է ժայռի նման հաստատուն լինի, որովհետև ամեն բան նրա վրայ է հիմնւում։ Ես շատ լաւ գիտեմ, օրինակ, որ դուք ծիծաղելի էք համարում իմ սովորութիւններս, իմ արդ ու զարդըս, վերջապէս իմ մաքրասիրութիւնս, բայց այդ ամենը առաջ է գալիս անձնապատուութեան զգացմունքից, պարտաւորութեան զգացմունքից, այո, այո, պարտաւորութեան։ Ես ապրում եմ գիւղում, մի խուլ անկիւնում, բայց իմ պատիւս գետին չեմ ձգում, ես իմ անձնաւորութեանս մէջ յարգում եմ մարդը։

—Ներեցէք, Պաւէլ Պետրովիչ,—ասաց Բազարովը,—ահաւասիկ դուք յարգում էք ձեզ և նստած էք ձեռներդ ծալած. ինչ շահ դրանից bien public-ի համար։ Եթէ դուք ձեզ չյարգէիք, դարձեալ միենոյն բանը կ'անէիք։

Պաւէլ Պետրովիչը սպրդնեց։

—Այդ բոլորովին ուրիշ խնդիր է։ Ես այժմ բոլորովին չեմ ուզում ձեզ բացատրել, թէ ինչու եմ, ձեր ասածի պէս, ձեռներս ծալած նստել։ Ուզում եմ միայն ասել, որ արիստոկրատութիւնը—պրինցիպ է, իսկ մեր ժամանակում առանց պրինցիպի անբարոյական կամ դատարկապորտ մարդիկ կարող են ապրել։ Ես այս բանն Արկադիյին ասել եմ նրա գալու հէնց միւս օրը, և այժմս ասում եմ ձեզ։ Այնպէս չէ՞ Նիկոլայ։

Նիկոլայ Պետրովիչը գլխով արաւ։

—Արիստոկրատ, լիբերալ, պրոգրէս, պրինցիպ,—ասաց Բազարովը,—ինչքա՜ն օտար...և անօգուտ բառեր։ Մեր ժողովրդին ամենևին պէտք չեն դրանք։

—Հապա ինչ է պէտք նրան ձեր կարծիքով։ Ձեզ որ ականջ

---

*) Բոլորովին հասարակական։

կախելու լինիք, մենք մարդկութիւնից դուրս, օրէնքներից դուրս ենք գտնւում։ Բայց ախր պատմութեան լոգիկան պահանջում է..։

—Մեր ինչին է այդ լոգիկան։ Մենք առանց դրան էլ ենք եօլայ գնում։

—Ի՞նչպէս։

—Այնպէս։ Կարծեմ որ դուք լոգիկայի կարիք չունիք, որպէս զի քաղցած ժամանակներդ հացի պատառը բերաններդ տանէք։ Մեր ինչ բանն է այդ վերացական հասկացողութիւններով զբաղուել։

Պաւէլ Պետրովիչը թափ տուաւ ձեռքը։

—Սրանից յետոյ այլես ես ձեզ չեմ հասկանում։ Դուք անպատւում էք ռուս ժողովուրդը։ Չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է պրինցիպներ, կանոններ չընդունել։ Ուրեմն այլ ես յանուն ինչ բանի էք գործում։

—Արդէն ձեզ ասել էի, հօրեղբայր, որ մենք հեղինակութիւն չենք ճանաչում,—մէջ մտաւ Արկադին։

—Մենք գործում ենք յանուն այն բանի, ինչ որ օգտակար ենք համարում,—ասաց Բազարովը։—Ներկայումս ամենաօգտակարը ժխտելն է. մենք էլ ժխտում ենք։

—Ամե՞ն բան։

—Ամեն բան։

—Ի՞նչ...ոչ միայն գեղարուեստը, բանաստեղծութիւնը... այլ և...սարսափելի է ասելը։

—Ամեն բան,—աննկարագրելի հանգստութեամբ կրկնեց Բազարովը։

Պաւէլ Պետրովիչն աչքերը սևեռեց նրան։ Նա այս բանըս չէր սպասում, իսկ Արկադին գոհութիւնից մինչև անգամ կարմրեցաւ։

—Բայց սպասեցէք,—խօսեց Նիկոլայ Պետրովիչը։—Դուք ամեն բան մերժում էք, ժխտում, կամ, աւելի ճիշդն ասած, ամեն բան խորտակում էք...։Բայց չէ՞ որ պէտք է նաև շինել։

—Այդ արդէն մեր գործը չէ...։Նախ պէտք է տեղ բաց անել։

—Ժողովրդի ներկայ դրութիւնն այդ է պահանջում,—ծանրակշիռ կերպով աւելացրեց Արկադին,—մենք պարտաւոր ենք այդ պահանջները կատարել, իրաւունք չունենք մեր անձնական եսի գոհացմանն անձնատուր լինել։

Այս վերջին նախադասութիւնը, ըստ երևոյթին, Բազա-

բոլորին դիւր չեկաւ, որովհետև դրանից փիլիսոփայութեան, այսինքն ռոմանտիզմի հոտ էր փչում, իսկ Բազարովը փիլիսոփայութիւնն էլ ռոմանտիզմ էր անուանում. բայց նա հարկ չհամարեց իւր երիտասարդ աշակերտի ասածը հերքելու։

—Ոչ, ոչ,—յանկարծական ուժգնութեամբ բացականչեց Պաւէլ Պետրովիչը.— չեմ ուզում հաւատալ թէ դուք, պարոններ, լաւ ճանաչելիս լինիք ռուս ժողովուրդը, որ դուք նրա կարիքների, նրա ձգտումների ներկայացուցիչն էք։ Ոչ, ռուս ժողովուրդն այն չէ, ինչպէս որ դուք էք նրան նկարագրում։ Նա սրբութեամբ պահում է աւանդութիւնները, նա—նահապետական է։ Նա առանց հաւատի կարող չէ ապրել...։

—Դրա դէմ չեմ վիճի,—խօսքը կտրեց Բազարովը.—մինչև անգամ պատրաստ եմ համաձայնելու, որ այդ կտորի մէջ ձեր ասածն իրաւացի է։

—Իսկ եթէ իրաւացի է...

- Բայց և այնպէս այդ ոչինչ չի ապացուցանում։

—Արդարև ոչինչ չի ապացուցանում,—կրկնեց Արկադիյն փորձուած շախմատ խաղացողի մի այնպիսի վստահութեամբ, որը կարծես նախատեսել է հակառակորդի անելիք ըստ երևոյթին վտանգաւոր խաղը, ուստի և ամենևին չի շփոթւում։

—Ինչպէ՞ս թէ ոչինչ չի ապացուցանում,—փնթփնթաց ապշած Պաւէլ Պետրովիչը։—Ուրեմն դուք ձեր ժողովրդի դէմ էք գնում։

—Թէկուզ հէնց այդպէս էլ լինի,—բացականչեց Բազարովը։ —Ժողովուրդը կարծում է թէ երբ որ ամպը գոռում է, այդ Եղիա մարգարէն է երկնքում կառքով ման գալիս։ Ի՞նչ է։ Համաձայնեմ նրան։ Ասենք նա ռուս է - իսկ ես, միթէ ես ինքս ռուս չեմ։

—Ոչ, այն բոլորից յետոյ, որ դուք այժմ ասացիք, դուք ռուս չէք։ Չեմ կարող ձեզ ռուս համարել։

—Իմ պապս հողագործ էր,—գոռոզ հպարտութեամբ պատասխանեց Բազարովը։—Հէնց ձեր գիւղացիներից մէկին ուզում էք հարցրէք. թէ մեզանից որին աւելի իրեն մօտիկ կը համարէ, ինձ թէ ձեզ։ Դուք նոյն իսկ նրա հետը խօսել էլ չգիտէք։

—Իսկ դուք հետը խօսում էք և միևնոյն ժամանակ էլ նրան արհամարհում.

—Ի՛նչ արած, քանի որ արժանի է արհամարհանքի։ Դուք կշտամբում էք իմ ուղղութիւնս, բայց ո՞վ է ձեզ ասում, թէ այդ ուղղութիւնը պատահական է իմ մէջս, որ դա առաջ չի եկել հէնց նոյն ժողովրդական ոգուց, որի անունով այսքան մաքառում էք։

—Շա՜տ բան։ Խիստ հարկաւոր էին նիհիլիստները։

--Հարկաւոր են թէ հարկաւոր չեն - այդ մենք չվճռենք։ Հօ դուք էլ ձեզ անօգուտ չէք համարում։

—Պարոններ, պարոններ, անձնաւորութեան մի կպչէք, —բացականչեց Նիկոլայ Պետրովիչը և վերկացաւ տեղից։

Պաւէլ Պետրովիչը ժպտաց ու ձեռքը եղբօր ուսին դնելով, նրան նորից իւր տեղը նստացրեց։

--Անհանգիստ մի լինի,—ասաց նա։—Ես գլուխս չեմ կորցնի հէնց արժանապատւութեան այն զգացմունքի շնորհիւ, որ այսպէս սաստիկ ծաղրում է պարոն...պարոն բժիշկը։ Եւ ո՛վ գիտէ,—շարունակեց նա նորից Բազարովին դիմելով,—գուցէ դուք կարծում էք, թէ ձեր վարդապետութիւնը մի նո՞ր բան է։ Իզուր էք կարծում։ Ձեր քարոզած մատերիալիզմը (նիւթապաշտութիւնը) միշտ քարոզուել է և միշտ էլ անզօր է եղել...։

—Դարձեալ օտար բառ,—ընդմիջեց Բազարովը։ Նա ըսկսում էր չարանալ, և նրա դէմքը մի տեսակ պղնձի կոպիտ գոյն ստացաւ։—Նախ որ մենք ոչինչ չենք քարոզում, այդպիսի սովորութիւն չունինք...։

—Հապա ի՞նչ է ձեր արածը։

—Ահա՛ ինչ ենք անում։ Առաջները, դեռ շատ ժամանակ չէ անցած, մենք ասում էինք, թէ մեր ծառայողները կաշառք են առնում, որ մեզանում ոչ ճանապարհ կայ, ոչ վաճառականութիւն, ոչ կանոնաւոր դատաստան...։

—Իհարկէ, իհարկէ, դուք մերկացնողներ էք,—կարծեմ այդպէս է ասւում։ Ձեր մերկացումների շատերին ես ինքս էլ համաձայն եմ, բայց...

—Իսկ յետոյ խելքի եկանք, որ մեր վէրքերի մասին խօսելով, լոկ խօսելով բան չի դուրս գալ, որ դրա հետևանքը միմիայն վերացական անարգ դատողութիւններ են. տեսանք, որ մեր խելօքները, առաջաւոր համարուած մարդիկ ու մերկացնողներն էլ բոլորովին բանի պէտք չեն, որ մենք դատարկ բաներով ենք զբաղուած, խօսում, դատում ենք մի ինչ որ արուեստի

մասին, անգիտակցական ստեղծագործութեան մասին, պարլամենտականութեան մասին, փաստաբանութեան մասին և էլ դրողը գիտէ թէ ինչ բաների մասին, մինչդեռ խնդիրը օրական հացի մասին է, մինչդեռ կոպիտ սնապաշտութիւնը մեզ խեղդում է. մեր բոլոր բաժնետէր ընկերութիւնները սնանկանում են միմիայն ազնիւ մարդկանց պակասութեան պատճառով, մինչդեռ հէնց ինքն ազատութիւնը, որի մասին հոգս է տանում կառավարութիւնը, հազիւ թէ մեզ մի օգուտ տայ, քանի որ մեր գիւղացին պատրաստ է ինքն իրանից գողանալու, որ խումբ տայ։

—Լաւ,—ընդմիջեց Պաւէլ Պետրովիչը,—լաւ, այս բոլոր բաներին դուք համոզուել էք և վճռել էք ինքներդ ոչ մի բանի լրջօրէն ձեռք չտալ։

—Եւ վճռել ենք ոչ մի բանի ձեռք չտալ,—մռայլած կրկնեց Բազարովը։ Նա յանկարծ սկսաւ ինքն իր վրայ նեղանալ, թէ ինչ հարկաւոր էր այդքան երկար բարակ խօսելու այս տղայի հետ։

—Եւ միայն հայհոյել։

—Եւ հայհոյել։

—Եւ այդ կոչւում է նիհիլիզմ։

—Եւ այս կոչւում է նիհիլիզմ,—կրկնեց Բազարովը այս անգամ մի առանձին յանդգնութեամբ։

Պաւէլ Պետրովիչը աչքերը թեթևակի կկոցեց։

—Այսպէս հա՜,—ասաց նա տարօրինակ հանդարտ ձայնով։—Նիհիլիզմը պէտք է ամէն ցաւի դարման անէ և դուք, դուք մեր ազատարարներս ու հերոսներս էք։ Էլ ինչի՞ էք ուրեմն ուրիշներին, հէնց թէկուզ մերկացնողներին, վատաբանում։ Միթէ դուք էլ նրանց նման լոկ շաղակրատելով չէ՞ք զբաղուած։

—Ուրիշ բան չգիտեմ, բայց մենք այդ պակասութիւնը չունինք,—ատամի արանքից ասաց Բազարովը։

—Ուրեմն ինչ էք անում, գործո՞ւմ էք ինչ է։ Թէ՞ պատրաստւում էք գործելու։

Բազարովը ոչինչ չպատասխանեց։ Պաւէլ Պետրովիչը նստած տեղը ցնցուեց, բայց իսկոյն էլ ինքն իրեն զսպեց։

—Հմ...գործել... քանդել... շարունակեց նա։—Բայց ինչպէ՞ս էք քանդում, քանի որ մինչև անգամ չգիտէք, թէ ինչու էք քանդելու։

—Մենք քանդում ենք, որովհետև մենք ոյժ ենք,—նըկատեց Արկադին։

Պաւէլ Պետրովիչը նայեց իւր եղբօր որդուն ու քմծիծաղեց։

—Ոյժը երբէք հաշիւ չի տալիս,—ասաց Արկադին ու շտկուեցաւ։

—Թշուառական,—վշտացած ձայնով ասաց Պաւէլ Պետրովիչը. նա այլևս բոլորովին անզօր էր իրեն զսպելու.—գոնէ դու միտք անէիր, թէ Ռուսիայում ինչ բան ես պաշտպանում քու այդ անարգ վարդապետութեամբդ։ Ոչ. այս բանը հրեշտակին էլ կարող է համբերութիւնից հանել։ Ո՛յժ։ Վայրենի ղալմուխի մէջ էլ, մոնղոլի մէջ էլ ոյժ կայ—բայց ինչերիս է այդ ոյժը։ Մեզ համար թանկ է քաղաքակրթութիւնը, այո, այո, մեծարգոյ պարոն, մեզ համար թանկ են նրա պտուղները։ Մի ասէք, թէ չնչին են այդ պտուղները. ամենավերջին գրչակը, un barbouilleur *), վարձուած հասարակ դաշնակահարը, որ մի հինգ կոպէկի համար պատրաստ է ամբողջ իրիկունը նուագել, նոյն իսկ դրանք աւելի օգտակար են, քան թէ դուք, որովհետև նրանք քաղաքակրթութեան արգիւնք են, և ոչ թէ մոնղոլական կոպիտ ոյժի։ Դուք ձեզ առաջաւոր մարդիկ էք երևակայում, մինչդեռ ձեր տեղը ղալմուխի սայլակն է։ Ո՛յժ։ Յիշեցէք վերջապէս, պարոն ուժովներ, որ ձեր տեղը երկու ջուխտ մի կենտ է, իսկ միւսները—միլիոնաւոր են և ձեզ չեն թոյլ տալ, որ դուք ոտքի տակ առնէք նրանց սրբազան հաւատալիքները, և կտորեն ձեզ։

—Ջհանդամը։ Տրորում են տրորեն,—ասաց Բազարովը։—Միայն էն վաղ էր, որ էշը կաղ էր։ Ձեր կարծածի չափ մեր տեղն այնքան էլ քիչ չէ։

—Ի՛նչ. լրջուի՞ կարծում էք, թէ բոլոր ժողովրդի հախիցը կգաք։

—Գիտէք, որ կաթիլը քար կծակէ,—պատասխանեց Բազարովը։

—Լաւ, լաւ։ Նախ համարեա գիտական գոռոզութիւն, իսկ ապա ծաղր։ Ահա, ահա թէ ինչով է յափշտակւում երիտասարդութիւնը, ահա թէ ինչից են յաղթւում երեխաների անփորձ սրտերը։ Ահաւասիկ, նայեցէք, դրանցից մէկը ձեր կող-

*) Անպէտք գրող. ծթ։

քին է նստած. քիչ է մնում, որ նա ձեր առաջ մոմ վառէ, ուրախացէք։ (Արկադին երեսը շուռ տուաւ ու մռայլեց։) Եւ այս վարակը սաստիկ տարածուել է։ Ինձ պատմում էին, թէ Հռոմում մեր նկարիչները Վատիկան ոտք չեն կոխում։ Ռաֆայէլին համարեա թէ անխելք են անուանում, որովհետև նա հեղինակութիւն է, իսկ իրենք զարշելու աստիճանի անզօր են և անպտուղ. երևակայութիւնները հօ «Աղջիկը աղբիւրի մօտ»ից ամենևին աւելի հեռուն չի գնում։ Այդ էլ գոնէ մի բա՜ն լինի։ Աղջկայ պատկերը հօ—մի անպիտան բան։ Ձեր կարծիքով նրանք ղոչաղ մարդիկ են, այնպէս չէ։

—Իմ կարծիքովս Ռաֆայէլը մի քոռ կոպէկ չարժի,—պատասխանեց Բազարովը.—դրանք հէնց իրանք էլ Ռաֆայէլից շատ լաւ չեն։

—Կեցցէք, կեցցէք։ Լաւ լսիր, Արկադիյ...ահա ինչ ոձով պէտք է խօսեն ներկայիս երիտասարդները։ Եւ ինչպէս ձեր ետևից չգնան սրանք։ Առաջները երիտասարդները պէտք է ուսանէին. չէին ուզում տգէտ անուն ունենալ, ուստի և ակամայ աշխատում էին։ Իսկ այժմ բաւական է ասեն՝ աշխարքիս վրայ ամեն բան էլ դատարկ բան է—պրծաւ գնաց։ Երիտասարդներն ուրախացան։ Արդարև, առաջ նրանք պարզապէս անխելք էին, իսկ այժմ յանկարծ նիհիլիստ դարձան։

— Տեսա՞ք, ահաւասիկ ձեր գոված արժանապատւութեան զգացմունքը դաւաճանեց ձեզ,—սառնութեամբ նկատեց Բազարովը, մինչդեռ Արկադին ամբողջապէս կրակ կտրած աչքերից կայծեր էր ցայտում։—Մեր վէճը շատ հեռուն գնաց...։ Կարծեմ աւելի լաւ է դադարեցնենք։ Իսկ ես միմիայն այն ժամանակ պատրաստ կլինեմ համաձայնելու ձեզ հետ,—ասաց նա տեղից վերկենալով,—եթէ որ դուք կարող կլինիք մեր ներկայ, ընտանեկան կամ հասարակական կեանքից գէթ մէկ հաստատութեան անուն տալ, որ կատարեալ և անխնայ ժխտման առիթ եղած չլինի։

—Այդպիսի միլիոնաւոր հաստատութիւնների անուն կըտամ,—բացականչեց Պաւէլ Պետրովիչը,—միլիոնաւոր։ Այ, թէ կուզ հէնց համայնքն օրինակ։

Ծաղրական սառն ժպիտը ծռեց Բազարովի շրթունքները։

—Է՛հ, համայնքի մասին,—ասաց նա,—աւելի լաւ է ձեր եղբօր հետ խօսէք։ Կարծեմ նա այժմ արդէն փորձով գիտէ, թէ ինչ բան է համայնքը, ինչ բան է հասարակական պա-

տասխանատւութիւնը՝ իր անդամներից մէկի պարտաղանցութեան համար, խումից ժուժկալելը և նման բաները։

—Ընտանիքը, վերջապէս ընտանիքը, որովհետև դա գոյութիւն ունի մեր գիւղականների մէջ,—կանչեց Պաւէլ Պետրովիչը։

—Կարծում եմ, որ հենց ձեզ համար էլ լաւ է, որ այդ խնդրի մանրամասնութիւնները չքննենք։ Երևի լսած կլինիք «սնոխաչների» մասին։ Բան եմ ասում, Պաւէլ Պետրովիչ, աւելի լաւ է, որ դուք ձեզ համար մտածելու մի երկու օր ժամանակ դնէք, որովհետև դժուար թէ այսպէս շուտով մի օրինակ գտնէք։ Հաշուի առէք մեր բոլոր դասակարգերը և ամեն մէկի վրայ մէկ լաւ միտք արէք, իսկ մինչ այդ ես ու Արկադին էլ...

—Ամեն բան ծաղր ու ծանակ կդարձնէք,—վրայ բերեց Պաւէլ Պետրովիչը։

—Ոչ, գորտ կկտրատենք։ Գնանք, Արկադիյ. մնաք բարով, պարոններ։

Երկու ընկեր դուրս ելան։ Եղբայրները մնացին մենակ և սկզբում միայն միմեանց երեսի էին նայում։

—Ահաւասիկ,—վերջապէս սկսեց Պաւէլ Պետրովիչը.—Ահա—մեր ներկայ երիտասարդութիւնը։ Ահա քեզ—մեր ժառանգները։

—Ժառանգները,—թախծալի հառաչով կրկնեց Նիկոլայ Պետրովիչը։ Նա վէճի միջոցին բոլոր ժամանակը կարծես ածուխի վրայ նստած լինէր, և միմիայն թագուն-թագուն, հիւանդագին մտիկ էր տալիս Արկադիյին։

—Գիտես ինչ միտս ընկաւ, եղբայր,—ասաց նա։—Մի անգամ լուսահոգի մայրիկի հետ վէճ ունեցայ՝—նա կանչվռտում էր, չէր ուզում ինձ ականջ դնել...։Վերջապէս ես նրան ասացի, թէ դուք կարող չէք ինձ հասկանալ, թէ մենք երկու տարբեր սերունդների ենք պատկանում։ Մայրիկս սաստիկ վիրաւորուեցաւ, իսկ ես մտածեցի՝—ինչ արած։ Դառն կապ է—բայց պէտք է կուլ տալ։ Այժմ ահա հերթը մեզ է հասել, մեր ժառանգներն էլ կարող են մեզ ասել՝—դուք մեր սերնդի մարդ չէք, կուլ տուէք հապը։

—Դու արդէն չափազանց բարեհոգի ես ու համեստ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը.—ընդհակառակն ես համոզուած եմ, որ մենք աւելի իրաւացի ենք, քան թէ այս պարոնիկ-

ները, թէպէտ և գուցէ փոքր ինչ հնացած, vieilli *) լեզուով ենք մեր մտքերը արտայայտում, և նրանց յանդուգն անձնապաստանութիւնը չունենք...: Եւ ինչ փքուած բան է դարձել այս ներկայ երիտասարդութիւնը: Որ պատահեց դրանից մէկին հարցրիր, որ գինուցն էք ուզում, կարմիր թէ սպիտակ, «Ես սովորութիւն ունիմ գերադասել կարմիրը» կպատասխանէ նա բամբ ձայնով և դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ, որ կարծես թէ այդ միջոցին ամբողջ տիեզերքը նրա բերանին է մտիկ տալիս...:

—Էլ թէյ չէ՞ք ուզում, – հարցրեց Ֆենիչկան գլուխը դռնից ներս կոխելով՝ - մինչ ընդունարանում լսում էին վիճողների ձայները, նա սիրտ չէր անում ներս մանելու:

—Ոչ, կարող ես ասել, որ ինքնաեռը վերցնեն, —պատասխանեց Նիկոլայ Պետրովիչը և վեր կացաւ նրան ընդառաջ գնաց: Պաւէլ Պետրովիչը կտրուկ ձևով ասաց «bon soir» **) և իր առանձնասենեակը քաշուեցաւ:

XI

Կէս ժամ յետոյ Նիկոլայ Պետրովիչը պարտէզ, իր սիրելի զովանոցը գնաց: Տխուր մտքերը պաշարել էին նրան: Առաջին անգամն էր, որ նա պարզ զգաց իր որդուց անջատուած եղածը. զգում էր, որ օր օրի վերայ այդ բանը պիտի մեծանար: Ուրեմն իզուր է եղել իր, Պետերբուրգում եղած միջոցին, օրերով նորագոյն գրքերի վրայ ժամանակ անցկացրածը, զուր է եղել երիտասարդների խօսակցութիւններին ականջ դնելը. զուր է ուրախանալիս եղել, որ նրանց կրակոտ ճառերի միջոցին իր կարծիքն էլ էր յայտնում: «Եղբայրս ասում է, թէ մենք ենք իրաւացին», —մտածում էր նա, «և, ինքնասիրութիւնս մի կողմ դրած, հէնց ինձ էլ այնպէս է թւում, թէ նրանք աւելի հեռու են ճշմարտութիւնից, քան թէ մենք, բայց միևնոյն ժամանակ էլ զգում եմ, որ նրանք ունին մի այնպիսի բան, մի տեսակ առաւելութիւն, որ մենք չունինք...: Երիտասարդութիւնն է այդ: Ոչ. մենակ երիտասարդութիւնը չէ: Արդեօք այդ առաւելութիւնն այս չէ՞, որ նրանց մէջ աւելի քիչ աղայութեան հետք կայ քանթէ մեր մէջը:

*) Հին, հնացած. ծթ.
**) Գիշեր բարի: ծթ.

Նիկոլայ Պետրովիչը գլուխը քաշ գցեց ու ձեռքով երեսը շփեց:

«Բայց մերժել բանաստեղծութիւնը», մտածեց նա նորից. «չսիրել նկարչութիւնը, բնութիւնը...»:

Եւ նա չորս կողմը նայեցաւ կարծես կամենալով հասկանալ, թէ ինչպէ՞ս կարելի էր բնութիւնը չսիրել: Իրիկնադէմ էր. արևը ծածկուել էր կաղամախուտ անտառի ետևը, որը պարտիզից կէս վերստ հեռու էր գտնւում՝ —նրա ստուերը ընկած էր անշարժ դաշտերի վրայով և վերջ չունէր: Անտառի երկարութեամբ մութ, նեղ ճանապարհով կխարչաւ գնում էր մի գիւղացի սպիտակ ձի նստած—նա ամբողջովին երևում էր պարզ կերպով, ամբողջովին՝ նոյն իսկ ուսի կարկատանն էլ, չնայելով, որ ստուերի միջովն էր գնում. հաճելի որոշ երևում էին ձիու ոտի շարժումները: Արևի ճառագայթներն էլ մտել էին անտառի մէջը և, թաւուտի միջից թափանցելով, կաղամախիների բները մի այնպիսի ջերմ լոյսով էին ողողել, որ եղևնու բների էին նմանե, իսկ թաւ տերևները համարեա կապոյտ գոյն էին ստացել, իսկ անտառի վերևը տարածուած էր բացկապոյտ երկինքը, որ վերջալոյսի ճառագայթներից թեթևակի կարմրել էր: Ծիծեռնակները թռչում էին բարձրում. քամին բոլորովին խաղաղել էր. ուշ մնացած մեղուները ծուլաբար ու քնատ բզզում էին յասմիկի ծաղիկների միջև. մլակները սիւնի նման վխտում էին հեռու ձգուած, մեն-մենակ ճիւղի վերևը: «Ախ, ինչ սքանչելի բան է, Աստուած իմ» մտածեց Նիկոլայ Պետրովիչը և արդէն սկսել իր սիրած ոտանաւորը ասել, բայց յանկարծ միտքն ընկաւ Արկադիյն, Stoff und Kraft-ը և լռեց, բայց դարձեալ մնաց միևնոյն տեղը, դարձեալ անձնատուր եղաւ առանձնակի խոհերի վշտալի ու բերկրալից խաղին: Նա սիրում էր անուրջների մէջ ընկնել. գիւղական կեանքը նրա մէջ այդ յատկութիւնն էր զարգացրել: Վաղո՞ւց է, որ նա նոյնպէս երազում էր՝ քարվանսարայում որդու ճանապարհը պահելիս, իսկ այն օրուանից յետոյ արդէն փոփոխութիւն էր եղել, արդէն պարզուել էին դեռ ես այն ժամանակ անորոշ յարաբերութիւնները...և ինչպէս պարզուել: Դարձեալ միտքն ընկաւ լուսահոգի կինը, բայց ոչ թէ այնպէս, ինչպէս սովոր էր տեսնել երկար տարիներ, որպէս տնտես, բարի կին, հապա որպէս նորատի աղջիկ՝ բարակ իրանով, անմեղ-փորձող հայեացքով և պինդ հիւսած ծամը մանկական վզովն ընկած:

Յիշեց, թէ ինչպէս էր տեսել նրան առաջին անգամ. այն ժամանակ ինքը դեռ ուսանող էր։ Նրան հանդիպել էր իր բընակած տան աստիճանների վրայ և յանկարծ նրան զարնուելով, շուռ էր եկել, որ ներողութիւն խնդրի. բայց այսքանս միայն կարողացել էր թոթովել. «pardon monsieur» *), իսկ աղջիկը գլուխը քաշ էր գցել, քմծիծաղել, և յանկարծ վախեցած փախել գնացել, իսկ աստիճանների պտոյտքին արագութեամբ յետ էր դարձել, նայել նրան, լուրջ կերպարանք առել ու կարմրել։ Այնուհետև յիշեց իր առաջին վեհերկոտ այցելութիւնները, կէս-բերան խօսքերը, կէս-ժպիտները, և վարանումները, և թախիծը, և բորբոք սէրը, և վերջապէս այն հեղձուցիչ բերկրանքը… Ո՞ւր կորան այն ամենը։ Նրանք պսակուեցան, այնպէս բաղդաւոր էին, որ քչերին է վիճակւում երկրիս վրայ…։ «Բայց,—մտածում էր նա,—այդ քաղցր, առաջին ակնթարթները, ինչու չպէտք է դրանք յաւիտեան, չըմեռնող կեանքով ապրէին»։ Բայց նա չէր աշխատում իրեն համար պարզելու իր մտքերը. սակայն զգում էր, որ կցանկար այդ երանաւէտ ժամանակների յիշատակը պահպանած լինել մի աւելի զօրեղ բանով, քան թէ լոկ յիշողութիւնն էր. կուզէր ի նորոյ շօշափել իր Մարիայի մօտիկութիւնը, զգալ նրա ջերմութիւնն ու շունչը, և նրան արդէն թւում էր, որպէս թէ իր վերևը…

—Նիկոլայ Պետրովիչ, – մօտիկից լսուեց Ֆենիչկայի ձայնը,—Ո՞ւր էք։

—Նիկոլայ Պետրովիչը ցնցուեց։ Նա ոչ ցաւ զգաց, ոչ խղճի խայթ…Նա կարող չէր մինչև անգամ հնարաւոր համարել, որ իր կնոջը և Ֆենիչկային համեմատեն միմեանց հետ. բայց նա վշտացաւ, որ Ֆենիչկան եկել էր իրեն փնտրելու։ Ֆենիչկայի ձայնը միանգամից նրան յիշեցրեց իր սպիտակ մազերը, իր ծերութիւնը, իր ներկան…։

Դիւթական աշխարհը, ուր նոր-նոր ոտք էր դրել, որն արդէն ծագում էր անցեալի միգամած ալիքների միջից, տատանուեց—և անհետացաւ։

—Այստեղ եմ, – պատասխանեց նա, – գնա, կգամ։ «Ահաւասիկ ազնուականութեան հետքերը», մտածեց նա։ Ֆենիչկան լռելեայն մտիկ տուաւ զովանոցի մէջն ու անհետացաւ. իսկ նա զարմանալի

*) Ներեցէք: պարոն: Ծն.

ցած նկատեց, որ անուրջքներին անձնատուր լինելուց յետոյ արդէն գիշերը վրայ էր հասել։ Չորս կողմն ամեն բան մթնել ու լռել էր, և Ֆենիչկայի դէմքը նրա աչքի առաջ խիստ դըժգոյն ու մանր թուաց։ Նա վերկացաւ և ուզում էր տուն դառնալ. բայց քնքշացած սիրտը չէր կարողանում հանգստանալ իր կրծքի մէջ և նա սկսաւ ծանր-ծանր ման գալ պարտիզում մերթ մտախոհ կերպով ոտների տակը մտիկ տալով, մերթ աչքերը դէպի երկինք բարձրացնելով, ուր արդէն աստղերը պար առած իրար աչքախփիկ էին անում։ Նա երկար ժամանակ, համարեա մինչև յոգնելը ման եկաւ, իսկ ներսը մի վրդովմունք, մի տեսակ որոնող, անորոշ, տխուր վրդովմունք ամենևին չէր հանգստանում։ Ո՜հ, ինչպէս պիտի ծիծաղէր այժմըս Բազարովը, թէ որ գիտնար, թէ ինչ էր լինում իր ներսըն այն միջոցին։ Ինքն Արկադիյն էլ կդատապարտէր նրան։ Նրա, քառասուն և չորս ամեայ մարդու, երկրաբան և գիւղատնտես մարդու աչքը արտասուքով էր լցւում, անառիթ արտասուքով. այս բանս Վիօլոնչէլից հազար անգամ վատ էր։

Նիկոլայ Պետրովիչը շարունակ ման էր գալիս և սիրտ չէր անում մտնելու տուն, այս խաղաղ ու խպտիկ բունը, որ իր բոլոր լուսաւոր պատուհաններով սաստիկ հրապուրիչ կերպով նայում էր իրեն. նա չէր կարողանում անջատուել մըթնից, պարտիզից, դէմքի վրայ թարմ օդի զգացողութիւնից, և այս թախիծից, այս վրդովմունքից…։

Ճանապարհի պտոյտքին նրա առաջն ելաւ Պաւէլ Պետրովիչը։

—Այդ ինչ է եղել քեզ,—հարցրեց նա Նիկոլայ Պետրովիչին.—երեսիդ գոյն չկայ, կարծես ուրուական լինիս. տկար ես. ինչու չես պառկում։

Նիկոլայ Պետրովիչը կարճ խօսքով պատմեց իր հոգեկան դրութիւնն ու հեռացաւ։ Պաւէլ Պետրովիչը հասաւ մինչև պարտիզի ծայրը, նոյնպէս մտքի մէջ ընկաւ, և նոյնպէս աչքը դէպի երկինք բարձրացրեց։ Բայց նրա գեղեցիկ, սև աչքերի մէջ, բացի աստղերի լոյսից ոչինչ չփայլեցաւ։ Նա ռոմանտիկ ծնուած չէր և նրա սնձնասէրին յատուկ ցամաք և բուռն, ֆրանսական ձևի մարդատեաց հոգին չգիտէր, թէ ինչ բան է անուրջների մէջ ընկնելը…։

—Գիտես ինչ կայ,—նոյն գիշերը Բազարովն ասում էր Արկադիյին։—Մի երևելի բան է միտքս ընկել։ Հայրդ այսօր

ասում էր, թէ ձեր այն նշանաւոր ազգականից նամակ է ըստացել: Հայրդ գնալու չէ. եկ վերկենանք մենք գնանք ***), չէ՞ որ այդ պարոնը քեզ էլ է կանչել: Հօ տեսնում ես, թէ ինչ եղանակ է այստեղ. իսկ մենք մի քիչ քամու կզփչենք, քաղաքը կտեսնենք: Մի հինգ-վեց օր քաշ կգանք ու լեռոյ, դէհ, էլի դէպի տուն:

—Իսկ յետոյ դու այստեղ կգաս:

—Ոչ պէտք է հօրս գնամ: Գիտես, որ ***-ից երեսուն վերստ է: Վաղուց է նրան տեսած չեմ, մօրս էլ նոյնպէս, պէտք է փոքր ինչ ծերունիներին մխիթարել: Նրանք լաւ մարդիկ են, մանաւանդ հայրս—վերին աստիճանի տարօրինակ մարդ է: Ես նրանց մինու ճար որդին եմ:

—Նրանց մօտ երկար ես մնալու:

—Չեմ կարծում: Երևի ձանձրալի կլինի:

—Իսկ վերադարձիդ մեզ չես հանդիպիլ:

—Չգիտեմ... տեսնեմ: Հը՛ ինչ կասես: Գնանք:

—Ինչու չէ,—դանդաղաբար ասաց Արկադին:

Նա իւր սրտում խիստ ուրախացաւ ընկերոջ արած առաջարկութեանը, բայց պարտք համարեց իւր զգացմունքը ծածկելու: Իզուր հօ նիհիլիստ չէր:

Միւս օրը Արկադին Բազարովի հետ *** ուղևորուեցաւ: Մարյինօի երիտասարդութիւնը նրանց գնալու վրայ ցաւեցաւ. Դունիաշան հօ մինչև անգամ լաց եղաւ... սակայն ծերունիները սկսան մի փոքր թեթև շունչ առնել:

XII

Երկու բարեկամների գնացած *** քաղաքը գտնւում էր մի երիտասարդ նահանգապետի իշխանութեան տակ, որ առաջադէմ, բայց միևնոյն ժամանակ նաև բռնակալ մարդ էր, մի երևոյթ, որ սովորական է Ռուսիայում: Նա արդէն իսկ իւր կառավարութեան առաջին տարում կռուել էր ոչ միայն նահանգական ազնուականների պարագլխի հետ, որ գուարդայի մի պաշտօնաթող շտաբս-ռոտմիստր էր, ձիաբուծարանի տէր էր ու հիւրասէր մի մարդ, այլ և իւր սեփական պաշտօնեաների հետ: Այդ առթիւ ծագած կռիւներն այն աստիճանի էին հասել, որ Պետերբուրգում մինիստրութիւնն անհրաժեշտ էր համարել յատուկ հաւատարմատար ուղարկել, որպէսզի գործը

տեղն ու տեղը քննէ: Իշխանութիւնն այդ բանի համար ընտրել էր Մատվէյ Իլյիչ Կոլյազինին, այն Կոլյազինի որդուն, որի խնամատարութեան տակ մի ժամանակ գտնւում էին երիտասարդ Կիրսանովները: Նա էլ էր «երիտասարդներից», այսինքն նոր էր քառասունն անցել, բայց արդէն պետական բարձր պաշտօնների աչք ունէր և կրծքի երկու կողմից էլ մի-մի ասեղ էր քաշ արել: Թէպէտ և այդ աստղերից մէկը, խոստովանք լինի, օտար պետութեան մի հասարակ աստղ էր: Սա էլ նահանգապետի նման, որին եկել էր քննելու, առաջադիմական էր համարւում և, թէպէտ արդէն նշանաւոր դիրք ունէր, բայց նման չէր նշանաւոր դիրք ունեցողների մեծամասնութեան: Իւր վրայ մեծ համարում ունէր. փառասիրութեանը սահման չկար, բայց իրեն պահում էր պարզ, ուրիշների հետ վարւում էր քաջալերական ձևով, ականջ էր դնում ներողամտաբար, և այնպէս բարեհոգի ծիծաղ ունէր, որ սկզբները մինչև անգամ կարող էր «հրաշալի մարդ» թուալ: Սակայն կարևոր դէպքերում գիտէր նաև մարդկանց աչքը փոշի փչել: «Եռանդն անհրաժեշտ բան է», ասում էր այդպիսի դէպքում. «l'énergie est la première qualité d'un homme détat. *) բայց չնայելով դրան, նա միշտ էլ խաբւում էր և ամեն մի փոքր ինչ փորձուած պաշտօնեայ նստում էր նրա գլխին: Մատվէյ Իլյիչը մեծ յարգանքով էր խօսում Գիզօի [1]) մասին, և աշխատում էր բոլորին ու ամեն մէկին հասկացնել, որ ինքը հնապաշտ և յետամնաց մարդկանցից չէ, որ հասարակական կեանքի ոչ մի նշանաւոր երևոյթ անուշադիր չէ թողնում... բոլոր այդպիսի խօսքերը շատ լաւ ծանօթ էին նրան:

---

*) Եռանդը վարչական մարդու ամենակարևոր յատկութիւնն է: Ծ. Թ.

[1]) Ֆրանսուա Գիզօն (1787—1874 թ.) ֆրանսիական նշանաւոր պատմաբան և պետական գործիչ է և յայտնի է նաև որպէս դոկտրինէօրների դպրոցի հիմնարկող (Ռօյէ—Կոլլարի հետ միասին). այժմս դոկտրինէօր կոչւում են այն քաղաքական գործիչները, որոնք ճշտիւ հետևում են որոշապէս ձևակերպուած, բայց գործադրութեան համար անյարմար ծրագրի: Գիզոյի գրուածքներից յայտնի են «Անգլիայի յեղափոխութեան պատմութիւնը», «Ֆրանսիական յեղափոխութեան պատմութիւնը» և ուրիշները: Ծ. Թ.

Նա մինչև անգամ, թէպէտ և անհոգ վեհութեամբ, հետևում էր ժամանակակից գրականութեան զարգացմանը. այնպէս ինչպէս որ հասակաւոր մարդը փողոցում հանդիպելով երեխաների խմբին, երբեմն գնում է նրանց ետևից։ Իսկապէս Մատվէյ Իլյիչը շատ չէր զանազանւում Ալէքսանդրեան շրջանի այն պետական գործիչներից, որոնք պատրաստուելով Պետերբուրգում ապրող տիկին Սվեչինայի տունը երեկոյթի գնալ, առաւօտեան Կոնդիլյակի *) գրուածքից մի-մի բան էին կարդում։ Բայց սրա ձևերը ուրիշ, աւելի ժամանակակից էին։ Նա ճարպիկ պալատական էր, խիստ խորամանկ մարդ, և ուրիշ ոչինչ. ոչ մի գործի խելքը չէր հասնում, խելք չունէր՝ հապա գիտէր միայն իւր սեպհական գործերը առաջ տանել՝—այդտեղ արդէն ոչ ոք կարող չէր նրա գլխին նստել. չէ՞որ հէնց գլխաւորն էլ այդ էր։

Մատվէյ Իլյիչը Արկադիյին ընդունեց լուսամիտ պաշտօնեայի յատուկ բարեհոգութեամբ, աւելին ասենք, ծիծաղերես։ Սակայն զարմացաւ, երբ իմացաւ, որ հրաւիրած ազգականները գիւղումն էին մնացել։ «Քու հայրիկդ միշտ տարօրինակ մարդ է եղել» նկատեց նա իւր փառահեղ խալաթի փնջերը ձեռքի մէջ վեր-վեր ձգելով, և յանկարծ, դառնալով դէպի մի ծառայողի, որը ամենայն խնամքով մեր էր գցած իւր նշանազգեստի բոլոր կոճակները, մտախոհ կերպարանքով կանչեց՝ «ինչ կայ»։ Երիտասարդը, որի շրթունքները երկար ժամանակ լուռ մնալուց արդէր իրար էին կպած, տեղից վեր կացաւ և վարանմամբ իւր մեծաւորի երեսին նայեց։ Սակայն Մատվէյ Իլյիչը ստորադրեալին վարանման մէջ ձգելուց յետոյ այլ ևս նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց։ Մեր մեծաւորները սովորաբար սիրում են իրենց ստորադրեալներին շշկլացնել, այդ նպատակին հասնելու համար նրանց գործ դրած միջոցները բաւական տարբեր են։ Ի միջի այլոց հետևեալ միջոցը բաւական գործածական է, «is quite a favorite», ինչպէս ասում են անգլիացիք՝—մեծաւորը յանկարծ դադարում է ամենահասարակ բաներն անգամ հասկանալուց, զօրով խուլ է ձևանում։ Նա, օրինակի համար, կ'հարցնէ, թէ ինչ օր է այսօր։

¹) Էտիէն Կոնդիլյակը (1715—1780 թ.) Ֆրանսիացի փիլիսոփայ և քաղաքատնտես էր։ Ծ. Թ.

—Նրան յարգանքով կ'զեկուցանեն՝ «այսօր ուրբաթ է Ձերդ թ... թ... թիւն»։

—Հը՞. ինչ. ինչ է։ Ինչ էք ասում,—լարուած դրութեամբ կրկնում է նա։

—Ուրբաթ է, Ձերդ...թիւն։

—Ի՞նչպէս, ինչ. ինչ բան է ուրբաթը։ Ի՞նչ ուրբաթ։

—Ուրբաթը, Ձերդ... թ... թթթ... թ...թիւն, շաբաթուայ օր է։

—Ի՞նչ է, չլինի՞ ուզում ես ինձ դաս տալ։

Մատվէյ Իլյիչը, թէպէտ ազատամիտ էլ համարուէր, բայց՝ և այնպէս հո մեծաւո՛ր էր։

—Քեզ խորհուրդ եմ տալիս, բարեկամ, որ նահանգապետին այցելութեան գնաս,—ասաց նա Արկադիյին,—հասկանում ես իհարկէ, այս խորհուրդը որ տալիս եմ ոչ թէ այն պատճառով է, որ հետևող եմ հին հասկացողութիւններին թէ անհրաժեշտ է խոնարհութեան համար իշխանաւորներին գնալ, հապա պարզապէս այն պատճառով, որ նահանգապետը լաւ մարդ է. մանաւանդ որ երևի կ'ցանկանաս այստեղի հասարակութեան հետ էլ ծանօթանալ...Յուսամ, թէ հասարակութիւնից փախչող չես։ Իսկ նա վաղը չէ միւս օրը մեծ պարահանդէս է կազմելու։

—Դուք էլ լինելու էք այդ պարահանդէսին,—հարցրեց Արկադին։

—Պարահանդէսը իմ պատուին է կազմել,—համարեա թէ վշտացած ասաց Մատվէյ Իլյիչը։—Պարու՞մ ես։

—Պարում եմ, բայց վատ։

—Իզո՛ւր։ Այստեղ սիրուն կանայք-աղջկերք կան. համ էլ ամօթ է, որ երիտասարդը պարել չիմանայ։ Դարձեալ այս որ ասում եմ ամենևին չկարծես, թէ հասկացողութիւնների հետևանք է ասածս. ամենևին չեմ կարծում, թէ մարդու խելքը ոտներում է, բայց բայրոնականութիւնը ծիծաղելի բան է, il a fait son temps ¹).

—Ես բոլորովին բայրոնականութիւնից չէ որ...

—Քեզ կ'ծանօթացնեմ այստեղի տիկիններին հետ, քեզ

¹) Դա իւր ժամանակն անց է կացրել, դրա դարն անցել է։ Ծ. Թ.

կ՚առնեմ իմ թեւկներիս տակ,—ընդհատեց Մառվէյ Իլյիչը և ինքնագոհ կերպով ժպտաց։ Ձեռ մրսի, չէ՞։

Ներս մտաւ ծառան ու յայտնեց, որ եկել է դատական պալատի նախագահը, կնճռապատ չրթունքներով ու քաղցրահայեաց մի ծերուկ, որ բնութեան սատոնիկ սիրահար էր, մանաւանդ ամառուան, երբ որ, նրա խօսքով «ամեն մի մեղուիկ, ամեն մի ծաղկեկից վերցնում է հարկիկ...»։ Արկադիյն դուրս եկաւ։

—Նա Բազարովին գտաւ իրենց իջեանած պանդոկում, և երկար համոզում էր, որ նահանգապետին գնան։

—Ի՚նչ արած,—ասաց վերջապէս Բազարովը, ջուրն ընկնողն անձրևից չի վախիլ։ Որ եկել ենք կալուածատէրերին տեսնելու, դէ՞ ուրեմն, մի լաւ տեսնենք։

Նահանգապետը երիտասարդներին սիրալիր ընդունելութիւն ցոյց տուաւ, բայց նրանց չնստացրեց ու ինքն էլ չնըստաւ։ Նա չարունակ շտապում էր ու անհանգիստ դրութեան մէջ էր. առաւօտից հագնում էր նեղ համազգեստն ու կապում չափազանց պինդ քաշած փողպատը, ոչ կուշտ ուտում էր ոչ կուշտ խմում, չարունակ կարգադրութիւններ անում։ Նահանգում նրա անունը Բուրդալու էին դրել ոչթէ յայտնի Ֆրանսիացի քարոզչի անունով [1]) հապա ռուսերէն բուրդա բառից, որ նշանակում է պղտոր հեղուկ, մրուր։

—Նահանգապետը Կիրսանովին ու Բազարովին իր պարահանդէսին հրաւիրեց, իսկ երկու րոպէ անց նորից կրկնեց հրաւէրը՝ համարելով թէ նրանք եղբայր են, և Կայսարով անուանեց։

Նահանգապետի մօտից դուրս գալով նրանք տուն էին դառնում, որ յանկարծ այդտեղով անցող կառքի միջից դուրս թռաւ փոքր հասակով, Սլաւիանաֆիլի [2]) զգեստ հագած մի մարդ ու «Եւգենիյ Վասիլյիչ» ասելով վազեց դէպի Բազարովը։

---

[1]) Լուի Բուրդալուն (1632—1704 թ.), Ֆրանսիացի ճիզուիտ յայտնի քարոզիչ է։

[2]) Սլաւիանաֆիլութիւնը ծագեցաւ անցեալ դարու երեսնական թուականներին և ծաղկեցաւ 40 և 50 ական թուականներին։ Երկու խօսքով կարելի չէ դրա մասին գաղափար տալ. դա իսկապէս ազգայնական (ռուսական) գաղափարն է պաշտպանում՝ բայց լիովին ինքնուրոյն կերպով, և բողոքում օտարամոլութեան, այս դէպքում եւրոպական հասարակական,

—Հը՛, այս դու ես, հերր *) Սիտնիկով,—ասաց Բազարովը իւր ճանապարհը չարունակելով.—ո՞ր խաչից։

—Երեւակայեցէք, բոլորովին պատահաբար,—պատասխանեց սա և դէպի կառքը շուռ գալով մի հինգ անգամ ձեռքով արաւ ու կանչեց.—ետեւներիցս արի, ետեւներիցս։—Հայրս այստեղ գործ ունէր,—չարունակեց նա առուի վրայից թռչելով,— ինձ խնդրեց, որ...։Այսօր լսեցի եկել էք և արդէն ձեր բնակարանն էլ գնացել եմ...։ (Յիրաւի, երկու բարեկամ իրենց հիւրանոցը վերադառնալուց յետոյ գտան Սիտնիկովի այցետոմսը, երկու ծայրը ծալած, և վրան գրած նրա անունը՝ մէկ երեսին ֆրանսերէն, իսկ միւս երեսին՝ սլաւեաներէն ծաղկատառերով)։ Յուսամ, թէ նահանգապետի մօտից չէ եկածներդ։

—Մի՛ յուսաք, ուղղակի այնտեղից ենք գալիս։

—Հա՛, ուրեմն ես էլ կ՚գնամ...։Եւգենիյ Վասիլյիչ, ծանօթացրէք ինձ ձեր...նրանց հետ...։

—Սիտնիկով, Կիրսանով,—մրթմրթաց Բազարովն առանց կանգ առնելու։

—Ինձ համար շնորհք եմ համարում,—չարունակեց Սիտնիկովը, կողք-կող առաջ անցնելով, քաղցր ժպտալով և շտապով հանելով իւր չափազանց ընտիր ու վայելուչ ձեռնոցը։

—Խիստ շատ լսել էի...։Ես Եւգենիյ Վասիլյիչի վաղուցուայ ծանօթը և կարող եմ ասել, աշակերտն եմ։ Իմ վերածնութիւնս նրան եմ պարտական։

Արկադիյն մտիկ տուաւ Բազարովի աշակերտին։ Նրա լպստած դէմքի մանր, սակայն հաճելի գծագրութեան վրայ անհանգիստ ու բութ արտայայտութիւն էր երևում. փոքրիկ, ասես թէ ներս սեղմած աչքերը յառած ու անհանգիստ էին մտիկ տալիս, նրա ծիծաղն էլ անհանգիստ էր—ծիծաղը կարճ էր ու չոր-չոր։

—Կ՚հաւատաք,—չարունակեց նա,—առաջին անգամ որ Եւգենիյ Վասիլևիչը իմ ներկայութեամբ չասաց, թէ չպէտք

---

*) Պարոն Ծ.Թ.

կրօնական, տնտեսական և քաղաքական կազմի դէմ. Նըրա նպատակն էր ուսումնասիրել բուն ազգային հատուկութիւնները, գաղափարները, ստեղծագործութիւնները...և կռուել այն ամենի դէմ, որ օտար է, որովհետև գերակշիռ և համաշխարհային առաջնութիւն ունի ռուսականը։ Ծ. Թ.

է հեղինակութիւն ճանաչել, այնպէս ոգևորուեցայ...կարծես աչքս միանգամից բացուեցաւ։ Ահաւասիկ, միտք էի անում, վերջապէս գտայ մի մարդ։ Ի դէպ, Եւգենիյ Վասիլևիչ, անպատճառ պէտք է դուք այստեղ այցելէք մի տիկնոջ, որը կատարելապէս կարող է ըմբռնել ձեզ և որի համար ձեր այցելութիւնը կատարեալ տօն կ՚լինի. երևի նրա անունը լսած էլ կ՚լինիք։

—Ի՞նչ կին է,—ակամայ հարցրեց Բազարովը։

—Կուկշինան, Eudoxie, Եւդոկսիա Կուկշինա։—Մի զարմանալի կին է, émancipée *) բառի բուն իմաստով, առաջաւոր մի կին է։ Գիտէս ինչ կայ։ Եկէք բոլորս էլ վերկենանք, գնանք նրան։ Նրա բնակարանն այստեղից երկու քայլ է։ Այնտեղ էլ կ՚նախաճաշենք։ Հո դեռ չէ՞ք նախաճաշել։

—Ոչ։

—Շատ էլ լաւ էք արել։ Նա, գիտէք, ամուսնուց ջոկ է ապրում, ոչոքից կախում չունի։

—Սիրու՞ն կին է,—ընդմիջեց Բազարովը։

—Ը...չէ, կարելի չէ ասել։

—Էլ ու՞ր էք մեզ վեր առել, նրա մօտ տանում։

—Ա՜հ, հանաքչի, հանաքչի...։Նա մեզ համար շամպայն գինի կ՚բանայ։

—Հա՜։ Իսկոյն երևում է գործնական մարդ եղածդ։ Ի դէպ, ձեր հայրը դարձեալ կապալի գործերո՞վ է պարապում։

—Այո,—շտապով պատասխանեց Սիտնիկովն ու ճչալով ծիծաղեցաւ։ Հը՞։ Ի՞նչ էք ասում։

—Չգիտեմ ճշմարիտ։

—Ուզում էիր մարդիկ տեսնես, գնա՛ էլի,—ցած ձայնով ասաց Արկադիյն։

—Հապա դո՞ւք, պ. Կիրսանով,—վրայ բերեց Սիտնիկովը։—Դուք էլ համեցէք, առանց ձեզ կարելի չէ։

—Այս ինչպէ՞ս կ՚լինի, որ յանկարծ բոլորս միանգամից վրայ թափուենք։

—Վնաս չունի։ Կուկշինան—պատուական կին է։

—Շամպայն գինի՞ կ՚լինի—հարցրեց Բազարովը։

*) Էմանսիպացիա—իրաւունքների հաւասարացում. իրաւազուրկի իրաւունք ձեռք բերելը։ Կրթուած, աչքը բացուած։ Ծ. Թ.

—Երեք շիշ կ՚լինի,—բացականչեց Սիտնիկովը։—Դրան երաշխաւոր եմ։

—Ինչո՞վ։

—Սեպհական գլխովս։

—Աւելի լաւ կ՚լինէր՝ հօրդ քսակովը։ Սակայն գնանք։

XIII

Մոսկուայի տների ձևով շինած փոքրիկ ազնուականական տնակը, որտեղ ապրում էր Աւդոտիա Նիկիտիշնա (կամ Եւդոկսիա) Կուկշինան, գտնւում էր *** քաղաքի նոր այրուած փողոցներից մէկում. յայտնի է, որ Ռուսիայի նահանգական քաղաքները հինգ տարին մի անգամ այրւում են։ Դրանը ծուռ խփած այցետոմսի վերևը երևում էր զանգակի կոթը, իսկ նախասենեակում նրանց դիմաւորեց գլխագարդ ծածկած մի կին, որ ոչ աղախնի էր նման, ոչ էլ ընկերակցուհու—յայտնի նըշան տանտիկնոջ առաջադիմական ձգտումների։ Սիտնիկովը հարցրեց, թէ Աւդոտիա Նիկիտիշնան տա՞նն է։

—Victor, դո՞ւք էք,—կողքի սենեակից լսուեց մի բարակ ձայն։—Ներս մտէք։

Գլխագարդ ունեցող կինն իսկոյն անհետացաւ։

—Մենակ չեմ,—ասաց Սիտնիկովը ճարպկութեամբ հանելով վրայի չորը, որի տակ չուխի կամ երկար վերարկուի պէս մի բան երևաց, և Արկադիյի ու Բազարովի վրայ համարձակ հայեացք ձգելով։

—Մէկ բան է,—պատասխանեց ձայնը։ Entrez *)

Երիտասարդները ներս մտան։ Նրանց մտած սենեակն աւելի առանձնասենեակի էր նմանում, քան թէ ընդունարանի։ Թղթերը, նամակները, հաստ ամսագրների համարները, որոնց թերթերը մեծ մասամբ կտրուած չէին, թափթփած, վեր էին ընկած փոշոտ սեղանի վրայ. ամեն տեղ երևում էին քաշած ծխախոտի սպիտակ մնացորդները։ Կաշուէ գահաւորակի վրայ կէս պառկած էր դեռ ևս նորատի, շիկահեր, մազերը փոքր ինչ շաղ ընկած մի կին, հագին՝ մետաքսեայ, ոչ այնքան մաքուր զգեստ, կարճիկ բազուկներին խոշոր ապարանջաններ, գլխին հիւսկէն ծածկոց ձգած։ Նա վեր կացաւ գահա-

*) Ներս մտէք։ Ծ. Թ.

ւորակի վրայից և անհոգաբար իւր ուսերին քաշելով սպիտակ աքիսի մորթուց կարած, բայց արդէն դեղնած մուշտակը, ծոյլ ծոյլ ասաց. «Բարով, Victor, և սեղմեց Սիտնիկովի ձեռքը:

—Բազարով, Կիրսանով,—Բազարովին նմանելով կտրուկ կերպով ասաց Սիտնիկովը:

—Բարով եկաք,—պատասխանեց Կուկշինան, և Բազարովի վրայ սևեռելով իւր կլոր աչքերը, որոնց արանքում կարծես որբացած մնացել էր փոքրիկ կարմիր, ծայրը դէպի վեր ցցուած քիթը, աւելացրեց. «ես ձեզ գիտեմ,—և նրա ձեռքն էլ սեղմեց:

Բազարովը նոթերը կիտեց: Այդ լուսաւորուած կնոջ փոքրիկ ու գծուծ կերպարանքի մէջ ոչ մի այլանդակ բան չկար. միայն դէմքի արտայայտութիւնը անհաճոյ ազդեցութիւն էր գործում: Մարդս ակամայ ուզում էր հարցնել. «Ի՛նչ է, քաղցա՞ծ ես: Կամ ձանձրանո՞ւմ ես: Կամ քաշւո՞ւմ ես: Ի՞նչ ես լարուած մնացել»: Նա էլ, Սիտնիկովի նման, շարունակ անհանգիստ դրութեան մէջ էր: Նրա խօսածն ու շարժումները շատ ազատ էին, բայց և միևնոյն ժամանակ էլ անհամարձակ. հաւանօրէն նա ինքն իրան մի բարեհոգի ու պարզ էակ էր համարում, մինչդեռ ինչ ուզում է անէր, միշտ այնպէս կ՚թուար, թէ հէնց այդ բանն է, որ նա չէր ուզում անել. նրա ամեն արածն էլ սարքովի էր դուրս գալիս, այսինքն պարզ, բնական չէր լինում:

—Այո, այո, Բազարով, ես ձեզ գիտեմ,—կրկնեց նա. (շատ գաւառացի և Մոսկուացի կանանց նման նա էլ սովորութիւն էր արել հէնց ծանօթութեան առաջին օրից տղամարդկանց ազգանունով կոչել):—Սիգար կ՚ուզէ՞ք:

—Սիգարը իրա կարգին,—վրայ բերեց Սիտնիկովը, որ արդէն վէր էր ընկել բազկաթոռների վրայ ու ոտները վերև բարձրացրել.—մեզ նախաճաշիկ տուէք: Սաստիկ քաղցած ենք. ասացէք որ մի շիշ էլ շամպայն գինի հանեն:

—Հեշտասէր,—ասաց Եւդոկսիան և ծիծաղեցաւ: Ծիծաղելիս ատամների վրայ երևում էին նրա վերևի լնդերքը:

—Ես կեանքի յարմարութիւնները սիրում եմ,—իւր խօսքերին կարևորութիւն տալով արտասանեց Սիտնիկովը:—Այդ բանն ինձ ազատամիտ լինելու արգելք չի:

—Ոչ, արգելք է, արգելք է,—բացականչեց Եւդոկսիան, և սպասուհիներից մէկին պատուիրեց, որ նախաճաշի ու մէկ

էլ շամպայն գինու պատրաստութիւն տեսնէ:—Դո՞ւք ինչ էք կարծում,—ասաց նա Բազարովին դիմելով:—Հաւատացած եմ, որ ինձ համակարծիք կ՚լինիք:

—Ասենք, չէ,—պատասխանեց Բազարովը:—Մի կտոր միսը լաւ է, քան մի պատառ հացը, նոյն իսկ քիմիական տեսակէտով:

—Քիմիայով պարապո՞ւմ էք: Այդ իմ ամենասիրած բանըս է: Մինչև անգամ ես մի մաստաք եմ հնարել:

—Մաստա՞ք, դո՞ւք:

—Այո, ես: Եւ գիտէ՞ք ինչ նպատակով: խուամաճիկներ, գլուխներ շինելու նպատակով, որպէսզի չկոտրուին: Ախր ես էլ գործնական մարդ եմ: Բայց դեռ չեմ վերջացրել: Դեռ պէտք է Լիբիխի գրուածքը կարդալ: Ի դէպ, Московскія вѣдомости-ի մէջ կարդացի՞ք կանանց աշխատանքի մասին Կիսլեակովի յօդուածը: Խնդրեմ կարդացէք: Կանանց խնդիրը հո ձեզ հետաքրքրո՞ւմ է: Նոյնպէս և ուսումնարանները: Ինչո՞վ է պարապում ձեր բարեկամը: Ի՞նչ է նրա անունը:

Տիկին Կուկշինան իրար ետևից քնքշացած անհոգութեամբ բաց էր թողնում իւր հարցերը և պատասխանի չէր սպասում. երես առած երեխաներն իրենց դայեակների հետ այդպէս են խօսում:

—Իմ անունս Արկադիյ Նիկոլայիչ Կիրսանով է,—ասաց Արկադիյն,—և ոչ մի գործով չեմ պարապում:

Եւդոկսիան ծիծաղեց:

—Այդ լա՛ւ բան է: Ի՛նչ է, դուք չէ՞ք ծխում: Վիկտոր, հո գիտէ՞ք որ ձեր վրայ նեղացած եմ:

—Ի՞նչ բանի համար:

—Ասում են, որ դարձեալ սկսել էք Ժորժ-Սանդին [1] գովել: Ի՛նչ է դա՝ մի յետ մնացած կին և ուրիշ ոչինչ: Ինչպէ՞ս կարելի է նրան Էմերսոնին [2] հաւասարեցնել: Ոչ մի գաղափար չէ արտայայտում ոչ դաստիարակութեան մասին, ոչ մարզակազմութեան, և ոչ մի ուրիշ բանի մասին: Հաւատացած եմ, որ նա սաղմնաբանութեան անունն անգամ լսած

[1]) Ժորժ-Զանդ յայտնի ֆրանսիացի վիպասանուհի Ամանտինէ Դիւպէնի (1807 թ. ծն.) կեղծ անունն է:

[6]) Ռալֆ Էմերսոնը (1803—1882 թ.) ամերիկացի յայտնի փիլիսոփայ և բանաստեղծ է: Ծ. Թ.

չէ, իսկ մեր ժամանակում—առանց դրան կարելի՞ բան է։ (Եւդոկսիան մինչև անգամ ձեռներով զարմացման շարժում արաւ։) Ախ, ի՜նչ հրաշալի յօդուած էր գրել Ելիսեևին այդ մասին։ Հանճարաւոր պարոն է։ (Եւդոկսիան շարունակ «մարդ» ասելու տեղ «պարոն» էր ասում)։ Բազարով, եկէք կողքիս դահաւորակի վրայ նստէք։ Գուցէ չգիտէք, որ ես սաստիկ վախենում եմ ձեզանից։

—Ինչո՞ւ։ Հետաքրքրական է իմանալ։

—Դուք վտանգաւոր պարոն էք. խիստ կրիտիկոս էք։ Ախ, Աստուած իմ, մինչև անգամ ծիծաղս է գալիս. այնպէս եմ խօսում, կարծես թէ յետ ընկած անկիւնի կալուածատէր կանանցից լինիմ։ Ասենք հէնց կալուածատէր էլ եմ։ Կալուածքս կառավարողը ես ինքս եմ և, երևակայեցէք, իմ գլխաւոր Երոֆէյը—զարմանալի տիպար է, տեղն ու տեղը Կուպերի Պատֆայնդեր [1]). մի առանձին բնական բան կայ մէջը։ Ես մշտական բնակութիւնս այստեղ եմ հաստատել։ Անտանելի քաղաք է, այնպէս չէ՞։ Բայց ի՞նչ արած։

—Քաղաք է քաղաքի պէս,—անտարբեր կերպով նկատեց Բազարովը։

—Բայց և այնպէս այստեղ մանր-մունր շահեր են միմիայն, և այդ է սարսափելին։ Առաջները ձմեռները Մոսկուայումն էի ապրում...բայց այժմս այնտեղ է ապրում իմ կողակիցս, Մսիո Կուկշինը։ Հէնց Մոսկուան ինքն էլ...չգիտեմ ճըշմարիտ—դարձեալ այն չէ։ Ուզում եմ արտասահման գնալ. անցեալ տարի արդէն բոլորովին պատրաստուել էին ճանապարհ ընկնելու։

—Իհարկէ Պարի՞զ,—հարցրեց Բազարովը։

—Պարիզ և Հայդելբերգ։

—Ինչո՞ւ Հայդելբե՞րգ։

—Ախր Բունզէնն այնտեղ է։

Բազարովը ոչ մի բան չգտաւ ասելու։

—Pierre Սապոժնիկովը...ճանաչո՞ւմ էք։

—Ոչ, չեմ ճանաչում։

---

[1]) Ջեմս Ֆենիմոր Կուպեր (1789—1851 թ.) ամերիկացի հռչակաւոր վիպասան է և գլխաւորապէս գրում էր Ամերիկայի վայրենիների և ովկիանոսի կեանքից։ Պատանիների համար շատ գրաւիչ գրող է։ Ծ. Թ.

—Ի՞նչ էք ասում, Pierre Սապոժնիկովին...նա դեռ այժմս էլ շարունակ Լեդիա Խոստատովի տունն է գնում-գալիս։

—Ես այդ տիկնոջն էլ չեմ ճանաչում։

—Այդ պարոնն յանձն էր առել ինձ ուղեկցելու։ Փառք Աստուծոյ, այժմ ազատ եմ, զաւակ չունիմ...։Այս ի՞նչ ասացի—փառք Աստուծոյ։ Էհ, ասենք մէկ բան է։

Եւդոկսիան ծխախոտից դեղնած մատներով ոլորեց, գըլանակ շինեց, լեզուով թուղթը թրջեց, ծծեց ու կպցրեց։ Ափսէն ձեռին ներս մտաւ աղախինը։

—Ըհը՛, այս էլ նախաճաշիկը։ Կ'ուզէ՞ք։ Վիկտոր, հապա շիշը բացէք. այդ ձեր գործն է։

—Այո, այո, իմ գործն է,—մրթմրթաց Սիտնիկովը և դարձեալ ճչաձայն ծիծաղեց։

—Այստեղ սիրուն կանայք կա՞ն,—հարցրեց Բազարովը երրորդ բաժակը խմելիս։

—Կան,—պատասխանեց Եւդոկսիան,—բայց բոլորն էլ դատարկամիտ բաներ են։ Օրինակ mon amie *) Օդինցովան—վատ չէ։ Միայն ափսոս որ մի քիչ անունը...։Ասենք այդ նըշանակութիւն չունէր, բայց ոչ մի ազատ հայեացք, ոչ մի ընդարձակ...ի.ք։ Պէտք է ամբողջ կրթութեան սիստէմը փոխել։ Ես այդ մասին արդէն մտածել եմ. մեր կանայք խիստ վատ են դաստիարակուած։

—Դրանց ոչինչ կարելի չէ անել,—վրայ բերեց Սիտնիկովը։ – Պէտք է նրանց արհամարհել, և ես արհամարհում եմ նրանց լիովին ու կատարելապէս։ (Արհամարհելու հնարաւորութիւնն ու իւր արհամարհանքն արտայայտելը Սիտնիկովի ամենահաճելի զգացողութիւնն էր. նա մանաւանդ յարձակւում էր կանանց վրայ առանց կասկած տանելու, որ մի քանի ամսից յետոյ ինքը պէտք է իւր կնոջ առաջ սողալու հարկին մէջ լինէր, լոկ այն պատճառով, որ կինը ի ծնէ իշխան Դուրդոլէօսովի աղջիկ էր)։ Նրանց և ոչ մէկը կարող կ'լինէր մեր խօսակցութիւնը ըմբռնել. նրանցից և ոչ մէկն արժէ, որ մենք, լըջամիտ տղամարդիկս, նրանց վրայ խօսենք։

—Եւ հարկաւոր էլ չէ, որ նրանք մեր խօսակցութիւնը հասկանան,—ասաց Բազարովը։

—Այդ ու՞մ մասին էք խօսում, - մէջ մտաւ Եւդոկսիան։

---

*) Բարեկամս։

— Սիրուն կանանց մասին։

— Ի՞նչ։ Ուրեմն դուք Պրուդոնին [1] համակարծի՞ք էք։

Բազարովն ամբարտաւանութեամբ չոկուեցաւ։

— Ես ոչ ոքին համակարծիք չեմ։ Ես իմ կարծիքներս ունիմ։

— Կորչի հեղինակութիւնը,— գոռաց Սիտնիկովն ուրախացած, որ առիթ ներկայացաւ խիստ կերպով իր կարծիքն արտայայտելու այն մարդու ներկայութեամբ, որի առաջ նա այնքան նուաստացնում էր ինքն իրան։

— Բայց Մակոլէյը [2] ինքը,— սկսել էր Կուկշինան...։

— Կորչի Մակոլէյը,— որոտաց Սիտնիկովը։ — Դուք պաշտպանո՞ւմ էք այդ կնանոց։

— Այդ կնանոց չէ իմ պաշտպանածս, հապա կանանց իրաւունքը, որ ես երդուել եմ մինչև արեանս վերջին կաթիլը պաշտպանել։

— Կորչի՜ն,— բայց Սիտնիկովն այստեղ կանգ առաւ։— բայց ես այդ չեմ մերժում։

— Ոչ, տեսնում եմ, որ դուք սլաւեանոֆիլ էք։

— Ոչ, ես սլաւիանոֆիլ չեմ, թէպէտ իհարկէ...

— Ոչ, ոչ, ոչ։ Սլաւեանոֆիլ էք։ Домострой-ի [3] հետեւող։ Ձեզ սազ կ'գայ, որ ձեռներիդ մտրակ ունենաք։

— Մտրակը վատ բան չէ,— նկատեց Բազարովը.— բայց ահաւասիկ մենք հասանք վերջին կաթիլին...։

— Ի՞նչ բանի,— ընդհատեց Եւդոկսիան։

— Շամպայն գինու,— յարգելի Աւդոտիա Նիկիտիշնա,— շամպայնի, և ոչ ձեր արեան։

— Կարող չեմ անվրդով կերպով լսել, երբ որ յարձակւում են կանանց վրայ,— շարունակեց Եւդոկիան։— Սարսա-

3) Պիեր Ժօզէֆ Պրուդոնը (1809—1869) յայտնի Ֆրանսիացի քաղաքատնտես էր։

2) Թոմաս Բաբինգտոն Մակոլէյը (1800—1859) Անգլիայի նշանաւոր պատմաբան է և քաղաքական գործիչ, ազատ ոգու և հայեացքների տէր մարդ։

3) Դոմոստրօյը Մոսկուայի մի քահանայի՝ Սիլվեստրի (1560 թ.) շարադրած գիրքն է, որի մէջ բովանդակուած են բազմաթիւ խորհուրդներ ու խրատներ կեանքի ամեն կողմերի վերաբերմամբ և, գլխաւորապէս հնամոլութեան տիպար է ներկայացնում։ Ծ. Թ.

ցնելի, սարսափելի բան։ Փոխանակ նրանց վրայ յարձակուելու, աւելի լաւ է Միշլէի [1] De l'amour *) գիրքը կարդալ։ Հրաշալի բան է։ Պարոններ, եկէք սիրոյ մասին խօսենք,— աւելացրեց Եւդոկսիան ձեռքը թալուկ կերպով գահաւորակի ճմռթկած բարձի վրայ ձգելով։ Յանկարծական լռութիւն տիրեց։

— Ոչ, ինչ հարկ կայ սիրոյ մասին խօսելու,— ասաց Բազարովը.— դուք, ահա, Օդինցևայի անունը տուիք...։ Կարծեմ այդպէս ասիք։ Ո՞վ է այդ տիկինը։

— Զքնաղ, չքնաղ արարած,— ճչաց Սիտնիկովը։— Ես ձեզ կ'ծանօթացնեմ։ Մի խելօք, հարուստ, այրի կին։ Դժբաղդաբար բաւարար չափով զարգացում չունի՝— լաւ կ'լինէր, որ մեր Եւդոկսիայի հետ ի մօտոյ ծանօթ լինէր։ Ձեր կենացը, Eudozie. եկէք բաժակներս չրխկացնենք. «Et toc, et toc, et tin-tin-tin! Et toc, et toc, et tin-ttn-tin!!...»։

— Victor, չար չարաճճի էք։

Նախաճաշը երկար տևեց։ Շամպայնի առաջին շշին յաջորդեց երկրորդը, երրորդը և մինչև անգամ չորրորդը...։ Եւդոկսիան անդադրում դատարկաբանում էր. Սիտնիկովը նրան արձագանգ տալիս։ Երկար ժամանակ խօսում էին, թէ ինչ բան է ամուսնութիւնը— նախապաշարմո՞ւնք թէ յանցանք, և մարդիկ ինչպէս են ծնւում— միատեսա՞կ թէ ոչ, և ինչպէս ինչո՞ւմն է անհատականութիւնը։ Վերջապէս բանն այնտեղ հասաւ, որ Եւդոկսիան, խմած գինուց բոլորովին կարմրած, և տափակ եղունգներովը խանգարուած դաշնակի սանդղների բաղխելով սկսաւ խռպոտ ձայնով երգել նախ ցիգանների երգեր, յետոյ Սէյմուր-Շիֆֆի «Նիրհում է քնաթաթախ Գրանադ» ռոմանսը, իսկ Սիտնիկովը գլխին վզնոց փաթաթած թալկահար սիրականի դերն էր կատարում այդ խօսքերի միջոցին թէ

Եւ քու շրթունքդ իմ շրթանց հետ
Ի ջերմ համբոյր մի դըրոշմուին։

Վերջապէս Արկադիյի համբերութիւնը հատաւ։ Պարոններ պա-

1) Ժիւլ Միշլէն (1798—1874 թ.) նշանաւոր Ֆրանսիացի պատմաբան է և ունի գրած ծանրակշիռ պատմական երկեր. գլխաւորապէս Ֆրանսիայի պատմութեան վերաբերեալ։ Վերև ակնարկուած է նրա «սէր», «կինը» գրուածքները, որոնք սիրոյ և ամուսնութեան փիլիսոփայութիւն են։ Ծ. Թ.

*) Սիրոյ մասին։

րոններ, այս արդէն Բեդլամ [1]) դարձաւ,—նկատեց նա բարձր ձայնով։

Բազարովը, որ երբեմն միայն խօսակցութեան միջոցին մէկ-մէկ ծաղրական խօսքեր էր բաց թողնում—նա աւելի շամպայնով էր զբաղուած—բարձրաձայն յօրանջեց, վերկացաւ և, առանց տանտիկնոջը մնաս բարև ասելու, Արկադիյի հետ միասին դուրս եկաւ տնից։ Սիտնիկովն էլ նրանց ետևից դուրս թռաւ։

—Ինչպէ՜ս է, հը՞, ինչպէ՜ս է.—ասում էր նա շողոքորթաբար մի աջ և մի ձախ վազ տալով,—ասացի հօ որ զարմանալի անձնաւորութիւն է. ահա թէ ինչպիսի կանայք են մեզ պէտք։ Սա իր տեսակի մէջ մի բարոյական—վեհ երևոյթ է։

—Իսկ քո հօր այս հաստատութիւնն էլ բարոյական երևոյթ է,—ասաց Բազարովը մատով գինետունը ցոյց տալով, որի մօտից որ այդ միջոցին անցնում էին։

Սիտնիկովը դարձեալ ճչալով ծիծաղեց։ Նա սաստիկ ամաչում էր իր ծագումից և չէր իմանում, վիրաւորուէր թէ ուրախանար, որ Բազարովը իր հետ դուով էր խօսել։

XIV

Մի քանի օրից Նահանգապետի պարահանդէսը եղաւ։ Մատվէյ Իլյիչը իսկապէս «հանդիսի հերոսն էր». Նահանգական ազնուականների պարագլուխն ամենքին ու ամեն մէկին յայտնում էր, թէ եկել է միմիայն ի յարգանս Մատվէյ Իլյիչի, իսկ Նահանգապետը մինչև անգամ պարահանդիսի մէջ, մինչև անգամ անշարժ մնացած միջոցին շարունակում էր «կարգադրութիւններ անել»։ Մատվէյ Իլյիչի վարմունքի քնքշութիւնը կարող էր հաւասարուել միմիայն նրա վեհութեանը։ Նա փայփայում էր

[12]) Բեդլամը (Բեթլեհեմի համառօտածը) Լոնդոնի հռչակաւոր գժանոցն է. այդ բառը հասարակ անուն է դարձած նըման հաստատութիւնների համար։ Դա շինուած է 1246 թ. երբև «Բեթղեհեմցի մեր Տիրոջ» ընկերութեան համարնակարան։ Այժմս իր մէջ 600 հիւանդի տեղ ունի և օրինակելի հաստատութիւն է ճանաչուած, մինչ 1547 թուին, երբ Հենրիկոս VIII-ը այդ շէնքը նուիրել էր քաղաքին և քաղաքը՝ շէնքը դարձրել էր գժանոց, հազիւ այնտեղ 50 – 60 հոգի զետեղուէր։

ամենքին— ոմանց՝ նողկանքի թոյլ արտայայտութեամբ, իսկ ոմանց էլ յարգանաց նշոյլով. «en vrai chevalier français» քաղցրաբանում էր կանանց առաջ և շարունակ խոշոր, զիլ ու առանձնակ ծիծաղով ծիծաղում, ինչպէս և վայել էր բարձր պաշտօնեայ մարդուն։ Նա թափ տուաւ Արկադիյի մէջքին ու բարձր ձայնով նրան իր «ազգականն» անուանեց, Բազարովին, որ մի հին ֆրակ էր հագած, արժանացրեց մի անուշադիր, բայց ներողամիտ հայեացքի, որ հարևանցօրէն, այտի վըրայով ձգեց նրա վրայ, և արձակեց մի անորոշ , բայց բարեհամբոյր մռնչոց, որի միջից կարելի էր որոշել միայն «Ես՛... շշտ...»։ Նա մատը մեկնեց Սիտնիկովին ու երեսին ժպտաց, բայց միայն գլուխը շուռ տուած. մինչև անգամ իրեն, Կուկշինային էլ, որ առանց կրինոլինի ու կեղտոտ ձեռնոցներով էր եկել, բայց որ մազերին դրախտահաւ էր կպցրել, մինչև անգամ Կուկշինային ասաց. «enchanté»։ Խիստ մեծ բազմութիւն կար և երիտասարդների պակասութիւն չկար. ոչ-զինուորականներն աւելի պատերի տակովն էին խռնուած, մինչդեռ զինուորականները եռանդագին պարում էին մանաւանդ նրանցից մէկը, որ մի վեց շաբաթ Պարիզում մնալով սովորել էր մի քանի խիզախ բացականչութիւններ, ինչպէս՝ «zut», Ah fichtrrre «pst. pst, mon bibi» և այլն։ Նա այդ բացականչութիւնները շատ լաւ էր արտասանում, իսկ Պարիզեան շիկով, և միևնոյն ժամանակ ասում էր. «si jaurais» փոխանակ ասելու «si j'avais», absolument» անշուշտ»ի մտքով, մէկ խօսքով նա խօսում էր Վելիկառուս-Ֆրանսական այն բարբառով, որի վրայ այնքան ծիծաղում են ֆրանսիացիները, երբ որ նրանք ռուսներին հաւատացնելու հարկի մէջ չեն լինում, թէ նրանք ֆրանսերէն հրաշալի, հրեշտակի նման, commes des anges» են խօսում։

Ինչպէս գիտենք, Արկադիյն լաւ չէր պարում, իսկ Բազարովը ամենևին չէր պարում,—նրանք երկուսն էլ քաշուած էին մի անկիւն. նրանց միացաւ նաև Սիտնիկովը։ Նա իր դէմքին արհամարհական ծաղրի արտայայտութիւն տալով ու թունալից նկատողութիւններ շաղ տալով յանդուգն կերպով մտիկ էր տալիս չորս բոլորին ու ըստ երևոյթին, ճշմարիտ հաճոյք զգում։ Յանկարծ նրա դէմքի արտայայտութիւնը փոխուեցաւ և, Արկադիյի կողմը դառնալով, ասես թէ շփոթուած, ասաց. «Օդինցեան եկաւ»։

Արկադին շուռ եկաւ և տեսաւ սևեր հագած մի բարձրահասակ կին, որ կանգնած էր դահլիճի դրանը։ Կնոջ կազմուածքի արժանաւորութիւնը ապշեցրեց նրան։ Նրա հոլանի թևերը գեղեցիկ կերպով ընկած էին վայելչակազմ իրանի երկարութեամբ. Ֆուկսիայի ոստերը փայլուն մազերի վրայով սիրուն կերպով փռուած էին ողորկ ուսերի վրայ. փոքր ինչ կախ ընկած սպիտակ ճակատի տակից խաղաղ ու խելօք, արդարև խաղաղ, և ոչ մտախոհ, նայում էին պայծառ աչքերը, և շրթունքները ժպտում էին հազիւ նկատելի ժպիտով։ Մի տեսակ փաղաքուշ ու քնքուշ ոյժ էր բուրում նրա դէմքը։

—Ծանօթ էք հետը,—հարցրեց Արկադին Սիտնիկովին։

—Մօտ ծանօթ եմ։ Ուզո՞ւմ էք ծանօթացնեմ։

—Ինչու չէ... այս կադրիլից յետոյ։

Օդինցևայի վրայ Բազարովն էլ ուշադրութիւն դարձրեց։

—Սա ինչ բան է,—ասաց նա։—Միւս կանանց նման չի։

Կադրիլը վերջանալուց յետոյ Սիտնիկովը Արկադիյին տարաւ Օդինցևայի մօտ. բայց դժուար թէ նա մօտիկ ծանօթ եղած լինէր Օդինցևային, որովհետև ինքն էլ շփոթուեց իր խօսած միջոցին, Օդինցևան էլ մի քիչ տարակուսանքով էր նրա երեսին նայում։ Սակայն երբ որ լսեց Արկադիյի ազգանունը Օդինցևայի դէմքն ուրախ արտայայտութիւն ստացաւ։ Նա հարցրեց, թէ Նիկոլայ Պետրովիչի որդին չէ՞ արդեօք։

—Այո, նրա որդին եմ։

—Ձեր հօրը երկու անգամ եմ տեսել, բայց շատ բան եմ լսել նրա մասին,—շարունակեց տիկինը,—շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալուս։

Այդ միջոցին մի ադ՚իւտանտ սրարշաւ մօտեցաւ նրան ու կադրիլի հրաւիրեց։ Սա համաձայնեցաւ։

—Պարո՞ւմ էք միթէ,—յարգանքով հարցրեց Արկադին։

—Այո։ Ինչո՞ւ էք կարծում, թէ չպիտի պարելիս լինեմ։ Կամ գուցէ ձեզ թւում է թէ իմ պարելու ժամանակս արդէն անցել է։

—Ի՞նչ լինի... ինչպէս կարելի է։ Թէ որ այդպէս է, ապա թոյլ տուէք ուրեմն ձեզ մազուրկայի հրաւիրեմ։

Օդինցևան զիջողաբար ժպտաց։

—Համեցէք,—ասաց նա և մօտիկ տուաւ Արկադիյին չէ թէ բարձրից, հապա ուղղակի այնպէս, ինչպէս որ ամուսնացած քոյրը մօտիկ կ՚տայ իւր խիստ նորատի եղբայրներին վրայ.

Օդինցևան փոքր ինչ մեծ էր Արկադիյից, քսանինը մէջ, բայց նրա ներկայութեամբ Արկադին իրեն դպրանոցական, ուսանողիկ էր զգում, ասես թէ նրանց մէջ տարիքի մեծ տարբերութիւն լինէր։ Մատվէյ Իլյիչը փառահեղ կերպարանքով ու շողոմաբար խօսքերով մօտեցաւ նրան։ Արկադին մի կողմ քաշուեցաւ, բայց շարունակ դիտում էր և բոլոր կադրիլի միջոցին աչքը նրանից չէր հեռացնում։ Օդինցևան միատեսակ ազատութեամբ խօսում էր թէ բարձր պաշտօնեայի և թէ իւր պարակցի հետ. նա գլուխն ու աչքերը ծանրութեամբ շուռ ածեց և մի եւ կու անգամ հանդարտ կերպով ծիծաղեցաւ։ Նրա քիթն էլ, սովորաբար համարեա բոլոր ռուս կանանց քթի նման, մի քիչ հաստ էր, և մորթի գոյնն էլ այնքան մաքուր չէր. բայց և այնպէս Արկադին վճռեց, որ իւր կեանքում այսպիսի սիրուն կին չէր տեսել։ Օդինցևայի ձայնը Արկադիյի ականջից չէր հեռանում. ասես թէ նոյն իսկ այդ կնոջ շորի ծալքերն անգամ ուրիշ կանանց շորերի ծալքերից տարբեր էին, աւելի վայելչատես ու լայն, և նրա մարմնի շարժումներն էլ մի առանձին սահունութիւն ունէին և բնական միևնոյն ժամանակ։

Երբ որ մազուրկայի եղանակը հնչել սկսաւ, Արկադին իւր տիկնոջ մօտ նստեց. նա մի քիչ վեհերկոտ էր և ուզում էր նրա հետ խօսել և միմիայն ձեռներով մազերն էր շփում և ոչ մի բառ չէր գտնում ասելու։ Բայց այդ երկար չտևեց. Օդինցևայի խաղաղութիւնը համակեց և նրան, քառորդ ժամ չանցած նա արդէն ազատօրէն պատմում էր իւր հօրը, իւր հօրեղբօր, Պետերբուրգում և գիւղում անցկացրած կեանքի մասին։ Օդինցևան քաղաքավարի համակրութեամբ ականջ էր դնում նրա պատմածներին, հովհարը թեթևակի բաց անում ու փակում. Արկադիյի շատախօսութիւնն ընդհատւում էր, երբ որ Օդինցևային պարի էին հրաւիրում։ Սիտնիկովը, ի միջի այլոց, նրան երկու անգամ հրաւիրեց։ Օդինցևան վերադառնում էր, նորից տեղը նստում, ձեռքն առնում հովհարը. բայց մինչև անգամ նրա կուրծքը սովորականից աւելի արագ չէր շարժւում։ Իսկ Արկադին դարձեալ վերսկսում էր իւր շատախօսութիւնները և լիովին համակուած էր երջանկութեամբ, որ մօտիկ է Օդինցևային, որ խօսում է հետը՝ նայելով նրա աչքերին, նրա գեղանի ճակատին, նրա ամբողջ սիրուն, վեհ և խելացի դէմքին։ Օդինցևան ինքը քիչ էր խօ-

սում, բայց նրա խօսքերից երևում էր, որ ճանաչում էր կեանքը. Արկադիյն նրա մի քանի նկատողութիւններից հետևեցրեց, որ այս նորատի կինն արդէն շատ բան զգացել էր, շատ բանի վրայ միտք արել...:

—Այդ ում հետ էիք խօսում,—հարցրեց Օդինցեան,—քանի դեռ Սիտնիկովը ձեզ ինձ մօտ չէր բերել:

—Նկատեցի՞ք հա՛,—իւր հերթին հարցրեց Արկադիյն:—Ի՞նչ երեսի դէմք ունի, այնպէս չէ՞: Դա իմ բարեկամն է, Բազարով ազգանունով:

Արկադիյն սկսաւ «իւր բարեկամի» վրայ խօսել: Նա այնքան մանրամասն, այնպիսի ոգևորութեամբ սկսաւ նրա մասին խօսել, որ Օդինցեւան շուռ եկաւ և ուշադրութեամբ նայեցաւ Բազարովի վրայ: Մինչ այս՝ մազուրկան մօտենում էր իւր վախճանին: Արկադիյի ափսոսն էր գալիս, որ բաժանուելու էր նրանից՝—մօտ մի ժամ շատ լաւ ժամանակ էր անցկացրել նրա կողքին: Ճիշտ է, նա այդ բոլոր միջոցին շարունակ զգում էր, որ նոր բարեկամուհին դէպ իրեն ներողամտաբար է վերաբերւում, և թէ ինքը որպէս թէ պարտաւոր էր երախտագէտ լինել...բայց երիտասարդ սրտերն այդպիսի բանից չեն նեղւում:

Երաժշտութիւնը դադարեց:

—Merci *),—ասաց Օդինցեան տեղից վերկենալով:—Դուք խոստացաք ինձ այցելութեան գալ. հետներդ բերէք նաև ձեր բարեկամին: Շատ հետաքրքիր եմ տեսնելու մի մարդ, որ համարձակութիւն ունի ոչ մի բանի չհաւատալու:

Նահանգապետը մօտեցաւ Օդինցեային, յայտնեց որ ընթրիքը պատրաստ է և մտահոգ կերպարանքով թևը տուաւ: Օդինցեան գնալիս շուռ եկաւ, որպէս զի մի վերջին անգամ էլ ժպտայ, և Արկադիյին գլխով արաւ: Արկադիյն խոնարհ գլուխ տուեց. նրա ետևից նայեցաւ (որքան վայելչակազմ թուաց նրա իրանը, որ գեղուած էր սև մետաքսի մոխրաւուն փայլով) և մտածելով, «այս րոպէիս նա արդէն իմ գոյութիւնս մոռացաւ», իւր ներսում մի տեսակ վայելուչ հեզութիւն զգաց:

—Հը՞,—հարցրեց Բազարովը Արկադիյին, հէնց որ սա իրենց անկիւնը վերադարձաւ:—Բաւականութիւն ստացա՞ր:

*) Շնորհակալութիւն:

Ծ. Թ.

Հէնց նոր ինձ մի աղա ասաց, որ այդ տիկինն—օօօ. բայց կարծեմ այդ աղան անմախի մէկն է: Իսկ դու. ինչ կարծիքի ես. քու կարծիքովդ էլ օօօ է:

—Ես այդ արտայայտութիւնը լաւ չեմ հասկանում,—պատասխանեց Արկադիյն:

—Ա՛յ քեզ բան. ինչ անմեղն ես եղել:

—Որ ասում եմ, կ'նշանակէ չեմ հասկանում, թէ ինչ էր ուզում ասել քու աղան: Անկասկած, Օդինցեան խիստ քաղցրաբարոյ կին է, բայց այնպէս սառն ու խիստ է պահում իրեն, որ...

—Վախեցիր էն ջրից... գիտես էլի առակը,—վրայ բերեց Բազարովը:—Ասում ես սառն էր: Հէնց համն էլ դրա մէջն է: Պաղպաղակ հո սիրում ես:

—Գուցէ,—քթի տակովն ասաց Արկադիյն,—այդ մասին կարող չեմ բան ասել: Ուզում է հետդ ծանօթանալ և խնդրեց, որ գնալիս քեզ էլ հետս տանեմ:

—Երևակայում եմ, թէ իմ մասին ինչեր ասած կ'լինիս: Ասենք շատ լաւ ես արել: Տար ինձ էլ: Ո՛վ էլ որ լինի դա—նահանգական մի էգ առիւծ, թէ «էմանցիպէ» Կուկշինայի նըման, մի այնպիսի ուսեր ունի, որ ես վաղուց տեսած չէի:

Բազարովի ցինիկական ոճը Արկադիյի սրտին դիպաւ, բայց—ինչպէս այդ յաճախ պատահում է—նա իւր բարեկամին յանդիմանեց ոչ այն բանի համար, որը իրեն դուր չէր եկել...

—Ինչո՞ւ չես ընդունում, որ կանանց մէջ էլ մտքի ազատութիւն լինի.—ասաց նա ցած ձայնով:

—Նրա համար, եղբայր ջան, որ կանանց մէջ միմիայն անճոռնի կանայք են ազատ մտածում:

Խօսակցութիւնն հէնց այստեղ էլ կտրուեցաւ: Երկու երիտասարդներն էլ ընթրիքից յետոյ անմիջապէս տուն դարձան: Կուկշինան նեարդոտ գայրոյթով, բայց և վեհերկոտ կերպով ծիծաղեց նրանց ետևից՝—նրա ինքնասիրութիւնը խորը վիրաւորուել էր նրանով, որ ոչ մէկը և ոչ միւսը իւր վրայ ուշադրութիւն չէր դարձրել: Խնջոյքում նա ամենից ուշը մնաց և գիշերուայ ժամը չորսերին Սիտնիկովի հետ պարիզի ձևով պօլկա-մազուրկա պարեց: Այս խրատական տեսարանով էլ վերջացաւ նահանգապետի պարահանդէսը:

XV

— Տեսնենք կաթնասունների որ դասակարգին է պատկանում սա,— միւս օրը Բազարովն ասում էր Արկադիյին՝ Օդինցեւայի իջևանած հիւրանոցի սանդուխքներից վեր բարձրանալով։— Քթիս փիս հոտ է գալիս։

— Զարմանում եմ վրադ,— բացականչեց Արկադիյն։— Ի՞նչ։ Դու՛, դու Բազարով, հետևում ես այն նեղ բարոյականութեան, որ...

— Տարօրինակ մարդ ես,— անհոգ կերպով ընդհատեց Բազարովը։— Մի՞թէ դեռ չգիտես, որ մեր լեզուով և մեզ համար «փիս հոտ» նշանակում է «լաւ հոտ»։ Ասել է չահ կայ։ Մի՞թէ այս որ ինքդ չէիր ասողը, թէ տարօրինակ է եղել նրա ամուսնութիւնը, թէպէտ իմ կարծիքովս հարուստ ծերուկի գնալը— ամենևին մի տարօրինակ բան չէ, ընդհակառակն, խոհեմութիւն է։ Ես քաղաքի ասէկոսէներին չեմ հաւատում, բայց սիրում եմ կարծել, ինչպէս ասում էր մեր նահանգապետը, որ դրանք ուղիղ են։

Արկադիյն ոչինչ չպատասխանեց և բաղխեց սենեակի դուռը։ Նշանազգեստ հագած մի երիտասարդ սպասաւոր երկու բարեկամներին տարաւ մի ընդարձակ սենեակ, որ, ինչպէս սովորաբար բոլոր ռուսաց հիւրանոցների սենեակները, վատ էր կահաւորուած, բայց զարդարուած էր ծաղիկներով։ Շուտով ներս մտաւ նաև ինքը Օդինցեւան՝ առաւօտեան պարզ զգեստը հագին։ Գարնան արևի լուսով նա աւելի ևս նորատի էր թւում։ Արկադիյն Բազարովին ներկայացրեց նրան և ծածուկ զարմացմամբ նկատեց, որ կարծես Բազարովը շփոթուեց, մինչդեռ Օդինցեւան, երեկուայ նման, բոլորովին հանգիստ էր։ Բազարովը ինքն էլ զգաց, որ շփոթուեց և ինքը իր վրայ նեղացաւ։ «Ա՛յ քեզ բա՛ն— կնիկարմատից վախեցայ» մտածեց նա և Սիտնիկովի պէս, բազկաթոռի մէջ թինկը տուած նստելով, սկսաւ չափից անց համարձակութեամբ խօսել, իսկ Օդինցեւան իր պարզ աչքերը նրա վրայից չէր հեռացնում։

Աննա Սերգէեվնա Օդինցեւայի հայրը Սերգէյ Նիկոլայևիչ Լոկտեւն էր, մի հռչակուած գեղեցիկ, խաբեբայ և թղթամոլ մարդ, որ մի տասնեհինգ տարի Պետերբուրգում ու Մոսկուայում իր դիրքը պահպանելուց ու աղմուկ հանելուց յետոյ վերջ ի վերջոյ թղթախաղի մէջ ամեն բան տանուլ էր տուել ու

ստիպուած էր եղել բնակութիւն հաստատել գիւղում, որտեղ սակայն շուտով մեռաւ մի փոքրիկ կայք թողնելով երկու աղջիկներին՝ Աննային, որ՝ քսան տարեկան էր և Կատերինային, որ տասներկու տարեկան էր։ Նրանց մայրը, որ Խ...իշխանական աղքատացած տոհմի աղջիկ էր, մեռել էր Պետերբուրգում դեռ այն միջոցին, որ ամուսինը մեծ անուն ունէր։ Հօր մահից յետոյ շատ ծանր վիճակի մէջ էր մնացել Աննան։ Պետերբուրգում ստացած պատուական կրթութիւնը նրան պատրաստած չէր տնտեսական և կեանքի հոգսերը տանելու և գիւղական խուլ անկիւնում ապրելու։ Ամբողջ գաւառակում չունէր մի մարդ, որից գոնէ խորհուրդ հարցնէր։ Հայրը խոյս էր տալիս հարևանների հետ յարաբերութիւն ունենալուց. նա արհամարհում էր նրանց, և նրանք էլ նրան էին արհամարհում, ամեն մէկը իր տեսակէտով։ Սակայն Աննան չշուարեցաւ և անմիջապէս բերել տուեց իր մօրաքրոջը, իշխանադուստր Աւդոտեա Ստեփանովնա Խ...ին, մի չար և ինքնահաւան պառաւ, որ քրոջ աղջկայ տանը բնակութիւն հաստատելով, բոլոր ամենալաւ սենեակներն իրեն առաւ. առաւօտից մինչև իրիկուն չարունակ գոգովում էր ու փնթփնթում, և մինչև անգամ պարտիզումն զբօսնելիս էլ անպատճառ իր հետ էր վերցնում իր միակ ճորտ սպասաւորին, որ մռայլ դէմքով մի մարդ էր՝ կապտագոյն երիզաւոր հնացած, սիսեռի գոյն, համազգեստը հագին և եռանկիւն գլխարկը գլխին։ Աննան համեստութեամբ դիմանում էր մօրաքրոջ բոլոր քմահաճոյքներին, բոլոր ժամանակը զբաղւում էր քրոջ դաստիարակութեամբը և թւում էր, թէ արդէն հաշտուել էր անյայտութեան մէջ թառամելու մտքի հետ...։ Բայց բաղդը նրան ուրիշ բա՛ն էր վիճակել։ Նրան պատահաբար տեսաւ Օդինցե անունով մէկը, քառասուն վեց տարեկան մի խիստ հարուստ, տարօրինակ բնաւորութեան տէր, մաղձոտ, հաստլիկ, ծանր ու թթուած մի մարդ, որը սակայն յիմար չէր և ոչ էլ չար. սիրահարուեցաւ Աննային և առաջարկեց ամուսնանալ։ Աննան համաձայնեցաւ նրա կինը լինելու,— իսկ նա մի վեց տարի ապրեց Աննայի հետ և մեռնելիս իր բոլոր կայքը նրան թողեց։ Աննա Սերգէեվնան ամուսնու մահից յետոյ մօտ մի տարի գիւղից չհեռացաւ. յետոյ քրոջը հետ արտասահման գնաց, բայց միմիայն Գերմանիա այցելեց, ձանձրացաւ և գալով բնակեցաւ իր սիրելի Նիկօլսկոյէ գիւղը, որ *** քաղաքից քառասուն վերստի չափ հեռու

էր գտնում։ Այնտեղ փառահեղ, շատ լաւ կահաւորած տուն ունէր, մի պատուական պարտէզ՝ իւր ջերմանոցով՝ հանդուցեալ Օդինցեւը իրեն համար ոչինչ չէր խնայում։ Աննա Սերգէեւնան շատ քիչ էր գալիս քաղաք, մեծ մասամբ գործով, և այն էլ երկար չէր մնում։ Նահանգում նրան չէին սիրում. սաստիկ աղմուկ էին հանում Օդինցեւի հետ ամուսնանալու համար, ամեն տեսակ յիմար բաներ էին պատմում վրան, հաւատացնում էին, թէ իւր հօրն օգնելիս է եղել խաբեբայական գործերի մէջ, թէ արտասահման գնալն էլ զուր տեղը չէ եղել, հապա հասարակութիւնից ծածկելու անհրաժեշտութիւնից մի քանի անախորժ հետեւանքները...«Ինչ բանի եղածը հօ հասկանում էք»—աւելացնում էին զայրացած պատմողները։ «Աշխարքի խէրն ու չառը տեսած կին է», ասում էին նրա մասին. իսկ նահանգում յայտնի սրախօսն էլ սովորաբար աւելացնում էր. «ու տեռուած»։ Այդ բոլոր ասէ-կոսէները հասնում էին նրա ականջին. բայց նա չիմանալու էր տալիս՝—ազատ և բաւական վճռական բնաւորութեան տէր էր նա։

Օդինցեւան մէջքը բազկաթոռի կռնակին դէմ տուած ու, ձեռքը ձեռքին դրած նստած էր և Բազարովին ականջ դնում։ Սա, սովորականին հակառակ, բաւական շատ էր խօսում և յայտնի կերպով աշխատում էր զբաղեցնել իւր խօսակցին. այս բանն էլ զարմացրեց Արկադիին։ Նա չէր կարողանում վճռել, թէ արդեօք Բազարովը իւր նպատակին հասնում էր թէ ոչ։ Դժուար էր Աննա Սերգէեւնայի դէմքից հասկանալ, թէ ինչպիսի տպաւորութիւն էր ստանում. նրա դէմքը շարունակ միևնոյն արտայայտութիւնն ունէր—բարեհամբոյր ու նուրբ. նրա գեղանի աչքերը ուշադրութիւն էին առփայլում, բայց անվրդով ուշադրութիւն։ Սկզբում Բազարովի կոտրատուելը վատ տպաւորութիւն արաւ նրա վրայ, մի այնպիսի տպաւորութիւն, որ անում է անախորժ հոտը կամ սուր ճիչը. բայց և իսկոյն հասկացաւ, որ Բազարովը շփոթուած է և այդ բանը մինչև անգամ նրան գոհութիւն պատճառեց։ Սովորական խօսակցութիւնները Օդինցեւային զզուանք էին պատճառում. իսկ ոչ ոք կարող չէր Բազարովին մեղադրել, թէ սովորական ձևերի ու մտածմունքի տէր է։ Արկադիին այդ օրը վիճակուած էր շարունակ զարմանալ։ Նա սպասում էր, որ Բազարովը կ՚սկսի Օդինցեւայի հետ, որպէս խելացի կնոջ հետ, խօսել իւր համոզումների ու հայեացքների մասին՝—չէ՞ որ ինքը Օդինցեւան էր

ցանկութիւն յայտնել լսելու մի մարդու, որ «համարձակութիւն ունի ոչ մի բանի չհաւատալու», իսկ դրա փոխարէն Բազարովը խօսում էր բժշկութեան, հոմէօպատիայի, բուսաբանութեան վրայ։ Բանից երևաց, որ Օդինցեւան առանձնութեան մէջ զուր ժամավաճառ չէր լինում՝—նա մի քանի լաւ գրքեր էր կարդացել և կանոնաւոր էլ ռուսերէն խօսում։ Նա խօսք ձըգեց երաժշտութեան վրայ, բայց նկատելով, որ Բազարովը գեղարուեստ չէ ընդունում, աննկատելի կերպով խօսքը դարձրեց բուսաբանութեան վրայ, չնայելով որ Արկադին սկսել էր խօսել ժողովրդական մեղեդիների մասին։ Օդինցեւան շարունակ նրա հետ վարւում էր այնպէս, որպէս կրտսեր եղբօր հետ. ըստ երևութին Օդինցեւան գնահատում էր նրա պատանեկական բարեսրտութիւնն ու պարզութիւնը—ուրիշ ոչինչ։ Մօտ երեք ժամ տևեց նրանց անշտապ, բազմակողմանի և կենդանի զրոյցը։

Բարեկամները վերջապէս վեր կացան տեղներից և սկսան մնաս բարով ասել։ Աննա Սերգէեւնան հաճութեամբ նայեցաւ նրանց, իւր գեղեցիկ, սպիտակ ձեռքը երկսին էլ մեկնեց և, փոքր ինչ մտածելով, անվճռաբար, բայց բարեմիտ ժպիտով ասաց. «Թէ որ, պարոններ, ձանձրանալուց չէք վախում, եկէք ինձ մօտ, Նիկոլսկոյէ»։

—Ի՞նչ էք ասում, Աննա Սէրգէեւնա,—բացականչեց Արկադին,—ինձ համար յատուկ բաղդ կ՚համարեմ...

—Իսկ դո՞ւք, մսիօ Բազարով։

Բազարովը միայն գլուխ տուեց,—և Արկադին մի վերջին անգամ էլ զարմացաւ՝—նկատեց, որ բարեկամը կարմրեցաւ։

—Յետո՞յ,—ասում էր նա Բազարովին փողոցում.—դարձեա՞լ այն կարծիքին ես, որ նա օօօ...է։

—Ո՞վ է իմանում։ Տեսնում էիր հօ ինչպէս էր նա ինքն իրեն սառցրել,—պատասխանեց Բազարովն ու մի քիչ լուռ մնալուց յետոյ շարունակեց.—դքսուհի է. թագուհի։ Միայն պակաս է, որ գլխին թագ ունենայ ու մէկ էլ շորի պոչը բռնած ունենան։

—Մեր դքսուհիներն այդպէս ռուսերէն չեն խօսում,—նկատեց Արկադին։

—Ինչքան չլինի մեր մէջն է եղել, եղբայր ջան, մեր հացից կերել։

—Բայց և այնպէս չքնաղ կին է,—ասաց Արկադին։

— Ի՛նչ մարմին ունի,— շարունակեց Բազարովը.— ինչ անդամահատարան տանելու բան է։

— Հերիք է, խեղճ Աստուծոյ, Եւգենի. ամենևին բանի նման չէ ասածդ։

— Դէ՛, մի նեղանալ, քնքշիկ։ Շատլաւնէ է։ Պէտք է միանգամ նրա գիւղը գնալ։

— Ե՞րբ։

— Թէկուզ հէնց վաղը չէ միւս օր։ Այստեղ էլ մի շատ գործ չունենք։ Կուկշինայի հետ շամպայն պիտի խմենք։ Ազգականից, ազատամիտ պաշտօնեայից ականջ պիտի դնենք...։ Հէնց վաղը չէ միւս օր էլ ուղղակի գնանք։ Հայրիս հօրս ագարակն էլ այնտեղից հեռու չէ։ Նիկօլսկօյէն հո ***-ի ճամբին է։

— Այո։

— Optime (շատ լաւ). բանը չյետացնելու կարիք չկայ. բանը յետացնում են միմիայն անխելքները—մէկ էլ խելօքները։ Ասում եմ հա—լաւ մարմին ունի։

Երեք օր յետոյ երկու ընկերները Նիկօլսկօյէ էին գնում։ Պայծառ օր էր և շատ տաք չէր, և փոստային կուշտ ձիերը, թեթևակի շարժելով կչկռած ու հիւսած պոչերը, ուրախ-ուրախ առաջ էին վազում։ Արկադիյն նայում էր ճանապարհին ու ժպտում, ինքն էլ չիմանալով թէ ինչ բանի։

— Շնորհաւորիր ինձ,— յանկարծ բացականչեց Բազարովը,— այսօր յուլիսի 22-ն է, տօնս է։ Տեսնենք թէ ս. Եւգենիյն ինչպիսի խնամք է տանում իմ վրաս։ Այսօր ինձ տանն են սպասում,— աւելացրեց նա ձայնը քաշ գցելով...էհ, կ'սպասեն, ինչ եղած կայ որ։

XVI

Աննա Սերգէևնայի բնակած ապարանքը շինած էր մի բաց, փոքր ինչ զառիվայր բլրի վրայ, իսկ նրան մօտիկ կառուցած էր դեղին քարաշէն եկեղեցին՝ իւր կանաչ կտուրով, սպիտակ սիւներով և գլխաւոր մուտքի գլխին քաշած al fresco նկարով, որ «իտալական ճաշակով» «Քրիստոսի Յարութիւնն» էր ներկայացնում։ Մանաւանդ աչքի էր ընկնում առաջին շարքում գետնին փռուած մի գէր ու կլոր թխահեր զինուորական՝ սաղաւարտը գլխին։ Եկեղեցու ետևը ձգուած էին գիւղի երկշար տները, որոնց մէջ յարդեայ կտուրների վրայ տեղ տեղ

երևում էին ծխնելոյզները։ Կալուածատիրոջ տունն ու եկեղեցին միևնոյն ճաշակով էին շինած, այն ճաշակով, որ Ռուսիայում յայտնի է Ալեքսանդրեան անունով, այդ տունն էլ դեղին էր ներկած, կտուրը կանաչ, սպիտակ էլ սիւներ ունէր, իսկ ճակատին էլ տոհմանիշն էր նկարած։ Երկու շէնքն էլ նահանգական ճարտարապետն էր կառուցել հանգուցեալ Օդինցևի հաւանութեամբ, որը չէր կարողանում ոչ մի դատարկ և ինքնակամ, ինչպէս ինքն էր ասում, նորմուծութիւններ տանել։ Տունը երկու կողմից պաշարել էին հին պարտէզի մուժ ծառերը. խուզած եղևիններից կազմուած ճեմուղին տանում էր դէպի տան գլխաւոր մուտքը։

Նախասենեակում մեր բարեկամներին ընդունեցին երկու մեծահասակ, համազգեստ հագած սպասաւորներ. նրանցից մէկն անմիջապէս գնաց սենեկապանին իմաց տալու։ Սենեկապանը, որ սև ֆրակ հագած մի հաստ մարդ էր, անմիջապէս եկաւ և հիւրերին գորգածածկ աստիճաններով տարաւ մի առանձին սենեակ, ուր արդէն պատրաստել էին երկու մահճակալ՝ արդուզարդի բոլոր պարագաներով։ Ինչպէս երևում էր տան մէջ կարգ ու կանոն կար՝—ամեն բան մաքուր էր, ամեն տեղ մի տեսակ վայելուչ հոտ էր փռուած, հէնց իմանաս մինիստրութեան սենեակներում լինէիր։

— Աննա Սերգէևնան խնդրում է որ կէս ժամից շնորհ բերէք իւր մօտ,— յայտնեց սենեկապանը. իսկ առ այժմ ասելու բան չունի՞ք։

— Ոչինչ չունինք ասելու, պատուելի,— ասաց Բազարովը.— մի փոքր բաժակ օղի որ հրամցնէք, չգիտեմ։

— Շատ բարի,— ասաց սենեկապանը փոքր ինչ զարմացած և, կօշիկները ճռճռացնելով, հեռացաւ գնաց։

— Ի՛նչ գրանժանր (փարթամ) է,— նկատեց Բազարովը.— կարծեմ այդպէս է ձեր լեզուով։ Իսկը դքսուհի է։

— Լա՛ւ դքսուհի է,— պատասխանեց Արկադիյն,— որ հէնց առաջին անգամից իւր մօտ հրաւիրեց այնպիսի թունդ ազնուականների, ինչպէս ես ու դու ենք։

— Մանաւանդ ես, որ ապագայ բժիշկ եմ, և բժշկի որդի, տիրացուի թոռ...։ Գիտես որ ես տիրացուի թոռ եմ...։

— Ինչպէս Սպերանսկին,— աւելացրեց Բազարովը փոքր ինչ լռելուց յետոյ ու շրթունքները ծռելով։— Բայց և այնպէս

շատ փարթամ կեանք է ստեղծել այս տիկինը, ահ, շատ փարթամ։ Արդեօք մենք էլ ֆրակ չհագնենք։

Արկադիյն միայն ուսերը վեր ցցեց... բայց նա էլ էր փոքր ինչ շփոթուած։

Կէս ժամից Բազարովն ու Արկադիյն ընդունարան գնացին։ Սա մի ընդարձակ, բարձր սենեակ էր, որը թէպէտ բաւական շքեղ էր կահաւորուած, բայց մէջը մի առանձին ճաշակ չէր երևում։ Ծանր, թանկ գնանոց աթոռներն ու սեղանները սովորական վեհ կերպով դարսած էին պատերի երկանքով. պատերին կպցրած էր դարչնագոյն ոսկեզօծ նկարներով պաստառ. հանգուցեալ Օդինցևն այդ պաստառը յատուկ բերել էր տուել Մոսկուայից իր մի բարեկամ գինեվաճառի ձեռքով, որ միևնոյն ժամանակ միջնորդի դեր էր կատարում։ Միջին գահաւորակի վերևը պատից կախ էր արած մի ուռած, խարտեաշ տղամարդու պատկեր, որ կարծես անբարեհամ կերպով նայում էր հիւրերին։ «Երևի ինքն է» շշնչաց Բազարովը Արկադիյին և, քիթը կնճռոտելով, աւելացրեց. «չփախչենք»։ Բայց այդ միջոցին ներս մտաւ տան տիկինը։ Նա հագած էր բարեժեան թեթև գիպակեայ զգեստ. դէպի ականջների ետևը կարգին սանրած մազերը նրա մաքուր ու թարմ դէմքին կուսական արտայայտութիւն էին տալիս։

—Շնորհակալ եմ, որ խօսքերդ կատարեցիք,—սկսեց տիկինը.—Մնացէք ինձ մօտ և հաւատացէք, որ վատ տեղ չէ սա։ Ձեզ կ'ծանօթացնեմ քրոջս հետ. նա լաւ դաշնամուր է նուագում։ Ասենք այդ ձեզ համար, մսիօ Բազարով, նշանակութիւն չունի. բայց դուք, մսիօ Կիրսանով, կարծեմ երաժշտութիւն սիրում էք. իմ մօտ բացի քրոջիցս կենում է նաև պառաւ մորաքոյրս, մէկ էլ երբեմն-երբեմն թուղթ խաղալու գալիս է հարևաններիցս մի պարոն—ահա մեր բոլոր հասարակութիւնը։ Իսկ այժմ նստենք։

Օդինցևան այս փոքրիկ ճառը ծայրից մինչև վերջը մեկին-մեկին արտասանեց, ասես թէ անգիր արած լինէր. յետոյ դարձաւ դէպի Արկադիյն։ Բանից երևաց, որ իր մայրը ճանաչելիս է եղել Արկադիյի մօրը և մինչև անգամ նրա սիրոյ հաւատարմատարն է եղել դէպի Նիկոլայ Պետրովիչը։ Արկադիյն սկսաւ ոգևորութեամբ խօսել հանգուցեալի մասին, իսկ Բազարովն այդ միջոցին սկսաւ ալբոմը թերթել։ «Ինչպէս խելօքացել եմ» մտածում էր նա ինքն իրեն։

Այդ միջոցին մի գեղեցիկ քերծէ, կապոյտ վզնոցը վզին, եղունգներովը գետինը չխչխկացնելով վազեց եկաւ ընդունարան. իսկ նրա ետևից մտաւ մի տասնութ տարեկան, սև մազերով, թուխ, փոքր ինչ կլոր, բայց հաճելի դէմքով, մանր սև աչքերով աղջիկ։ Նա ձեռին ծաղիկներով լի կողով ունէր։

—Ահաւասիկ ձեզ և իմ Կատեաս,—ասաց Օդինցևան՝ գլխով քրոջը ցոյց տալով։

Կատեան թեթևակի ներքև քաշուելով բարևեց, նստաւ քրոջ կողքին ու սկսաւ ծաղիկները ջոկել։ Քերծէն, որի անունը Ֆիֆի էր, պոչը շարժելով մօտ եկաւ երկու բարեկամներին և իր սառը ցռուկովը հերթով բոթեց նրանց ձեռքը։

—Այս բոլորը քո՞ւ քաղածդ է,—հարցրեց Օդինցևան։

—Այո,—պատասխանեց Կատեան։

—Իսկ մորաքոյրը թէյի պիտի գա՞յ։

—Պիտի գայ։

Կատեան խօսելիս շատ քաղցր ժպիտ ունէր—ամօթխած ու անկեղծ, իսկ նայուածքը—ներքևից վերև—ծիծաղելի-դաժան էր թւում։ Նրա վրայ ամեն ինչ էլ դեռ ևս կանաչ-դալուն էր՝—ձայնն էլ, ամբողջ երեսի աղուամաղն էլ, վարդագոյն ձեռները՝ բռան միջի սպիտակաւուն բոլորակներով, և թեթևակի հուպ եկած ուսերն էլ...։ Նա շարունակ կարմրում էր ու արագապէս շունչ առնում։

Օդինցևան դէպի Բազարովը դարձաւ։

—Եւգենիյ Վասիլիչ,—սկսեց նա,—դուք միմիայն վայելչութեան համար է, որ թերթում էք ալբոմը։ Մինչդեռ դա ձեզ չի հետաքրքրում։ Աւելի լաւ է մօտեցէք մեզ և եկէք մի բանի վրայ վիճենք։ Բազարովը մօտ եկաւ։

—Ի՞նչ բանի վրայ կ'հաճիք,—ասաց նա։

—Ինչ բանի վրայ որ ուզէք։—Զգուշացնեմ, որ ես սաստիկ վիճող եմ։

—Դո՞ւք։

—Ես։ Կարծեմ այդ բանը ձեզ զարմացնում է։ Ինչո՞ւ։

—Նրա համար որ, ինչքան կարող եմ դատել, դուք հանդարտ ու սառը բնաւորութիւն ունիք, իսկ վիճելու համար պէտք է յուզուել, յափշտակուել։

—Այդ որտեղի՞ց էք կարողացել ինձ այդպէս շուտով ճանաչել։ Նախ որ ես անհամբեր եմ և յամառ. կ'ուզէք Կատեային հարցրէք. և երկրորդ՝ ես շատ շուտ եմ յափշտակւում։

Բազարովը Աննա Սերգէևնային նայեցաւ։

—Գուցէ. այդ բանը դուք աւելի լաւ կ'իմանաք։ Ուրեմն վիճել էք ուզում—համեցէք։ Ես ձեր ալբոմի մէջ նայում էի սաքսոնական զուիցերիայի տեսարանները, և դուք ասացիք, թէ այդ բանը կարող չէ ինձ զրաւել։ Դուք այդ ասացիք այն պատճառով, որ չէք ենթադրում, թէ իմ մէջ գեղարուեստական հասկացողութիւն լինի,—ուղիղ է, իմ մէջ այդ բանը չկայ. բայց այս տեսարանները ինձ կարող էին հետաքրքրել օրինակ երկրաբանութեան տեսակէտից, լեռների կազմակերպութեան տեսակէտից։

—Ներեցէք. դուք որպէս երկրաբան աւելի գրքի, յատուկ այդ առարկային վերաբերեալ գրքի կ'դիմէիք և ոչ թէ պատկերի։

—Պատկերն ինձ չօչափելի կերպով ներկայացնում է այն, ինչ որ գրքի մէջ տասը երեսի վրայ է նկարագրած։

Աննա Սերգէևնան լուռ մնաց։

—Ուրեմն դուք ոչ մի կաթիլ գեղարուեստական հասկացողութիւն չունիք էլի,—ասաց նա արմունկովը սեղանին կոթնելով, և այս շարժումով իւր դէմքը Բազարովին մօտեցնելով։—Այդ ինչպէս էք կարողանում առանց դրան եօլա գնալ։

—Ու ինչիս է դա, թոյլ տուէք հարցնեմ։

—Հէնց առնենք այն բանի համար, որ կարողանաք մարդկանց ճանաչել և ուսումնասիրել։

Բազարովը քմծիծաղեց։

—Նախ որ դրա համար կեանքի փորձ կայ. իսկ երկրորդ էլ չարժէ ամեն մի անհատի ջոկ-ջոկ ուսումնասիրել։ Բոլոր մարդիկ, ինչպէս մարմնով, այնպէս էլ հոգով, նման են միմեանց. ամեն մէկս էլ ունինք ուղեղ, փայծաղ, սիրտ, թոք, որոնք միատեսակ են կազմուած. և այսպէս կոչուած բարոյական յատկութիւններն էլ ամենքի մէջ միևնոյնն են՝—չնչին փոփոխութիւնները նշանակութիւն չունին։ Մի անհատն էլ բաւական է որպէսզի կարող լինինք դատել բոլոր միացեալների մասին։ Հա՛ մարդիկ, հա անտառի ծառերը, մէկ բան են. ոչ մի բուսաբան չի սկսիլ ամեն մի կեչի ծառը ջոկ-ջոկ ուսումնասիրել։

Կատեան, որ առանց շտապելու ծաղիկները ջոկում էր տեսակը տեսակին, տարակուսած՝ աչքը Բազարովի վրայ ձգեց, —և նրա արագ ու անհոգ հայեացքին հանդիպելով, մինչև ականջի արմատները կարմրեցաւ։ Աննա Սէրգէևնան գլուխը շարժեց...

—Անտառի ծառերը՛,—կրկնեց նա։—Ուրեմն ձեր կարծիքով ոչինչ տարբերութիւն չկայ անխելք և խելօք, չար և բարի մարդկանց մէջ։

—Ոչ, կայ՝ ինչպէս հիւանդ և առողջ մարդու մէջ։ Թոքախտաւորի թոքերը այնպէս չեն իհարկէ, ինչպէս որ են իմ ու ձեր թոքերը, թէպէտ և միատեսակ կազմութիւն ունին։ Մենք մօտաւորապէս գիտենք, թէ ինչից են առաջանում մարմնական ցաւերը՝ իսկ բարոյական ցաւերն առաջանում են վատ դաստիարակութիւնից, ամեն տեսակ դատարկ բաներից, որ մանկութիւնից լցնում են մարդկանց գլուխները, մէկ խօսքով հասարակութեան այլանդակ դրութիւնից։ Ուղղեցէք հասարակութիւնը—և հիւանդութիւնները կ'վերանան։

Բազարովն այս ամենը մի այնպիսի ձևով էր ասում, որ կարծես թէ միևնոյն ժամանակ էլ ինքն իրեն մտածելիս լինէր. «ինձ համար մէկ բան. ուզում ես հաւատա՛, ուզում ես՝ չէ»։ Նա իւր երկայն մատներով շփում էր այտմօրուսը, իսկ աչքերը սենեակի անկիւններն էր վազվզում։

—Ու կարծում էք,—ասաց Աննա Սերգէևնան,—թէ երբ որ հասարակութիւնն ուղղուի, էլ ոչ անխելք մարդիկ կ'լինեն, ոչ էլ չա՛ր մարդիկ։

—Գոնէ եթէ հասարակութիւնը կանոնաւոր կերպով կազմակերպուած լինի, այն ժամանակ բոլորովին նշանակութիւն չի ունենալ, թէ մարդս անխելք է թէ խելօք, չա՛ր է թէ բարի։

—Այո, հասկանում եմ. ամէնքն էլ միատեսակ փայծաղ կ'ունենան։

—Հէնց այդպէս էլ է, տիկին։

Օդինցեան դէպի Արկադին դարձաւ։

—Իսկ ձեր կարծիքն ինչպէս է, Արկադիյ Նիկոլայիչ։

—Ես Եւգէնիյին համաձայն եմ,—պատասխանեց նա։

Կատեան ճակատի տակից նրան նայեցաւ։

—Պարոններ, դուք ինձ զարմացնում էք,—ասաց Օդինցեան.—բայց մենք դեռ կ'խօսենք։ Իսկ այժմ, լսում եմ, մօրաքոյրս թէյ խմելու է գալիս. պէտք է խնայենք նրա ականջները։

Աննա Սերգէևնայի մօրաքոյրը, իշխանադուստր X...ը, որ մի վտիտ, փոքրիկ, բռունցքի մեծութեամբ հաւաքուած դէմ-

քով և անշարժ, ալեոր յօնքերի տակից փայլող չար աչքերով պառաւ էր, ներս մտաւ և, հիւրերին հազիւ բարևելով, նստաւ թաւշապատ լայն բազկաթոռի մէջ, ուր նրանից զատ, ոչ ոք իրաւունք չունէր նստելու։ Կատեան փոքրիկ աթոռակը դրեց նրա ոտների տակը. պառաւը նրան շնորհակալութիւն չյայտնեց, մինչև անգամ վրան էլ չնայեցաւ, միայն դեղին շալի տակ, որը համարեա թէ ամբողջ վտիտ մարմինը ծածկած էր, ձեռները շարժեց։ Նա դեղին գոյնը սիրում էր՝—նրա գլխազարդի վրան էլ պայծառ դեղին գոյնի ժապաւէններ կային։

—Ինչպէս էիք գիշերս, մօրաքոյր,—ձայնը բարձրացնելով հարցրեց Օդինցևան։

—Այս շունը դարձեալ այստեղ է,—ի պատասխանի քըրթմնջաց պառաւը, և նկատելով, որ Ֆիֆին երկու անհաստատ քայլ արեց դէպի իրեն, բացականչեց,—կորի, կորի։

Կատեան Ֆիֆիին կանչեց և բաց արաւ դուռը։

Ֆիֆին ուրախ-ուրախ դուրս թռաւ յուսալով, որ զբօսնելու են գնալու, բայց դրան քամակին մենակ մնալով, սկսաւ դուռը չանկռտել ու ոռնալ։ Իշխանուհին խոժոռեցաւ. Կատեան ուզում էր տեղից վերկենալ....

—Կարծում եմ թէյը պատրաստ կ'լինի,—ասաց Օդինցևան։—Գնանք, պարոններ։ Համեցէք թէյ անուշ անելու, մօրաքոյր։

Իշխանուհին լուռ ու մունջ տեղից վերկացաւ և առաջ ինքը դուրս եկաւ ընդունարանից։ Ամենքն էլ նրա ետևից սեղանատուն գնացին։ Ղազախի չորեք հագած սպասաւորը աղմուկով սեղանից հեռացրեց բարձերով պատած, նոյնպէս նուիրական, բազկաթոռը, որի մէջ նստեց իշխանուհին. Կատեան, որ թէյ էր անում, առաջ նրան տուեց գաւաթը, որի վրայ տոհմանիշն էր դրոշմուած։ Պառաւը գաւաթի մէջ մեղր աճեց (նա կարծում էր, որ թէյը շաքարով խմելը թէ մեղք է և թէ թանկ է նստում, թէպէտ և ինքը ոչ մի բանի համար ոչ մի կոպէկ չէր մսխում), և յանկարծ խռպոտ ձայնով հարցրեց։

—Ի՞նչ է գրում իշխան Իւանը։

Ոչ ոք պատասխան չտուեց։ Բազարովն ու Արկադին շուտով գլխի ընկան, որ նրա վրայ ուշադրութիւն չէին դարձնում, թէպէտ և հետը յարգանքով էին վարւում։ Հէնց այնպէս, շնորքի խաթեր համար են պահում, որովհետև իշխանական արիւնից է», մտածեց Բազարովը...Թէյից յետոյ Աննա

Սերգէևնան առաջարկեց զբօսնելու գնալ. բայց սկսաւ անձրևշաղ և բոլոր հասարակութիւնը, բացի իշխանուհուց ընդունարան վերադարձաւ։ Եկաւ նաև թղթախաղի սիրահար հարևանը, Պորֆիրիյ Պլատոնիչ անունով, մի հաստ ու ալեոր մարդ, կարճ, հէնց իմանաս յեսանած ոտներով, խիստ քաղաքավարի և ծաղրածու։ Աննա Սերգէևնան, որ աւելի Բազարովի հետ էր խօսում, հարցրեց, թէ արդեօք չի՞ ուզիլ ըստ հնաւուրց սովորութեան պրեֆերանս խաղալ։ Բազարովը համաձայնեցաւ ասելով, թէ հարկաւոր է որ նախօրօք պատրաստուի առաջիկայում սպասելիք գաւառական բժշկի դերը կատարելու։

—Զգոյշ կացէք,—նկատեց Աննա Սերգէևնան,—տեսէք ես ու Պորֆիրիյ Պլատոնիչը ձեզ կ'ջարդենք։ Իսկ դու, Կատեա,—աւելացրեց նա,—Արկադիյ Նիկոլայիչի համար մի բան ածա. նա երաժշտութիւն սիրում է. մենք էլ, իդէպ, կ'լսենք։

Կատեան առանց հաճութեան մօտեցաւ դաշնամուրին. Արկադին էլ թէպէտ արդարև երաժշտութիւն սիրում էր, նոյնպէս առանց հաճութեան գնաց նրա ետևից՝—նրան թուաց, թէ Օդինցևան գլխից ռադ է անում իրեն,—մինչդեռ արդէն նրա սրտի մէջ, ինչպէս նրա տարիքն ունեցող ամեն մի երիտասարդի մէջ, եռ էր գալիս մի տեսակ անմեկին ու անհանգստացնող, սիրոյ նախազգացման պէս մի զգացողութիւն։ Կատեան բաց արաւ դաշնամուրի խուփը և առանց Արկադիի վրայ նայելու, ցած ձայնով ասաց.

—Ի՞նչ կուզէք, որ ածեմ։

—Ինչ որ սրտներդ կուզի,—անտարբեր եղանակով պատասխանեց Արկադին։

—Աւելի ինչ տեսակ երաժշտութիւն էք սիրում,—կըրկնեց Կատեան առանց իւր դիրքը փոխելու։

—Կլասիկ,—միևնոյն ձայնով պատասխանեց Արկադին։

—Մոցարտ սիրում էք։

—Մոցարտ սիրում եմ։

Կատեան հանեց Մոցարտի ցէ-մոլ սոնատա-անուրջը։ Նա շատ լաւ էր նուագում, թէպէտ և նուագածը փոքր ինչ չոր ու ցամաք էր։ Առանց աչքը ձայնախազերից հեռացնելու, շըրթունքները պինդ հուպ տուած, անշարժ և ուղիղ նստել էր նա, և միայն սոնատի վերջերքում դէմքը փոքր ինչ վառւեց,

և արձակուած մազերի մի փոքրիկ խոպոպ ընկաւ սև յօնքի վրայ։

Արկադիի վրայ մանաւանդ աւելի ազդեց սոնատի վերջին մասը, այն մասը, ուր անհոգ նուագի զմայլելի զուարթութեան միջև յանկարծ ծագում են խիստ թախծալի, համարեա եղերական վշտի բորբոքումները…

Բայց Մոցարտի ներգործութիւնից նրա մէջ առաջացած մտքերը Կատեայի վերաբերմամբ չէին։ Արկադին նրան մտիկ տալով միայն այն էր մտածում. «Չէ, այս աղջիկը վատ չի ածում, ինքն էլ վատ չէ»։

Կատեան սոնատն ածել վերջացնելուց յետոյ, առանց ձեռքը ստեղներից հեռացնելու, հարցրեց. «բաւակա՞ն է»։ Արկադին յայտնեց, որ չի համարձակւում նրան աւելի նեղութիւն տալ, և սկսաւ Մոցարտի վրայ խօսել. Նրան հարցրեց, թէ ինքն էր այդ սոնատը հաւանել, թէ՞ ուրիշի առաջարկածն էր։ Բայց Կատեան միայն այո կամ ոչ էր ասում՝—նա իւր մէջը քաշուել, թաք էր կացել։ Այդպիսի միջոցին նա մէկ էլ հեշտութեամբ դուրս չէր գալիս. այդ ժամանակ նրա դէմքն էլ յամառ, համարեա բութ արտայայտութիւն էր ստանում։ Նա չէ թէ քաշուող էր, հապա կասկածամիտ էր և իրեն դաստիարակող քրոջիցը աչքը փոքր ինչ վախեցել էր, մի բան, որ Աննա Սերգէևնայի մտքովն անգամ չէր անցնում։ Արկադին վերջ ի վերջոյ մօտ կանչելով Ֆիֆիին, որ ներս էր եկել, սկսաւ շնորքի համար շփել նրա գլուխը։ Կատեան նորից իւր ծաղիկները սկսաւ ջոկել։

Իսկ այդ միջոցին Բազարովը իրար ետևից տանում էր հա տանում։ Աննա Սերգէևնան շատ վարպետ էր խաղում, Պորֆիրի Պլատոնիչն էլ ամօթով մնացողը չէր։ Բազարովը տանուլ տուեց թէպէտ քիչ, բայց և այնպէս նրա համար զգալի բան։ Ընթրիքի ժամանակ Աննա Սերգէևնան դարձեալ բուսաբանութեան վրայ խօսք բաց արեց։

—Վաղը առաւօտեան եկէք զբօսանքի գնանք. — ասաց նա Բազարովին.—ուզում եմ ձեզանից իմանալ դաշտային ծաղիկների լատիներէն անունները և նրանց յատկութիւնները։

—Ինչներիդ է լատիներէն անունները,—հարցրեց Բազարովը։

—Ամէն բանի մէջ կարգ կանոն պէտք է,—պատասխանեց տիկինը։

—Ի՜նչ հրաշալի կին է եղել այդ Աննա Սերգէևնան,—բացականչեց Արկադին, երբ որ իւր բարեկամի հետ մենակ մնաց իրենց յատկացրած սենեակում։

—Այո,—պատասխանեց Բազարովը,—խելքը գլխին կին է։ Ով է իմանում ինչեր է տեսել։

—Այդ ինչ մտքով ես ասում, Եւգենի Վասիլիչ։

—Լաւ մտքով, լաւ, յարգելի պարոնիկս, Արկադի Նիկոլայիչ։ Հաւատացած եմ, որ նա իւր կալուածքն էլ լաւ է կառավարում։ Բայց հրաշալին նա չէ—հապա քոյրը։

—Ի՞նչ, այդ թուխ աղջիկը։

—Այո, այդ թուխ աղջիկը։ Գիտես որ գոնէ թարմ է, ձեռք տուած չէ, և վեհերկոտ է, և լռակեաց, և ամէն բան, ինչ որ ուզես։ Ա՛յ, ում հետ արժի զբաղուել։ Նրան ինչ որ ուզես, այն կ'դարձնես. միւսը—եկն անցած խմոր է։

Արկադին ոչինչ չպատասխանեց Բազարովին, և իւրաքանչիւրը իւր ջոկ մտքերով պառկեցան քնելու։

Միենոյն իրիկունը Աննա Սերգէևնան էլ մտածում էր հիւրերի մասին։ Բազարովը նրան դիւր էր եկել իւր կտրուկ դատողութեամբ և կոտրատուելու սովորութիւն չունենալու համար։ Բազարովը նրա համար մի նոր, դեռ իրեն չհանդիպած, բան էր, իսկ նա հետաքրքիր բնաւորութիւն ունէր։

Աննա Սերգէևնան բաւական տարօրինակ կին էր։ Նա ազատ լինելով ոևէ նախապաշարմունքից, չունենալով նաև մի որ և իցէ զօրեղ հաւատալիք, միենոյն ժամանակ ոչ մի բանի առաջ տեղի չէր տալիս և ոչ մի տեղ էլ չէր գնում։ Շատ բան նա պարզ տեսնում էր, շատ բան էլ զբաղեցնում էր նրան, բայց և ոչ մի բան լիովին չէր գոհացնում նրան. և դժուար թէ նա լիովին գոհացումն ուզէր էլ։ Նրա միտքը միաժամանակ և հետախոյզ էր և անտարբեր՝—նրա տարակուսանքները երբէք մինչև մոռացութեան աստիճանի չէին խաղաղւում և երբէք էլ մինչև յուզմունքի աստիճանի չէին աճում. թէ որ հարուստ և անկախ չլինէր, գուցէ մտնէր կռուի մէջ, իմանար ինչ բան է կիրքը…Բայց նրա կեանքը թեթև էր, չնայելով որ երբեմն ձանձրոյթ էր զգում, և նա առանց շտապելու, հազիւ երբեմն միայն յուզուելով, օրերն անց էր կացնում իրար

եանից։ Երբեմն նրա աչքի առաջն էլ բորբոքւում էին պայծառ գոյներ, բայց երբ որ դրանք մարում էին, նա հանգստանում էր և երբէք չէր ափսոսում դրանց վրայ։ Մինչև անգամ նրա երևակայութիւնը թռչում անցնում էր այն սահմանից դուրս, որ սովորական բարոյականի օրէնքներով թոյլատրելի էր համարւում, բայց այդ ժամանակ էլ նրա արիւնը խաղաղ հոսում էր նրա զմայլելի—վայելչակազմ և խաղաղ մարմնի մէջ։ Երբեմն որ տաքացած ու քնքշացած դուրս էր գալիս անուշաբոյր լոգարանից, կ'կսէր անուրջների մէջ ընկնել մտածելով կեանքի ունայնութեան, վշտի, աշխատանքի և չարիքի մասին...։Հոգին կ'լցուէր յանկարծական համարձակութեամբ, կը եռար ազնիւ ձգտումով. բայց հէնց որ կիսաբաց պատուհանից կփչէր թափանցող քամին, Աննա Սերգէևնան բոլորովին կուչ եկած կ'սկսէր գանգատուել և համարեա զայրանալ, և այդ րոպէին նրան միայն մի բան էր պէտք—որ այդ անպիտան քամին չփչէ։

Ինչպէս և ամէն մի կին, որ դեռ չէ կարողացել սէր ճաշակել, Աննա Սերգէևնան էլ մի բան էր ուզում, բայց թէ ինչ ինքն էլ չէր իմանում։ Իսկապէս նա ոչինչ չէր ուզում, թէպէտ և իրեն թւում էր, թէ ամէն բան է ուզում։ Հանգուցեալ Օդինցեւին նա դժուարութեամբ էր հանդուրժում (նա հաշւով էր Օդինցեւին գնացել, թէպէտ և նա, հաւանօրէն, չէր համաձայնիլ նրան գնալու, թէ որ Օդինցեւին բարի մարդ չհամարէր) և գաղտնի զզւանք տածեց դէպի բոլոր տղամարդիկն էլ, որոնց նա երևակայում էր որպէս փնթի, ծանր և դանդաղկոտ, անզօր տաղտկացուցիչ էակներ։ Մի անգամ արտասահմանում մի տեղ հանդիպել էր ասպետական դէմքով, բաց ճակատի տակից փայլող ազնիւ, կապոյտ աչքերով մի երիտասարդ, գեղեցիկ շւեդացու. երիտասարդը զօրեղ տպաւորութիւն էր գործել նրա վրայ, բայց այդ բանը նրան արգելք չեղաւ Ռուսիա վերադառնալու։

«Տարօրինակ մարդ է այս բժիշկը» մտածում էր Աննա Սերգէևնան փառահեղ անկողնի մէջ պառկած, ժանեկաւոր բարձերը գլխի տակին և մետաքսեայ թեթև վերմակը վրան առած... Նա իւր հօրից ժառանգել էր հօր դէպի շքեղութիւն ունեցած հակման մի մասը։ Նա խիստ սիրում էր իւր մեղաւոր, բայց բարի հօրը, իսկ հայրն էլ պաշտում էր իւր աղջկանը և որպէս իրեն հաւասարի հետ բարեկամաբար հանաքներ էր անում հետը, լիովին վստահանում էր նրան, հետը խորհուրդ անում։ Նա իւր մօրը հազիւ էր յիշում։

«Տարօրինակ մարդ է այս բժիշկը» կրկնեց նա ինքն իրեն։ Նա ձգուեցաւ-մեկնուեցաւ, ժպտաց, ձեռները գլխի վերևը գցեց, յետոյ աչքի անցկացրեց մի ֆրանսիական յիմար վէպից մի երկու թերթ, գիրքը ձեռքից վայր գցեց—և, բոլորովին մաքուր ու սառն, քնեց մաքուր ու քաղցրաբոյր սպիտակեղէնի մէջ։

Միւս օր առաւօտեան նախաճաշիկից անմիջապէս յետոյ Աննա Սերգէևնան ու Բազարովը գնացին բուսաբանութեամբ պարապելու և վերադարձան ճիկը ճաշից առաջ։ Արկադին ոչ մի տեղ չգնաց և մի ժամի չափ Կատեայի հետ անցկացրեց։ Նա Կատեայի մօտ չձանձրացաւ, Կատեան ինքն առաջարկեց երէկուայ սոնատը կրկնել, բայց երբ որ վերջապէս Օդինցեան վերադարձաւ, երբ որ Արկադին տեսաւ նրան—նոյն րոպէին սիրտը ճմլուեցաւ... Օդինցեան փոքր ինչ յոգնած քայլերով էր առաջանում. այտերը կարմրել էին, աչքերը, յարդեայ գլխարկի տակ, սովորականից աւելի փայլում։ Նա մատների արանքում պտոյտ էր ածում մի վայրի ծաղկի ձողունը, թեթև կրկնոցակը իջել էր արմունկների վրայ, և փեղոյրի լայն մոխրագոյն ժապաւէնները կպել էին կրծքին։ Բազարովը ինքնավստահ և իւր սովորական անհոգ քայլուածքով հետևում էր նրան, բայց նրա դէմքի զուարթ և մինչև անգամ փաղաքուշ արտայայտութիւնը Արկադիյին դիւր չեկաւ։Բազարովը ատամների արանքով «բարև» ասելով գնաց սենեակը, իսկ Օդինցեւան մտամոլոր կերպով հուպ տուեց Արկադիյի ձեռքն ու նոյնպէս անցաւ գնաց։

«Բարև», մտածեց Արկադին... «Միթէ այսօր չէինք տեսնուել»։

XVII

Ժամանակը, (ինչպէս յայտնի է), երբեմն թռչում է թռչունի նման, իսկ երբեմն սող է տալիս սողունի պէս. բայց մարդուս համար շատ լաւ է լինում մանաւանդ այն ժամանակ, երբ մինչև անգամ չի էլ զգում—շուտ է անցնում ժամանակը թէ դանդաղ։ Բազարովն ու Արկադին էլ հէնց այդպէս անցկացրին մի տասնհինգ օր Օդինցեայի տանը։ Այդ բանին մասամբ նպաստում էր այն կարգ ու կանոնը, որ Օդինցեան մտցրել էր

տան ու կենցաղավարութեան մէջ։ Նա ճշտութեամբ պահպանում էր այդ կարգ ու կանոնը և ուրիշներին էլ ստիպում նոյնն անելու։ Օրուայ ընթացքում ամեն բան իր ժամանակին էր կատարւում։ Առաւօտեան ժամը ուղիղ ութին ամենքը հաւաքւում էին թէյ խմելու. թէյից յետոյ մինչև նախաճաշիկ իւրաքանչիւր ոք ինչ ուզէր, այն կանէր. տանտիկինն ինքը զբաղւում էր գործակատարի (կալուածքը վարձով—բահրով—էր տրուած), սննեակապանների, տնտեսուհիների հետ։ Ճաշից առաջ զարձեալ բոլորեքեան հաւաքւում էին զրոյց անելու կամ ընթերցանութեամբ պարապելու համար, երեկոն նուիրւած էր զբօսանքի, երաժշտութեան, թղթախաղի. ժամը տասն ու կէսին Աննա Սերգէևնան քաշւում էր իր սենեակը, յաջորդ օրուայ համար կարգադրութիւններ անում և անկողին մտնում։ Այս ամենօրեայ կեանքի չափած-ձևած, փոքր ինչ հանդիսաւոր կանոնաւորութիւնը Բազարովին դիւր չէր գալիս. «Հէնց իմանաս սլլւում ես» ասում էր նա՝—համազգեստ հագած սպասաւորները, կազմ-պատրաստ կանգնած սննեկապանները վիրաւորում էին նրա ռամկավարական զգացմունքը։ Նրա կարծիքով թէ որ բանն այդտեղ է հասել, ապա ուրեմն պէտք էր անգլիական ձևով էլ ճաշէին, այսինքն՝ ֆրակով ու սպիտակ փողկապով։ Նա մի անգամ այդ մասին խօսեց Աննա Սերգէևնայի հետ։ Սա իրեն այնպէս էր պահում, որ ամեն մէկն էլ առանց քաշուելու կարող էր նրա առաջ իր կարծիքները յայտնել։ Օդինցեան լսեց նրա ասածներն ու պատասխանեց. «Ձեր տեսակէտից ձեր ասածն ուղիղ է—և, գուցէ այս դէպքում իմ արածը—խանումութիւն է. բայց գիւղում կարելի չէ առանց կարգ ու կանոնի ապրել, ձանձրոյթից մարդ կ՚մեռնի»—և շարունակում էր իր ուզածին պէս անել։ Բազարովը քրթմնջում էր, բայց հէնց թէ իրեն և թէ Արկադիի համար ժամանակն այդպէս թեթև անցնելու պատճառն այն էր, որ Օդինցեայի տանն ամեն բան «հէնց գիտենաս սլլւում է»։ Բայց և այնպէս հէնց Նիկոլսկոյէ գալու օրուանից երկու երիտասարդների մէջ էլ փոփոխութիւն էր առաջացել։ Բազարովի մէջ, դէպի որը Աննա Սերգէևնան ակնյայտի կերպով բարեհաճ էր, թէպէտ քիչ էր պատահում, որ նրան համակարծիք լինէր, սկսաւ երևան գալ մի ներքին վրդովմունք, որ առաջ չկար՝—շուտով գրգռւում էր, խօսում էր ակամայ, նայուածքը բարկացկոտ էր, և մի տեղ հանգիստ նստել չէր կարողանում, կարծես ասեղի վրայ նստած լինէր. իսկ Արկադին, որ բոլորովին ինքը իր

մէջ վճռել էր, թէ սիրահարուած է Օդինցեային, սկսեց խաղաղ թախծութեան անձնատուր լինել։ Սակայն այս թախիծը նրան արգելք չեղաւ Կատեային մօտենալու. դա նոյն իսկ նրան նպաստեց քաղցր, բարեկամական կապ հաստատելու Կատեայի հետ։ «Նա ինձ չի գնահատում։ Հող չէ...։ Բայց ահա այս բարի էակը ինձ չի մերժում», մտածում էր նա և նրա հոգին վերստին ճաշակում էր վեհանձնութեան զգացողութեան քաղցրութիւնը։ Կատեան անմեկին կերպով զգում էր, որ Արկադին իր մօտ մի ինչ որ սփոփանք է որոնում, ոչ նրան և ոչ էլ իրեն չէր մերժում կէսամօթխած, կիսավստահ բարեկամութեան հաճոյքը պատճառել։ Աննա Սերգէևնայի ներկայութեանը նրանք իրար հետ չէին խօսում՝ Կատեան քրոջ սուր հայեացքից միշտ կուչ էր գալիս, իսկ Արկադին, ինչպէս որ իսկ վայել է սիրահարուած մարդուս, կարող չէր ուշադրութիւն դարձնել ոչ մի ուրիշ բանի վրայ, քանի որ իր սիրոյ առարկան մօտիկ էր. բայց նա իրեն միայն Կատեայի հետ էր լաւ զգում։ Նա զգում էր, որ անկարող էր Օդինցեային զբաղեցնել. երբ որ նրա հետ մենակ էր մնում, Արկադին թուլանում էր, շշկլւում. Օդինցեան էլ նոյնպէս չէր իմանում, թէ ինչ ասէր նրան՝—Արկադին դեռ՝ շատ երիտասարդ էր նրա համար։ Մինչդեռ Կատեայի հետ Արկադին բոլորովին ազատ էր. նա ներողամտաբար էր վերաբերւում դէպի Կատեան, չէր արգելում նրան արտայայտելու իր տպաւորութիւնները, որ երաժշտութիւնը, կարդացած վիպակը, ոտանաւորը և ուրիշ դատարկ բաներ առաջացնում էին նրա մէջ՝ առանց նկատելու, որ այդ դատարկ բաները իրեն, Արկադիին էլ էին զբաղեցնում։ Իսկ Կատեան էլ իր կողմից նրան արգելք չէր լինում թախծի մէջ ընկնելու։ Արկադին իրեն լաւ էր զգում Կատեայի հետ, Օդինցեան—Բազարովի, ուստի և սովորաբար այսպէս էր պատահում.—երկու զոյգերը մի քիչ ժամանակ միասին լինելուց յետոյ, բաժանւում, ամէն մի զոյգ մի կողմ էր քաշւում, մանաւանդ զբօսանքի ժամանակ։ Կատեան պաշտում էր բնութիւնը, Արկադին էլ բնութիւն սիրող էր, թէպէտ և չէր համարձակւում այդ բանը խոստովանուել. Օդինցեան դէպի բնութիւնը բաւական անտարբեր էր, նոյն էր և Բազարովը։ Մեր բարեկամների համարեա միշտ իրարից ջոկուելն առանց հետևանքի չմնաց—նրանց յարաբերութիւնները ըսկսան փոխուել։ Բազարովն այլ ևս Արկադիի հետ Օդինցեայի

վրայ չէր խօսում, նոյն իսկ դադարեց Օդինցևայի «ազնուականական ձգտումների» վրայ յարձակուելուց. ուղիղ է. առաջուայ նման այժմ էլ էր Կատեային գովում և Արկադիյին միայն խորհուրդ էր տալիս որ չափաւորէ այդ աղջկայ զգայնութեան հակումները, բայց նա իր գովասանքը չափ-չափ էր տալիս, տուած խորհուրդները չոր էին, և առ հասարակ նա այժմս Արկադիյի հետ առաջուանից քիչ էր զրոյց անում...ասես թէ նրանից խոյս տալիս, նրանից ամաչելիս լինէր....

Արկադիյն այս ամէնը նկատում էր, բայց իր դիտողութիւնները իր մէջն էր պահում։

Այս ամէն «նորութեան» իսկական պատճառն այն զգացմունքն էր, որ Օդինցևան ծնեցրել էր Բազարովի մէջ, մի զգացմունք, որ տանջում կատաղեցնում էր նրան, և որից նա անմիջապէս արհամարհական ծիծաղով ու ցինիքական հայհոյութեամբ հրաժարուելով կ'հրաժարուէր, թէ որ մէկը թէկուզ հեռաւոր ակնարկութիւն անէր այն մասին, ինչ որ նրա մէջ կատարւում էր։ Բազարովը մեծ սէր ունէր դէպի կանայք ու կանանց գեղեցկութիւնը, բայց իդէալական մտքով, կամ, ինչպէս ինքն էր ասում, ռոմանտիք սէրը, անհեթեթութիւն, աններելի յիմարութիւն էր կոչում, ասպետական զգացմունքները մի տեսակ հրէշաւոր արատ կամ հիւանդութիւն էր համարում, և շատ անգամ իր զարմանքն է յայտնել, թէ ինչու Տոգգենբուրգին, այդ բոլոր միննեզենգերների ու տրուբադուրների հետ, դեղին տունը չեն նստացրել։ «Թէ որ մի կին քեզ դուր եկաւ, աշխատիր նրանից բան հասկանալ»— ասում էր նա,— «իսկ եթէ այդ բանը կարելի չէ,—դէ, հարկաւոր էլ չէ, թարկը տուր՝ - աշխարքիս երեսին հօ մենակ դա չէ»։ Օդինցևան նըրան դուր էր գալիս՝—այդ կնոջ մասին տարածուած լուրերը, նրա մտքերի ազատութիւնն ու անկախութիւնը, դէպի Բազարովը տածած անկասկածելի համակրութիւնը—այս ամէնը, ըստ երևոյթին, Բազարովի օգտին էին. բայց Բազարովը շուտով հասկացաւ, որ «նրանից բան չես հասկանայ», սակայն ինքն էլ էր զարմանում, որ թողնել հեռանալու էլ ույժ չունէր։ Հէնց որ Օդինցևան մտքը չէր գալիս, սկսում էր արիւնը բորբոքուել՝ ասենք նա հեշտութեամբ կարող էր իր արիւնը հանդարտացնել, բայց դու բանը տես, որ իր մէջ մի ուրիշ բան էր բուն դրել, որը նա երբէք չէր ենթադրում, որը նա շարունակ ծաղրել էր, որը գրգռում էր նրա բոլոր անձ-

նասիրութիւնը։ Աննա Սերգէևնայի հետ ունեցած խօսակցութեան ժամանակ նա առաջուանից էլ աւելի էր արտայայտում իր անտարբերութիւնը դէպի ամէնայն ռոմանտիք բան. բայց երբ մենակ էր մնում, ցասմամբ հասկանում էր, որ հէնց ինքն էլ ռոմանտիք է։ Այն ժամանակ գնում էր անտառ, սկըսում էր խոշոր քայլերով ման գալ ու հանդիպած ճիւղերը ջարդոտել և, հազիւ լսելի ձայնով, իրեն էլ, Օդինցևային էլ կշտամբել, կամ թէ չէ գնում, քաշւում էր խոտնոց կամ մարագը, աչքերը պինդ փակում էր և ինքն իրեն ստիպում էր քնել, որը, իհարկէ, միշտ չէր աջողւում։ Մէկ էլ տեսար յանկարծ նըրան կ'թուար, թէ երբ և իցէ այդ ողջախոհ ձեռները իր ճըտովը փաթաթուեն, թէ այդ հպարտ շրթունքներն արձագանք կ'տան իր համբոյրին, թէ այդ խելօք աչքերը քնքշութեամբ—այո, քնքշութեամբ կանգ կառնեն իր աչքերի վրայ, և իր խելքը ման կգայ և մի առ վայրկեան մոռացութեան մէջ կընկնի՝ մինչև որ դարձեալ իր մէջ բորբոքուի ցասումը։ Նա յաճախ մերկացնում էր իր ամէն տեսակ այդպիսի «ամօթալի» մտածութիւնները. հէնց դիտմամբ դևը նրան գրգռելիս լինէր։ Երբեմըն նրան թըւում էր, թէ Օդինցևայի մէջ էլ է փոփոխութիւն առաջանում, թէ նրա դէմքի արտայայտութեան մէջ մի նոր բան է երևում, թէ գուցէ...։ Բայց այստեղ ոտները գետնին էր խփում կամ ատամները կրճտացնում և բռունցքով ինք իրեն սպառնում։

Մինչդեռ Բազարովի դիտողութիւնը շատ էլ սխալ չէր։ Նա խիստ ներգործութիւն էր ունեցել Օդինցևայի երևակայութեան վրայ, նա զբաղեցնում էր Օդինցևային և վերջինս նրա մասին շատ էր մտածում։ Բազարովի բացակայութեանը Օդինցևան նրան չէր կարօտում, չէր սպասում նրան, բայց երբ որ Բազարովը գալիս էր, նա իսկոյն կենդանանում էր. Օդինցևան հաճոյքով նրա հետ մնում էր մենակ, հաճոյքով հետը զրոյց անում, նոյն իսկ այն միջոցին, երբ որ Բազարովը զայրացնում էր նրան կամ նրա ճաշակը, գեղարուեստական սովորոյթները վիրաւորում։ Ասես թէ Օդինցևան ուզում էր թէ՛ նրան փորձել և թէ իրեն փորձի ենթարկել։

Մի անգամ Բազարովը պարտիզում Օդինցևայի հետ զբօսնելիս յանկարծ մռայլ ձայնով ասաց, որ շուտով մտադիր է գիւղ, հօրը տեսութեան գնալ...։ Օդինցևան գոյնը գցեց, կարծես թէ մի բան նրա սիրտը ծակեց, և այնպէս ծակեց, որ ինքն էլ զարմացաւ և յետոյ երկար մտածում էր, թէ արդեօք

ինչ բան էր։ Բազարովը իր գնալու մասին մէկ մտքով չէր ասել, որ նրան փորձի, որ տեսնի թէ դրանից ինչ է դուրս գալիս՝—նա երբէք չէր «չարադրում»։ Այդ առաւօտեան տեսնուել էր իր նախկին դեադկայի, այժմ իր հօրը գործակատար Տիմոֆէիչի հետ։ Այդ Տիմոֆէիչը, որ խունացած դեղին մազերով, քամուց էրած կարմիր դէմքով, և մանր արտասուքի կաթիլները կուչ եկած աչքերին մի տեռուած ու ճարպիկ ծերուկ էր, անակնկալ կերպով յանկարծ, հաստ մոխրա-կապտաւուն մահուդէ կարճիկ կիսամուշտակը հագին, մէջքին փոկի կտոր կապած, ձիւթով օծած կօշիկները ոտին, բուսաւ Բազարովի առաջ։

—Հը՛, ծերուկ, բարով,—բացականչեց Բազարովը։

—Աստուծու բարին ձեզ, հոգի-ջան Եւգենի Վասիլիչ,—սկսեց խօսել ծերունին և զուարթագին ժպտաց, որի պատճառով ամբողջ դէմքը կնճիռներով ծածկուեցաւ։

—Հը՛, ինչ կայ. չլինի իմ ետևիցս են ուղարկել։

—Ի՛նչ էք ասում, հոգի ջան, ինչպէս կարելի է,—թոթովեց Տիմաֆէիչը (նա յիշեց աղայի խիստ պատուէրը, որ ճանապարհ գնելիս տուել էր նրան)։—Աղայիս գործերով քաղաք էի գնում, որ լսեցի թէ այստեղ էք, հագիւ՝ ճամբի վրայ էր, եկ ասացի, գնամ մի տեսնեմ... թէ չէ ինչպէս կարելի է հրամանոցդ անհանգիստ անել։

—Դէ, դուրս մի՛ տա.—կտրեց խօսքը Բազարովը։

—Միթէ այստեղո՞վ է քաղաքի ճանապարհը։—Տիմաֆէիչը տրոր-տրոր եկաւ և ոչինչ չպատասխանեց։—Հայրս առո՞ղջ է։

—Փառք Աստուծոյ, առողջ են։

—Մայրը՞ս։

—Արինա Վասիլևնան էլ, փառք Իրա ողորմութեանը։

—Ինձ սպասելիս կլինեն։

Ծերունին իր փոքրիկ գլուխը մի կողքի ծռեց։

—Ախ, ինչպէս չսպասեն, Եւգենի Վասիլևիչ։ Հաւատա Աստուած, ծնողներիդ նայելիս սրտիցս արիւն է գնում։

—Դէ լաւ, լաւ. կծիկդ մի՛ բաց անի։ Նրանց կասես, որ շուտով կ'գամ։

—Շատ բարի,—հառաչելով պատասխանեց Տիմօֆէիչը։

Ծերունին տնից դուրս գալով, երկու ձեռքով գլխարկը քաշեց գլխին, բարձրացաւ աղքատիկ ճեպակառքը, որ դուրսը դարպասի առաջն էր թողել, ու թեթև վազով ճանապարհ ընկաւ, միայն ոչ քաղաքի կողմը։

Նոյն օրը երեկոյեան Օդինցեան Բազարովի հետ նստած էր իր սենեակում, իսկ Արկադիյն դահլիճի մէջ ման էր գալիս ու Կատեայի նուագածին ականջ դնում։ Իշխանուհին վերև, իր սենեակն էր գնացել. հիւր ասած նրա համար մի անտանելի բան էր, մանաւանդ այս «նորելուկներին», ինչպէս ասում էր նա։ Հանդիսական սենեակներում նա ինքն իրան փքում էր միայն. մինչդեռ իր սենեակում, աղախնի առաջ, երբեմն այնպիսի հայհոյանքներ էր թափում, որ գլխազարդը կեղծամի հետ վեր-վեր էր թռչկոտում գլխի վրայ։ Օդինցեան այս ամենը գիտէր։

—Ինչպէ՞ս թէ ուզում էք գնալ,—ասաց նա.—հապա ձեր խոստումը։

Բազարովը սթափուեցաւ.

—Ի՞նչ խոստում։

—Մոռացե՛լ էք։ Ուզում էիք ինձ քիմիայի մի քանի դաս տալ։

—Ի՛նչ արած։ Հայրս ինձ սպասում է. այլ ևս ուշացնել կարելի չէ։ Սակայն կարող էք կարդալ Pelouse et Fremy-ի «Nations Générales de Chemie»ն. լաւ գիրք է և պարզ էլ գըրած։ Ինչ որ պէտք է, ամեն բան կգտնէք այդ գրքի մէջ։

—Իսկ յիշո՞ւմ էք, որ ինձ հաւատացնում էիք, թէ գիրքը կարող չէ բռնել...չեմ յիշում, թէ ինչ բանի տեղն էիք ասում. բայց գիտէք, թէ ինչ եմ ուզում ասել... Յիշո՞ւմ էք։

—Ինչ արած,—կրկնեց Բազարովը։

—Ի՛նչ կայ գնալու,—ասաց Օդինցեան ձայնը ցածացնելով։

Բազարովը նայեցաւ նրան։ Օդինցեան գլուխը յետ գցած, բազկաթոռի մէջքին էր կպցրել, իսկ մինչև արմունկները բաց թևերն էլ կրծքին ծալել։ Մէկ հատիկ լամպարի լուսով, որի վրայ թղթից շինած էր ցանց էր անցկացրած, նա աւելի դըժգոյն էր թւում։ Սպիտակ լայն շրջազգեստը իր ծալքերով ամբողջովին ծածկել էր նրան. հազիւ երևում էին, նոյնպէս իրար վրայ բերած, ոտների մանրիկ ծայրերը։

—Իսկ մնալու ինչ կայ,—պատասխանեց Բազարովը։

Օդինցեան գլուխը թեթևակի նրան դարձրեց։

—Ինչպէ՞ս թէ ինչ կայ. միթէ այստեղ ձեր ժամանակն ուրախ չի անցնում։ Կամ գուցէ կարծում էք, թէ այստեղ չեն ափսոսայ ձեր գնալու վրայ։—

—Համոզուած եմ։

Օդինցևան լռեց։—Իզուր էք այդպէս կարծում։ Ասենք ես ձեր ասածին չեմ հաւատում։ Դուք կարող չէիք այդ բանը լըրջօրէն ասել։—Բազարովը դարձեալ նստած էր անշարժ։—Եւգենիյ Վասիլևիչ, ինչի՞ էք լռել։

—Ի՞նչ ասեմ ձեզ։ Առհասարակ չարժէ մարդկանց համար ափսոսալ, իսկ ինձ համար հո պէտք չէ ու պէտք չէ։

—Ինչո՞ւ։

—Ես դրական, անհետաքրքրական մարդ եմ։ Խօսել չըգիտեմ։

—Դուք, Եւգենիյ Վասիլևիչ, ուզում էք, որ ձեզ հաճոյախօսութիւն անեմ։

—Ես այդպիսի սովորութիւն չունեմ։ Միթէ ինքներդ էլ չգիտէ՞ք, որ կեանքի գեղարուեստական կողմն ինձ մատչելի չէ, այն կողմը, որը դուք այնքա՜ն գնահատում էք։

Օդինցևան թաշկինակի անկիւնը կծեց։

—Ի՛նչ ուզում էք մտածեցէք,—ասաց նա,—բայց երբ որ գնաք, ես տաղտուկ պիտի զգամ։

—Իրա՜ւ, յամենայն դէպս ձեր տաղտուկը երկար չի քաշիլ։

—Ինչո՞ւ էք այդպէս կարծում։

— Նրա համար որ ինքներդ էք ինձ ասել, թէ դուք այն ժամանակ էք տաղտկութիւն զգում, երբ որ ձեր կարգ ու կանոնը խանգարւում է։ Դուք ձեր կեանքը մի այնպիսի անշեղկանոնաւոր դրութեան մէջ էք դրել, որ այդտեղ կարող չէ ոչ տաղտուկ լինել, ոչ կարօտ... և ոչ մի ծանր զգացմունք։

—Եւ դուք կարծում էք, թէ ես անսխալակա՜ն եմ... այսինքն, որ ես խիստ կանոնաւոր դրութեա՜ն մէջ եմ դրել կեանքս։

—Ինչ խօսք։ Ահաւասիկ օրինակ — մի քանի րոպէից ժամը տասը կ'խփի, և արդէն կանխաւ գիտեմ, որ դուք ինձ կվռնդէք։

—Ոչ, չեմ վռնդի, Եւգենիյ Վասիլևիչ. կարող էք մնալ։ Բացէք այս պատուհանը... կարծես թէ ուզում է շունչս բռնուել։

Բազարովը վեր կացաւ և հրեց պատուհանը։ Դա միանգամից թրխկալով բացուեցաւ... Բազարովը չէր կարծում, թէ այդպէս հեշտ է բացւում. նրա ձեռները դողդողում էին։ Խաւար, քընքոյշ գիշերը նայում էր սենեակի մէջը. երկինքը համարեա թէ սև էր, ծառերը թեթևակի սօսափում էին և ազատ, մաքուր օդի թարմ հոտը փռուեց սենեակի մէջ։

— Բաց թողէք եղեգնեայ վարագոյրը և եկէք, նստեցէք,

ասաց Օդինցևան.—Ձեր գնալուց առաջ ուզում եմ մի քիչ հետներդ զրոյց անել։ Եկէք ձեր մասին մի բան պատմեցէք. երբէք ձեր մասին չէք խօսում։

— Ես, Աննա Սերգէևնա, աշխատում եմ ձեզ հետ օգտակար բաների վրայ խօսել։

— Շատ համեստ էք...։ Բայց կ'ուզէի ձեր մասին մի քանի բան գիտենալ, կամ ձեր ընտանիքի, ձեր հօր մասին, որի պատճառով որ մեզանից հեռանում էք։

«Ինչո՞ւ է այսպիսի բաներ ասում» մտածեց Բազարովը.

—Ամենևին հետաքրքրական բաներ չեն դրանք,—ասաց նա բարձր ձայնով,—մանաւանդ ձեզ համար. մենք անյայտ մարդիկ ենք...

—Հապա ես. ձեր կարծիքով, ազնուակա՜ն եմ։

Բազարովը աչքը Օդինցևայի վրայ գցեց։

—Այո, – չափազանցացրած խիստ կերպով ասաց նա։ Օդինցևան ծիծաղեցաւ։

—Տեսնում եմ, որ դուք դեռ ինձ լաւ չէք ճանաչում, թէպէտ և հաւատացնում էի, թէ բոլոր մարդիկ նման են իրար և չարժէ նրանց ուսումնասիրել։ Մի ժամանակ ես իմ կեանքս կ'պատմեմ ձեզ... բայց առաջ ձերը պատմեցէք։

—Ես ձեզ լաւ չեմ ճանաչում,—կրկնեց Բազարովը։—Գուցէ ձեր ասածն իրաւացի է. ով գիտէ, գուցէ արդարև ամեն մարդ մի հանելուկ է։ Հէնց դուք ասենք՝ —դուք հասարակութիւնից խոյս էք տալիս, հասարակութիւնը ծանրութիւն է ձեզ համար, – և ձեզ մօտ ապրելու հրաւիրեցիք երկու ուսանող։ Ինչո՞ւ էք դուք ձեր այդ գեղեցկութեամբ, ձեր այդ խելքով գիւղումն ապրում։

—Ինչպէ՞ս։ Այդ ի՞նչ ասացիք, – արագութեամբ վրայ բերեց Օդինցևան։ Իմ... գեղեցկութեա՞մբ։

Բազարովը յօնքերը կիտեց։

— Այդ մէկ բան է,—մրթմրթաց նա,—ուզում էի ասել, թէ լաւ չեմ հասկանում, թէ ինչո՞ւ էք գիւղում բնակութիւն հաստատել։

—Այդ բանը չէք հասկանում...։ Բայց հո ինքներդ ձեզ մի որ և իցէ կերպով բացատրել էք այդ բանը։

— Այո... ինձ թւում է, թէ դուք այն պատճառով էք շարունակ միևնոյն տեղում մնում, որ շատ էք ինքներդ ձեզ փափուկ կեանքի վարժեցրել, որովհետև շատ սիրում էք հեշտ,

յարմարաւոր կեանք, իսկ մնացած ուրիշ բաների վերաբերմամբ անտարբեր էք։

Օդինցևան դարձեալ ծիծաղեցաւ։

— Դուք ամենևին չէք ուզում հաւատալ, որ ես էլ ընդունակ եմ յափշտակուելու։

Բազարովը ունքերի տակից նրան նայեցաւ։

— Հետաքրքրութեամբ—գուցէ. բայց ոչ այլապէս։

—Իրա՛ւ։ Դէ այժմ հասկանում եմ, թէ մենք ինչու իրար մօտեցանք. դուք էլ հօ ինձ նման էք։

—Իրար մօտեցա՜նք..., — խուլ ձայնով ասաց Բազարովը։

— Հա... ախր մտահան էի արել, որ դուք ուզում էիք գնալ։

Բազարովը վեր կացաւ։ Լամպարը աղօտ վառւում էր մըթագնած. քաղցրաբոյր, առանձնացած սենեակի մէջ տեղում. երբեմնակի տատանուող եղեգնեայ վարագոյրի արանքից ներս էր գեղւում գիշերուայ գրգռիչ թարմութիւնը, լսւում էր նրա խորհրդաւոր շշունջը։ Օդինցևայի մարմնի ոչ մի մասը չէր շարժւում, բայց գաղտնի յուզումը կամաց-կամաց համակում էր նըրան...։ Նոյնը փոխանցուեց նաև Բազարովին։ Նա յանկարծ ըզգաց, որ նորատի, գեղանի կնոջ հետ մենակ է...։

—Այդ ո՞ւր, — դանդաղութեամբ ասաց Օդինցևան։

Բազարովը ոչինչ չպատասխանեց և վեր ընկաւ աթոռի վրայ։

– Ուրեմն դուք ինձ մի խաղաղ, քնքշացած, երես առած արարած էք համարում, - շարունակեց Օդինցևան միևնոյն ձայնով, առանց աչքը պատուհանից հեռացնելու։ — Մինչդեռ իմ գիտցածովս ես շատ անբաղդ եմ։

—Անբաղդ էք։ Ինչու՞։ Մի՞թէ կարող էք որևէ նշանակութիւն տալ սուտ բամբասանքներին։

Օդինցևայի դէմքը մռայլուեց։ Նա վշտացաւ, որ Բազարովը իր միտքն այդպէս հասկացաւ։

—Այդ բամբասանքները, Եվգենիյ Վասիլևիչ, մինչև անգամ իմ ծիծաղս էլ չեն շարժում, և ես այնքան հպարտ եմ, որ չեմ թոյլ տալ, որ դրանք ինձ անհանգիստ անեն։ Ես անբաղդ եմ այն պատճառով... որ մէջս ապրելու փափագ, ցանկութիւն չկայ։ Կասկածանքով էք վրաս նայում. երևի մտածում էք— այս խօսողը «ազնուական» կին է, որ ամբողջապէս ժանեակնեների մէջ թաղուած, նստած է մախմուրէ բազկաթոռի վրայ։ Ես հօ չեմ ծածկում – որ սիրում եմ այն բանը, որ դուք փա-

փուկ կեանք էք անուանում, բայց միևնոյն ժամանակ ես ապրելու քիչ ցանկութիւն ունեմ։ Ինչպէս գիտէք, այնպէս էլ հաշտեցրէք այս հակասութիւնը։ Ասենք ձեր աչքում այս ամենը ռոմանտիզմ է։

Բազարովը գլուխը շարժեց։

— Դուք առողջ էք, անկախ, հարուստ. էլ ի՞նչ էք ուզում։

– Ինչ եմ ուզո՞ւմ, —կրկնեց Օդինցևան և հառաչեց։—Սաստիկ յոգնած եմ, ծերացել. ինձ թւում է, թէ խիստ շատ ժամանակ է, որ ապրում եմ։ Այո, ապրում եմ,—աւելացրեց նա թեթևակի կրկնոցակը մերկ ձեռների վրայ քաշելով։ Նրա աչքերը հանդիպեցան Բազարովի աչքերին և Օդինցևան հազիւ նըկատելի կերպով կարմրեցաւ։—Որքան յիշողութիւններ կան իմ ետև՝ — Պետերբուրգի կեանքը. հարստութիւն, ապա աղքատութիւն, ապա հօրս մահը, ամուսնութիւնս, ապա, ինչպէս որ հարկն էր, արտասահման գնալս ..։ Յիշողութիւններ շա՜տ, բայց յիշելու բան չկայ, և առաջայում, իմ առաջս — երկար, երկա՜ր ճանապարհ է, իսկ նպատակ չկայ...։ Ուստի և չեմ էլ ուզում առաջ գնալ։

—Այդպէս յուսախաբուած էք ուրեմն, -հարցրեց Բազարովը։

— Ոչ, — կանգ առնելով ասաց Օդինցևան, — բայց ես լիացած չեմ։ Ինձ թւում է, որ եթէ կարողանայի մի բանի պինդ կպչել...

— Դուք սիրել էք ուզում, – ընդմիջեց Բազարովը, — բայց սիրել էլ՝ կարող չէք — ահաւասիկ ձեր դժբաղդութիւնը։

Օդինցևան սկսաւ իր կրկնոցակի թևերը դիտել։

— Մի՞թէ կարող չեմ սիրել, — ասաց նա։

– Դժուար թէ։ Բայց ես իզուր այդ բանը դժբաղդութիւն անուանեցի։ Ընդհակառակն, աւելի նա է ցաւելու արժանի, ում գլխին որ այդ բանը կգայ։

—Ի՞նչ բան։

—Սիրահարութիւն։

—Դո՞ւք այդ որտեղից գիտէք։

—Լսելով գիտեմ, — նեղացած պատասխանեց Բազարովը։

«Դու ծեքծեքւում ես», մտածեց նա, «ձանձրոյթ ես ըզգում և պարապութիւնից ինձ գրգռում ես, մինչդեռ ես...»։ Արդարև, նրա սիրտը հենց ուզում էր դուրս պրծնի։

—Մանաւանդ որ դուք գուցէ և շատ խստապահանջ էք, —ասաց նա ամբողջ մարմնով առաջ խոնարհած ու բազկաթոռի եզրերի ժապաւէնի հետ խաղալով։

—Գուցէ։ Իմ կարծիքով — կամ ամեն ինչ, կամ ոչինչ։ Կեանքի փոխարէն կեանք։ Թէ իմն առար — տուր քոնը, և այդ ժամանակ արդէն առանց ափսոսանքի, անդարձ կերպով։ Ապա թէ ոչ՝ աւելի լաւ է ոչինչ չլինի։

—Վատ բան չէ,—նկատեց Բազարովը.—արդար պայման է, և զարմանում եմ, թէ ինչպէս է եղել, որ մինչև օրս...ձեր որոնածը գտած չէք։

—Իսկ դուք կարծում էք թէ հեշտ բան է բոլորանուիրաբար մի որև իցէ բանի նուիրուիլը։

—Թէ որ սկսես մտածել ու սպասել, ինքդ քեզ մեծ գին տաս, այսինքն թանկ գնահատես—հեշտ չի լինիլ, մինչդեռ առանց երկար-բարակ միտք անելու նուիրուիլը շատ հեշտ բան է։

—Ինչպէս ինքդ քեզ գին չտաս։ Թէ որ ես գին չունենամ, էլ ու՞մն է պէտք իմ անձնուիրութիւնս։

—Այդ արդէն իմ գործս չէ. թող ուրիշը որոշէ իմ գինըս։ Գլխաւորը՝ պէտք է նուիրուել գիտենալ։

Օդինցևան բազկաթոռի մէջ մի քիչ առաջ քաշուեց նստաւ։

—Այնպէս էք խօսում, կարծես թէ դուք այդ ամենը փորձած լինիք,—սկսեց նա։

—Լեզուիս եկաւ՝ ասացի, Աննա Սերգէևնա, գիտէք, որ այս ամենը իմ խելքիս բաները չեն։

—Իսկ ինքներդ կ'կարողանայիք նուիրուել։

—Չգիտեմ, չեմ ուզում պարծենալ։

Օդինցևան ոչինչ չասաց, և Բազարովն էլ լռեց։ Ընդունարանից դաշնամուրի ձայներ հասան նրանց.

—Այս ինչու է Կատեան այսպէս ուշ ժամանակ նուագում,—նկատեց Օդինցևան։

Բազարովը տեղից վերկացաւ։

—Ուղիղ որ արդէն ուշ է, ժամանակ է ձեզ հանգստանալու։

—Սպասեցէք, ինչու էք շտապում... պէտք է ձեզ մի խօսք ասեմ։

—Ի՞նչ խօսք։

—Սպասեցէք,—շշնջաց Օդինցևան։ Նրա աչքերը կանգ առան Բազարովի վրայ. թւում էր, թէ ուշադրութեամբ դիտում էր նրան։

Բազարովը քայլեց սենեակի մէջ, յետոյ յանկարծ մօտեցաւ նրան, շտապով ասաց «մնաք բարով», նրա ձեռքն այնպէս պինդ հուպ տուեց, որ քիչ էր մնում տիկինը ճչար, և դուրս գնաց։ Օդինցևան հուպ եկած մատները շրթունքներին տարաւ, վրան փչեց, և յանկարծ, բուռն կերպով վեր թըռաւ տեղից, և արագ քայլերով դէպի դուռը գնաց, ասես թէ ուզում էր Բազարովին յետ կանչել...։ Արծաթէ մատուցարանի վրայ յարանը ձեռին ներս մտաւ աղախինը։ Օդինցևան կանգ առաւ, պատուիրեց աղախնին հեռանալ և նորից նստեց ու նորից սկսեց միտք անել։ Նրա մազի հիւսը յետ էր եղել և սև օձի նման ընկել ուսի վրայ։ Դեռ երկար ժամանակ լամպարը վառ էր Աննա Սերգէևնայի սենեակում, և երկար ժամանակ նա մնացել էր անշարժ և երբեմն-երբեմն միայն մատներով շփում էր իւր ձեռները, որոնց գիշերային ցուրտը դաղում էր։

Իսկ Բազարովը մի երկու ժամ անց, ցօղից թրջուած կօշիկներով, գզգզուած մազերով ու թթուած, վերադարձաւ իւր ննջարանը։ Արկադիյն գիրքը ձեռին սերթուկի բոլոր կոճակները կոճկած նստած էր գրասեղանի առաջ։

—Դեռ չես պառկել,—կարծես դժգոհ կերպով ասաց Բազարովը։

—Այսօր Աննա Սերգէևնայի հետ երկար նստար,—ասաց Արկադիյն՝ նրա հարցին չպատասխանելով։

—Այո, մինչ դու և Կատերինա Սերգէևնան դաշնամուր էիք նուագում, ես էլ նրա սենեակումն էի։

—Ես չէի նուագում... սկսեց Արկադիյն և լռեց։ Նա զգում էր, որ արցունքը լցւում է աչքը, բայց չէր ուզում, որ իւր ծաղրական ընկերոջ առաջ լաց լինի։

XVIII

Միւս օրը, երբ որ Օդինցևան թէյի եկաւ, Բազարովը երկար ժամանակ գլուխը իր բաժակի վրայ քաշ գցած նստել էր, ու մէկ էլ յանկարծ մտիկ տուեց նրան...։ Օդինցևան նայեցաւ նրա կողմը, ասես թէ նա իրեն պոթած լինէր, և Բազարովին թւաց, թէ տիկնոջ դէմքը ասեսթէ մի գիշերուայ մէջ թեթևակի դժգունած լինէր։ Օդինցևան շուտով քաշուեցաւ իւր սենեակը և մէկ էլ նախաճաշին եկաւ։ Առաւօտից եղանակն անձրևային էր, զբօսնելու հնար չկար։ Բոլորն էլ ընդունա-

բան էին հաւաքում։ Արկադին վեր առաւ ամսագրի վերջին համարն ու սկսեց կարդալ։ Իշխանուհին, ըստ սովորութեան, սկզբում դէմքի վրայ զարմանք արտայայտեց, հէնց գիտենաս Արկադին մի անպատեհ բան հնարած լինէր, ապա չար հայեացքը սեւեռեց նրան. բայց Արկադին նրա վրայ ուշադրութիւն չդարձրեց։

—Եւգենիյ Վասիլեւիչ,—ասաց Աննա Սերգէեւնան,—եկէք իմ սենեակը գնանք...։ Ուզում եմ ձեզ բան հարցնել... Երէկ մի ձեռնարկի անուն տուիք...։

Նա վերկացաւ ու դէպի դուռը գնաց։ Իշխանուհին մի այնպիսի արտայայտութեամբ սկսաւ իր չորս բոլորքը նայել, որ կարծես թէ ուզում էր ասել. «տեսէք, տեսէք, թէ ինչպէս եմ զարմանում» և դարձեալ աչքը Արկադիի վրայ սեւեռեց, բայց սա ձայնը բարձրացրեց, Կատեայի աչքին նայեց, որի կողքին նստած էր, ու շարունակեց իր կարդալը։ Օդինցեան արագ քայլերով իր առանձնասենեակին հասաւ։ Բազարովը, առանց աչքը վեր բարձրացնելու, հապա միայն իր առաջից սահող մետաքսեայ զգեստի նուրբ սուլոցին ու խշխշոցին ականջ դնելով, աշխուժութեամբ հետեւում էր նրան։ Օդինցեան նստաւ նոյն բազկաթոռի վրայ, որ նախօրեկին էր նստած, և Բազարովն էլ իր երէկուայ տեղը բռնեց։

—Ինչպէս էր այդ գրքի անունը՞,—սկսեց Օդինցեան փոքըր ինչ լռելուց յետոյ։

—Pelouse et Frémy, Notions générales...պատասխանեց Բազարովը։—Ասենք կարելի է ձեզ առաջարկել նաև—Ganot-ի Traité élémentaire de physique expérimentale: Այդ գրքի պատկերներն աւելի պարզ են և առհասարակ այդ դասագիրքը...

Օդինցեան ձեռքը առաջ մեկնեց։

—Ներեցէք, Եւգենիյ Վասիլեւիչ, ես ձեզ այստեղ դասագրքերի մասին դատողութիւններ անելու համար չկանչեցի։ Ուզում էի մեր երեկուայ խօսակցութիւնը վերսկսել։ Խիստ յանկարծակի էր ձեր հեռանալը...։ Ձեզ ձանձրալի չի՞ լինիլ։

—Ես պատրաստ եմ։ Աննա Սերգէեւնա։ Բայց երէկ ինչ էինք խօսում մենք։

Օդինցեան ծուռ-ծուռ նայեցաւ Բազարովին։

—Մենք կարծեմ երջանկութեան վրայ էինք խօսում։ Ես իմ մասին էի պատմում ձեզ։ Ի դէպ ահա «երջանկութիւն» ասացի։ Ասացէք, ինչի՞ցն է, որ նոյն իսկ երբ վայելում ենք,

օրինակ, երաժշտութեան, լաւ երեկոյի, համակրելի մարդու հետ զրոյց անելու հաճոյքը, ինչի՞ցն է, որ այս ամենը թւում է, թէ աւելի ակնարկ է մի տեսակ անչափ, չգիտես որտեղ գոյութիւն ունեցող երջանկութեան, քան թէ իսկական երջանկութիւն է, այսինքն մի այնպիսի երջանկութիւն, որը մեր ձեռին է։ Ինչի՞ցն է սա։ Կամ գուցէ դուք ոչ մի այդպիսի բան չե՞ք զգում։

—Առածը հո գիտէ՞ք. թէ «հեռուից զուռնի ձայնը անուշ կ՚գայ»—պատասխանեց Բազարովը,—մանաւանդ որ երէկ հէնց ինքներդ էիք ասողը, թէ լիացած չէք։ Այդպիսի մտքեր, ուղիղ է, իմ միտքս չեն գալիս։

—Գուցէ դրանք ձեզ ծիծաղելի՞ են թւում։

—Ոչ, միայն թէ այդպիսի մտքեր իմ միտս չեն գալիս։

—Իրա՞ւ։ Գիտէ՞ք, ես խիստ կուզենայի իմանալ, թէ դո՞ւք ինչ բան էք մտածում։

—Ինչպէ՞ս, ես ձեր ասածը չեմ հասկանում։

—Գիտէք, վաղուց էի ուզում ձեզ հետ պարզ խօսել։ Կարիք չկայ ձեզ ասելու—այդ ինքներդ էլ լաւ գիտէք,—որ դուք սովորական մարդկանցից չէք. դեռ երիտասարդ էք—և ապագան առաջներդ է։ Ի՞նչ բանի էք պատրաստւում. ինչ ապագայ է սպասում ձեզ. ուզում եմ ասել, թէ ինչ նպատակի էք ձգտում, ո՞ւր էք գնում, ինչ կայ ձեր սրտում. մէկ խօսքով դուք ո՞վ էք, ինչ էք։

—Ինձ զարմացնում էք, Աննա Սերգէեւնա։ Ձեզ յայտնի է, որ ես պարապում եմ բնական գիտութիւններով, իսկ թէ ես ո՞վ եմ։..

—Այո, ո՞վ էք։

—Արդէն յայտնել էի, որ ես գաւառական բժիշկ եմ լինելու։

Աննա Սերգէեւնան անհամբեր շարժում գործեց։

—Ինչո՞ւ համար է այդ ասածներդ։ Ինքներդ էլ դրան չէք հաւատում։ Արկա՞դին կարող էր ինձ այդպիսի պատասխան տալ և ոչ դուք։

—Եւ ինչո՞վ Արկադին...։

—Հերիք է։ Մի՞թէ հնար է, որ դուք մի այդպիսի համեստ գործունէութեամբ բաւականանայիք, և մի՞թէ հէնց ինքներդ չէ՞ք շարունակ պնդողը, թէ ձեզ համար բժշկութիւնը գոյութիւն չունի։ Դուք ու—ձեր այդ անձնասիրու-

թեամբը—գաւառական բժիշկ։ Դուք ինձ այնպիսի պատասխան էք տալիս, որպէս զի խոյս տաք, որովհետև ամենևին վստահութիւն չունիք իմ վրաս։ Բայց գիտէ՞ք որ, Եւգենի Վասիլևիչ, ես կարող էի հասկանալ ձեզ, գնահատել ձեզ՝-ես ինքս էլ աղքատ և ձեզ նման անձնասէր եմ եղել. գուցէ ես էլ անցած լինեմ այնպիսի փորձութիւնների միջից, ինչպէս և դուք էք անցել։

—Այդ ամենը շատ լաւ, Աննա Սերգէևնա, բայց ինձ ներեցէք... ընդհանրապէս ես սովոր չեմ իմ մտքերս պարզելու, և իմ և ձեր մէջ մի այնպիսի տարբերութիւն կայ, որ....։

—Ի՞նչ տարբերութիւն։ Դարձեալ պիտի ասէք, թէ ես ազնուական եմ. Հերիք է, Եւգենի Վասիլևիչ, կարծեմ արդէն ապացուցի որ...։

—Դրանից զատ էլ,—ընդմիջեց Բազարովը,—ինչ հարկ կայ խօսել ու մտածել ապագայի վրայ, որը մեծ մասամբ մեզանից չէ կախուած։ Թէ առիթ կ՚լինի մի բան անելու—շատ լաւ, իսկ թէ առիթ չի լինիլ—գոնէ այնքանովն էլ գոհ կ՚լինիս, որ առաջուանից ի զուր տեղը չես դատարկախօսել։

—Բարեկամական զրոյցը դատարկախօսութիւն էք համարում...։ Կամ գուցէ դուք ինձ, որպէս կնոջ, վստահութեան արժանի չէք համարում։ Դուք հօ մեզ ամենքիս էլ արհամարհում էք։

—Ձեզ որ չեմ արհամարհում, Աննա Սերգէևնա, և ինքներդ էլ գիտէք այդ։

—Ոչ, ես ոչինչ չգիտեմ...բայց ենթադրենք, թէ հասկանում եմ ապագայի մասին ձեր չխօսելու ցանկութիւնը. բայց այն, ինչ որ այժմս կատարւում է ձեր ներսը...

—Կատարւում է՜,—կրկնեց Բազարովը.—ասես թէ ես մի պետութիւն կամ հասարակութիւն լինեմ։ Ամենայն դէպս, այդ ամենևին հետաքրքրական չէ. և մանաւանդ որ միթէ մարդս միշտ կարո՞ղ է բարձր ձայնով պատմել այն, ինչ որ իր ներսը «կատարւում» է։

—Չեմ հասկանում, թէ ինչու՞ կարելի չէ ասել այն, ինչ որ սրտումդ ունիս։

—Դուք կարո՞ղ էք,—հարցրեց Բազարովը։

—Կարող եմ,—փոքր ինչ տատանուելուց յետոյ ասաց Աննա Սերգէևնան։

Բազարովը գլուխը խոնարհեց։

—Դուք ինձանից բաղդաւոր էք։

Աննա Սերգէևնան հարցական կերպով նրան նայեցաւ։

—Դո՛ւք գիտէք,—շարունակեց նա.—բայց էլի ինձ մի բան ասում է, թէ իզուր տեղը չէ, որ իրար մօտեցանք, որ մենք լաւ բարեկամներ կլինենք։ Հաւատացած եմ, որ վերջ ի վերջոյ ձեր այս, ինչպէս ասեմ, ձեր լարուած դրութիւնը, ձեր գաղտնապահութիւնը պիտի վերանայ։

—Իսկ դուք իմ մէջս նկատե՞լ էք գաղտնապահութիւն... էլի ինչպէ՞ս ասացիք... լարուած դրութիւն։

—Այո։

Բազարովը վեր կացաւ, պատուհանին մօտեցաւ։

—Եւ դուք կցանկայիք գիտենալ այդ գաղտնապահութեանս պատճառը, կուզէիք իմանալ, թէ ինչ է կատարւում ներսս։

—Այո,—պատասխանեց Օդինցևան, մի տեսակ իրեն համար էլ դեռ անհասկանալի երկիւղով։

—Եւ չէ՞ք նեղանալ։

—Ոչ։

—Ո՞չ։—Բազարովը մէջքը Օդինցևային դարձրած էր կանգնել։—Ուրեմն իմացէք, որ ես ձեզ յիմարաբար, գժուածի նման սիրում եմ...։ Ահա, այժմ իմացա՞ք։

Օդինցևան երկու ձեռքն էլ առաջ մեկնեց, իսկ Բազարովը ճակատը դէմ տուաւ լուսամուտի ապակուն։ Նա խեղդւում էր. նրա ամբողջ մարմինը յայտնի կերպով թրթռում էր. բայց դա պատանեկան վեհերկոտութեան դող չէր, անդրանիկ խոստովանութեան քաղցր սարսափը չէր նրան պաշարածը. դա բուռն և ծանր կիրքն էր նրա մէջ շարժւում, մի կիրք, որ նման էր ցասման և, գուցէ նաև, դրան ազգակից մի բանի...։Օդինցևա՜ն և սարսափեց և խղճաց նրան։

—Եւգենի Վասիլևիչ,—խօսեց նա,—և ակամայ քնքշութիւն լսուեց նրա ձայնի մէջ։

Բազարովն արագութեամբ շուռ եկաւ, կլլող-լափող հայեացք ձգեց Օդինցևայի վրան,—և, նրա երկու ձեռքից բռնելով, նրան քաշեց, իր կրծքին հուպ տուեց։

Օդինցևան իսկոյն չազատուեցաւ նրա գրկից. բայց մի ակնթարթ յետոյ նա արդէն կանգնած էր հեռու անկեանը և այնտեղից Բազարովին մտիկ տալիս։ Բազարովը դէպի նա սլացաւ...

—Դուք իմ միտքս չհասկացաք, շշնջաց Օդինցեան շտապ երկիւղով։ Թւում էր, թէ բաւական է Բազարովը մի քայլ էլ փոխէր և Օդինցեան պիտի ճչար...։Բազարովը շրթունքները կծեց ու դուրս գնաց։

Կէս ժամ յետոյ աղախինը Բազարովից մի տոմսակ բերեց տուաւ Աննա Սերգէեւնային. տոմսակի մէջ մի տող բան էր գրած. «Պէտք է որ այսօր և եթ գնամ այստեղից, թէ կարող եմ մինչև վաղը մնալ»։—«Ինչ հարկ կայ գնալու։ Ես ձեզ չէի հասկանում—դուք էլ իմ միտքս չհասկացաք», պատասխանեց Աննա Սերգէեւնան, իսկ ինքը մտածեց. «Ես ինքս ինձ էլ չէի հասկանում»։

Մինչև ճաշ Օդինցեան դուրս չեկաւ և, ձեռները քամակը դրած, երբեմն-երբեմն կանգ առնելով մերթ պատուհանի ու մերթ հայելու առաջ, չարունակ յետ ու առաջ ման էր գալիս իւր սենեակի մէջ և թաշկինակով դանդաղ-դանդաղ սրբում վիզը, որի վրայ նրան չարունակ թւում էր, թէ ջերմ բիծ կայ։ Նա ինքն իրեն հարցնում էր, թէ ինչն էր իրեն դրդում Բազարովին ստիպելու, որ անկեղծ լինի, և թէ արդեօք ինքը մի բան չէր կասկածում...։ «Մեղաւոր եմ», ասաց նա բարձր ձայնով, բայց չէի կարող նախատեսել, որ կարող է մի այդպիսի բան լինել»։ Նա մտքի մէջ էր ընկնում և կարմրում էր մտաբերելով Բազարովի համարեա գազանային դէմքը, երբ իւր վրայ յարձակուեց...

«Թէ՞» արտասանեց նա յանկարծ և կանգ առաւ և խոպոպիքը թոթուեց... Նա իւր կերպարանքը տեսաւ հայելու մէջ իւր յետ գցած գլուխը՝ խորհրդաւոր ժպիտը կիսախուփ, կիսաբաց աչքերին ու բերանին, կարծես թէ այդ րոպէին մի այնպիսի բան էին ասում նրան, որ ինքն էլ շփոթուեցաւ...։

«Ոչ», վերջապէս վճռեց նա, «ով է իմանում բանը որտեղ հասնի. այդպիսի բանով խաղալ կարելի չէ, էլի աշխարքիս երեսին ամենալաւը հանգստութիւն է»։

Նրա հանգիստը չէր վրդովուած. բայց նա տխրեց, մինչև իսկ մի անգամ էլ լաց եղաւ, թէպէտ ինքն էլ չհասկացաւ, թէ ինչու լաց եղաւ, բայց այդ լացը վիրաւորանքից չէր առաջացել։ Նա իրեն վիրաւորուած չէր զգում՝—հապա աւելի մեղաւոր էր զգում. զանազան անմեկին զգացմունքների ներգործութիւնից, սահող կեանքի գիտակցութիւնից և նոր բան զգալու ցանկութիւնից դրդուած նա իրեն ստիպել էր հասնելու մինչև որոշ սահմանի, իրեն ստիպել էր նայելու այդ սահմանի միւս կողմը—և այդտեղ տեսաւ մինչև անգամ ոչ թէ անդունդ, հապա դատարկութիւն... կամ այլանդակութիւն։

XIX

Որքան էլ որ Օդինցեան ինքն իրեն զսպելիս լինէր, ինչքան էլ որ ամեն տեսակ նախապաշարմունքներից բարձր կանգնած լինէր, դարձեալ, երբ ճաշին սեղանատուն եկաւ, իրեն անյարմար դրութեան մէջ էր զգում։ Սակայն ճաշը բաւական աջող անցաւ։ Եկաւ Պորֆիրիյ Պլատոնիչը, զանազան անեկդոտներ պատմեց. նա նոր էր քաղաքից վերադարձել։ Ի միջի այլոց հաղորդեց, որ նահանգապետը իւր յատուկ յանձնարարութեան պաշտօնեաներին պատուիրել է, որ խթաններ գործածեն, որպէսզի եթէ դէպք լինի նրանց ձիով մի տեղ ուղարկելու, շուտ լինի։ Արկադիյն ցածր ձայնով զրոյց էր անում Կատեայի հետ և քաղաքականութիւն բանեցնելով իշխանուհուն ծառայութիւններ մատուցանում։ Բազարովը խոժոռած՝ յամառ լռութիւն էր պահում։ Օդինցեան մի երկու անգամ շիտակ—ոչ թէ ծածկաբար—նայեց Բազարովի խիստ և մաղձոտ դէմքին, որ աչքերը ցած էր գցած և արհամարհական վճռականութիւնը դրոշմուած էր դէմքի ամեն մի գծի վրայ, և մտածեց. «ոչ...ոչ...ոչ...»։ Ճաշից յետոյ ամենքը միասին գնացին պարտէզ և Օդինցեան տեսնելով, որ Բազարովն ուզում է իւր հետ խօսել, մի քանի քայլ մի կողմ քաշուեցաւ և կանգ առաւ։ Բազարովը մօտեցաւ նրան և խուլ ձայնով ասաց։

—Ես պէտք է ձեզանից ներողութիւն խնդրեմ, Աննա Սերգէեւնա։ Դուք՞ կարող չէք ինձ վրայ չնեղանալ։

—Ոչ, ես ձեր վրայ չեմ նեղանում, Եւգենիյ Վասիլյիչ,—պատասխանեց Օդինցեան,—բայց վշտացած եմ։

—Աւելի վատ։ Ցամենայն դէպս ես լաւ պատժուեցայ։ Հաւանօրէն դուք էլ համաձայն կլինիք, որ ես այժմս շատ յիմար դրութեան մէջ եմ գտնւում։ Դուք ինձ գրել էիք. «Ինչ հարկ կայ գնալու»։ Իսկ ես չեմ կարող և չեմ ուզում մնալ։ Վաղն այստեղ չեմ լինի։

—Եւգենիյ Վասիլյիչ, ինչու էք...

—Ինչու եմ գնում։

—Ոչ. ես այդ չէի ուզում ասել։

—Անցածը անցած է, Աննա Սերգեևնա... իսկ վաղ թէ ուշ այս բանս պիտի լինէր։ Հետևաբար հարկաւոր է, որ ես գնամ։ Ես միմիայն մէկ պայմանով կարող էի այստեղ մնալ. բայց այդ պայմանը երբէք կարող չէ կատարուել։ Դուք հօ, ներեցէք յանդգնութեանս, ինձ չէք սիրում և երբէք էլ չէք սիրել, այնպէս չէ։

Բազարովի աչքերը առ վայրկեան մի փայլեցին իր սև յօնքերի տակից։

Աննա Սերգեևնան պատասխան չտուեց։ «Ես այս մարդուց վախենում եմ» անցաւ նրա մտքովը։

—Մնաք բարով,—ասաց Բազարովը կարծես թէ նրա մտքինը հասկանալով, ու քայլերը դէպի տուն ուղղեց։

Աննա Սերգեևնան կամացուկ նրա ետևից գնաց, և Կատեային կանչելով նրան թևանցուկ առաւ։ Մինչև իրիկուն նա Կատեայից չհեռացաւ։ Օդինցեան թղթախաղի չնստաւ, և շարունակ ծիծաղում էր, որը սակայն ամենևին չէր սազ գալիս նրա դժգոյն ու շփոթուած դէմքին։ Արկադիյն տարակուսանքի մէջ էր և դիտում էր նրան, ինչպէս որ երիտասարդներն են դիտում, այսինքն շարունակ ինքն իրեն հարց էր տալիս, թէ տեսնես այդ ինչ է նշանակում։ Բազարովը փակուեցաւ իր սենեկում. սակայն թէյի եկաւ։ Աննա Սերգեևնան ուզում էր նրան մի որ և իցէ անուշ խօսք ասել, բայց չէր իմանում, թէ ինչպէս խօսք բանայ...։

Մի անակնկալ դէպք նրան ազատեց դժուարութիւնից՝—սենեկապանը յայտնեց, թէ Սիտնիկովն է եկել։

Դժուար է խօսքով ասել, թէ երիտասարդ առաջադիմականը ինչպիսի աշխուժով ներս ընկաւ։ Իրեն յատուկ տղի բնաւորութեամբը վճռած լինելով գնալ գիւղ մի կնոջ մօտ, որին հազիւ էր ճանաչում, որը նրան երբէք հրաւիրած չէր, բայց որի տանը, իր հաւաքած տեղեկութիւններին նայած, հիւր էին մի այսպիսի խելօք ու իրեն մօտիկ անձեր, նա բայց և այնպէս սաստիկ քաշւում էր և փոխանակ կանխօրէն պատրաստած ներողութեան խօսքերն ասելու ու բարևները տալու, չգիտես թէ ինչ անմիտ բան դուրս տուաւ, թէ Եւդոկսեան, այսինքն Կուկշինան իրեն ուղարկել է իմանալու Աննա Սերգեևնայի առողջութիւնը. և թէ Արկադիյ Նիկոլայիչը, նոյնպէս, միշտ գովասանքով է խօսելիս եղել...։ Այստեղ նա կանգ առաւ և այն աստիճանի շշկլուեց, որ իր գլխարկի վե-

րայ նստեց։ Բայց որովհետև նրան վռնդող չկար և Աննա Սերգեևնան նրան մինչև անգամ իր մօրաքրոջն ու քրոջը ներկայացրեց, նա շուտով ուշքի եկաւ ու սկսեց պլպլացնել։ Կեանքի մէջ յաճախ չնչին (անարգ) բաներն էլ օգտակար են լինում՝—դրանք թուլացնում են չափազանց ձգուած լարերը, սթափեցնում են անձնապաստան կամ ինքնամոռացութեան հասած զգացմունքները և նրանց յիշեցնում են իրար հետ ունեցած մօտիկ աջակցութիւնը. Սիտնիկովի գալովը ամեն բան էլ մի տեսակ բութ—և պարզ ձև ստացաւ. ամենքն էլ աւելի պինդ ընթրեցին և սովորականից մի կէս ժամ առաջ քաշուեցան քնելու։

—Այժմս ես էլ կարող եմ քեզ կրկնել այն խօսքերը,—անկողնի մէջ պառկած ասում էր Արկադիյն Բազարովին, որ նոյնպէս հանւում էր,—որ ինքդ մի անգամ ասել էիր ինձ թէ՝ «Ինչու ես այդպէս տխուր. չլինի մի որ և իցէ սրբազան պարտականութիւն ես կատարել»։

Քանի ժամանակից ի վեր երկու երիտասարդների միջև հաստատուել էր մի տեսակ կեղծ—անհոգ հեգնական վերաբերմունք, որը միշտ ծածուկ դժգոհութեան կամ իր մէջ պահած կասկածանքների նշան է։

Ես վաղը տուն եմ գնում,—ասաց Բազարովը։

Արկադիյն մի քիչ բարձրացաւ ու արմունկին յենուեց։ Նա թէ զարմացաւ և թէ չգիտես ինչու ուրախացաւ։

— Հա՛,—ասաց նա,—և դրա համար էլ տխո՞ւր ես։

—Բազարովը յօրանջեց։

—Շատ գիտնաս-շուտ կծերանաս։

—Հապա Աննա Սերգեևնա՞ն,—շարունակեց Արկադիյն։

—Աննա Սերգեևնան ինչ։

—Ուզում եմ ասել՝—միթէ քեզ կթողնէ։

—Վարձուած հօ չեմ։

Արկադիյն մտքի մէջ ընկաւ, իսկ Բազարովը պառկեցաւ ու երեսը դէպի պատն արաւ։

Մի քանի րոպէ լուռ անցաւ։

—Եւգենիյ,—բացականչեց յանկարծ Արկադիյն։

—Հը՛։

—Էգուց քեզ հետ ես էլ կգնամ։

Բազարովը ոչինչ չպատասխանեց։

—Միայն ես տուն կ՛գնամ,—շարունակեց Արկադիյն,—

միասին կ՚գնանք մինչև Խախոլների գաղութը, իսկ այնտեղ դու Ֆեդոտից ձի կառնես ու կ՚գնաս։ Ես ուրախութեամբ կըծանօթանայի ձերոնց հետ. բայց վախենում եմ, որ քեզ էլ նեղութիւն տուած լինեմ, նրանց էլ։ Հօ վերջը դարձեալ կը գաս մեզ մօտ։

—Իրերս ձեզ մօտ եմ թողել,—ասաց Բազարովն առանց շուռ գալու։

«Այս ինչու չի հարցնում, թէ ես ինչու եմ հեռանում, և այն էլ, իրա նման, այսպէս անակնկալ կերպով», մտածեց Արկադին։ «Յիրաւի, այս ինչու եմ գնում ես, ինչու է գնում նա», շարունակեց նա իւր խորհրդածութիւնը։ Նա բաւարար պատասխան չէր գտնում իւր հարցին և նրա սիրտը լցւում էր մի դառն բանով։ Զգում էր, որ ծանր էր լինելու բաժանուել այդ կեանքից, որին նա ընտելացել էր. բայց մենակ մնալն էլ մի տեսակ տարօրինակ բան կ՚լինէր։ «Երևի նրանց մէջ մի բան է պատահել», մտածում էր նա ինքն իրեն,—ինչու Բազարովի գնալուց յետոյ ես պէտք է ցցուած մնամ Աննա Սերգէեվնայի աչքի առաջը. այդպէսով բոլորովին կ՚ձանձրացնեմ նրան, և ունեցածս էլ կ՚կորցնեմ»։ Նա աչքի առաջ բերեց Աննա Սերգէեվնայի կերպարանքը, յետոյ կամաց կամաց նորատի այրի կնոջ գեղեցիկ դէմքի միջից առաջ եկան ուրիշ դիմագծեր։

«Կատեան էլ մեղքս է գալիս» շշնջաց Արկադին երեսը բարձին արած, որի վրայ արդէն աչքից արցունք էր կաթել.... Նա յանկարծ գլխի շարժումով մազը յետ գցեց և բարձր ձայնով ասաց. «Գլուխն էր մնացել, ինչ է, որ այս յիմար Սիտնիկովն էլ եկաւ»։

Բազարովը նախ շարժուեց անկողնի մէջ, յետոյ հետևեալըն ասաց։

—Ինչպէս տեսնում եմ, եղբայր ջան, դեռ քու խելքըդ պակաս է։ Սիտնիկովները մեզ անհրաժեշտ են։ Դու այս բանս հասկացիր, որ ինձ, այդպիսի ախմախները ինձ հարկաւոր են։ Աստուածները հօ չեն ցեխ շաղախելու, պուլիկ շինելու....։ «Այ քեզ բան...» ինքն իրեն մտածեց Արկադին, և այս միջոցին միմիայն նրա առաջ առ վայրկեան մի բացուեցաւ Բազարովի եսամոլութեան անյատակ վիհը։ «Ասել է թէ ես ու դու աստուածներ ենք, այսինքն աստուածը դու ես, չլինի ախմախըն էլ ես եմ»։

—Այո,—մռայլած կրկնեց Բազարովը,—դեռ քու խելքըդ պակաս է։

Օդինցեան շատ էլ չզարմացաւ, երբ որ միւս օրը Արկադին ասաց, որ Բազարովի հետ ինքն էլ պիտի գնայ. նա անուշադիր ու յոգնած էր թւում։ Կատեան լուռ ու լուրջ հայեացքով նայեցաւ Արկադիին, իշխանուհին մինչև անգամ շալի տակից երեսին խաչ հանեց, այնպէս որ Արկադին կարող չէր այդ չնկատել, մենակ Սիտնիկովը տագնապի մէջ էր։ Նա հէնց այդ րոպէին էր նոր շորերով, և ոչ թէ սլաւեանաֆիլի զգեստով պճնուած նախաճաշի եկել. նախընթաց օրը նա իրեն ծառայող սպասաւորին զարմացրել էր իւր հետ բերած սպիտակեղէնների շատութեամբ, և յանկարծ իւր ընկերներն—իրեն թողնում են։—Նա մի քիչ ոտների վրայ տրոր-տրոր եկաւ, դէս ու դէն ընկաւ, ոնց որ անտառի բերանին կանգ առած հալածական նապաստակը.—և յանկարծ, համարեա վախեցած, համարեա կանչով յայտնեց, որ ինքն էլ է ուզում գնալ։

Օդինցեան նրան մնալու զոր չարաւ։

—Իմ ուղեկառքս շատ հանգիստ կառք է,—աւելացրեց դժբաղդ երիտասարդը Արկադիին դառնալով,—կարող եմ ձեզ իմ կառքովս տեղ հասցնել, իսկ Եւգենիյ Վասիլյիչը կարող է ձեր տարանտասով գնալ. այսպէս աւելի յարմար էլ է։

—Բայց ախր այդ բոլորովին ձեր ճամբի վրայ չէ, և մեր տունը հեռու է։

—Այդ ոչինչ, ոչինչ. ես ժամանակ շատ ունիմ, մանաւանդ որ այդ կողմերը գործ էլ ունիմ։

—Բահրայի՞ գործ,—հարցրեց Արկադին, արդէն չափազանց արհամարհանքով։

Բայց Սիտնիկովը մի այնպիսի յուսահատութեան մէջ էր, որ, սովորականին հակառակ, մինչև անգամ չծիծաղեց էլ։

—Հաւատացնում եմ, կառքս շատ հանգիստ կառք է,— փնթփնթաց նա,—ամենքիս էլ տեղ կլինի։

—Չէ, մի՛ ասէք և մսիօ Սիտնիկովին մի՛ վշտացնէք,— ասաց Աննա Սերգէեվնան...

Արկադին նայեցաւ Աննա Սերգէեվնայի երեսին և գլուխը նշանալի կերպով խոնարհեց։

Հիւրերը նախաճաշից յետոյ գնացին։ Օդինցեան Բազարովին երթաս բարով ասելիս ձեռքը մեկնեց նրան և ասաց.

—Մենք դեռ կտեսնուենք, այնպէս չէ՞։

—Դուք գիտէք,—պատասխանեց Բազարովը։

—Ուրեմն կտեսնուինք։

Առաջինը Արկադիյն դուրս եկաւ պատշգամբ—նա բարձրացաւ Սիտնիկովի կառքը։ Նրան յարգանքով՝ կառք նստացրեց սենեկապանը, բայց Արկադիյն կուզէր նրան ծեծ քաշել կամ լաց լինել։ Բազարովը տարանտասի մէջ նստաւ։ Խախոլների գիւղակը հասնելով, Արկադիյն սպասեց, մինչև որ քարվանսարի տէրը, Ֆեդոտը ձիերը լծեց, և մօտենալով տարանտասին, առաջուայ ժպիտը երեսին ասաց Բազարովին.

—Եւգենիյ, ինձ էլ վերցրու հետդ. ուզում եմ ձեզ մօտ գալ։

—Նստիր,—ասաց Բազարովը ատամի արանքից։

Սիտնիկովը, որ առոյգ-առոյգ շվշվացնելով ման էր գալիս իւր կառքի անիւների չորս կողմը, այս խօսքերը լսելով բերանը բաց մնաց, իսկ Արկադիյն անտարբեր կերպով վեր առաւ նրա կառքի միջից իւր իրերը, նստեց Բազարովի կողքին և, քաղաքավարութեամբ գլուխ տալով իւր առաջուայ ուղեկցին, կանչեց կառապանին. «քշիր»։ Տարանտասը սլացաւ ու շուտով աչքից կորաւ...։ Սիտնիկովը, բոլորովին շուարած, մտիկ տուաւ իւր կառապանին, բայց կառապանը մտրակովը կողքից լծած ձիու պոչի մօտ մի բան էր ուղղում։ Այն ժամանակ Սիտնիկովը թռաւ, նստեց իւր կառքը և, անցկացող երկու գիւղացիների վրայ գոռալով՝ «ծածկեցէք գլխարկներդ, յիմարներ», ճանապարհ ընկաւ դէպի քաղաք, ուր նա շատ ուշ հասաւ և միւս օրը Կուկշինայի տանը սկսաւ սաստիկ յարձակուել այդ երկու «գոռոզ ու անկիրթ» երիտասարդների վրայ։

Արկադիյն Բազարովի տարանտասը նստելով, պինդ հուպ տուեց նրա ձեռքը և երկար ժամանակ ոչինչ չէր ասում։ Թըւում էր, թէ Բազարովը հասկացել ու գնահատել էր թէ այս ձեռք սեղմելը և թէ այդ լռութիւնը։ Նախընթաց գիշերը նա ամենևին չէր քնել, և չէր ծխել, և համարեա թէ քանի օր է բան չէր կերել։ Գլխին պինդ քաշած գլխարկի տակից խիստ աչքի էր ընկնում նրա լղարած կիսադէմը։

—Հը՛, ախպեր,—խօսեց նա վերջապէս,—հապա մի գլանակ տուր...։ Համ էլ մի մտիկ տուր, տես, լեզուս դեղին հօ չէ՞։

—Դեղին է,—պատասխանեց Արկադիյն։

—Իհարկէ... ահա, գլանակն էլ համ չունի։ Լաւ չեմ։

—Ուղիղ որ, այս վերջին ժամանակներս փոխուել ես,—նկատեց Արկադիյն։

—Հոգ չէ, կլաւանամ։ Մէկ բան եմ միայն դարդ անում,—մայրս շատ հոգատար կին է՝—որ փորդ չհաստացնես և օրական էլ մի տասն անգամ բան չուտես—գլուխը կապանի։ Իսկ հայրս, էհ, նրա բանն ուրիշ է. նա հազար ու մի լայն ունեղ օրեր տեսած մարդ է։ Ոչ, կարելի չէ ծխել,—աւելացրեց նա և սիգարիկը շպրտեց ճանապարհի փոշու մէջ։

—Այստեղից մինչև քու կալուածքը քսան հինգ վերստ է,—հարցրեց Արկադիյն։

—Քսան հինգ է։ Ուզում ես՝ այդ իմաստունին հարցրու։

—Նա ցոյց տուաւ կառապանի տեղում նստած գիւղացու վրայ, որ Ֆեդոտի բանուորն էր։

Բայց իմաստունը պատասխանեց, թէ «ով ա գիտում, ով ա չափէ» ու սկսաւ ցած ձայնով կշտամբել մէջ տեղը լծած ձիուն, որ «գլխով ա աքացում», այսինքն որ գլուխը շարժում, քաշում է։

—Այո, այո,—խօսեց Բազարովը,—թող այս ձեզ դաս լինի, պատանի բարեկամ, խրատական օրինակ լինի։ Գրողը գիտի, թէ ինչ բան էր մեր այս արածը։ Մարդս կախուած է մազից, ամեն մի րոպէ կարող է նրա տակը անդունդ բացուել, իսկ նա դեռ ինքն է իրեն համար ամեն տեսակ անհաճոյ բաներ ստեղծում, իւր կեանքը փչացնում։

— Այդ ինչն ես ակնարկում, հարցրեց Արկադիյն։

—Ակնարկած բան չունիմ, պարզապէս ասում եմ, որ մենք երկուս էլ շատ անմիտ կերպով վարուեցանք։ Էլ ինչ ասեմ։ Ես դեռ անդամահատութեանց սենեակում գիտել եմ, որ ով որ զայրանում է իւր ցաւի վրայ, նա էլ անպատճառ կ՚յաղթէ նրան։

—Ասածներդ լաւ չեմ հասկանում,—ասաց Արկադիյն,—կարծեմ թէ դու ամենևին գանգատի տեղիք չունէիր։

—Որ ասածներս լաւ չես հասկանում, ուրեմն այ ինչ պիտի ասեմ քեզ,—աւելի լաւ է ճամբին նստած խիճ մանրացնես, քան թոյլ տաս, որ կին ասած թէ կուզ մատիդ ծայրին տիրանայ։ Այս ամենը...—Քիչ էր մնում Բազարովը իւր սիրած «ռոմանտիզմ է» խօսքն արտասանէր, բայց իրեն զսպեց ու ասաց—բոշ բան է։—Դու այժմս ինձ չես հաւատայ, բայց ասում եմ՝ ահաւասիկ երկուս էլ կանանց շրջանի մէջ

էինք ընկել, և այդ բանը հաճելի էր մեզ, բայց այդպիսի շրջանից թողնել-հեռանալը միևնույնն է, թէ տաք եղանակին վրադ սառը ջուր ածես։ – Տղամարդ ասածդ այդպիսի դատարկ բաներով չպիտի պարապի. սպանական մի պատուական առած ասում է, որ տղամարդը պէտք է դաժան լինի։ Ա՛յ, հէնց ասենք դու,—աւելացրեց նա կառապանի տեղում նստած գիւղացուն դառնալով, – դու, խելօք կին ունիս։

Գիւղացին շուռ եկաւ ու երկու բարեկամներին ցոյց տուաւ իր տափակ երեսն ու կիսակոյր աչքերը։

—Կնիկ։ Ունեմ։ Ինչու չպիտի ունենամ որ։

—Կնկանդ ծեծում ես։

—Կնկա՞նս։ Ինչ՞ու չէ, մէկ-մէկ պատահում է։ Առանց պատճառի չես ծեծի։

—Նա շատ էլ լաւ ես անում։ Իսկ նա՞ քեզ, ծեծում է։

Գիւղացին ձիգ տուեց սանձը։

—Էդ ինչ ասացիր, աղա։ Սիրտդ հանաք է ուզում...։—

Ինչպէս երևում է նա վիրաւորուեց։

—Լսեցի՞ր, Արկադիյ Նիկոլայիչ։ Իսկ ինձ ու քեզ ծեծեցին... ահա ինչ է նշանակում կրթուած մարդ լինել։

Արկադիյն ակամայ ծիծաղեցաւ, իսկ Բազարովը երեսը միւս կողմը դարձրեց ու բոլոր ճանապարհին մէկ էլ բերանը բաց չարեց։

Քսանհինգ վերստը Արկադիյին լիուն վերստի չափ, ահագին տեղ թուաց։ Բայց ահա վերջապէս մի բլուրական թեք բլրի լանջին երևաց փոքրիկ գիւղը, ուր Բազարովի ծնողներն էին ապրում։ Գիւղակի կողքին, մատաղահաս կեչուտի պուրակում երևում էր ազնուականի յարդածածկ տնակը։ Առաջին խրճթի առջևը երկու գիւղացի, գլխարկները գլխին, կանգնած բանակռիւ էին անում. «Անասուն էշ ես, բայց իշու քուռակի չափ էլ խելք չունես»—ասում էր մէկը։—«Իսկ քո կինդ—ջադու է», պատասխանում էր միւսը։

—Դրանց ազատ վարուեցողութիւնից ու խօսակցութեան զուարճալի ոճից կարող ես նկատել,—ասաց Բազարովը Արկադիյին, որ հօրս գիւղացիները շատ ճնշուած չեն։ Ահաւասիկ հէնց հայրս ինքն էլ իր բնակարանի պատշգամբն է դուրս գալիս։ Երևում է զանգի ձայնը լսել է։ Նա է, նա—կերպարանքից եմ ճանաչում։ Է՛յ—է՜, բայց խեղճ մարդ, ինչպէս սպիտակել է։

XX

Բազարովը գլուխը տարանտասից դուրս ցցեց, իսկ Արկադիյն ընկերոջ քամակից երկարացրեց գլուխը և տիրական տան պատշգամբում տեսաւ մի բարձրահասակ, վտիտ մարմնով մարդ գզգզուած մազերով, արծուի բարակ քթով, զինուորական հին սերթուկ հագած և կոճակներն արձակ։ Նա ոտները չռած կանգնած էր, երկայն չիբուխը քաշում ու աչքերն արևից կկոցում։

Ձիերը կանգ առան։

—Վերջապէս շնորհք բերիր,—ասաց Բազարովի հայրը շարունակելով չիբուխը ծխել, թէպէտ չիբուխը հէնց այն է շարունակ թռչկոտում էր նրա մատների արանքում։—Դէ դուրս արի, դուրս արի, պաչպչուենք։

Նա սկսաւ գրկախառնել որդուն...։

«Ենիւշա, Ենիւշա» լսուեց մի կանացի դողդոջուն ձայն։ Դուռը կռնակի վրայ բացուեցաւ, և շէմքում երևաց մի կլորիկ, ցածլիկ պառաւ կին՝ սպիտակ գլխաշորը դրած ու կարճ խալտարղէտ կապայ հագած։ Նա վա՜հ արեց, տատանուեցաւ և անշուշտ վայր կ'ընկնէր, թէ որ Բազարովը չբռնէր։ Նրա տռլիկ ձեռներն ական թոթափել փաթաթուեցան որդու ճտով, գլուխը հուպ տուաւ նրա կրծքին, և ամեն ինչ լռեց։ Միայն պառաւի բեկբեկ հեծկլտանքն էր լսւում։

Ծերունի Բազարովը խորը շունչ էր քաշում և առաջուանից աւելի աչքերը կկոցում։

—Դէ, Արիշա, հերիք է, հերիք, վերջ տուր,—խօսեց նա Արկադիյին նայելուց յետոյ, որ անշարժ կանգնած էր տարանտասի մօտ, մինչդեռ կառապանի տեղում նստած գիւղացին մինչև անգամ երեսն էր շուռ տուել.—ամենևին հարկաւոր բան չէ. ի սէր Աստուծոյ դադարիր։

—Ախ, Վասիլիյ Իւանիչ,—թոթովում էր պառաւը,—այս ինչքան ժամանակ է իմ աչքիս լոյս, հոգուս հատոր Ենիւշկային... և առանց ձեռները յետ անելու, Բազարովից հեռացրեց իր արտասուքից թաց, փափուկ ու խանդակաթ դէմքը, մի տեսակ երանաւէտ ու ծիծաղելի աչքերով նայեցաւ նրան, և նորից կրծքին կպաւ։

—Ի հարկէ, ինչ խօսք որ այս ամենը բնական է,—ասաց Վասիլիյ Իւանիչը,—բայց աւելի լաւ է ներս գնանք։

Ահաւասիկ Եւգենիի հետ հիւր էլ կայ։ Ներեցէք,—աւելացրեց նա Արկադիյին դառնալով ու ոտները ծռելով,—հասկանում էք ի հարկէ, կանացի թուլութիւն է, մէկ էլ մայրական սիրտը...

Մինչդեռ իր շրթունքներն էլ, յօնքերն էլ ձգձգւում էին, կզակը դողդողում էր... բայց նա ըստ երևոյթին ուզում էր իրեն յաղթել և համարեա թէ անտարբեր թուալ։ Արկադիյն խոնարհեցաւ։

—Ճիշտ որ, ներս գնանք, մայրիկ,—ասաց Բազարովը և թուլացած պառաւին ներս տարաւ։ Նրան յարմարաւոր բազկաթոռի մէջ նստեցնելով, նա միանգամ էլ ձեռաց համբուրուեց հօրը հետ և Արկադիյին ներկայացրեց նրան։

—Հոգով չափ ուրախ եմ ծանօթանալու,—ասաց Վասիլիյ Իւանովիչը,—միայն ներողամիտ եղէք,—այստեղ ամեն բան պարզ, զինուորական ձևով է։ Արինա Վասիլևնա, ի սէր Աստուծոյ, հանգստացիր—այդ ինչ փոքրոգութիւն է։ Պարոն հիւրը քեզ պիտի դատապարտէ։

—Հոգեակ, արտասուելով ասաց պառաւը,—ինչպէս է ձեր հրամանոցի անունն ազգանունը, չգիտեմ։

—Արկադիյ Նիկոլայիչ,—ցած ձայնով, վեհութեամբ կամացուկ ասաց Վասիլիյ Իւանիչը։

—Ներող եղէք անխելք պառաւիս։—Նա քիթը մաքրեց և, գլուխը մէկ աջ, մէկ ձախ ծռելով, մէկը միւսի ետևից կարգին իր աչքերը սրբեց։—Ներող եղէք։ Կարծում էի, թէ պիտի մեռնեմ, գնամ ու արժանի չպիտի լինիմ մէկ էլ հո... օ... ող...եակիս տեսուն։

—Տեսա՛ք որ արժանի եղաք, տիկին,—վրայ բերեց Վասիլիյ Իւանովիչը։—Տանիւշա,—ասաց նա մի տասներեք տարեկան բոկոտն, պայծառ կարմիր գոյնի չթէ շոր հագած աղջկայ, որ վախվխելով մոտիկ էր տալիս դրան ետևից,—խանումին մի բաժակ ջուր բեր, մատուցարանով, իմացա՞ր,—իսկ ձեզ, պարոններ,—աւելացրեց նա մի տեսակ հնաձև զուարճութեամբ,—թոյլ տուէք հրաւիրել պաշտօնաթող հին ծառայողի առանձնասենեակը։

—Թող գոնէ մի անգամ էլ համբուրեմ քեզ, Ենո՛ւշիս,—հառաչեց Արինա Վլասևնան։ Բազարովը կռացաւ դէպի նա,—Ի՛նչ սիրուն տղամարդ ես դարձել։

—Դէ լաւ, ասենք սիրունը սիրուն չէ,—նկատեց Վասիլիյ Իւանովիչը,—բայց, ինչպէս ասում են, օմմֆէ տղամարդ է դարձել։ Իսկ այժմ յուսամ թէ դու, Արինա Վլասևնա, քո մայրական զգացմունքներից յագուրդ տալուց յետոյ, հոգ կ'տանես նաև թանկագին հիւրերիդ փորը կշտացնելու մասին, որովհետև, ինչպէս գիտես, լօ-լօ-լօ-ով փոր չի կշտանալ։

Պառաւը վեր կացաւ բազկաթոռից։

—Այս րոպէիս, Վասիլիյ Իւանիչ, սուփրէն կգցենք, ինքս խոհանոց կվազ տամ, ինքնաեռ դնել կտամ, ամեն բան կլինի, ամեն բան։ Հանա՛ք բան է, երեք տարի է նրան ոչ տեսել եմ, ոչ ուտացրել, ոչ խմացրել։

—Դէ, ուրեմն, տանտիկին, լաւ նայիր, որ ամօթով չմնաս. իսկ դուք, պարոններ, համեցէք ետևիցս։ Ահաւասիկ, Եւգենիյ, Տիմոֆէիչն էլ եկել է քեզ բարի գալուստ մաղթելու։ Երևի այդ քաֆթառ շունն էլ է ուրախացել։ Հ՞ը, հո ուրա՛խ ես, քաւթառ շուն։ Համեցէք ետևիցս։

Եւ Վասիլիյ Իւանովիչը ոտքերը իրար տալով ու հին մուճակները չըմփացնելով յուզուած առաջ գնաց։

Նրա բոլոր բնակարանը բաղկացած էր վեց մանրիկ սենեակներից։ Դրանցից մէկը, այն, ուր որ տարաւ մեր բարեկամներին, առանձնասենեակ էր կոչւում։ Երկու պատուհանների միջև եղած բոլոր տարածութիւնը բռնել էր հաստ ոտնանի սեղան, որի վրայ ածած թղթերը վաղուցուայ փոշուց սևացել, կարծես մխի բռնած լինէին, պատերին կախած էին թրքական հրացաններ, մտրակներ, թուր, աշխարհագրական երկու քարտէզ, ինչոր անդամահատական նկարներ, Հուֆելանդի *) պատկերը, սև շրջանակի մէջ առած մի մազահիւս վենզէլ և ապակածածկ մի վկայական. կէչու փայտից շինած երկու ահագին պահարանների արանքում կար տեղ-տեղ փոս ընկած ու ծակ-ծկած կաշւէ դահաւորակ. դարակների վրայ անկարգ կերպով խառնուած էին գրքեր, տփիկներ, տիկ հանած թռչուններ, մանր պուլիկներ, շշեր, մի անկիւնում ընկած էր մի կոտրտուած էլեքտրական մեքենայ։

—Ձեզ արդէն նախապատրաստել էի, յարգելի հիւր,—սկսեց Վասիլիյ Իւանովիչը,—որ մենք այստեղ ապրում ենք այնպէս, որպէս թէ ճամբի վրայ բանակում լինինք...։

—Հերիք է, հայրիկ, ինչ ես ներողութիւն խնդրում,—

*) Հուֆելանդը հռչակաւոր բժիշկ էր (1762-1836). ունի մի քանի նշանաւոր գրուածքներ։ Ծ. Թ.

ընդհատեց Բազարովը։—Կերսանովը շատ լաւ գիտէ, որ մենք Կրեսոս չենք և դու պալատում չես ապրում։ Որտեղ ենք նրան տեղաւորելու, այս է բանը։

—Ի՛նչ ես ասում, Եւգենի. ես այնտեղ, կողքի տանը շատ լաւ սենեակ ունիմ, այնտեղ շատ հանգիստ կլինի նա։

—Ուրեմն առանձին տուն էլ ունես։

—Հապա. այն որ բաղնիք էր,—մէջ մտաւ Տիմոֆէիչը։

—Այսինքն բաղնիքի կողքին,—շտապով վրայ բերեց Վասիլիյ Իւանովիչը։—Այժմ հո ամառ է....։ Այս րոպէիս կըգնամ, ինչ որ պէտքն է կ՛կարգադրեմ. իսկ դու, Տիմոֆէիչ, լաւ կանէիր, մինչ այդ, նրանց իրերը ներս բերէիր։ Իսկ քեզ, Եւգենի, իհարկէ, իմ առանձնասենեակս եմ տալիս։ Suum cuique:

—Հօ տեսար։ Տարօրինակ ծերուկ է և շատ լաւ էլ մարդ,—աւելացրեց Բազարովը, հէնց որ Վասիլիյ Իւանովիչը դուրս գնաց։—Սա էլ քո հօրդ պէս խենդուլիկի մէկն է, միայն ուրիշ տեսակը։ Շատ է շատախօսութիւն անում։

—Կարծեմ մայրդ էլ շատ պատուական կին է,—նկատեց Արկադիյն։

—Այո, պարզ կին է։ Տես ինչ ճաշ է պատրաստելու։

—Հայրիկդ այսօր ձեզ չէր սպասում, տաւարի միս չեն բերել տուել,—ասաց Տիմոֆէիչը, որ նոր էր քաշտալով ներս բերել Բազարովի ճամպրուկը։

—Առանց տաւարի մսի էլ եօլայ կգնանք. որ չկայ՝ ինչ կարող ենք անել։ Զունեմութիւնն ամօթ բան չէ։

—Ինչքա՛ն գիւղացի ունի հայրդ,—հարցրեց յանկարծ Արկադիյն։

—Կալուածքը հօրս չէ, հապա մօրս. կարծեմ մի տասն հինգ հոգի կլինի։

—Բոլորը քսան երկուս է,—տհաճութեամբ ասաց Տիմոֆէիչը։

Լսուեցաւ մուճակների չփփոցն ու Վասիլիյ Իւանովիչը նորից ներս մտաւ։

—Մի քանի րոպէից ձեր սենեակը պատրաստ կլինի ձեզ ընդունելու,—հանդիսաւոր եղանակով բացականչեց նա,—Արկադիյ... Նիկոլայիչ, կարծեմ այսպէս է ձեր հրամանոց անունը։ Այս էլ ձեզ ծառայ,—աւելացրեց նա ցոյց տալով իր հետ ներս մտնող, կարճ խուզած մազերով մի տղի, որ արմունկները ծակ

կապտագոյն կապայ, իսկ ոտներին էլ ուրիշ կօշիկներ ունէր հագած։—Անունը Ֆէդկա է։ Թէպէտ որդիս արգելում է, բայց դարձեալ պիտի կրկնեմ—ներողամիտ եղէք։ Ասենք տղան չիբուխ լցնել գիտէ։ Դուք հօ ծխում էք։

—Ես աւելի սիգար եմ ծխում։

—Շատ էլ խելօք էք անում։ Ես ինքս էլ պրեֆերանսը (նախապատուութիւն) սիգարին եմ տալիս, բայց մեր այս հեռու ընկած կողմերում շատ դժուար է սիգար գտնելը։

—Հերիք աղքատ-ղառոյութիւն անես,—նորից ընդհատեց Բազարովը։—Աւելի լաւ է եկ, այ այստեղ նստի գահաւորակի վրայ ու թող մի կուշտ վրադ նայեմ։

Վասիլիյ Իւանովիչը ծիծաղեցաւ ու նստեց։ Նա երեսով շատ նման էր որդուն, միմիակ ճակատը աւելի ցած էր ու նեղ, և բերանը մի փոքր լայն, և շարունակ էլ շարժման մէջ էր, ուսերը վեր-վեր գցում, կարծես թէ շորը թևերի տակից հուպ-տալիս լինէր, աչքերը թարթում էր, չուտ-չուտ հազում, կոկորդը մաքրում ու մատները շարժում, մինչդեռ որդին աչքի էր ընկնում իր մի տեսակ անհոգ անշարժութեամբը։

—Աղքատ-ղառոյութիւն անել,—կրկնեց Վասիլիյ Իւանովիչը։—Դու մի կարծիր, Եւգենի, թէ ես ուզում եմ, այսպէս ասած, հիւրի գութը շարժել—թէ տես, ինչպիսի խուլ տեղ ենք ընկել։ Ընդհակառակն ես այն կարծիքի եմ, թէ մտածող մարդու համար խուլ անկիւն չկայ։ Գոնէ ես աշխատում եմ, որ, ինչպէս ասում են, չխրուեմ, չմնամ, ժամանակի՝ հոսանքից յետ չընկնեմ։

Վասիլիյ Իւանովիչը գրպանից հանեց դեղին մետաքսեայ նոր թաշկինակը, որ Արկադիյի սենեակը գնալիս կարողացել էր ձեռաց վերցնել, և օդի մէջ շարժելով շարունակեց։

—Թողնենք այն, որ ես, օրինակ, ինձ համար բաւական զգալի զոհաբերութիւն անելով գիւղացիներիս ճորտութիւնից ազատելով հողս կիսադնի բահրով տուի նրանց։ Ես այդ բանն իմ պարտաւորութիւնս համարեցի, և հէնց խոհեմութիւնն էլ այդ է պահանջում, թէպէտ միւս հողատէրերը մտքերումն անգամ չեն անցկացնում այդ—խօսքս գիտութեան, կրթութեան մասին է։

—Այո. ահաւասիկ տեսնում եմ գրքերիդ մէջ 1855 թ.՝ Другъ здравія,—նկատեց Բազարովը։

—Այդ ինձ իմ մի հին ընկերս է ուղարկում խաթրի համար,—շտապով ասաց Վասիլիյ Իւանովիչը.—բայց մենք, խօսքի վրայ ասենք, գանգաքանութիւնից էլ հասկացողութիւն ունենք,—աւելացրեց նա սակայն աւելի Արկադիյին դառնալով և ցոյց տալով մի գիպսեայ ոչ այնքան մեծ գանգ, որ դրած էր պահարանի մէջ և բաժանուած էր թուահամարեալ քառակուսիների,—Շենլայնն էլ մեզ անծանօթ չէ, Ռադէմախերն 1) էլ:

** Նահանգում դեռ հաւատում են Ռադէմախերին,—հարցրեց Բազարովը:

Վասիլիյ Իւանովիչը հազաց:

—Նահանգում...:Իհարկէ, պարոններ, դուք աւելի գիտէք. մենք որտեղից կարող ենք ձեզ հետ ոտք մեկնել: Դուք հո մեր տեղն էք բռնելու: Իմ ժամանակներս էլ մի որ և իցէ հումորալիստ Հօֆֆման, մի որ և իցէ Բրօուն իւր վիտալիզմով—շատ ծիծաղելի էին թւում. բայց մի ժամանակ ինչ հռչակ ունէին: Երեւի մի նոր մարդ ձեզ համար բռնել է Ռադէմախերի տեղը, դուք խոնարհում էք նրա առաջ, բայց մի քսան տարուց գուցէ նրա վրան էլ ծիծաղէին:

—Քեզ մխիթարելու համար ասեմ,—ասաց Բազարովը,—որ ընդհանրապէս մենք այժմս բժշկութեան վրայ ծիծաղում ենք և ոչ ոքի առաջ չենք խոնարհում:

Ինչպէս թէ ծիծաղում էք, Չէ՞ բժիշկ ես ուզում լինել:

—Հա՛, ուզում եմ, բայց մէկը միւսին չէ խանգարում:

Վասիլիյ Իւանովիչը միջին մատով կոխեց չիբուխը, որի մէջ դեռ փոքր ինչ տաք մոխիր էր մնացել:

—Գուցէ, գուցէ. չեմ վիճի: Իսկապէս ես ինչ եմ որ: Պաշտօնաթող զինուորական բժիշկ, վօլատու (այսքան միայն). իսկ այժմս էլ, ահաւասիկ, հողագործ եմ դարձել: Ես ձեր պապի վաշտում եմ ծառայել,—ասաց նա դարձեալ Արկադիյին դառնալով.—հայա՛, հայա՛. շա՛տ բան է գլխովս անցկացել. ամեն տեսակ ընկերութիւնների մէջ էլ եղել եմ, չտեսած մարդը մնացած չէ: Ես, հէնց ես ինքս, որին դուք այժմս տեսնում էք ձեր առաջ, ես իշխան Վիտգենշտայնի և Ժուկովսկու 2) երակներն եմ շօշափել: Իսկ միացեալներին, որ հարա-

1) Ռադէմախերը (1772—1849 թ.) և Շենլայն—յայտնի բժիշկներ էին: Ծթ.

2) Մէկը ռուսական ֆելդմարշալ, միւսը բանաստեղծ. Ծթ.

ւային բանակի մէջն էին, (և այստեղ Վասիլիյ Իւանովիչը խորհրդաւոր կերպով հուպ տուեց շրթունքները), բոլորին հինգ մատիս պէս գիտէի: Ասենք ինձի գործ ինչ կար որ. մէջը կեր՝ զրաղ ման արի. ես միայն իմ նշտարս գիտէի, ուրիշ ոչինչ: Իսկ ձեր պապը պատուական մարդ էր, իսկապէս զինուորական:

—Խոստովանուիր, ախմախի մէկն էր,—ծոյլ-ծոյլ ասաց Բազարովը:

—Ախ, այդ ինչ լեզուով ես խօսում, Եւգենիյ, ախր մի միտք արա է...:Իհարկէ, գեներալ Կիրսանովը այն մարդկանցից չէր, որ...

—Է՛, թող դրան,—ընդհատեց Բազարովը:—Ես որ մօտենում էի այստեղին, քէֆս էր գալիս քու կեչու անտառին մտիկ տալիս, շատ լաւ է բուսել:

Վասիլիյ Իւանովիչը կենդանացաւ:

– Դու հիմա մի իմ պարտէզիս նայիր, տես ինչ է դարձել: Ամէն մի ծառը ինքս եմ տնկել: Միրգ էլ կայ, հատապտուղ էլ, ամեն տեսակ բժշկական բոյսեր էլ: Դուք ինչքան ուզում էք ձեր խելքին զօռ տուէք, պարոն երիտասարդներ, բայց և այնպէս Պարացելսի*) ասածը կատարեալ ճշմարտութիւն է. in herbis, verbis et lapidibus....:Ես հօ, ինչպէս գիտես, այլ ես բժշկութեամբ չեմ պարապում. բայց դարձեալ շաբաթը երկու անգամ հարկաւոր է լինում հին փեշակս միտքս բերել: Գալիս են խորհուրդ հարցնելու—հո չեմ կարող վզակոթերին տալով փախտալ: Պատահում է, որ աղքատները գալիս օգնութիւն են խնդրում: Եւ այստեղ ամենեւին բժիշկ էլ չկայ: Հարեւաններիցս մէկը, երեւակայիր քեզ, որ պաշտօնաթող մայիոր է, նոյնպէս բժշկութիւն է անում: Նրա մասին հարցրել եմ, թէ բժշկութիւն սովորել է: Ինձ ասում են—ոչ, սովորած չէ. աւելի մարդասիրութիւնից է գրդուած անում...: Հա, հա, հա,... մարդասիրութիւնից գրդուած. լաւ է, չէ. հա, հա, հա, հա...

—Ֆէդկա, չիբուխս լցրու—դաժան կերպով ասաց Բազարովը:

—Մի ուրիշ բժիշկ գալիս է այստեղ հիւանդին այցելելու—մի տեսակ յուսահատ կերպով շարունակեց Վասիլիյ Իւանո-

*) Պարացելս (1493—1541 թ) յայտնի բժիշկ էր: Ծթ.

վիչը,—բայց հիւանդն արդէն ad patres (մեռել է), և ծառան բժշկին չի էլ թողնում, որ ներս մտնի ասելով թէ՝ այժմ այլևս հարկաւոր չէ։ Բժիշկը, որ այս բանիս չէր սպասում, շըփոթւում է և հարցնում. «Հը՛, աղան մեռնելուց առաջ զկըռտա՞ց»—«Զկռտացին»։—«Շա՞տ զկռտաց»։—«Շատ»։ Հա՛, լաւ է ուրեմն»—ասում է ու շուռ գալիս գնում։ Հա, հա, հա։

Մենակ ծերունին ծիծաղեցաւ, Արկադիյն դէմքի վրայ ժպիտի նման բան արաւ։ Բազարովը միայն ձգձգուեցաւ։ Խօսակցութիւնն այս ձևով մօտ մի ժամ տևեց, այդ միջոցին Արկադիյն յաջողացրեց մի իր սենեակն էլ հանդիպեցաւ, որը թէպէտ բաղնիքի նախասենեակն էր, բայց շատ խպտիկ էր ու մաքուր։ Վերջապէս ներս մտաւ Տանիւշան և յայտնեց, որ ճաշը պատրաստ է։

Տեղիցն առաջ Վասիլիյ Իւանովիչը վերկացաւ։

—Պարոններ, գնանք։ Ներեցէք եթէ գլխացաւութիւն արի։ Իցէ թէ տանտիկինը ձեզ աւելի գոհացնէ, քան թէ ես։

Ճաշը, թէպէտ ձեռաց պատրաստեցին, շատ լաւ, մինչև անգամ շատ առատ էր. միենակ մի քիչ գինին խարաբ դուրս եկաւ. գինին, որ համարեա սև խերէս էր և Տիմոֆէիչը քաղաքում մի ծանօթ վաճառականից էր գնել, պղնձի՞ համ, թէ սոճու խէժի համ էր տալիս. մի քիչ էլ ճանճերն էին խանգարում։ Սովորական ժամանակները մի ընդոծին երեխայ մի մեծ կանաչ ճիւղով քշում էր ճանճերը. բայց Վասիլիյ Իւանովիչը երկիւղ կրելով, թէ մի գուցէ նոր սերնդի դատապարտութեան արժանանայ, այս անգամ երեխային հեռացրել էր։ Արինա Վասիլևնան ժամանակ էր գտել նաև զգուելու. նա գլխին ծածկել էր մետաքսեայ ժապաւէններով չամչիկը և ուսին գցել նկարէն շալը։ Հէնց որ իր Ենիւշային տեսաւ, նորից լաց եղաւ, բայց այս անգամ ամուսնուն հարկ չեղաւ նըրան հանգստացնելու, որովհետև նա ինքը շուտով արցունքները սրբեց, որպէս զի արցունքը շալի վրայ չկաթի։ Ուտողները միայն երիտասարդներն էին՝—տանտէրերը վաղուց էին ճաշել։ Ճաշին ծառայողը Ֆէդկան էր, որ անսովոր կօշիկներից ծանրաբեռնուած էր, իսկ նրան էլ օգնում էր տըղամարդու դէմքով ու ծուլիկ մի կին Անֆիսուշկա անունով, որ տնտեսուհու, թռչնապանի ու լուացարարի պաշտօն ունէր։ Վասիլիյ Իւանովիչը ճաշի միջոցին բոլոր ժամանակը ման էր գալիս սենեակի մէջ և կատարեալ երջանիկ ու նոյն իսկ երա-

նաւէտ ձևով խօսում, թէ իրեն երկիւղ են պատճառում Նապոլէօնի քաղաքականութիւնը և Իտալական խնդրի խճճուած դրութիւնը։ Արինա Վլասիևնան Արկադիյին չէր նկատում, նրան հրամցէք չէր անում. բռունցքը դիմհար տուած իր կըլորակ դէմքին, որին փոքր ինչ փքուած, բալի գոյն շրթունքները և թշերի ու յօնքի վերևի խալերը խիստ բարեհոգի արտայայտութիւն էին տալիս, աչքը որդուց չէր հեռացնում ու շարունակ հոգոց էր քաշում. նա սաստիկ ուզում էր իմանալ, թէ արդեօք որքան ժամանակով է որդին եկել. բայց վախենում էր բան հարցնելուց։ «Հապա որ երկու օրով ասի», մտածում էր նա, ու սիրտն ուզում էր թուլանալ։ Խորովածից յետոյ Վասիլիյ Իւանովիչը մի առ վայրկեան անհետացաւ ու բաց արած կէս շիշ շամպայն գինին ձեռին ներս մտաւ։

—Ահաւասիկ,—բացականչեց նա —թէպէտ և խուլ անկիւնում ենք ապրում, բայց գիտենք նաև հանդիսաւոր դէպքերում մեզ ուրախացնել։

Նա լցրեց երեք գինու և մի օղիի բաժակ շամպայն, առաջարկեց «անգնահատելի այցելուների» կենացը և մի անգամից, ըստ զինուորական սովորութեան, դատարկեց իր բաժակը, իսկ Արինա Վլասիևնային էլ ստիպեց, որ մանր բաժակի մինչև վերջին կաթիլը խմէ։ Երբ որ հերթը մուրաբային եկաւ, Արկադիյն, որ ոչ մի քաղցր բան չէր սիրում, բայց և այնպէս պարտ համարեց դեռ նոր պատրաստած չորս տեսակ մուրաբաների համն էլ տեսնել. մանաւանդ որ Բազարովը հրաժարուելով հրաժարուեցաւ և իսկոյն սիգարը կպցրեց։ Յետոյ բերին հում սերով, կարագով ու փոկեղներով թէյ. ապա Վասիլիյ Իւանովիչը ամենքին պարտէզ տարաւ, որպէսզի երեկոյեան գեղեցկութիւնը վայելեն։ Նստարանի կողքիցն անցնելիս նա Արկադիյին շշնջաց. «Սիրում եմ այստեղ նստած արևի մայր մտնելը դիտել ու փիլիսոփայութիւն անել—անապատականին վայել է այդ։ Իսկ այնտեղ, մի քիչ հեռուն մի քանի, Հորացիոսի սիրած ծառերից եմ տնկել։

—Այդ ինչ ծառ է,—լսելով հարցրեց Բազարովը։

—Հապա՜... ակացիա։

Բազարովը սկսաւ յօրանջել։

Կարծեմ ժամանակ է Մորֆէոսի գիրկն ուղևորուելու,—նկատեց Վասիլիյ Իւանովիչ։—Այսինքն՝ քնելու ժամանակ է,

—վրայ բերեց Բազարովը։—Այդ լաւ բան ասացիր։ Արդարև, ժամանակ է։

Մօրը գիշեր բարի ասելով համբուրեց նրա ճակատը, իսկ մայրը գրկեց նրան և քամակից, թաքուն, երեք անգամ վըրան խաչակնքեց։ Վասիլիյ Իւանովիչը Արկադիյին տարաւ, հասցրեց իւր սենեակը և նրան մաղթեց «մի այնպիսի բարեբար հանգիստ, որպիսին ես էլ եմ ճաշակել մեր երջանիկ հասակումս»։ Եւ արդարև, Արկադիյն շատ լաւ քուն քաշեց իւր նախաբաղնիսում, ուր անանուխի հոտ էր գալիս, իսկ երկու ճպուռ փոխէ փոխ քնաբեր ճռինչ էին արձակում վառարանի քամակին։ Վասիլիյ Իւանովիչը Արկադիյին թողնելով գնաց իւր առանձնասենեակը և որդու ոտների կողմը գահաւորակի վրայ թէք ընկնելով ուզում էր նրա հետ զրոյց անել. բայց Բազարովն անմիջապէս նրան ճանապարհ դրեց պատճառելով, թէ ուզում է քնի, բայց ինքը մինչև առաւօտ քուն չեղաւ։ Աչքերը լայն բաց արած, դժնեայ հայեացքով նայում էր մթութեանը՝—մանկութեան յիշողութիւնները ոյժ չունէին նրա վրայ, մանաւանդ որ դեռ վերջին դառն տպաւորութիւններից էլ ազատուած չէր։ Արինա Վլասիևնան քաղցր քաղցր աղօթք արեց. յետոյ շատ երկար ժամանակ զրոյց էր անում Անփիսուշկայի հետ, որը իւր տիկնոջ առաջ արձանի նման ցից եղած և միակ աչքը նրան յառած, խորհրդաւոր շշունչով հաղորդում էր նրան Եւգենիյ Վասիլևիչի վերաբերմամբ արած իւր բոլոր դիտողութիւններն ու ենթադրութիւնները։ Ուրախութիւնից, գինուց, սիգարի ծխից պառաւի խելքը բոլորովին թռել էր. ամուսինն ուզեց հետը խօսել, և միայն ձեռքը թափ տուաւ։

Արինա Վլասիևնան ուղիղ նախկին ժամանակների ազնուական կանանցից էր. պէտք էր որ նա երկու հարիւր տարի առաջ, հին-Մոսկուայի շրջանում ապրած լինէր։ Նա շատ կրօնասէր ու զգայուն կին էր, ամէն մի նշանի, փալի, գըրացի, երազի հաւատացող. հաւատում էր ընկնաւորներին, ուրուականներին, պարիկներին, վատ հանդիպումներին, դիւահարութեան, ժողովրդական դեղերի, հինգշաբթուայ աղի, աշխարհիս մօտալուտ վախճանին. հաւատում էր, որ եթէ Տեառնդառաջի երեկոյեան ժամին մոմերը չհանգած տուն հասնեն, կընշանակէ, որ հնդկացորենը լաւ է լինելու, և թէ սունկն այլ ևս չի աճիլ՝ թէ որ նրան մարդու աչք դիպչի. հաւատում էր,

թէ սատանան ջուր եղած տեղեր է սիրում և թէ ամէն մի ջըհուդ կրծքին արիւնի բիծ ունի. վախենում էր մկնից, օձից, գորտից, ծտից, տզրուկից, որոտից, սառը ջրից, թափանցիկ քամուց, ձիուց, այծից, շէկ մարդուց ու սև կատուից, և ճպուռըն ու շունը անսուրբ կենդանի էր համարում. չէր ուտում ոչ հորթի միս, ոչ աղաւնի, ոչ խեցգետին, ոչ պանիր, ոչ ծըներեկ, ոչ գետնատանձ, ոչ նապաստակ, ոչ ձմերուկ, որովհետև կտրած ձմերուկը Յովհաննու Մկրտչի գլուխն էր յիշեցնում, իսկ ծովախխունջների մասին միմիայն զզուանքով էր կարողանում խօսել. նա ուտելուն մօտիկ էր—և խիստ էլ պաս էր բռնում. օրական տասը ժամ կքնէր,—բայց որ Վասիլիյ Իվանովիչի գլուխը ցաւէր—ամենևին գլուխը բարձի չէր դնի. բացի Ալեքսիս կամ անտառի խրճթից ոչ մի գիրք չէր կարդացել, տարեկան մէկ, շատ-շատ երկու նամակ կգէր, իսկ տնտեսական գործերի մէջ հմուտ էր չոր մրգեղէններ ու քաղցրաւէնիք պատրաստելու, թէպէտ և ձեռքը ոչ մի բանի չէր կպցնիլ, և առհասարակ տեղից տհաճութեամբ էր շարժւում։ Արինա Վլասիևնան շատ բարի կին էր և, իւր տեսակով, ամենևին էլ անխելք չէր։ Նա գիտէր, որ աշխարքիս մէջ կան աղաներ, որոնք պէտք է հրամաններ տան, և հասարակ ժողովուրդ, որը պէտք է ծառայէ,—ուստի և չէր զարշում ոչ շողոմարարութիւնից և ոչ երկրապագութիւն տալուց. բայց ստորադրեալների հետ քաղցր էր և հեզ, ոչ մի մուրացկանի, առանց մի բան տալու, չէր թողնի և երբէք ոչ մի մարդու չէր դատապարտի, թէպէտ երբեմն էլ սիրում էր բամբասանք անել։ Երիտասարդ ժամանակը շատ սիրունատես էր, ածում էր կլաւիկորդ և փոքր ինչ էլ ֆրանսերէն կտրատում. բայց իւր ամուսնու հետ, որին նա հակառակ իւր կամքին էր գնացել, վարած երկարամեայ թափառական կեանքի ընթացքում լեկնել էր և ածելն էլ էր մոռացել, ֆրանսերէնն էլ։ Նա իւր որդուն սիրում էր և նրանից անասելի կերպով վախենում. կալուածքի կառավարութիւնը թողել էր Վասիլիյ Իւանովիչին—և էլ ոչ մի բանի չէր խառնւում, մենակ երբ ծերուկը սկսէր սպասուած բարեփոխութիւնների և իւր ծրագիրների մասին խօսել, հոգոց կհանէր, թաշկինակը շարժելով երեսին հով կանէր ու վախից ունքերը հետզհետէ աւելի ու աւելի վեր կբարձրացնէր։ Կասկածոտ էր, շարունակ մի մեծ դժբաղդութիւն էր սպասում և հէնց որ մի տխուր բան յիշէր, լաց

կլինէր...։ Այժմս արդէն այդպիսի կանայք վերջանում են։ Չգիտեմ—պէ՞տք է այդ բանին ուրախանալ։

XXI

Արկադին անկողնից վեր կենալով բաց արաւ պատուհանը, և առաջին բանը, որ աչքին ընկաւ—Վասիլիյ Իվանովիչն էր։ Բուխարական գիշերազգեստը հագին, թաշկինակով մէջքը կապած, ծերունին եռանդագին բանում էր բանջարանոցում։ Նա իւր երիտասարդ հիւրին տեսաւ և, բահի կոթին կռթնած, կանչեց։

—Ողջոյն. ինչպէ՞ս անցրիք գիշերը։

—Շատ լաւ,—պատասխանեց Արկադին։

—Իսկ ես այստեղ, ինչպէս տեսնում էք, ինչ-որ Ցինցինատի *) նման, ուշ հասնող բողկի համար ածու եմ պատրաստում։ Այժմս այնպիսի ժամանակ է հասել,—և փառք Աստուծոյ,—որ ամեն մարդ պէտք է իւր ձեռքով իւր հացն աշխատի. չպէտք է ուրիշների վրայ յուսալ. մարդ պէտք է ինքն աշխատի։ Եւ բանից երևում է, որ Ժանժակ Ռուսսոն իրաւացի է։ Մի կէս ժամ առաջ, պարոնին ասեմ, ինձ բոլորովին ուրիշ դրութեան մէջ կտեսնէիք։ Մի կնոջ, որ թանչք ունէր, ես... ինչպէս ասէ՞ր որ լաւ լինէր... ափիոն էի լցնում. իսկ մի ուրիշի էլ ատամը հանեցի։ Դրան առաջարկեցի եթերով քընացնել... բայց նա չհամաձայնեցաւ։ Այս բոլորը ես անում եմ gratis—ա ն ա մ ա տ է ր։ Ինձ, սակայն, ինձ համար դա նոր, չըտեսնուած բան չէ՝ ես հօ պլեբէյ (ռամիկ) եմ; homo novus—ոչ թէ ազնուականներից, ինչպէս իմ կողակիցս է...։ Չէ՞ք հաճիլ այստեղ, ստուերի գալ, թէյից առաջ առաւօտեան թարմութիւն ծծել։

Արկադին դուրս եկաւ և գնաց նրա մօտ։

—Կրկին բարի եկաք,—ասաց Վասիլիյ Իւանովիչը զինուորականի ձևով ձեռքը տանելով իւր աղտոտած թասակին, որ դրել էր գլխին։—Գիտեմ, դուք սովոր էք փարթամութեան, զուարճութիւնների, սակայն աշխարհիս մեծամեծներն անգամ չեն զարշում խրճիթի առաստաղի տակ մի քիչ ժամանակ անցնել։

*) Հռովմայեցոց նշանաւոր զօրական և պետական գործիչ, որ յետոյ երկրագործ դարձաւ։ Ծ. Թ.

—Այդ ի՞նչ էք ասում,—աղաղակեց Արկադին,—ես ի՞նչ մեծամեծ եմ։ Եւ շքեղ կեանքի էլ վարժուած չեմ։

—Կացէ՛ք, կացէ՛ք,—սիրալիր ծամածռութեամբ պատասխանեց Վասիլիյ Իւանովիչը։—Թէպէտ ես այժմ արդէն բանի պէտք չեմ գալիս, բայց ես էլ աշխարք տեսած մարդ եմ—աչքըս որ մէկ վրան ձգեմ, իսկոյն կհասկանամ, թէ ինչ մարդ է առաջիս։ Ես էլ իմ տեսակին հոգեբան եմ ու դիմագէտ։ Թէ որ այս, համարձակւում եմ ասել, շնորքը չունենայի—վաղուց կորել, ոտի տակ էի գնացել։ Առանց ձեզ հաճոյախօսութիւն արած լինելու ասեմ, որ ինձ անկեղծօրէն ուրախացնում է այն բարեկամութիւնը, որ նկատում եմ իմ որդու ու ձեր մէջ։ Հէնց այս րոպէիս տեսայ նրան, նա ըստ իւր սովորութեան, որ հաւանօրէն ձեզ էլ յայտնի կլինի, շատ վաղ վերկացաւ տեղից և վազեց դէպի շրջակայքը։ Թոյլ տուէք հարցնեմ,—վաղո՞ւց էք ծանօթ իմ Եւգենիյիս հետ։

—Այս ձմեռուանից։

—Լա՛ւ։ Մի բան էլ հարցնեմ,—բայց լաւ չի՞ լինիլ նըստենք։—Թողէք իբրև հայր ամենայն անկեղծութեամբ մի բան էլ հարցնեմ—ի՞նչ կարծիքի էք իմ Եւգենիյիս մասին։

—Ձեր որդին իմ տեսած մարդկանց մէջ ամենանշանաւոր մարդկանցից մէկն է,—աշխուժով պատասխանեց Արկադին։

Յանկարծ Վասիլիյ Իւանովիչի աչքերը մեծ-մեծ բացուեցան ու թշերը թեթևակի կարմրեցան։ Բահը ձեռքից վայր ընկաւ։

—Ուրեմն կարծում էք որ... սկսեց նա։

—Հաւատացած եմ,— վրայ բերեց Արկադին,—որ ձեր որդին մեծ ապագայ ունի և նա կը փառաւորէ ձեր անունը։ Հէնց մեր առաջին հանդիպումից համոզուեցայ ես այդ բանին։

—Ինչպէ՞ս... ինչպէ՞ս եղաւ այդ բանը,—հազիւ արտասանեց Վասիլիյ Իւանովիչը։ Սքանչացման ժպիտը լայն բաց արաւ նրա շրթունքները և մէկ էլ չանհետացաւ։

—Ուզում էք իմանալ, թէ մեր հանդիպումն ինչպէս եղաւ։

—Այո... և առհասարակ...

Արկադին սկսաւ պատմել, ու խօսել Բազարովի մասին աւելի ոգևորուած, աւելի ջերմութեամբ, քան այն երեկոյեան, երբ Օդինցևայի հետ մազուրկա էր պարել։

Վասիլիյ Իվանովիչը լսում էր, լսում նրա պատմածը, քիթը սրբում, թաշկինակը երկու ձեռների մէջ ոլորում, հազում էր, մազերը խառնում—և վերջապէս էլ չհամբերեց ու կռացաւ դէպի Արկադիյն, նրա ուսը համբուրեց։

—Դուք ինձ կատարեալ երանութիւն պարգևեցիք,—ասաց նա չդադարելով ժպտալ,—ձեզ այսքանս ասեմ, որ ես... պաշտում եմ որդուս. էլ չեմ ասում պառաւս—ինչ ասել կուզի, մայր է նա—բայց ես չեմ համարձակւում իմ զգացմունքներս որդուս ներկայութեամբ արտայայտել, որովհետև նա այդ բանը չի սիրում։ Նա թշնամի է զգացմունքների ամէն տեսակ զեղումների. շատերը մինչև անգամ նրան դատապարտում են նրա այդ բարքի անյողդողդութեան համար և այդ բանը հըպարտութիւն կամ անզգայութիւն են համարում, բայց այդպիսի մարդկանց սովորական չափով չպէտք է չափել, այնպէս չէ՞։ Հէնց օրինակ առնենք՝—նրա տեղը մէկ ուրիշը որ լինէր, շարունակ իր ծնողներից պիտի քաշէր ու քաշէր. մինչդեռ նա, կհաւատա՞ք, որ ասես մի կոպէկ աւելորդ փող չէ վերցրել, Աստուած վկայ։

—Անշահասէ՛ր, ազնիւ մարդ է,—նկատեց Արկադիյն։

—Արդարև, անշահասէր։ Եւ ես, Արկադիյ Նիկոլայիչ, ոչ միայն պաշտում եմ նրան, այլ և նրանով պարծենում, և իմ բոլոր փառասիրութիւնս այն է, որ մի ժամանակ նրա կենսագրութեան մէջ գրուած լինի. «Նրա հայրը մի հասարակ զինուորական բժիշկ էր, որ սակայն շատ վաղ հասկացաւ նրա ինչ եղածը և ոչինչ չխնայեց նրա կրթութեան համար....» —Ծերուկի ձայնը կտրուեցաւ։

Արկադիյն սեղմեց նրա ձեռքը։

—Ի՞նչ էք կարծում,—փոքր ինչ լռութիւնից յետոյ հարցրեց Վասիլիյ Իվանովիչը—Ձեր գուշակած հռչակը նա հո բժշկական ասպարէզում չէ՞ ստանալու։

—Իհարկէ բժշկական ասպարէզում չէ, թէպէտ և նա այդ կողմից էլ առաջին գիտնականներից կլինի։

—Հապա ո՞ր ասպարէզում, Արկադիյ Նիկոլայիչ։

—Այդ այժմ դժուար է ասել, բայց նա հռչակաւոր կլինի։

—Հռչակաւոր կլինի,—կրկնեց ծերունին ու մտքի ծովն ընկաւ։

—Արինա Վլասևնան ասացին հանեցէք թէյ անուշ

անելու,—ասաց Անֆիսուշկան ահագին սկուտեղով հասուն մորը ձեռին անցնելով նրանց կողքից։

Վասիլիյ Իվանովիչը սթափուեց։

—Մորի հետ սառը հում սեր էլ կա՞յ։

—Կայ։

—Նայիր, սառը լինի հա՛։ Մի քաշուէք, Արկադիյ Նիկոլայիչ, մի քիչ շատ վերցրէք։ Այս ինչու Եւգենիյն չի երևում։

—Այստեղ եմ,—Արկադիյի սենեակից լսուեց Բազարովի ձայնը։

Վասիլիյ Իվանովիչը արագութեամբ շուռ եկաւ։

—Ըհը՛, ուզում էիր բարեկամիդ այցելես, հա՞. բայց ուշացար, amice (ընկեր) և մենք արդէն երկար բարակ զրոյց արինք իրար հետ. այժմ պէտք է գնալ թէյ խմել—մայրիկդ կանչում է։ Ի դէպ ես հետդ խօսելիք ունիմ։

—Ի՞նչ բան։

—Այստեղ մի գիւղացի կայ, իկտեր ունի...

—Այսինքն դեղնացա՞ւ։

—Այո, քրոնիկական և շատ ծանր իկտեր։ Ես նրան զետնալեզի էլ եմ տուել, խնձորածաղիկ էլ, գազար եմ ուտացրել, սոդա խմացրել, բայց այս ամէնը միայն պ ա լ լ ի ա տ ի ւ (կիսատ) միջոցներ են. հարկաւոր է մի վճռական բան անել։ Թէպէտ դու բժշկութեան վրայ ծիծաղում ես, բայց հաւատացած եմ, որ կարող ես ինձ մի լաւ խորհուրդ տալ։ Բայց այդ յետոյ։ Իսկ այժմ գնանք թէյ խմենք։

Վասիլիյ Իվանովիչն աշխուժութեամբ վեր թռաւ նստարանի վրայից ու երգեց Ռոբերտից։

Օրէնք, օրէնք մեզ դնենք։

Որ ու... որ ուրախ ապրենք։

—Զարմանալի կենսունակ մարդ է,—ասաց Բազարովը պատուհանից հեռանալով։

Կէս օր եղաւ։ Համասփիւռ, սպիտակաւուն ամպերի քօղի տակից այրում էր արևը։ Ամէն ինչ լուռ էր. մենակ խիզախ աքլորները գիւղում ձայն ձայնի էին տուել ու ամէն մարդու մէջ, որ նրանց լսում էր, քնարրութեան ու տաղտկութեան տարօրինակ զգացմունք առաջացնում. մէկ էլ վերևը, ծառերի կատարին մի տեղ լալկանի ձայնով հնչում էր մատաղ բազէի անլռելի ճիչը։ Արկադիյն ու Բազարովը տա-

կերը մի երկու գիրկ խշխշուն-չոր բայց դեռ կանաչ գոյնի ու հոտաւէտ խոտ ձգած, պառկած էին խոտի մի փոքր դեզի ստուերում։

—Այն կաղամախի ծառը միտս է ձգում իմ մանկութիւնս,—սկսեց խօսել Բազարովը.—դա բուսած է մի փոսի ափին, որ մնացել է աղիւսէ չարդախից, և ես այն ժամանակ հաւատացած էի, թէ այդ փոսն ու կաղամախը թլիսմ ունեն—այնտեղ ես երբէք չէի ձանձրանում։ Այն ժամանակը չէի հասկանում, թէ չձանձրանալուս պատճառն այն էր, որ երեխայ էի։ Իսկ այժմս մեծացել եմ և թլիսմն արդէն այլ ևս ոյժ չունի։

—Ընդամենն ինչքա՞ն ժամանակ ես անցկացրել այստեղ,—հարցրեց Արկադին։

—Երկու տարի չարունակ. յետոյ մենք սկսանք ուրիշ տեղեր գնալ։ Թափառական կեանք էինք վարում. մեծ մասամբ քաղաքներում էինք քաշ գալիս։

—Իսկ այս տունը վաղո՞ւց է շինած։

—Վաղուց։ Այդ իմ պապի, մօր հօր շինածն է։

—Ի՞նչ մարդ էր պապդ։

—Սատանան գիտի ինչ մարդ եղածը։ Մի ինչ որ սեկունդ-մայիոր։ Սուվորովի ձեռքի տակ է եղել և չարունակ Ալպերն անցնելու պատմութիւնն էր անում։ Երևի սուտ էր ասում։

—Ես էլ ասում եմ ինչի՞ ընդունարանում Սուվորովի պատկերն է կախած։ Իսկ ես ձեր տան նման այսպիսի հին ու տաքուկ տնակներ սիրում եմ. նրանց հոտն էլ մի ուրիշ տեսակ է։

—Կանթեղի ձէթի ու կորնկանի հոտ է,—յորանջելով ասաց Բազարովը։—Եւ ճանճ էլ ինչքան սիրտդ ուզի այդ սիրուն տնակներում... փո՜։

—Մի ինձ ասա՛, մանկութեանդ ժամանակ քեզ չէի՞ն ճնշում, ասաց Արկադին փոքր լռութիւնից յետոյ։

—Տեսնո՞ւմ ես հօ ինչպիսի ծնողներ ունեցած։ Խիստ մարդիկ չեն։

—Եւգենիյ, սիրո՞ւմ ես նրանց։

—Սիրում եմ, Արկադիյ։

—Նրա՜նք ինչպէս սիրում են քեզ։

Բազարովը լռեց։

—Գիտե՞ս ինչ եմ միտք անում,—ասաց նա վերջապէս՝ ձեռները գլխի յետեը ձգելով։

—Չգիտեմ։ Ի՞նչ։

—Միտք եմ անում՝—բաղդաւոր են իմ ծնողներս։ Հայրս վաթսուն տարեկան է ու էլի աշխատում, խօսում է «պալլիատիւ» միջոցների մասին, մարդիկ է բժշկում, գիւղացիների վերաբերմամբ մեծահոգութիւն բանեցնում,—մի խօսքով քէֆ է անում. մօրս բանն էլ է լաւ. նրա օրը այնքան զբաղմունքներով, ախ ու օխերով է լցուած, որ աչք բանալու ժամանակ չունի. իսկ ես...

—Իսկ դո՞ւ։

—Իսկ ես միտք եմ անում՝—ահաւասիկ այստեղ պառկած եմ դէզի ստուերում...։ Այս նեղլիկ տեղը, որ ես բռնել եմ, բոլորովին մանր բան է համեմատած մնացեալ տարածութեան հետ, որ ես չկամ և որի համար իմ գոյութիւնս ոչինչ նշանակութիւն չունի, և ժամանակի այն մասը, որ ես պիտի ապրեմ, շատ և շատ չնչին բան է յաւիտենականութեան առաջ, ուր ես չեմ եղել և չպիտի էլ լինեմ...։ Մինչդեռ այս ատոմի, մատեմատիկական այս կէտի մէջ արիւնը դառնում է, ուղեղն աշխատում, նա էլ մի բան է ուզում...։ Ի՛նչ խենդութիւն։ Ի՛նչ անմիտ բան։

—Բայց քեզ ասեմ, որ այն, ինչ որ ասացիր, վերաբերում է նաև առհասարակ բոլոր մարդկանց։

—Ուղիղ է ասում,—վրայ բերեց Բազարովը։—Ուզում էի ասել, թէ ահաւասիկ նրանք, այսինքն ծնողներս զբաղուած են և իրենց չնչինութեան մասին չեն մտածում, դա նրանց անհանգստութիւն չի պատճառում... իսկ ես... ես միայն տաղտուկ ու չարութիւն եմ զգում։

—Չարութի՞ւն, ինչո՞ւ չարութիւն։

—Ինչո՞ւ։ Ինչպէ՞ս թէ ինչու։ Միթէ մոռացա՞ր։

—Ամեն բան էլ միտս է, բայց և այնպէս ես այնպէս եմ համարում, որ դու չարանալու իրաւունք չունիս։ Դու դժբա՜ղդ ես, համաձայն եմ, բայց...

—Է՛, ինչպէս տեսնում եմ, Արկադիյ Նիկալայիչ, դու էլ սէրն այնպէս ես հասկանում, ինչպէս և բոլոր նորագոյն երիտասարդները՝—ջու, ջու, ջու կանչում են վառեկին, բայց հէնց որ վառեկը սկսաւ մօտ գալ—իրանք թողնում են փախչում։ Ես այդպէս չեմ։ Բայց հերիք է այս մասին։ Մի բա-

նի որ դարման կարող չես անել, դրա մասին խոսելն էլ ամոթ է։—Նա շուռ եկաւ մի կողքի։—Ըհը, տես կորիճ մրջյունը կիսամեռ ճանճ է քաշ տալիս։ Քաշտուր, աղբեր ջան, քաշ տուր։ Նրա դիմադրելուն մտիկ չտաս, օգուտ քաղիր այն բանից, որ դու որպէս կենդանի, իրաւունք ունիս կարեկցութեան զգացմունք չընդունելու, և ոչ թէ մեզ նման կոտրտուելու։

—Այդ բանը գոնէ դու չասէր, Եւգենիյ, դու երբ ես քեզ կոտրել։

Բազարովը գլուխը վեր բարձրացրեց։

—Հէնց միայն դրանով էլ պարծենում եմ։ Քանի որ ինքըս ինձ չեմ կոտրել, կնիկարմատն էլ կարող չէ ինձ կոտրել։ Ամէն։ Վերջացաւ։ Այլ ես բառ անգամ չես լսիլ ինձանից այդ մասին։

Երկու բարեկամ էլ բաւական ժամանակ լուռ պառկած էին։

—Հըմ,—սկսեց Բազարովը,—տարօրինակ էակ է մարդս։ Որ կողքանց, այն էլ հեռուանց չես մտիկ տալիս այս խուլ կեանքի վրայ, որ վարում են «հայրերը», թւում է, թէ դրանից լաւ բան չկայ։ Կեր, խմի, և գիտցած եղիր, որ ամենականոնաւոր, ամենախելացի բանն ես անում։ Բայց չէ. ձանձրոյթը կճնշի։ Ուզենում ես մարդկանց հետ լինել, թէկուզ հայհոյել նրանց, բայց մարդկանց հետ լինել։

—Պէտք էր կեանքն այնպէս կազմակերպել, որ նրա ամեն մի ակնթարթը նշանաւոր լինէր,—մտախոհութեամբ ասաց Արկադիյն։

—Անշուշտ։ Նշանաւորը թէպէտ սուտ էլ լինի, դարձեալ քաղցր է. սակայն կարելի է աննշանի հետ էլ հաշտուել...բայց տեսա՞ր դու այս ջնջին կռիւ-զալմաղալները...կատարեալ փորձանք են դրանք։

—Ջնջին կռիւ-զալմաղալները գոյութիւն չունին մարդուս համար, թէ որ նա՛ ինքը չուզենայ դրանց վրայ ուշադրութիւն դարձնել։

—Հըմ...այդ քու ասածդ ի հակառակէն ընդհանուր դատողութիւն է։

—Ի՞նչ է, ինչ ես հասկանում այդ ասելով։

—Ահա ինչ՝—օրինակ ասել, որ լուսաւորութիւնն օգտակար է, սա ընդհանուր դատողութիւն է. իսկ ասել թէ լուսաւորութիւնը վնասակար է, այս էլ—ի հակառակէն ընդհանուր

դատողութիւն է։ Դա ըստ երեւոյթին կարծես թէ՛ սիրուն ձև է, բայց իսկապէս միենոյն բանն է։

—Բայց ո՞ւր է, ո՞ր կողմն է ճշմարտութիւնը։

—Ո՞ւր է։ Իբրև արձագանք կպատասխանեմ քեզ—ո՞ւր է։

—Այսօր դու մելամաղձոտ տրամադրութեան մէջ ես, Եւգենիյ։

—Իրա՛ւ։ Երևի արևը ինձ թուլացրել է, մէկ էլ որ շատ մոռ չպէտք է ուտել։

—Ուրեմն աւելի լաւ է մի քիչ նիրհենք,—նկատեց Արկադիյն։

—Վատ չի լինիլ. միայն երեսին մտիկ չտաս. քնած միջոցին ամեն մարդու երես էլ ապուշ արտայայտութիւն է ընդունում։

—Իսկ քեզ համար մէկ բան չէ՞, թէ ուրիշները ինչ կըմտածեն քու մասին։

– Չգիտեմ ինչ ասեմ քեզ։ Իսկական մարդը դրա մասին հոգ չպիտի տանէ. իսկական մարդը նա է, որի մասին կարծելու բան չկայ, հապա պէտք է նրան միայն հնազանդուեն կամ ատեն։

—Զարմանք բան. ես ոչ ոքի չեմ ատում,—ասաց Արկադիյն միտք անելուց յետոյ։

—Իսկ ես—շատերին։ Դու քնքուշ սիրտ ունիս, փափուկ ես, քու ինչ բանդ է ատելը...։Դու քաշուող ես, քեզ վրայ շատ վստահութիւն չունիս...։

—Իսկ դու,—ընդհատեց նրա խօսքը Արկադիյն,—վստահ ես քեզ վրայ։ Դու մեծ գաղափար ունիս քու վրադ։

Բազարովը լռեց։

—Երբ որ ես պատահեմ մի մարդու, որը իմ առաջն տեղի չի տալ,—ասաց նա հատ ընդ հատ,—այն ժամանակ ես իմ մասին ունեցած գաղափարս կփոխեմ։—Ատել։ Ահա օրինակ դու այսօր ձեր գիւղապետի տնակի մօտից անցնելիս ասիր.—ինչ սիրուն, սպիտակ տնակ էր,—Ռուսիան, ասիր, այն ժամանակ կատարելութեան կհասնի, երբ որ վերջին գիւղացին էլ այսպիսի բնակարան կունենայ, և ամեն մէկս պարտաւոր ենք նպաստել, որ այդ բանը լինի...։Իսկ ես ատեցի այդ վերջին գիւղացուն, Ֆիլիպ է թէ Սիդոր, որի համար ես արիւն-քրտինք պիտի թափեմ և որը ինձ մի բերան շնորհակալ էլ չի լինիլ...և ինչիս է նրա շնորհակալութիւնը։ Լա՛ւ, ասենք թէ նա

ապրեց սպիտակ տնակի մէջ, իսկ իմ մարմնիցս կռատուկ բուսաւ, լա՛ւ, յետո՞յ։

—Հերիք է, Եւգենի՜յ...ասածներդ լսողը ուզէ-չուզէ պիտի համաձայնի այն մարդկանց, որոնք մեր երեսովն են տալիս, թէ մենք սկզբունք չունենք։

—Դու էլ քու հօրեղբօրդ նման ես խօսում, ընդհանրապէս սկզբունք ասած բան չկայ—մի՞թէ մինչև այժմ դեռ չես հասկացել այդ. հապա միայն կան զգացողութիւններ։ Ամեն բան դրանցից է կախուած.

Ինչպէ՞ս։

—Հէնց այնպէս։ Օրինակ ես՝—ես ժխտական ուղղութեան եմ հետևում—զգացողութիւններիս պատճառով։ Ես հաճոյք եմ զգում ժխտելուց, իմ ուղեղս այդպէս է կազմուած—պրծաւ գնաց։ Ինչո՞ւ քիմիան դուր է գալիս ինձ, ինչո՞ւ դու սիրում ես խնձոր,—նոյնպէս զգացողութեան շնորհիւ։ Այդ ամենը մէկ բան է։ Մարդիկ երբէք դրանից խորը չեն թափանցիլ։ Այս բանս ամեն մարդ քեզ չի ասիլ, հէնց ես էլ ուրիշ անգամ չեմ ասիլ։

—Հը՛, ուրեմն ազնւութիւնն էլ զգացողութիւն է։

—Անշուշտ։

—Եւգենի՜յ,—տխուր ձայնով սկսեց Արկադին...։

—Հը՛, ի՞նչ է. բերանիդ համ չտուե՞ց,—ընդմիջեց Բազարովը։—Ոչ, եղբայր ջան։Որ մի անգամ սկսել ես ամեն բան հնձել—դէ՛, մի՛ կանգնի, գերանդին հասցրու քու ոտներիդ էլ...։Բայց մենք բաւական փիլիսոփայութիւն արինք։ «Բնութիւնը քնոյ լռութիւն է սփռում» ասում է Պուշկինը։

—Նա երբէք այդպիսի բան ասած չէ,—ասաց Արկադին։

—Էհ, որ չի ասել, անշուշտ որպէս բանաստեղծ կարող էր և պարտաւոր էր ասելու։ Ի դէպ. երևի նա զինուորական ծառայութեան մէջ է եղել։

—Պուշկինը երբէք զինուորական չէ եղել։

—Բայց ախր նրա գրուածքի ամեն մի երեսին կպատահես—իմարտ, իմարտ.Ռուսիայի պատիւը պաշտպանելու համա՛ր։

—Այս ի՛նչ չեղած բաներ են հնարում։ Ախր վերջապէս զրպարտութիւն է այդ։

—Զրպարտութի՞ւն. մե՛ծ բան։ Մարդ վախացնելու խօսք ես գտել, է՛լի։ Ի՛նչ զրպարտութիւն ուզում ես բարձիր մարդու վրայ, բայց նա դարձեալ քսան անգամ աւելի վատին

—Եկ, աւելի լաւ է, քնենք,—սրտնեղած ասաց Արկադին։

—Ամենամեծ ուրախութեամբ,—պատասխանեց Բազարովը։

—Բայց ոչ մէկի քունն էր տանում և ոչ միւսի։ Մի տեսակ համարեա թէ թշնամական զգացմունք համակում էր երկու երիտասարդների սիրտն էլ։ Մի հինգ րոպէից նրանք բաց արին աչքները և լռելեայն իրար երեսին նայեցան։

—Նայի՛ր,—ասաց յանկարծ Արկադին,—չինարուց չոր տերևը պոկ եկաւ ու ցած է ընկնում՝—նրա շարժումները բոլորովին նման են թիթեռնիկի թռիչքին։ Տարօրինակ չէ՞։ Ամենատխուրն ու մեռածը—նման է ամենաուրախ ու կենդանի բանի։

—Ո՜հ, բարեկամ Արկադիյ Նիկոլայիչ,—բացականչեց Բազարովը,—մի բան եմ խնդրում՝ գեղեցիկ մի՛ խօսի։

—Խօսում եմ այնպէս, ինչպէս կարողանում եմ...։Եւ վերջապէս սա ի՞նչ բռնակալութիւն է։ Մէջս մի միտք ծնուեցաւ, ինչի՞ չպիտի արտայայտեմ որ։

—Լա՛ւ. բայց ինչո՞ւ ես էլ չպէտք է իմ միտքս արտայայտեմ։ Իմ կարծիքովս գեղեցիկ խօսելը—անվայել բան է։

—Ի՞նչն է ուրեմն վայելուչը. հայհոյե՞լը։

—Է՛հէ՜, տեսնում եմ, որ դու ուզում ես ուղղակի հօրեղբօրդ ճամբով գնալ։ Ով գիտի ինչքա՜ն պիտի ուրախանար այդ ծալպակասը, թէ որ ասածդ լսէր։

—Ինչ անուն տուիր Պաւել Պետրովիչին։

—Ինչ որ պէտքն էր, այն էլ ասացի—ծալպակաս։

—Այս արդէն անտանելի է,—բացականչեց Արկադին։

—Ըհը՛, ազգականութեանդ զիպաւ հա՛,—հանդարտ կերպով ասաց Բազարովը։—Նկատած ունեմ—այդ բանը շատ պինդ է՜ մնում մարդկանց մէջ. մարդ ամեն բանից պատրաստ է ձեռք քաշելու, ամեն տեսակ նախապաշարմունքներից կհեռանայ, բայց որ խոստովանուի, թէ իր եղբայրը, որ ուրիշների թաշկինակներն է գողանում, գող է—այդ նրա ուժից վեր է։ Եւ յիրաւի. իմ եղբայրս, իմս լինի—և հանճար չլինի՞..կարելի՞ բան է։

—Պարզ արդարամտութեան զգացմունքն էր, և ոչ թէ ազգականութեան զգացմունքը, որ բողոքեց քեզ դէմ,—դըրգռուած պատասխանեց Արկադին։—Բայց որովհետև դու այդ

զգացմունքը չես հասկանում, այդպիսի զգացողութիւն չունես, ուստի և կարող էլ չես դրա մասին դատողութիւն անել։

—Ուրիշ խօսքով Արկադիյ Կիրսանովը իմ հասկացողութիւնից խիստ բարձր է. խոնարհւում եմ ու լռում։

—Ի սէր Աստուծոյ, հերիք է, Եւգենիյ. մենք վերջ ի վերջոյ կ'կռուենք։

—Ահ, Արկադիյ, շնորհ արա, եկ մի անգամ լաւ կռուենք,—իրար ջարդենք, ոչնչացնենք։

—Այսպիսով մենք, ով գիտէ վերջացնենք նրանով...

—Որ կծեծկուենք,—վրայ բերեց Բազարովը։—Ի՞նչ կայ որ։ Այստեղ, խոտի վրայ, մի այսպիսի գեղանկար պայմանների մէջ, աշխարքից ու մարդկային աչքից հեռու—վնաս չունի։ Բայց դու իմ հախից չես գայ։ Ես իսկոյն քու կոկորդից կբռնեմ...։

Բազարովը չռեց իւր երկար ու կոշտ մատները...։Արկադին շուռ եկաւ ու ասես թէ կատակով, պատրաստուեցաւ դիմադրելու...բայց իւր բարեկամի դէմքի արտայայտութիւնն այնպէս չարագուշակ թուեցաւ, մի այնպիսի սպառնալիք տեսաւ նրա շրթունքների ծուռ ծաղրի, նրա բորբոքուած աչքերի մէջ,—որ ակամայ վախեցաւ...։

—Հը՛, այստեղ էք, հա՞,—այդ միջոցին լսուեցաւ Վասիլիյ Իւանովիչի ձայնը, և ծերունի զինուորական բժիշկը, տնագործ կտաւէ պինջակը հագին, նոյնպէս տնագործ յարդեայ գլխարկը գլխին, ցից եղաւ երիտասարդների առաջ։—Ես ձեզ փընտրեցի փնտրեցի...։Բայց շատ լաւ տեղ էք ընտրել և գեղեցիկ զբաղմունքի էլ անձնատուր եղել։ «Գետնին» պառկած «երկինք» նայել...Գիտէք—մի առանձին իմաստ կայ դրա մէջ։

—Ես երկնքին մտիկ եմ տալիս միայն այն ժամանակ երբ ուզում եմ փռնգտալ,—մրթմրթաց Բազարովը և, Արկադիյի կողմը դառնալով ցած ձայնով աւելացրեց։—Ափսոս որ խանգարեց։

—Դէ լաւ, հերիք է,—շշնջաց Արկադին և գաղտնապէս իւր բարեկամի ձեռքը սեղմեց։ Բայց ոչ մի բարեկամութիւն կարող չէ այսպիսի ընդհարումներին երկար դիմանալ։

—Մտիկ եմ տալիս վրաներդ, իմ նորատի խօսակիցները,—միևնոյն ժամանակը շարունակում էր խօսել Վասիլի Իվանովիչը գլուխը տատանելով ու յեցած իւր ձեռագործ ձեռ-

նափայտին, որ խիստ ճարպիկութեամբ ոլորուած մի բան էր և որի կոթը թուրքի գլուխ էր կազմում,—մտիկ եմ տալիս ու չեմ կարող չզուարճանալ։ Որքան ոյժ, որքան ամենածաղիկ երիտասարդութիւն, ընդունակութիւններ, տաղանդ կայ ձեր մէջ։ Հէնց իմանաս...Կաստորն ու Պոլլուկսը 1) լինինք։

—Դու՞ բանը տես—դիցաբանութեան անց կացաւ,—ասաց Բազարովը։—Իսկոյն երևում է, որ իւր ժամանակին լաւ լատինագէտ ես եղել։ Կարծեմ շարադրութեան համար արծաթէ շքադրամ ես ստացել, չէ՞։

—Դիոսկուրներ, Դիոսկուրներ *),—կրկնեց Վասիլիյ Իւանովիչը։

—Դէ լաւ, հերիք է, հայր,—շատ մի քնքշանալ։

—Քանի տարին մէկ անգամ կարելի է,—մրթմրթաց ծերունին։—Ասենք ես ձեզ, պարոններ, հաճոյախօսութիւններ անելու համար հօ չեմ եկել, հապա նախ յայտնելու, որ շուտով ճաշելու ենք. իսկ երկրորդ—ուզում էի քեզ նախազգուշացնել, Եւգենիյ...։Դու խելօք մարդ ես, ճանաչում ես մարդկանց, կանանց էլ ես ճանաչում, ուստի և կներես...։Մայրիկդ քու գալստեանդ առիթով ուզեցել էր մաղթանք կատարել տալ։Չկարծես թէ ես եկել եմ քեզ կանչելու, որ այդ մաղթանքին ներկայ լինիս. մաղթանքն արդէն եղաւ վերջացաւ. բայց տէր Ալեքսէյը...

—Տէրտէ՞րը։

—Այո, քահանան. մնաց հետներս ճաշելու...։Չէի կարծում թէ բանն այդպէս կլինի, մինչև անգամ խորհուրդ էի տալիս չկանչել...բայց չգիտեմ ինչպէս եղաւ... միտքս չհասկացաւ....Դէ, Արինա Վլասիևնան էլ...։Մանաւանդ որ այդ քահանան շատ լաւ ու հասկացող մարդ է։

—Ճաշին հօ իմ բաժինս ուտելու չէ՞,—հարցրեց Բազարովը։

Վասիլիյ Իւանովիչը ծիծաղեցաւ։

—Ի՞նչ ես ասում։

---

*) Կաստորն ու Պոլլուկսը երկուորեակ են ու Զևսի (յունաց աստուած) որդիք. յայտնի են որպէս անբաժան և անձնուէր ընկերներ։ Այժմս իբրև առած գործ է ածւում երկու ընկերների սերտ բարեկամութիւնը ցոյց տալու համար։ Ծ. Թ.

2) Այսինքն—Կաստոր և Պոլլուկս։ Ծ. Թ.

—Էլ ինձ ուրիշ բան հարկաւոր չէ։ Ես ամէն մարդու հետ էլ պատրաստ եմ սեղան նստելու։

Վասիլիյ Իւանովիչը իւր գլխարկն ուղղեց.

—Ես առաջուց համոզուած էի,—ասաց նա,—որ դու բարձր ես որ և է նախապաշարմունքից։ Ես հօ—ծեր մարդ եմ, վաթսուն երկու տարի է ապրում եմ աշխարքիս երեսին, մինչև անգամ ես էլ ազատ եմ նախապաշարմունքից։ (Վասիլիյ Իւանովիչը չէր համարձակւում խոստովանուել, որ ինքն էր մաղթանք ուզողը...։ Նա իւր կնոջից պակաս ջերմեռանդ չէր)։ Իսկ տէր Ալէքսէյը սաստիկ ուզում էր ծանօթանալ հետդ։ Այ կտեսնես. դու նրան կ'հաւանես։ Նա թղթախաղի էլ չէ չի ասիլ, և նոյն իսկ... բայց այս մեր մէջը մնայ... չիբուխ էլ է քաշում։

—Աւելի լաւ ճաշից յետոյ կնստենք երալաշ խաղալու, և ես նրան կտանեմ։

—Հա-հա-հա, տեսնենք։ Նայիր, ատամդ չառնի։

—Զգիտեմ, գուցէ հին փեշակդ բանեցնես,—առանձին շեշտով ասաց Բազարովը։

Վասիլիյ Իւանովիչի անագապղնձագոյն դէմքը անորոշ կերպով կարմրեցաւ։

—Զես ամաչում, Եւգենիյ...։ Անցածը—անցաւ գնաց։ Ես հէնց այժմ էլ պատրաստ եմ ահա ն ր ա ն ց առաջը խոստովանուելու, որ երիտասարդութեանս ժամանակ այդ սխտոն ունէի. և ինչ պատիժ կրեցի դրա համար.—Բայց այս ինչ-քան տաք է։ Թողէք ձեր կողքին ես էլ նստեմ։ Հօ չեմ խանգարի։

—Ամենևին,—պատասխանեց Արկադիյն։

Վասիլիյ Իւանովիչը տնքալով նստեց խոտի վրայ։

—Ձեր այս մահիճը, պարոններիս ասեմ, ինձ յիշեցնում է,—սկսեց նա,—վարած զինուորական, վրանաբնակ կեանքս, վէրքեր կապելու համար նշանակուած տեղերը, նոյնպէս այսպէս դէզերի մօտ. և դեռ դրան էլ փառք Աստուծոյ—Նա հառաչեց։—Շատ, շատ նեղութիւններ եմ տեսել կեանքումս։ Ահա հէնց օրինակ, եթէ թոյլ կտաք, ես ձեզ մի հետաքրքրական դէպք պատմեմ Բեսսարաբիայում պատահած ժանտախտի մասին։

—Որի համար դու Վլադիմիր *) էիր ստացել,—վրայ

*) Շքանշան։ Ծ.Թ.

բերեց Բազարովը...։ Գիտենք, գիտենք...։ Ի դէպ. ինչի չես շքանշանդ կախում։

—Զէ ասացի, որ նախապաշարմունքներ չունիմ,—մըրթմրթաց Վասիլիյ Իւանովիչը (նա դեռ նախօրեկին էր պատուիրել, որ սերթուկի վրայից կարմիր ժապաւէնի կտորը լետ անեն), և սկսաւ ժանտախտի դէպքը պատմել.—Մի սրան մտիկ տուր, քնել է,—շշնջաց նա յանկարծ Արկադիյին, ու բարեսրտութեամբ աչքով արաւ։—Եւգենիյ, վեր կաց,—աւելացրեց նա բարձր ձայնով։—Ճաշի գնանք...։

Տէր Ալէքսէյը, որ մի բարձրահասակ ու լիքը մարդ էր, խիտ ու խնամքով սանրած մազերով, բաց մանիշակագոյն մետաքսեայ վերարկուի վրայից ասղնեգործ գօտի կապած, շատ ճարպիկ ու սուր մարդ դուրս եկաւ։ Նա ասես թէ հասկանալով, որ Բազարովն ու Արկադիյն իւր օրհնութեան կարօտ չեն, առաջ ինքը շտապեց նրանց ձեռքը սղմելու, և առ հասարակ իրեն շատ ազատ էր պահում։ Ոչ իւր յարգը վայր գցեց և ոչ էլ ուրիշների պատուին դիպաւ. յարմար տեղին ինքն էլ ծիծաղեցաւ սեմինարիայում աւանդուած լատիներէնի վրայ, և իւր առաջնորդի պատւին էլ պաշտպանեց. երկու մանր բաժակ օղի խմեց, իսկ երրորդից հրաժարուեցաւ. Արկադիյի առաջարկած սիգարը վեր առաւ, բայց չծխեց ասելով, թէ տուն կտանէ։ Մի քիչ անհաճելի էր նրա մի սովորութիւնը, որ նա շարունակ ձեռքը կամաց-կամաց ու զգուշութեամբ բարձրացնում էր վերև ու աշխատում էր երեսին նստած ճանճը բռնել, և երբեմն ճզմում էր ճանճը։ Նա զոհութեան չափաւոր արտայայտութեամբ նստաւ կանաչ սեղանի առաջ և վերջացրեց նրանով, որ Բազարովից 2 ր. 50 կ. ասսիգնացիա տարաւ—Արինա Վլասիևնայի տանը արծաթով *) հաշուելու մասին գաղափար անգամ չունէին...։Մայրն առաջուայ պէս նստել էր որդու կողքին (նա թուղթ չէր խաղում), առաջուայ պէս բռունցքը դէմ արել թշին, և միայն վեր էր կենում տեղից նրա համար, որ նոր ուտելու բան բերէր։ Նա վախենում էր որդուն գուրգուրել, և Բազարովն էլ իւր վարմունքովը նրան սիրտ չէր տա-

*) Ներկայումս դրամի հաշիւը արծաթով է անւում, իսկ հնում—ասսիգնացիայով. 10 կ. ասսիգնացիան—3 կ. արծաթի։ Իսկապէս ասսիգնացիա նշանակում է թղթադրամ, որը ռուսիա մտաւ Եկատերինա II-ի օրով։ Ծ. Թ.

լիս, այնպէս չէր անում, որ նա փաղաքշէր իր որդուն. մանաւանդ որ Վասիլիյ Իվանովիչն էլ նրան խորհուրդ էր տալիս, որ որդուն շատ «չանհանգստացնէ»։—«Երիտասարդներն այդպիսի բաներ չեն սիրիլ», պնդում էր նա. (էլ աւելորդ է ասել, թէ ինչ՝ ճաշ կ'լինէր այդ օրը։—Տիմոֆէյիչն ինքն անձամբ ծէգին նստած սլացել էր մի ինչ որ չերկասեան տաւարի միս բերելու. գիւղապետն էլ միւս կողմն էր գնացել արքայաձուկ, պերկէս ու խեցգետին բերելու. մենակ սունկի համար կնանիք 42 կ. սև փող ստացան). բայց Արինա Վլասևնայի աչքերը, որ անթարթ կերպով Բազարովին էին յառած, մենակ անձնուիրութիւն ու քնքշանք չէին արտայայտում՝—նրանց մէջ երևում էր նաև թախիծ խառն հետաքրքրութեան ու երկիւղի հետ, մի տեսակ հեզ կշտամբանք։

Սակայն Բազարովն ամենևին գլուխ էլ չունէր որոշելու, թէ ինչ էին արտայայտում իր մօր աչքերը. նա հազիւ էր մօրը բան ասում, այն էլ կարճ հարցմունք էր լինում։ Մի անգամ նա «բաղդը» փորձելու համար խնդրեց մօր ձեռքը, մայրը իր փափուկ ձեռքը կամացուկ դրեց նրա կոշտ ու լայն բռան վրայ։

—Հը՛,—հարցրեց նա փոքր ինչ սպասելուց յետոյ,—չեղա՞ւ։

—Աւելի վատ եղաւ,—անհոգ ծաղրով պատասխանեց Բազարովը։

—Նրանք շատ են համարձակ խաղում,—ասես վշտակցելով ասաց հայր Ալեքսէյը ու իր գեղեցիկ մօրուքը շփեց։

—Նապոլէոնի կանոնն է, տէր հայր, Նապոլէոնի կանոնը,—վրայ բերեց Վասիլիյ Իվանովիչը։—Գնա, մոնօյից (տուզ) գնա։

—Հէնց այդ բանն էլ նրան սրբոյն Հեղինեայ կղզին հասցրեց է,—ասաց տէր Ալեքսէյը և մոնօն կտրեց կոզիրով։

—Ենիւշիկ, հաղարճի ջուր չես ուզում,—հարցրեց Արինա Վլասևնան։

Բազարովը միայն ուսերը վեր ցցեց։

—Չէ,—ասում էր նա միւս օրը Արկադիյին,—վաղն այստեղից կգնամ։ Ձանձրալի է. ուզում եմ աշխատել, իսկ այստեղ կարելի չէ։ Դարձեալ ձեր գիւղը գնանք. բոլոր գործիքներս այնտեղ եմ թողել։ Ձեզ մօտ գոնէ կարելի է առանձին քաշուել ու դուռդ էլ վրայիցդ գոցել։ Ապա թէ ոչ այստեղ

հայրս համ շարունակ կրկնում է, թէ «իմ առանձնասենեակս քու տրամադրութեան տակ է,—քեզ ոչ ոք չի խանգարիլ», համ էլ ինձանից մի քայլ չի հեռանում։ Մանաւանդ կարծես խիղճս էլ չի տալիս, որ նրանից փախչեմ ու վրայիցս դուռը գոցեմ։ Մայրս էլ այդպէս։ Լսում եմ, թէ ինչպէս պատի միւս կողմում հառաչում, ախ է քաշում. գնում եմ մօտը—խօսելու բան չեմ գտնում։

—Մայրդ շատ պիտի վշտանայ,—ասաց Արկադիյն.—հայրդ էլ նոյնպէս։

- Ես յետոյ էլի կգամ։

—Ե՞րբ։

—Պետերբուրգ գնալուց առաջ։

—Մանաւանդ աւելի ափսոս է գալիս մայրդ։

—Ի՞նչ պատահեց։ Չլինի՞ հատապտուղներով շահեց քեզ։

Արկադիյն աչքերը ցած գցեց։

—Եւգենիյ, դու դեռ մօրդ չես ճանաչում։ Նա ոչ միայն շատ պատուական կին է, հապա և խելացի կի՛ն է, հաւատայ։ Այսօր առաւօտեան նա կէս ժամ հետս խօսում էր, և ինչպէս խելօք ու շահեկան կերպով։

—Երևի շարունակ իմ վրաս էր խօսում։

—Խօսքը մենակ քո վրադ չէր։

—Կարելի է։ դու կողմնակի մարդ ես, աւելի լաւ կարող ես տեսնել։ Թէ որ մի կին կարողանում է կէս ժամ խօսակցութիւն ունենալ—այդ արդէն լաւ նշան է։ Սակայն ես՝ բայց և այնպէս կհեռանամ։

—Քեզ համար ծանր կլինի նրանց այդ բանը յայտնելը։ Նրանք հէնց ա՞յն են խօսում, թէ ինչ ենք անելու երկու շաբաթից յետոյ։

—Հեշտ չի լինիլ։ Հակառակի պէս էլ այսօր հօրս գրգռել եմ՝—այս օրերս նա իր մի հարկատու գիւղացուն ծեծել է տուել. և շատ էլ լաւ է արել. այո, այո, այդպէս սարսափով մի նայիլ վրաս,—շատ լաւ է արել, որովհետև նա սաստիկ գող է ու արբեցող, բայց հայրս ամենևին չէր կարծիլ, թէ ես այդ բանը կիմանամ։ Նա շատ ամաչեց, իսկ հիմա էլ ահա նրան պիտի վշտացնեմ...։ Փոյթ չէ. Անցուկը մոռացուկ կը դառնայ։

Բազարովը «փոյթ չէ» ասաց, բայց ամբողջ օրն անց կացաւ և յետոյ միայն սիրտ արաւ իր մտադրութիւնը Վա-

սիլիչ Իւանովիչին յայտնելու: Վերջապէս, առանձնասենեակում արդէն գիշեր բարի ասելիս, նա արհեստական կերպով յօրանջելով ասաց:

—Տես... քիչ էր մնում մոռանայի ասելու...: Ասա որ վաղը մեր ձիերը տանեն Ֆեդոտին՝ ճանապարհին ձիերը փոխելու համար:

Վասիլիյ Իւանովիչը զարմացաւ:

—Միթէ պարոն Կիրսանովը գնում է:

—Այո. ես էլ եմ գնում նրա հետ:

Վասիլիյ Իւանովիչը կանգնած տեղում չուռ եկաւ:

—Գնում ես:

—Այո... Հարկաւոր է: Խնդրեմ ձիերի համար կարգադրութիւն անես:

—Լաւ..., - թոթովեց ծերունին,—ճամբին փոխելու ձի... լաւ... բայց... բայց: Ախր ինչ դուրս եկաւ:

—Հարկաւոր է կարճ ժամանակով նրանց գնալ: Ես յետոյ նորից կգամ:

—Հա՛: Կարճ ժամանակ...: Լաւ:—Վասիլիյ Իւանովիչը թաշկինակը հանեց և, քիթը սրբելիս, համարեա մինչև գետին կռացաւ: - Ի՞նչ արած... ամեն բան կանեմ: Իսկ ես կարծում էի, թէ դու այստեղ.. աւելի կմնաս: Երեք օր...: Այո, այո, երեք տարուց յետոյ փոքր ինչ քիչ է. քիչ է, Եւգենիյ:

—Չէ՞ ասում եմ, թէ շուտով կվերադառնամ: Գնալս անհրաժեշտ է:

—Անհրաժեշտ է...: Ի՞նչ արած: Ամենից առաջ պէտք է պարտականութիւնը կատարել.... Ուրեմն ձիերը ղրկեմ: Լաւ. Ես Էլ, մայրդ էլ, ի հարկէ, այդ բանը չէինք սպասում: Անաւասիկ նա հարևանուհուց ծաղիկներ է խնդրել առել, որ քու սենեակդ զարդարի: (Վասիլիյ Իւանովիչն այլ ևս չյիշեց այն, թէ ինչպէս ինքն ամենայն օր, առաւօտեան ծէգին, մուճակները բոբիկ հագած խորհուրդ էր անում Տիմաֆէիչի հետ և, դողդոջուն ձեռներով պատառատած թղթադրամները հանելով մէկը միւսի ետևից, պատուիրում էր նրան զանազան բաներ գնել, մանաւանդ աւելի ուշք դարձնելով ուտելիքների ու կարմիր գինու վրայ, որը, ինչքան կարելի էր նկատել, երիտասարդներին շատ էր դուր եկել): Գլխաւոր բանը - ազատութիւնն է... պէտք չէ ճնշել, պէտք չէ...

Նա յանկարծ լռեց և քայլերն ուղղեց դէպի դուռը:

—Մենք շուտով կտեսնուենք, հայրիկ, ուղիղ եմ ասում:

Բայց Վասիլիյ Իւանովիչը, առանց ետևը դառնալու, միայն ձեռքով արաւ ու դուրս եկաւ: Ննջարան մտնելով տեսաւ, որ կինն արդէն անկողնումն էր և որպէս զի նրան չզարթացնի, սկսաւ շշնջալով աղօթք անել: Սակայն կինը զարթեցաւ:

—Դո՞ւ ես, Վասիլիյ Իւանիչ,—հարցրեց նա:

—Ես եմ, հոգի ջան:

—Ենիւշիկի մօտից ես գալիս: Գիտես, վախում եմ որ դահաւորակի վրայ նրա տեղը հանգիստ չէ: Անֆիսուշկային ասացի, որ նրան տայ քու ճանապարհի դօշակդ ու նոր բարձերը. մեր բումբուլէ դօշակը կտայի—բայց նա որքան յիշում եմ, փափուկ բանի վրայ պառկել չի սիրում:

—Վնաս չունի հոգի ջան, անհոգ եղիր: Նա հանգիստ է: Տէր, քաւեա զիս զմեղաւորս,—հազիւ լսելի ձայնով շարունակեց նա իր աղօթքը: Վասիլիյ Իւանովիչը խղճաց իր պառաւին և չուզեց նրան գիշերն ասել, թէ ինչ վիշտ էր կրելու նա:

Միւս օրը Բազարովն ու Արկադին ճանապարհ ընկան: Արդէն առաւօտից տան մէջ ամենքն էլ տխրել էին. ամանները Անֆիսուշկայի ձեռքից վայր էին ընկնում. մինչև անգամ Ֆէյդկան էլ տարակուսանքի մէջ էր ընկել, և վերջի վերջոյ գնաց ու կօշիկները ոտքից հանեց: Վասիլիյ Իւանովիչը սովորականից դուրս վայր ու վերի մէջ էր՝—ըստ երևութին նա ինքն իրեն զսպում էր, սիրտ տալիս, խօսում էր բարձր ձայնով և ոտներով պինդ պինդ ձայն հանում, բայց նրա դէմքը երկարել էր, և հայեացքներն էլ շարունակ որդու մօտիցն էր ձըգում: Արինա Վլասիևնան հանդարտ լաց էր լինում. նա բոլորովին կ՚շշկլուէր և ինքն իրեն չէր կարողանալ զսպել, թէ որ ամուսինը առաւօտեան վաղ-վաղ երկու ժամ շարունակ նըրան յորդորած, համոզած չլինէր: Իսկ երբ որ Բազարովը շատ անգամ խոստանալուց յետոյ, թէ ամենաուշը մի ամսից դարձեալ կվերադառնայ, դուրս պրծաւ իրեն պինդ բռնած գրկից ու տարանտաս նստեց. երբ որ ձիերը գնալ սկսան և զանգակը սկսաւ զնգզնգալ, և անիւները պտոյտ եկան,— և էլ կառքի ետևից նայելու բան չէր մնացել, փոշին էլ նստել էր, և Տի-

մաֆէյնը բոլորովին կզացած և մանգալիս էլ տատանուելով յետ դարձաւ դէպի իր բնիկը. որ երկու ծերեր մնացին մենակ իրենց, սակայն թէ նոյնպէս յանկարծ կզացած ու զառամած տանը՝—Վասիլիյ Իւանովիչը, որ դեռ մի քանի ակնթարթ առաջ արիաբար պատշգամբում կանգնած թաշկինակն էր շարժում, ընկաւ աթոռի վրայ ու գլուխը քաշ գցեց կրծքին։ «Թողեց, մեզ թողեց», թոթովեց նա,—«թողեց. մեզ հետ մընալուց տաղտկացաւ։ Մենակ, բալղուշի նման մենակ մնացի», կրկնեց նա մի քանի անգամ, և ամեն անգամ ձեռքը առաջ էր շարժում, ցուցամատը միւս մատներից հեռացրած։ Այն ժամանակ Արինա Վլասիևնան մօտ եկաւ նրան, իր ալեոր գըլուխը խոնարհեց նրա ալեոր գլխին և ասաց.

—Ի՞նչ արած, Վասիլև։ Որդին—կտրած պատառ է։ Նա որ կայ—մի թռչուն է. ուզեց՝ թռաւ, եկաւ, ուզեց՝ թռաւ գընաց. իսկ մենք, ծառի փչակին բուսած սունկի նման կողքկողքի նստած, տեղներիցս չենք էլ շարժւում։ Մենակ ես եմ քեզ համար մշտական մնալու անփոփոխ, ինչպէս նաև դու՝ ինձ համար։

Վասիլիյ Իւանովիչը երեսից հեռացրեց ձեռքերը և գրկեց իր կնոջը, իր ընկերուհուն, այնպէս պինդ կերպով, որ երիտասարդ ժամանակն էլ չէր գրկել՝—կինը մխիթարեց նրան տխրութեան օրերին։

XXII

Մինչև Ֆեդոտին հասնելը մեր բարեկամները լուռ էին և երբեմն-երբեմն միայն աննշան խօսքեր ասում միմեանց։ Բազարովը ինքն իրենից շատ գոհ չէր։ Արկադիյն դժգոհ էր նրանից։ Մանաւանդ, որ նա իր սրտում զգում էր այն անառիթ թախիծը, որը յայտնի է միմիայն խիստ երիտասարդ մարդկանց։ Կառապանը փոխեց ձիերը և, իր տեղը նստելով, հարցրեց՝—աջ թէ ձախ։

Արկադիյն ցնցուեցաւ։ Աջ կողմի ճանապարհը քաղաք էր գնում. ձախը Օդինցևայի գիւղը։

Նա Բազարովին նայեցաւ։

- Եւգենիյ,—հարցրեց նա,—ձա՞խ։

Բազարովը երեսը շուռ տուեց։

—Ի՞նչ յիմարութիւն,—փնթփնթաց նա։

—Գիտեմ յիմարութիւն եղածը,—պատասխանեց Արկադիյն...։ Ի՞նչ եղած կայ որ։ Առաջինը հօ չի։

—Բազարովը գլխարկը ցած քաշեց ճակատին։

—Ինչ ուզում ես արա,—ասաց նա վերջապէս։

—Քշիր դէպի ձախ,—կանչեց Արկադիյն։

Տարանտասը դէպի Նիկոլսկոյէ ուղղուեցաւ։ Բայց բարեկամները վճռելով յ ի մ ա ր ո ւ թ ի ւ ն անել, առաջուանից էլ աւելի լուռ մնացին, և նոյն իսկ զայրացած էին թւում։

Արդէն Օդինցևայի տան պատշգամբում սեննեկապանի ցոյց տուած ընդունելութիւնից կարող էին բարեկամներս հասկանալ, որ յանկարծ մտքներն ընկած բանը կատարելով անխոհեմութիւն էին գործել։ Ակնյայտնի էր, որ նրանց չէին սպասում։ Նրանք բաւական երկար ժամանակ և բաւական յիմար կերպարանքով նստած էին ընդունարանում։ Օդինցևան վերջապէս դուրս եկաւ։ Նա իր սովորական քաղցրահամբոյր բնաւորութեամբ բարևեց նրանց, բայց զարմացաւ, որ այդպէս շուտով էին վերադարձել և, որքան կարելի էր դատել նրա շարժումների ու զրոյցի դանդաղութիւնից, շատ էլ ուրախ չէր նրանց վերադարձի համար։ Նրանք շտապեցին յայտնելու, որ միայն ճանապարհի վրայ հանդիպել են այստեղ և թէ մի չորս ժամից ճանապարհ կընկնեն դէպի քաղաք։ Օդինցևան միմիայն մի թեթև բացականչութիւն արձակեց։ Արկադիյի միջոցով բարև ուղարկեց նրա հօրը, և մարդ ուղարկեց իր մօրաքրոջը կանչելու։ Իշխանուհին եկաւ բոլորովին քնաթաթախ, և այդ բանն աւելի ես ժանտ արտայայտութիւն էր տալիս նրա կնճռոտ, պառաւական դէմքին։ Կատեան տկար էր և սենեակից դուրս չեկաւ։ Արկադիյն յանկարծ զգաց, որ ինչքան իրեն Աննա Սերգէևնային էր ուզում տեսնել, գոնէ նոյնքան էլ ուզում էր տեսնել նաև Կատեային։ Չորս ժամն անցկացաւ դէսից, դէնից աննշան խօսակցութիւններով. Աննա Սերգէևնան առանց ժպտի էր թէ խօսում, թէ լսում։ Միայն հէնց մնաս բարովի միջոցին սանս թէ նախկին բարեկամութիւնը երևան եկաւ նրա հոգու մէջ։

—Այժմս տխրութիւն է եկել վրաս,—ասաց նա,—բայց դրա վրայ ուշադրութիւն մի դարձնէք և մի քիչ ժամանակից դարձեալ եկէք. ես այս երկսիդ էլ եմ ասում։

Բազարովն էլ, Արկադիյն էլ պատասխանի տեղ լուռ

գլուխ տալին, կառք նստան և, այլ ևս առանց մի տեղ դադար առնելու, տուն, Մարյինո վերադարձան, ուր և միւս օրը երեկոյեան աջողութեամբ հասան։ Ամբողջ ճանապարհին ոչ սա և ոչ էլ նա Օդինցևայի անունն անգամ չտուին. մանաւանդ Բազարովը, որ համարեա բերանն էլ բաց չարաւ, և մի տեսակ զայրագնած լարմամբ շարունակ մի կողմ, ճանապարհից հեռու էր նայում։

Մարյինոյում նրանց գալու վրայ ամենքն էլ սաստիկ ուրախացան։ Որդու երկարատև բացակայութիւնը սկսել էր Նիկոլայ Պետրովիչին անհանգստացնել. նա բացականչեց, ոտքերը շարժեց, նստած տեղը վեր թռաւ գահաւորակի վրայ, երբ որ Ֆենիչկան ծիծաղն աչքերին ներս վազեց և յայտնեց, որ «երիտասարդ աղաները» եկան. նոյն ինքն Պաւէլ Պետրովիչն էլ մի տեսակ հաճելի յուզում զգաց և ներողամտաբար էլ ժպտաց վերադարձած շրջմոլիկների ձեռները ուժգին թոթուելով։ Սկսան խօսել, հարց ու փորձ անել.— աւելի Արկադին էր խօսում, մանաւանդ ընթրիքին, որը կէս գիշերից շատ ուշ տևեց։ Նիկոլայ Պետրովիչը պատուիրեց, որ մի քանի շիշ պորտեր բերեն, որ նոր էին Մոսկուայից ստացել, և այնքան խմեց, որ այտերը մուգ գոյն ստացան, և ինքը շարունակ ծիծաղում էր ոչ ասես երեխայական, ոչ ասես ներվային ծիծաղով։ Ընդհանուր ոգևորութիւնը ծառաներին էլ վարակեց։ Դունեաշան խելագարի պէս լետ ու առաջ էր վազվզում ու շարունակ դռները չրխկացնում. իսկ Պետրը նոյն իսկ գիշերուայ ժամի երկուսն անց դեռ փորձում էր գիթարի վրայ վալս-կազակ ածել։ Լարերը աչխտուր ու հաճելի կերպով հնչում էին անշարժ օդի մէջ, բայց կրթուած սեննեկապանի ածածից, բացի սկզբնաւորութիւնից, ոչինչ չէր դուրս գալիս՝— բնութիւնը նրան երաժշտական ընդունակութիւնից, ինչպէս նաև ամեն մի ընդունակութիւնից, զրկել էր։

Մինչդեռ Մարյինոյում կեանքն այնքան էլ լաւ չէր դարսւում, և խեղճ Նիկոլայ Պետրովիչի բանը այնքան վատ էր։ Ագարակի հոգսերն օր օրի վրայ աւելանում էին — անմխիթար, անխորհուրդ հոգսեր։ Վարձու բանուորների հետ գործ ունենալը անտանելի էր դառնում։ Ոմանք պահանջում էին, որ իրենց հաշիւները վերջացնեն կամ ռոճիկներն աւելացնեն, ոմանք էլ ստանում էին առհաւատչեայ դրամ ու թողնում գնում. ձիերն հիւանդանում էին. ձիերի սարքը

կարծես կրակի մէջ ձգած, այրած լինէին. աշխատանքը անհոգաբար էին կատարում. Մոսկուայից բերել տրուած կալսելու գործիքը իւր ծանրութեան պատճառով մնացել էր անպէտք. միւս մեքենան հէնց առաջին անգամից փչացրել էին. գոմանոցի կէսը այրուել էր այն պատճառով, որ ընգծիններից մի կոյր պառաւ խանձակոթն առած քամի ժամանակ գնացել էր, որ իւր կովը մուխի բռնի, չարից ազատի... Թէպէտ և, նոյն պառաւի ասելով, բոլոր փորձանքն առաջացել էր այն բանից, որ աղայի խելքին փչել էր մի ինչ-որ չեղած-չտեսնուած պանիրներ ու կաթնային տնտեսութիւն սարքել։ Կառավարիչը յանկարծ ծուլացաւ և մինչև անգամ սկսաւ հաստանալ, ինչպէս որ սովորաբար հաստանում է ամեն մի ռուս մարդ, որ «բոլ հաց» է գտնում։ Հէնց որ նա հեռուից նկատում էր Նիկոլայ Պետրովիչին, որպէս զի ցոյց տայ իւր հոգածութիւնը, տաշեղի կտոր էր արձակում մօտովն անցնող խոճկորի ետևից կամ սպառնալիք էր տալիս կիսամերկ երեխի, սակայն ժամանակի մեծ մասը նա քնով էր անցկացնում։ Գիւղացիները ժամանակին բահրան չէին բերում, անտառից գողութիւն էին անում. համարեա ամենայն գիշեր պահապաններն ագարակի արօտատեղերում բռնում կամ զօրով խլում էին գիւղացոց ձիերը։ Նիկոլայ Պետրովիչը սկըզբում փողով տուգանք էր նշանակել արտ կամ խոտատեղ արածացնելու համար, բայց սովորաբար բանը վերջանում էր նրանով, որ մի կամ երկու օր բռնած ձիերը, աղայի կուրով պահպանելուց յետոյ, իրանց տէրերին էին վերադարձնում։ Ի լրումն այս ամենի, գիւղացիներն սկսեցին իրար հետ վիճել՝— եղբայրները պահանջում էին, որ բաժանուեն. տաքերակնանիք մի տան մէջ չէին եօլա գնում, յանկարծ կռիւ ծեծկռուռնք էր բարձրանում, և ամենքը մէկ խօսք եղածի պէս ոտի էին ելնում, ամենքն էլ վազում, հաւաքւում էին նրա գրասենեակի պատշգամբի առաջ, զօրով ներս էին մտնում շատ անգամ քիթ ու մռութ ջարդած, հարբած, և օրէնք դատաստան պահանջում. բարձրանում էր աղմուկ, աղաղակ, մէջ ու մէջ լսւում էին կանանց լացակումած ճիչ ու տղամարդկանց հայհոյանք։ Պէտք էր ոսոխների դատը տեսնել, մինչև ձայնը խռպելու աստիճան կանչել, կանչվռտել՝ առաջուց արդէն համոզուած, որ էլի կանոնաւոր վճիռ դնել կարելի չպիտի լինի։ Հունձի ժամանակ մարդ չկար՝— հա-

րեանը ամենաբարեհոգի դէմքով պայման էր դրել ամեն մի դեսեատինը երկու ռուբլով հնձելու համար հնձուոր ուղարկել, և ամենաանխիղճ կերպով խաբել էր. իւր գեղջկուհիներն էլ չը լսուած գներ էին ուզում, մինչդեռ ցորենը հասկերի միջից թափւում էր, միևնոյն ժամանակ հնձելու բանն էլ գլուխ չեկաւ, միևնոյն ժամանակ որբախնամ խորհուրդը սպառնում է և պահանջում, որ տոկոսներն անմիջապէս և առանց յետաձգման վճարուի...։

—Էլ ույժ չմնաց,—շատ անգամ յուսահատած բացականչում էր Նիկոլայ Պետրովիչը։—Չի սազի, որ ինքս հետները ծեծկռւեմ, իսկ ստանովոյ կանչելը—սկզբունքներիս դէմ է. իսկ աչքները պատժով չվախեցնելս էլ չի լինի։

—Du calme du calme, -նկատում էր դրան Պաւէլ Պետրովիչը,—իսկ ինքը մրմռում էր, դէմքը մռայլում ու բեխերը ձգձգում։

Բազարովը իրան այս ղալմաղալից հեռու էր պահում, համ էլ որ նրան, որպէս հիւրի, չէր էլ սազում, որ ուրիշների գործին խառնուի։ Մարյինո գալու միւս օրն և եթ նա սկսեց զբաղուել իւր գործերով, իւր ինֆուզորեաներով, քիմիական բաղադրութիւններով, և բոլոր ժամանակը դրանց հետ էր։ Արկադիյն, ընդհակառակն, իւր պարտականութիւնն էր համարում եթէ հօրը չօգնէր էլ, գոնէ ցոյց տալ, թէ պատրաստ է օգնելու։ Նա համբերութեամբ ականջ էր դնում նրա ասածներին և մի անգամ էլ մի ինչոր խորհուրդ տուեց չէ թէ նըրա համար, որ հետևեն իւր խորհրդին, հապա որպէս զի իւր սրտակցութիւնը յայտնէ։ Տնտեսական զբաղմունքները նրան զզուանք չէին պատճառում—նա նոյն իսկ գոհութեամբ երազում էր հողագործական զբաղմունքների մասին, բայց այդ միջոցին նրա գլխում ուրիշ մտքեր էին վխտում։ Արկադիյն ինքըն էլ զարմանում էր, որ շարունակ Նիկոլսկոյէի վրայ էր մտածում. թէ որ առաջ նրան ասող լինէր, թէ նա Բազարովի հետ միևնոյն յարկի տակ ապրելով կարող է տաղտկանալ, այն էլ ինչպիսի՜ յարկի,—ծնողական,—նա միայն ուսերը վեր կցցէր. մինչդեռ նա յիրաւի տաղտուկ էր զգում, և աչքը դուրսըն էր։ Նա միտքը դրեց, որ մինչև յոգնելու աստիճան զբօսնի, բայց այդ էլ չօգնեց։ Մի անգամ հօրը հետ խօսելիս իմացաւ, որ հօր մօտ կայ Օդինցևայի մօր գրած մի քանի բաւական հետաքրքրական նամակները, որ նա գրած է եղել Ար-

կադիյի հանգուցեալ մօրը. և մինչև որ այդ նամակները ձեռք չձգեց, հօր օձիքը բաց չթողեց. իսկ Նիկոլայ Պետրովիչն այդ նամակները գտնելու համար ստիպուած էր մի քսան արկղ ու սնդուկ քրքրել, տակն ու վրայ անել։ Այս կիսամաշ թղթերին տիրանալուց յետոյ Արկադիյն կարծես հանգստացաւ. ասես թէ նա իւր առաջ տեսաւ այն նպատակը, որին պէտք է դիմէր։ «Ես այս երկսիդ էլ եմ ասում» շարունակ շշնջում էր նա—ինքն աւելացրեց։ Կգնամ, կգնամ, ինչ ուզում է լինի»։ Բայց նա մտաբերեց վերջին այցելը, սառն ընդունելութիւնը և իւր նախկին անհամարձակութիւնը, և վրան երկչոտութիւն ընկաւ։ Երիտասարդութեան «իցէ թէ» ն, բաղդը փորձելու և մենակ, առանց որ և է մէկի հովանաւորութեան իւր ույժերը փորձելու գաղտնի ցանկութիւնը—վերջապէս յաղթանակեցին։

Մարյինո գալուց տասն օր չէր անցել, որ դարձեալ, կիրակնօրեայ դպրոցների կազմի ուսումնասիրելու պատրուակով, դէպի քաղաք էր արշաւում, իսկ այնտեղից էլ—Նիկօլսկոյէ։ Նա շարունակ քշել էր տալիս կառապանին և սլանում դէպի Նիկօլսկօյէ այնպէս, ինչպէս դէպի պատերազմ արշաւում է երիտասարդ սպան—և վախում էր և ուրախ, անհամբերութիւնը նրան խեղդում էր։ «Գլխաւորն այն է, որ պէտք չէ մտածել» կրկնում էր նա ինքն իրեն։ Բաղդից խիզախ էլ կառապանի էր հանդիպել. դա կանգ էր առնում ամեն մի օղետան առաջ ու ասում «կոնծենք», կամ՝ «չկոնծենք», բայց որ կոնծեց, էլ ձի խնայել չկար։ Ահա վերջապէս երևեցաւ ծանօթ տան բարձըր կտուրը...«Այս ինչ է իմ արածս» յանկարծ անցաւ նրա մտքովը։ «Էհ, մէկ էլ հօ ետ չեմ դառնալու»։ Եռաձի կառքը սլանում էր, կառապանը սիրտ էր տալիս ձիերին ու սուլում։ Ահաւասիկ արդէն կամուրջն էլ դղրդաց ձիերի ոտների ու անիւների տակ, ահաւասիկ մօտեցաւ խուզած եղևինների ճեմելիքը...Մուգ կանաչի միջից փայլեց կանացի վարդագոյն ըղգեստը, հովանոցի թեթև ծոպերի տակից մտիկ տուեց նորատի դէմքը...Նա ճանաչեց Կատեային, և սա էլ նրան ճանաչեց։ Արկադիյն հրամայեց կառապանին, որ կանգնացնէ տաքացած արշաւող ձիերը, ցած թռաւ կառքից և մօտեցաւ Կատեային։ «Այս դուք էք եղել», ասաց Կատեան և քիչ-քիչ բոլորովին կարմրատակեցաւ. «եկէք, քրոջս գնանք. նա այստեղ, պարտիզումն է. ձեր գալուն ուրախ կլինի»։

Կատեան Արկադիյին պարտէզ տարաւ։ Արկադիյն այս

հանդիպումը խիստ լաւ նշան համարեց. Նա որ Կատեային տեսաւ, խիստ ուրախացաւ. կարծես մօտիկ ազգականին տեսած լինէր։ Եւ ամէն բան շատ լաւ էլ դուրս եկաւ-ոչ սենեկապան, ոչ գալու մասին զեկուցում։ Ճանապարհի պտոյտքին տեսաւ Աննա Սերգէեւնային, որ մէջքը դէպի նա դարձրած կանգնած էր։ Ոտքի ձայն լսելով Օդինցեւան ետեւը նայեցաւ։

Արկադին դարձեալ շփոթուելու վրայ էր, բայց Օդինցեւայի առաջին խօսքերի վրայ հանգստացաւ։ «Բարև ձեզ, փախստական», ասաց սա իր միապաղաղ, փաղաքուշ ձայնով, և ժպտալով ու աչքը արևի լոյսից ու քամուց կուչ ածելով առաջացաւ դէպի նա. «այս որտեղից գտար նրան, Կատեա»։

—Ես ձեզ համար, Աննա Սերգէեւնա, մի այնպիսի բան եմ բերել,— սկսեց Արկադին, որ երբէք չէիք սպասիլ...։

—Դուք ձեզ բերիք. այս ամենից լաւն է։

XXIII

Բազարովը ծաղրական ցաւակցութեամբ Արկադիին ճանապարհ դնելուց ու նրան հասկացնելուց յետոյ, թէ շատ լաւ հասկացել է նրա ուղևորութեան նպատակը, բոլորովին առանձնացաւ՝—տենդային աշխատանքի անձնատուր եղաւ։ Այլ ևս Պաւէլ Պետրովիչի հետ վէճի չէր բռնւում, մանաւանդ որ սա նրա ներկայութեանը չափազանց ազնուական դիրք էր բռնում և իր կարծիքներն աւելի բացականչութիւններով էր արտայայտում, քան թէ բառերով։ Միայն մէկ անգամ Պաւէլ Պետրովիչը սկսել էր Ն ի հ ի լ ի ս տ ի հետ վէճի բռնուել Օստզէյի նահանգի ազնուականների իրաւունքների վերաբերմամբ, որ այդ ժամանակները մօդ էր, բայց յանկարծ ինքը կանգ առաւ ու սառն քաղաքավարութեամբ ասաց.

Ասենք մենք կարող չենք միմեանց հասկանալ ես գոնէ պատիւ չունեմ ձեզ հասկանալու։

—Ինչ ասել կուզի,—բացականչեց Բազարովը։—Մարդս կարող է ամեն բան հասկանալ՝—թէ ինչպէս է դողդողում եթերը, թէ ինչ է կատարւում արևի վրայ. բայց թէ ինչպէս կարող է մի ուրիշ մարդ այնպէս չխնչել, ինչպէս ինքն է խնչում, նա այդ բանը կարող չէ հասկանալ։

—Ի՞նչ է, սրամտութիւն է այդ,—հարցական եղանակով ասաց Պաւէլ Նիկոլաեւիչը և մի կողմ քաշուեցաւ։

Սակայն նա երբեմն թոյլտուութիւն էր խնդրում Բազարովի փորձերին ներկայ լինելու և մինչև իսկ մի անգամ իր հոտեր քսած ու գերազանց ջրերով լուացած դէմքը մօտեցրեց մանրադիտակին, որպէս զի դիտէ, թէ ինչպէս թափանցիկ ինֆուզորիան կուլ էր տալիս փոշու նման մի կանաչ բան և մեծ խնամքով ծամծմում իր մի տեսակ արագաշարժ բռունցքներով, որ գտնւում էին նրա կոկորդի մէջ։ Եղբօրից աւելի Բազարովին այցելում էր Նիկոլայ Պետրովիչը. նա հէնց ամեն օր էլ կգար, ինչպէս ինքն էր ասում, «սովորելու», թէ որ տնտեսական հոգսերը նրան չզբաղեցնէին։ Նա երիտասարդ բնագէտին նեղութիւն չէր տալիս՝—սենեակում մի անկիւն քաշուած կնստէր և ուշադրութեամբ մտիկ կտար, և հազիւ երբեմն միայն մի զգոյշ հարցում կանէր։ Ճաշերքին ու ընթրիքներին նա աշխատում էր խօսքը ձգել բնագիտութեան, քիմիայի կամ երկրաբանութեան վրայ, որովհետև միւս բոլոր խնդիրները, նոյն իսկ տնտեսական խնդիրները, էլ չենք ասում քաղաքականները, կարող էին չասենք ընդհարում, գոնէ դժգոհութեան առիթ լինել։ Նիկոլայ Պետրովիչը հասկանում էր, որ իր եղբօր դէպի Բազարովը տածած ատելութիւնն ամենևին չէր նուազել։ Ի միջի այլոց մի չնչին դէպք ապացուցեց այդ բանը։ Խոլերան սկսել էր շրջակայքում էլ տեղ-տեղ երևան գալ, և նոյն իսկ Մարյինոյից էլ երկու հոգի կորզեց։ Գիշերը Պաւէլ Պետրովիչին բաւական ծանր ակարութիւն պատահեցաւ։ Նա մինչև լոյս տանջուեցաւ, բայց Բազարովի օգնութեան չդիմեց—և միւս օրը նրան հանդիպելով, նրա հարցին, թէ «ինչի իրեն չկանչեց»—դեռ բոլորովին դժգոյն, բայց արդէն խնամքով սանդրուած ու ածիլուած, պատասխան տուեց. «կարծեմ հէնց ինքներդ, որքան միտս է, ասում էիք, թէ բժշկութեան չէք հաւատում»։ Այսպէս անցնում էին օրերը. Բազարովը լարուած և խոժոռ դէմքով աշխատում էր...բայց Նիկոլայ Պետրովիչի տանը կար մէկը, որի հետ Բազարովը, չասենք սիրտն էր թեթևացնում, հապա սիրով զրոյց էր անում...։ Այդ Ֆենիչկան էր։

Նա մեծ մասամբ Ֆենիչկային հանդիպում էր առաւօտները վաղ պարտէզում կամ բակում. Բազարովը Ֆենիչկայի սենեակը չէր գնում, իսկ Ֆենիչկան էլ միայն մէկ անգամ էր մօտ եկել նրա դրանը որպէս զի հարցնի, թէ—արդեօք Միտի-

այլն լողացնի թէ ոչ։ Ֆենիչկան ոչ միայն հաւատում էր Նրան, ոչ միայն Նրանից չէր վախենում, այլ և Նրա մօտ Նա իրեն աւելի ազատ ու համարձակ էր պահում, քան թէ նոյն իսկ Նիկոլայ Պետրովիչի մօտ։ Դժուար է ասել, թէ ինչից էր այդ. գուցէ դա Նրանից էր, որ Ֆենիչկան անգիտակցաբար զգում էր, թէ Բազարովի մէջ չկայ այն ամենը, որ յատուկ է ազնուականին, այն ամեն բարձր բանը, որ միանգամայն թէ գրաւում է և թէ վախեցնում։ Նրա աչքում Բազարովը թէ լաւ բժիշկ էր և թէ պարզ մարդ։ Նա, առանց քաշուելու, Բազարովի ներկայութեամբ զբաղւում էր իր երեխով, և մի անգամ, երբ յանկարծ գլուխը պտոյտ եկաւ ու ցաւից, մինչև իսկ Բազարովի ձեռքից գդալով դեղ խմեց։ Նիկոլայ Պետրովիչի ներկայութեանը Ֆենիչկան ասես թէ Բազարովից հեռու էր պահում իրեն,—բայց Նա այդ անում էր ոչ թէ խորամանկութեամբ, հապա մի տեսակ վայելչութեան զգացմունքից։ Նա Պաւել Պետրովիչից այժմ աւելի էր վախենում։ Պաւել Պետրովիչը այս մի քանի ժամանակից ի վեր հետամուտ էր լինում Նրան և անակնկալ կերպով, իր անգլիական զգեստը հագած, սրահայեաց, անշարժ դէմքով, ձեռները գրպանը դրած, երևան էր գալիս Նրա ետևը։ «Ինչ իմանաս գլխից սառը ջուր էր ածում», գանգատւում էր Ֆենիչկան Դունիաշային, իսկ սա ի պատասխան Նրան՝ ոգոց էր հանում և մտածում մի ուրիշ «անզգայ» մարդու մասին։ Բազարովը, առանց իր գիտութեան, դ ա ժ ա ն բ ռ ն ա կ ա լ էր դարձել Դունիաշայի սրտի վրայ։

Բազարովը Ֆենիչկային դուր էր գալիս. նոյնպէս Ֆենիչկան էլ Նրան էր դուր գալիս։ Ֆենիչկայի հետ խօսելիս մինչև անգամ Նրա դէմքի արտայայտութիւնն էլ փոխւում, պարզ, համարեա բարի էր դառնում, իսկ Նրա սովորական անհոգ վարմունքին խառնւում էր Նաև մի տեսակ կատակախառն ուշադիր վերաբերմունք։ Ֆենիչկան օր օրի վրայ սիրունանում էր։ Նորատի կանանց կեանքի մէջ լինում է մի շրջան, երբ Նրանք սկսում են ամարային վարդի Նման բացուել, ծաղկել, մի այդպիսի շրջան էր Ֆենիչկայի համար։ Ամեն բան, նոյն իսկ յուլիսի տօթը, որ կանգնել էր այդ միջոցին, Նպաստում էր այդ բանին։ Նա Նուրբ, սպիտակ զգեստ հագած լինելով, ինքն էլ աւելի սպիտակ ու Նուրբ էր թւում— արևը Նրա երեսը չէր այրում, իսկ տօթը, որից Նա կարող

չէր խուսափել, թեթևակի կարմրացնում էր Նրա այտերն ու ականջները, և խաղաղ թալկութիւն գցելով Նրա ամբողջ մարմնի մէջ, արտայայտւում էր Նրա գեղանի աչքերի մէջ Նուաղկոտ թմրերով։ Նա համարեա թէ չէր կարողանում աշխատել. ձեռները իրենք իրենց սահում, ընկնում էին ծընկների վրայ։ Հազիւ էր ման գալիս, և շարունակ ախ քաշում և գանգատւում ծիծաղելի անզօրութեամբ։

—Լաւ կլինի մի քիչ շուտ շուտ լողանաս,—ասում էր Նրան Նիկոլայ Պետրովիչը։ Նա մի մեծ, կտաւով ծածկած լողարան էր շինել իր լճակներից մէկի վրայ, ուր դեռ ջուրը չէր ցամաքել։

—Ախ, Նիկոլայ Պետրովիչ, մինչև լճակ գնալս—հոգիս դուրս է գալիս, մինչև դաս—դարձեալ հոգիդ դուրս կգայ։ Ախր պարտիզում շուաք ասած բանդ չկայ։

—Այդ ուղիղ ես ասում, որ շուաք չկայ,—պատասխանում էր Նիկոլայ Պետրովիչը և ունքերը տրորում։

Մի անգամ, առաւօտեան ժամը եօթի մօտերքը, Բազարովը զբօսանքից վերադառնալիս, վաղուց արդէն ծաղկաթափ եղած, բայց դեռ ևս խիտ ու կանաչ մնացած եասամանի զըվանոցում հանդիպեցաւ Ֆենիչկային, որ, ըստ սովորականին սպիտակ ծածկոցը գլխին ձգած, Նստած էր Նստարանի վրայ. Նրա կողքին ածած էր մի ահագին կոյտ կարմիր ու սպիտակ, դեռ ցօղից թաց, վարդ, Բազարովը Նրան բարև տուեց։

—Ա՜, Եւգենիյ Վասիլիչ,—ասաց Ֆենիչկան ու ծածկոցի ծայրը մի քիչ վեր բարձրացրեց, որպէս զի տեսնի Բազարովին, ու այդ անելիս Նրա թևը մինչև արմունկը մերկացաւ։

—Այս ինչ բանի վրայ էք այստեղ,—ասաց Բազարովը Նրա կողքին նստելով,—փունջ էք կապում։

—Այո. Նախաճաշի սեղանի համար։ Նիկոլայ Պետրովիչը սիրում է։

—Բայց մինչև Նախաճաշ դեռ շատ ժամանակ կայ։ Այս ինչքան ծաղիկ է։

—Այժմս քաղեցի, թէ չէ տաքը կ'կոխի ու դուրս գալու ճար չի լինի։ Հիմի է մի քիչ շունչ քաշելու ժամանակը։ Ես այս տօթից բոլորովին թուլացել եմ։ Չհիւանդանայի։

—Ա՞յդ ինչ Նոր բան է։ Հապա զարկերակդ տեսնեմ։— Բազարովը բռնեց Նրա ձեռքը, գտաւ համաչափ խփող զարկ-

երակը, և մինչև անգամ զարկը չհաշուեց էլ։—Հարիւր տարի կապրէք,—ասաց նա բաց թողնելով ձեռքը։

—Հը՞, Աստուած չանի,—բացականչեց Ֆենիչկան։

—Ի՞նչ է, երկար ապրել չէ՞ք ուզում։

—Հարիւր տարի՜։ Մի տատ ունէինք, ութսունհինգ տարեկան էր—այն ինչ տանջանք էր նրա կեանքը։ Սևացած, խուլ, կզացած, շարունակ հազ։ Ինքն իր գլխին ցաւ էր դարձել։ Սա կեա՞նք է։

—Ուրեմն երիտասարդ լինելն աւելի լաւ է։

—Հապա ինչ։

—Ինչո՞վ է լաւ։ Հապա ասացէք ինձ։

—Ինչպէս թէ ինչո՞վ։ Այ հիմա ես երիտասարդ եմ, ինչ ուզեմ կանեմ,—կ'գնամ էլ, կ'գամ էլ, կ'բերեմ էլ, և ոչ ոքին խնդրելու պէտք չունեմ... Սրանից էլ լաւ բա՞ն։

—Բայց ինձ համար մէկ բան է,—հա երիտասարդ եմ եղել, հա՛ ծեր։

—Ինչպէս էք կարողանում ասել, թէ մէկ բան է. այդ ձեր ասածն անկարելի բան է։

—Ինքներդ դատեցէք, Ֆեդոսիա Նիկոլաևնա, ինչի՞ս է իմ երիտասարդութիւնս։ Ապրում եմ մեն-մենակ, մի չո՛ր գլուխս է...

—Այդ բանը ձեր ձեռին չէ՞։

—Հէնց բանն էլ այն է, որ իմ ձեռին չէ է։ Գոնէ լինէր մէկը, որ ինձ խղճար։

Ֆենիչկան աչքի ծայրով նայեցաւ Բազարովին, բայց ոչինչ չասաց։

—Այս ինչ գիրք է ձեռներիդ,—հարցրեց նա մի քիչ լռելով։

—Ա՞յս։ Այս գիտնական, խորունկ գիրք է։

—Եւ դուք դարձեալ սովորում էք։ Չէ՞ք էլ բեզարում։ Կարծում եմ, որ դուք առանց այն էլ արդէն ամեն բան գիտէք։

—Երևի դեռ ամեն բան չգիտեմ։ Հապա փորձեցէք մի քիչ կարդալ։

—Ես դրանից ամենևին բան չեմ հասկանայ։ Ռուսերէ՞ն է,—հարցրեց Ֆենիչկան երկու ձեռքով վերցնելով ծանր կազմած գիրքը։—Ի՞նչ հաստ բան է։

—Ռուսերէն է։

—Մէկ բան է, ոչինչ չեմ հասկանալու։

—Իմ միտքս հո այն չէ որ բան հասկանաք, հապա ուզում եմ ձեր կարդալու միջոցին ձեզ նայել։ Կարդալու ժամանակ ձեր քթի ծայրը շատ սիրուն կերպով շարժւում է։

Ֆենիչկան, որ կամացուկ սկսել էր կապկապելով կարդալ «Կրէօզոտի մասին» յօդուածը, ծիծաղեցաւ ու վէր ցցեց գիրքը... որ նստարանի վրայից սահելով ընկաւ ներքև։

—Ես նոյնպէս սիրում եմ, երբ որ դուք ծիծաղում էք,—ասաց Բազարովը։

—Հերի՛ք։

—Ես սիրում եմ, երբ որ դուք խօսում էք։ Հէնց իմանաս առուակ է խոխոջում։

Ֆենիչկան շուռ տուեց գլուխը։

—Ի՜նչ տեսակ մարդ էք,—ասաց նա մատներով ծաղիկների հետ խաղալով։—Եւ ինչպէս կարող էք ականջ դնել իմ խօսածքին։ Բանի որ դուք այնպիսի՜ խելօք կանանց հետ զրոյցներ էք ունեցել։

—Ախ, Ֆեդոսիա Նիկոլաևնա, հաւատացէք խօսքիս՝—աշխարքիս բոլոր խելօք կանայք ձեր եղունգին չարժեն։

—Բան ասացիք էլի,—շշնջաց Ֆենիչկան ու ձեռները հաւաքեց։

Բազարովը գետնից վերցրեց գիրքը։

—Սա բժշկարան է, ինչո՞ւ ներքև գցեցիք։

—Բժշկարա՞ն,—կրկնեց Ֆենիչկան, և շուռ եկաւ նրան կողմը։—Գիտէ՞ք Ախր ա՛յն օրից, որ այն կաթիլները տուիք, յիշո՞ւմ էք, Միտեաս այնպէս լաւ է քնում որ։ Չգիտեմ, ինչպէս շնորհակալ լինէի ձեզ. շատ լաւ մարդ էք, ճիշտ եմ ասում։

—Իսկապէս որ նայենք պէտք է բժիշկներին վարձատրել,—երգիծանքով նկատեց Բազարովը։—Հո ինքներդ էլ գիտէք, որ բժիշկները շահասէր մարդիկ են լինում։

Ֆենիչկան աչքը ձգեց Բազարովի վրայ. Նրա դէմքի վերևի մասի վրայ ընկած սպիտակաւուն շողքից նրա աչքերն աւելի ևս մութն էին թւում։ Նա չէր իմանում, Բազարովի ասածը հանա՞ք է թէ ուղիղ։

—Թէ որ կուզէք, ինչո՞ւ չէ, ուրախութեամբ...։Մի Նիկոլայ Պետրովիչին հարցնեմ...

—Կարծում էք, թէ փո՞ղ եմ ուզում,—ընդհատեց նրա խօսքը Բազարովը։—Ոչ, փող չէ ձեզանից ուզեցածս։

—Հապա ինչ,—ասաց Ֆենիչկան։

—Ի՛նչ,—կրկնեց Բազարովը։—Հապա իմացէք։

—Որտեղի՞ց կարող եմ իմանալ։

—Ուրեմն ես ինքս կասեմ՝—ուզում եմ... այս վարդերից մէկը։

Ֆենիչկան նորից ծիծաղեց և մինչև անգամ ձեռներն իրար խփեց՝ այնքան ծիծաղելի թուաց նրան Բազարովի ուզածը։ Նա ծիծաղում էր և միևնոյն ժամանակ զգում էր իր ինքնասիրութիւնը շոյուած։ Բազարովը աչքը յառած նրան էր նայում։

—Համեցէք, համեցէք,—ասաց վերջապէս Ֆենիչկան և, կռանալով նստարանի վրան, սկսեց վարդ ջոկել։—Կարմի՞ր կուզէք թէ սպիտակ։

—Կարմիր, ու շատ էլ խոշոր չլինի։

Ֆենիչկան ուղղուեցաւ։

—Ահա, վեր առէք,—ասաց նա, բայց իսկոյն էլ յետ քաշեց երկարացրած ձեռքը, և շրթունքները կծելով, նայեց զովանոցի մուտքին, ապա ականջ դրեց։

—Ի՞նչ կայ,—հարցրեց Բազարովը։—Նիկոլայ Պետրովի՞չն է։

—Ոչ... Նրանք դաշտ գնացին... և ես նրանցից չեմ էլ վախենում... բայց Պաւել Պետրովիչը... ինձ թուաց թէ...

—Թէ ի՞նչ։

—Ինձ թուաց, թէ ն ր ա ն ք այս տեղերքում ման են գալիս։ Ոչ... մարդ չկայ։ Առէք։—Եւ Ֆենիչկան վարդը Բազարովին տուեց։

—Ինչո՞ւ պէտք է Պաւել Պետրովիչից վախենաք։

—Նրանք շարունակ ինձ վախեցնում են։ Որ ասես թէ մի բան ասի—ոչ, բայց նրանց նայուածքը մի ուրիշ տեսակ է։ Հո դուք էլ չէք սիրում նրան։ Մտներդ է, առաջ շարունակ վիճում էիք իրար հետ։ Ես չեմ էլ իմանում, թէ ինչի վրայ էր ձեր վէճը, բայց տեսնում էի, որ դուք նրան այսպէս էլ էիք շուռ տալիս, այնպէս էլ...

Ֆենիչկան ձեռքով ցոյց տուեց, թէ ինչպէս էր իւր կարծիքով Բազարովը շուռ տալիս Պաւել Պետրովիչին։

Բազարովը ժպտաց։

—Իսկ եթէ նա ինձ սկսէր յաղթել,—հարցրեց նա,—իմ կողմը կպահէի՞ք։

—Ի՞նչ իմ խելքիս բանն է ձեր կողմը պահելը, չէ՞, ձեզ հետ գլուխ գալ կարելի չէ։

—Կարծո՞ւմ էք։ Իսկ ես գիտեմ մի ձեռք, որ եթէ ուզենայ, կարող է մի մատով ինձ գլորել։

—Այդ ի՞նչ ձեռք է։

—Չէք իմանում, էլի։ Հապա մի հոտ քաշէք, տեսէք ինչ լաւ հոտ ունի ձեր տուած վարդը։

Ֆենիչկան վիզը մեկնեց ու դէմքը վարդին մօտեցրեց...։ Գլխի թաշկինակը սահեց, ուսերին ընկաւ. երևան եկաւ սև, փայլուն, թեթևակի գզգզուած մազերի կոյտը։

—Սպասեցէք, ուզում եմ ես էլ ձեզ հետ հոտ քաշել,—ասաց Բազարովը, կռացաւ և պինդ համբուրեց բացուած շրթունքները։

Ֆենիչկան ցնցուեց, երկու ձեռքը դէմ տուեց նրա կրծքին, բայց դէմ տուեց թոյլ կերպով, և Բազարովը կարող էր կրկնել ու շարունակել իւր համբոյրը։

Եասամանների ետևից չոր հազ լսուեց։ Ֆենիչկան ական թօթափել հեռացաւ, նստարանի միւս ծայրը գնաց։ Երևաց Պաւել Պետրովիչը, թեթևակի գլուխ տուեց և մի տեսակ զայրագնած թախծութեամբ ասելով «այստե՞ղ էք»—գնաց։ Ֆենիչկան անմիջապէս բոլոր վարդը հաւաքեց և զովանոցից դուրս գնաց։ «Հոգունիրուդ մեղք է, Եւգենիյ Վասիլևիչ» շշնջաց նա հեռանալիս։ Անկեղծ յանդիմանութիւն կար այդ շշունջի մէջ։

Բազարովը մտաբերեց նորերս պատահած մի ուրիշ դէպք, և ամօթ զգաց, և արհամարհական վիշտ։ Բայց նա իսկոյն էլ թօթուեց գլուխը, երգիծանքով շնորհաւորեց իրեն «պաշտօնապէս կնամոլների դասը» մտնելը, և գնաց իւր սենեակը։

Իսկ Պաւել Պետրովիչը դուրս եկաւ պարտիզից և յամրաքայլ հասաւ անտառ։ Նա բաւական երկար մնաց այնտեղ, և երբ որ նախաճաշիկին վերադարձաւ, Նիկոլայ Պետրովիչը հոգածութեամբ հարցրեց, թէ առո՞ղջ է՝—այնքան էր նրա դէմքը մթագնել։

—Գիտես հո, որ երբեմն-երբեմն մաղձի հիւանդութիւնս է դուրս գալիս։

XXIV

Երկու ժամից նա Բազարովի դուռն էր բաղխում։

—Պէտք է ներողութիւն խնդրեմ, որ խանգարում եմ

ձեր գիտական զբաղմունքները,—ասաց նա նստելով պատուհանի մօտ աթոռի վրայ և երկու ձեռքով յենուելով իր գեղեցիկ ձեռնափայտին, որի գլուխը փղոսկրեայ էր (նա սովորաբար առանց ձեռնափայտի էր ման գալիս),—բայց ես ստիպուած եմ խնդրելու, որ ձեր ժամանակից, շատ չեմ ուզում, մի հինգ րոպէ նուիրէք ինձ։

—Իմ բոլոր ժամանակս էլ պատրաստ եմ ձեզ նուիրելու,—պատասխանեց Բազարովը, որի դէմքի վրայով, հէնց որ Պաւէլ Պետրովիչը իր շեմքը ոտք կոխեց, մի բան անցաւ։

—Ինձ հինգ րոպէն էլ հերիք է։ Եկել եմ ձեզ մի հարց տալու։

—Հա՞րց տալու։ Այդ ի՞նչ հարց է։

—Ահաւասիկ, հաճեցէք լսել։ Ձեր այս տունը ոտք դնելու առաջին օրերը, երբ որ ես դեռ ինձ չէի զրկում ձեզ հետ զրոյց անելու հաճոյքից, շատ խնդիրների մասին լսել եմ ձեր դատողութիւնները. բայց որքան յիշում եմ, ոչ մեր մէջ, ոչ էլ իմ ներկայութեամբ երբէք խօսք չէ եղել մենամարտի, դուէլի մասին առհասարակ։ Թոյլ տուէք իմանալ, դուք ի՞նչ կարծիքի էք այդ մասին։

Բազարովը, որ վեր էր կացել Պաւէլ Պետրովիչին ընդառաջ գնալու համար, նստեց սեղանի ծայրին ու ձեռները խաչեց։

—Ահա իմ կարծիքս,—ասաց նա,—վերացական տեսակէտից դուէլը—անհեթեթութիւն է. իսկ գործնական տեսակէտից—դա ուրիշ բան է։

—Այսինքն, ուզում էք ասել, եթէ միայն կարողացայ ձեր միտքը հասկանալ, որ տեսականօրէն ինչ հայեացք էլ ունենալու լինիք դուէլի մասին, իրապէս չէիք թոյլ տալ, որ ձեզ վիրաւորանք հասցնէին, և բաւարարութիւն կպահանջէիք։

—Դուք լիովին հասկացել էք միտքս։

—Շատ լաւ։ Շատ ուրախ եմ այս բանս ձեր բերանից լսելուս։ Ձեր խօսքերը ինձ ազատում են անյայտ դրութիւնից....

—Անվճռական դրութիւնից, ուզում էք ասել։

—Այդ մէկ բան է. ես միտքս այնպէս եմ արտայայտում, որ հասկացուի. ես... թուղթ կրծող մուկ չեմ։ Ձեր խօսքերն ինձ ազատում են մի տխուր անհրաժեշտութիւնից։ Ես վճռել եմ ձեզ հետ մենամարտել։

Բազարովը աչքերը չռեց։

—Ինձ հե՞տ։

—Անպատճառ ձեզ հետ։

—Բայց ի՞նչ բանի՞ համար։

—Կարող էի ձեզ պատճառը բացատրել,—սկսեց Պաւէլ Պետրովիչը։—Բայց աւելի լաւ եմ համարում լռել այդ մասին։ Իմ ճաշակովս դուք այստեղ աւելորդ էք. ես ձեզ տեսնել չեմ կարող, ես ձեզ արհամարհում եմ, և եթէ այսքանս ձեզ հերիք չէ...

Պաւէլ Պետրովիչի աչքերը փայլեցին.... Բազարովի աչքերն էլ բոցավառուեցան։

—Շատ լաւ, ասաց սա։—Ուրիշ բացատրութիւն հարկաւոր չէ։ Քեֆներդ ուզել է ձեր ասպետական ոգին իմ վրա փորձել։ Կարող էի ձեզ այդ հաճոյքը պատճառելուց հրաժարուել, բայց թող այս էլ միւսների հետ գնայ։

—Սրտագին շնորհակալ եմ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը,—և այժմ կարող եմ յուսալ, որ դուք իմ արած մարտահրաւէրս կընդունէք՝ և չէք թողնիլ, որ բռնի միջոցների դիմեմ։

—Այսինքն. առանց այլաբանութեան որ ասելու լինիք, այդ ձեռնափայտի՞ն,—սառնարիւնութեամբ նկատեց Բազարովը։—Բոլորովին ուղիղ է։ Ամենևին կարիք չկայ, որ ինձ վիրաւորէք։ Մանաւանդ որ դա շատ էլ անվտանգ բան չէ։ Կարող էք ջենտըլմէն էլ մնալ.... Ես էլ ջենտըլմէնի նման ընդունում եմ ձեր հրաւէրը։

—Շատ լաւ,—ասաց Պաւէլ Պետրովիչը և ձեռնափայտը անկիւնը դրեց։ Մենք այս րոպէիս մի քանի խօսք կասենք մեր դուէլի պայմանների մասին. բայց առաջ կուզէի իմանալ, արդեօք ձեր կարծիքով հարկաւո՞ր է, որ ձևի համար մի փոքրիկ կռիւ սարքենք, որպէս զի դա ինձ առիթ տայ ձեզ դուէլի կանչելու։

—Ոչ, աւելի լաւ է առանց ձևականութեան լինի։

—Ինքս էլ այդպէս եմ կարծում։ Նոյնպէս անտեղի եմ համարում խորամուխ լինել մեր ընդհարման իսկական պատճառների մէջ։ Մենք իրար տանե՛լ չենք կարողանում։ Ի՞նչ պէտք է ուրիշ բան։

—Ի՞նչ պէտք է ուրիշ բան,—հեգնօրէն կրկնեց Բազարովը։

—Իսկ ինչ կվերաբերուի մենամարտի պայմաններին, քանի որ վկաներ չպիտի ունենանք,—ինչ տեղի՞ց ենք վկայ գտնելու։

—Իսկ որ, ի՞նչ տեղից ենք գտնելու։

—Ուստի և պատիւ ունիմ ձեզ առաջարկելու հետևեալը՝ —կռուի դուրս գալ վաղը, առաւօտեան կանուխ, խօսքի վրայ ժամը վեցին, անտառի ետևը, ատրճանակներով. տասը քայլի վրայ...

—Տասը քայլի. լաւ. մենք այդ տարածութեամբ ենք իրար ատում։

—Կարելի է նաև ութը,—նկատեց Պաւէլ Պետրովիչը։

—Ինչու չէ, կարելի է։

—Ատրճանակ կ'արձակենք երկ-երկու անգամ, իսկ ամեն մէկս, յամենայն դէպս գրպաններումս կունենանք գրած նամակ, որի մէջ մեր մահուան պատճառը մեզ կվերագրենք։

—Այ, ես այդ բանին լիովին համաձայն չեմ, ասաց Բազարովը։—Մի քիչ ֆրանսիական ռոմանի գոյն է ստանում, անհաւանական բան է թւում։

—Գուցէ։ Բայց համաձայնեցէք, որ հաճելի բան չէ հո, որ վրադ մարդասպանութեան կասկած լինի։

—Համաձայնում եմ։ Բայց այդ տխուր մեղադրանքից ազատուելու միջոցը կայ։ Թէպէտ մարտավկաներ չպիտի ունենանք, բայց կարելի է վկայ ունենալ։

—Ո՞վ է այդ վկան, թոյլ տուէք իմանալ։

—Հէնց Պետրը։

—Ի՞նչ Պետր։

—Ձեր եղբօր սենեկապանը։ Նա ժամանակիս կրթութեան բարձրութեան վրայ կանգնած մարդ է, և իւր դերը կ'կատարէ այդպիսի դէպքերում անհրաժեշտ կոմիլֆօ (ինչպէս հարկն է)։

—Ինձ թւում է, որ դուք, մեծապատիւ պարոն, կատակ էք անում։

—Ամենևին։ Որ իմ առաջարկս լաւ քննէք, կհամոզուէք, որ դա շատ խելքի մօտիկ ու պարզ էլ բան է։ Մենամարտը հո դաղտնիք կարող չէ մնալ։ Իսկ Պետրին ինչպէս հարկն է պատրաստելն ու ծեծկուողների տեղը բերելը ես իմ վիզս կառնեմ։

—Դուք շարունակում էք կատակ անել,—աթոռից վեր կենալով ասաց Պաւէլ Պետրովիչը։—Սակայն ձեր տուած սիրալիր պատրաստակամութիւնից յետոյ ես իրաւունք չունեմ ձեզանից դժգոհ լինելու...։ Ուրեմն ամեն ինչ կարգին է...։ Ի դէպ ատրճանակներ չունի՞ք։

—Որտեղի՞ց է ինձ ատրճանակ, Պաւէլ Պետրովիչ։ Ես զինուորական չեմ։

—Ուրեմն կառաջարկեմ իմ ատրճանակներս։ Կարող էք վստահ լինել, որ ահա հինգ տարի կլինի, այդ ատրճանակներս արձակած չեմ։

—Այդ շատ մխիթարական տեղեկութիւն է։

Պաւէլ Պետրովիչը վեր առաւ իւր ձեռնափայտը...։

—Այսպէս, մեծապատիւ պարոն, ինձ մնում է միայն ձեզ շնորհակալութիւնս յայտնել և թողնել, որ դուք վերստին ձեր պարապմունքին դառնաք։ Մնաք բարով։

—Ցհաճելի տեսութիւն, մեծարգոյ տէր իմ,—ասաց Բազարովը հիւրին ճանապարհ դնելով։

Պաւէլ Պետրովիչը դուրս գնաց, իսկ Բազարովը կանգ առաւ դրան առաջը և յանկարծ բացականչեց. «Թիւ, գրողը տանի, ինչ գեղեցիկ և ինչ անմիտ բան։ Այ ինչ կատակերգութիւն էր խաղացածներս։ Հնաւասիկ այսպէս վարժուած շները յետին թաթերի վրայ պար են գալիս։ Բայց մերժել էլ կ'արելի չէր. ով գիտի նա ինձ խփէր էլ, և այն ժամանակ...։ (Բազարովը հէնց միայն այդ մասին միտք անելուց գունատուեց. Նրա ինքնասիրութիւնը տակն ու վրայ եղաւ)։ Այն ժամանակ պիտի բռնէի նրան ու կատուի ձագի նման, խեղդէի»։ Նա նորից ձեռք առաւ իւր մանրադիտակը, բայց սիրտն արդէն պղտորուել էր և հանգիստը, որ հարկաւոր էր դիտողութիւններ անելու համար, անհետացել։ «Նա այսօր տեսաւ մեզ», մտածում էր նա, «բայց միթէ այս բոլորը իւր եղբօր պաշտպանութեան համար էր։ Եւ վերջապէս ի՞նչ մի մեծ բան է որ համբոյրը։ Այստեղ ուրիշ բան պիտի լինի։ Հա՛, չլինի՞ ինքն է սիրահարուած։ Իհարկէ սիրահարուած է. այդ հինգ մատիս պէս պարզ է։ Բայց դու մի տես, թէ ինչ ձև է տալիս բանին...։ Շատ վատ է», վճռեց նա վերջապէս. —«որ կողմից ուզում ես նայիր, շատ վատ բան է։ Նախ պէտք է ճակատ դէմ անես գնդակին, և յամենայն դէպս

պէտք կլինի այստեղից հեռանալ, գնալ, բացի դրանից այստեղ կան նաև Արկադիյն... ու այդ Աստուծու խեղճը, Նիկոլայ Պետրովիչը։ Շատ վատ բան եղաւ, շատ վատ»։

Առանձնապէս խաղաղ և տաղտուկ անցաւ այդ օրը։ Ֆենիչկան հէնց գիտենաս աշխարքիս երեսին չլինէր. քաշուել էր իր սենեակը, ինչպէս մուկն իր ծակը։ Նիկոլայ Պետրովիչը հոգսալից կերպարանք ունէր։ Նրան հաղորդել էին, թէ այն ցորենի մէջ, որի վրայ նա ամենից աւելի յոյս ունէր, ժանգ է երևացել։ Պաւէլ Պետրովիչը իր սառացնող քաղաքավարութեամբ ամենքին, նոյն իսկ Պրոկոֆիչին էլ ճնշում էր։ Բազարովը սկսել էր հօրը նամակ գրել, բայց պատռեց ու սեղանի տակ շպրտեց։ «Որ մեռնեմ—կիմանան էլի», մտածում էր նա, «անենք ես չեմ էլ մեռնի։ Ո՛չ, ես դեռ երկար եմ քաշ գալու այս աշխարքիս երեսին»։ Նա Պետրին պատուիրեց, որ միւս օրը ծէգին իր մօտ գայ, կարևոր գործ կայ։ Պետրը կարծեց, թէ իրեն հետը Պետերբուրգ է տանելու։ Բազարովը ուշ անկողին մտաւ, և բոլոր գիշերը անկարգ երազները տանջեցին նրան...։ Օդինցեւան պտոյտ-պտոյտ էր գալիս առաջը, դա նաև իր մայրն էր. նրա ետևից ման էր գալիս սև բեխաւոր փոքրիկ կատուն, և այդ կատուն՝ Ֆենիչկան էր. իսկ Պաւէլ Պետրովիչը նրան թւում էր մի մեծ անտառի նման, որի հետ բայց և այնպէս պէտք է մենամարտէր։ Ժամը չորսին Պետրը զարթեցրեց նրան։ Բազարովը իսկոյն հագնուեց ու նրա հետ դուրս եկաւ տնից։

Հիանալի, զով առաւօտ էր, մանր, երփներանգ ամպերը խումբ-խումբ ընկել էին բաց պայծառ կապուտակի վրայ. մանրահատ ցօղը շաղ էր ընկած տերևների ու արօտների վրայ, փայլում էր արծաթի նման սարդոստայնի վրայ. թաց, սևացած հողը ասես թէ դեռ պահպանել էր արշալոյսի կարմիր հետքերը, ամբողջ երկնքից թափւում էր արտոյտների երգերը։ Բազարովը հասաւ անտառին, նստեց անտառի փէշին ծառի զովում, և միայն այդ ժամանակ Պետրին յայտնեց, թէ ինչպիսի ծառայութիւն էր սպասում նրանից։ Կրթուած սպասաւորը քիչ էր մնում սրտաճաք լինէր. բայց Բազարովը նրան հանգստացրեց հաւատացնելով, թէ նա ոչ մի բան չպիտի անէր, հապա միայն հեռուն կանգնած մտիկ տայ, և թէ նա դրա համար ոչ մի պատասխանատուութեան չէր ենթարկուելու։ «Մինչդեռ» աւելացրեց նա, «ինքդ մտածիր, թէ ինչպիսի նշանաւոր դեր ունիս կատարելու»։ Պետրը ձեռքերը շարժեց, աչքը ցած ձգեց և, կապ-կանաչ կտրած, թինկը տուեց կեչու ծառին։

Մարյինոյից եկող ճանապարհը պտոյտ էր անում անտառի կողքով. այդ ճանապարհի վրայ երէկուանից նստած փոշուն դեռ ոչ անիւ էր կպել, ոչ ոտք։ Բազարովն ակամայ մտիկ էր տալիս այդ ճանապարհի երկարութեամբ, պոկում էր արօտն ու կծոտում, ու շարունակ էլ ինքն իրան կրկնում. «ինչ յիմարութիւն»։ Առաւօտեան պաղութիւնից նա մի երկու անգամ ցնցուեցաւ...։ Պետրը թախծութեամբ նայեց նրան, բայց Բազարովը միայն քմծիծաղեց՝—նա չէր վախենում։

Ճանապարհի կողմից ձիու ոտների ձայն լսուեց...։ Ծառերի ետևից մի գիւղացի երևաց։ Նա իր առաջից քշում էր բխոված երկու ձի և, Բազարովի մօտից անցնելիս, առանց գլխարկը հանելու, տարօրինակ կերպով նայեցաւ նրան. ըստ երևութին այս բանը, իբր վատ նշան, շփոթեցրեց Պետրին։ «Ա՛յ, այս մարդն էլ է վաղ վերկացել», մտածեց Բազարովը, «բայց գոնէ մի բանի է, իսկ մենք...»։

—Կարծես թէ գալիս են,—շշնջաց յանկարծ Պետրը։

Բազարովը գլուխը բարձրացրեց ու տեսաւ Պաւէլ Պետրովիչին։ Ցանցանկար բարակ պինջակ ու ձիւնի պէս սպիտակ վարտիկ հագած, նա արագ արագ ճանապարհով առաջ էր գալիս. թևի տակին ունէր կանաչ մահուդով փաթաթած մի արկղ։

—Ներեցէք, կարծեմ ձեզ մի քիչ սպասել տուի,—ասաց նա գլուխ տալով առաջ Բազարովին, ապա Պետրին, որի անձնաւորութեան մէջ նա այդ րոպէին յարգում էր որպէս մարտավկայի պէս մի բան։—Չուզեցի իմ սպասաւորիս զարթացնել։

—Վնաս չունի,—պատասխանեց Բազարովը,—մենք ինքներս էլ հէնց նոր ենք եկել։

—Հա՛մ, աւելի լաւ։—Պաւէլ Պետրովիչը չորս կողմը նայեցաւ։—Մարդ չի երևում, ոչ ոք չի խանգարիլ...։Կարող ենք սկսել։

—Սկսենք։

—Կարծում եմ ուրիշ բացատրութիւն չէք պահանջիլ։

—Չեմ պահանջում։

—Կհաճէ՞ք ինքներդ լցնելու,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը արկղի միջից ատրճանակները հանելով։

—Ոչ, ինքներդ լցրէք, իսկ ես տեղը կչափեմ։ Իմ ոտներըս աւելի երկար են,—աւելացրեց Բազարովը հեգնութեամբ։—Մէկ, երկու, երեք....

—Եւգենիյ Վասիլյիչ,—դժուարութեամբ թոթովեց Պետրը (նա ամբողջ մարմնով դանկր-դանկր դողում էր),—ինչ ուզում էք արէք, ես կհեռանամ։

—Չորս...հինգ...։ Հեռացիր, եղբայր, հեռացիր. մինչև անգամ կարող ես ծառի ետեւ մտնել ու ականջներդ էլ խցել, միայն աչքերդ չփակես. իսկ թէ որ մէկն ու մէկը վէր ընկնի, վազիր վերցրու։ Վեց... եօթը...ութը...։—Բազարովը կանգ առաւ։—Բաւական է,—ասաց նա Պաւէլ Պետրովիչին դառնալով,—թէ՞ մի երկու քայլ էլ աւելացնեմ։

—Ինչպէս ուզում էք,—ասաց սա երկրորդ գնդակն ամբացնելով ատրճանակի փողի մէջ։

—Է՛հ, թող երկու քայլ էլ աւելի լինի։—Բազարովը կօշիկի քթովը գետնի վրայ խազ քաշեց։—Ահա սահմանը։ Ի դէպ սահմանից քանիական քայլ պէտք է հեռանանք։ Սա էլ կարեւոր խնդիր է։ Երէկ այս մասին խօսք չեղաւ։

—Կարծում եմ տասը քայլ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը՝ երկու ատրճանակներն էլ Բազարովին տալով։—Հաճեցէք ընտրել։

—Հաճում եմ։ Բայց համաձայնեցէք, Պաւէլ Պետրովիչ, որ ծիծաղելու չափ տարօրինակ է մեր մենամարտը։ Հապա դուք մի մեր վկայի դէմքին մտիկ տուէք։

—Դուք չարունակ կատակ էք ուզում անել,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը։—Ես մեր մենամարտի տարօրինակ եղածը չեմ մերժում, բայց պարտաւորութիւնս եմ համարում ձեզ զգուշացնելու, որ ես մտադիր եմ լրջօրէն մենամարտել։ A bon entendeur, salut!

—Ո՛հ, ամենեւին չեմ կասկածում, որ մենք վճռել ենք ոչնչացնել միմեանց. բայց ինչու չծիծաղենք և utile dulci? օգտակար-հաճելիի հետ չմիացնենք։ Ահա այսպէս՝—դուք ինձ ֆրանսերէն կասէք, իսկ ես—լատիներէն։

—Ես լրջօրէն պիտի կռուեմ,— կրկնեց Պաւէլ Պետրովիչը, և իր տեղը գնաց։ Բազարովն էլ սահմանագծից հաշուեց մի տասը քայլ ու կանգնեցաւ։

—Պատրաստ էք,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Բոլորովին։

—Կարող ենք մօտենալ։

Բազարովը կամացուկ առաջ գնաց, և Պաւէլ Պետրովիչն էլ, ձախ ձեռքը գրպանը դրած և կամաց կամաց ատրճանակի փողը բարձրացնելով, նրա վրայ շարժուեցաւ...։ «Ուղիղ քթիս է նշան առնում», մտածեց Բազարովը. «և ինչպիսի՜ խընամքով է կկոցում աչքերը, աւազակը։ Խոստովանանք լինի, փիս զգացողութիւն է։ Եկ ես էլ սկսեմ նրա ժամացոյցի շըղթային մտիկ տալ...։» Մի բան սուր կերպով փշշաց Բազարովի ականջի մօտ, և նոյն բոպէին ատրճանակի պայթոցը լըսուեց։—«Լսեցի, ասել է թէ վնաս չկայ», խելքն անցաւ Բազարովի մտքովը։ Նա մի քայլ էլ արաւ և առանց նշան առնելու հուպ տուեց զսպանակը։

Պաւէլ Պետրովիչը թեթեակի ցնցուեց և ձեռքը ազդրին տարաւ։ Արիւնը բարակ հոսանքով ծոր տուեց նրա սպիտակ վարտիքի վրայ։

Բազարովը ատրճանակը մի կողմ ձգեց ու մօտ գնաց իր հակառակորդին։

—Վիրաւորուեցա՞ք,—ասաց նա։

—Դուք իրաւունք ունէիք պահանջելու, որ ես սահմանի վրայ լինիմ կանգնած,—ասաց Պաւէլ Պետրովիչը.—իսկ սա—ոչինչ բան է։ Ըստ պայմանի իրաւունք ունինք մի-մի անգամ էլ արձակելու։

—Է՛, այդ արդէն, թողութիւն կանէք, ուրիշ անգամուայ կմնայ,—պատասխանեց Բազարովը և ձեռքը ձգեց Պաւէլ Պետրովիչի մէջքին, որ արդէն սկսել էր գունատուել։—Այժմս արդէն ես մենամարտող չեմ, հապա բժիշկ, և ամենից առաջ պէտք է ձեր վէրքը նայեմ։ Պետր, այստեղ արի, Պետր, ուր ես կորել։

—Ոչինչ բան է...։ Ես ոչ ոքի օգնութեան կարօտ չեմ,—ծանր-ծանր ասաց Պաւէլ Պետրովիչը,—և... պէտք է... մէկ էլ...։—Նա ուզում էր ձիգ տալ իր բեխը, բայց ձեռքը թուլացաւ, աչքերը փակուեցան, և նա ուշագնաց եղաւ։

—Ա՛յ քեզ բան։ Ուշագնաց եղաւ։ Մի ասող լինի, ինչ կայ ուշագնաց լինելու,—ակամայ բացականչեց Բազարովը՝ Պաւէլ Պետրովիչին արօտի վրայ պառկեցնելով։—Տեսնենք ինչ է եղել։—Նա թաշկինակը հանեց, արիւնը սրբեց, վէրքի չորս կողմը շօշափեց...։ Ոսկորը անվնաս է,—մրթմրթում էր

նա քթի տակ,— ցնցակը երեսանց ծակել է միսը. միւս կողմից դուրս եկել, մենակ vastus externus միայն է վնասուել: Երեք շաբաթից թէ կուզ պար արի...: Որ ասես ուշագնաց լինելու բան չկար: Ա՛խ այս նեարդային մարդիկը: Մտիկ տուր, ինչ նուրբ կաշի ունի:

—Սպանուել են,—շշնջաց նրա քամակին Պետրի դողդող ձայնը:

Բազարովը ետեւ դարձաւ:

—Ախպեր ջան, դու շուտով գնա ջուր բեր. նա դեռ ինձանից էլ, քեզանից էլ շատ կապրի:

Բայց լուսաւորուած սպասաւորն ասես թէ նրա ասածը չէր հասկանում ու տեղից չէր շարժւում: Պաւէլ Պետրովիչը դանդաղաբար բաց արաւ աչքերը: «Մեռնում է», շշնջաց Պետրն ու սկսեց երեսը խաչակնքել:

—Իրաւունք ունիք... Ինչ յիմար կերպարանք է,—բռնազբօսիկ ժպիտով ասաց վիրաւոր ջենտլմէնը:

—Անպիտան, դէ գնա ջուր բեր,—կանչեց Բազարովը:

—Հարկաւոր չէ... Սա րոպէական vertige էր միայն...: Օգնեցէք, նստեմ... այ այսպէս...: Հերիք է, որ այս սկրթուածքը մի բանով կապենք, և ես ոտով կգնամ տուն, կամ թէ չէ կարելի է նորից կառք ուղարկել: Մենամարտը, եթէ կը հաճէք, չենք վերսկսիլ: Դուք ազնուաբար վարուեցաք... այսօր, նկատեցէք—այսօր:

—Հարկ չկայ անցեալը յիշելու, —պատասխանեց Բազարովը,—իսկ ինչ վերաբերում է ապագային, դրա վրայ էլ չարժէ երկար գլուխ մաշել, որովհետև ուզում եմ անմիջապէս ծլկուել: Թողէք այժմ ձեր ոտքը կապեմ. վէրքը վտանգաւոր չէ, բայց էլի լաւ է արիւնը դադարեցնենք: Բայց նախ և առաջ պէտք է այս մահկանացուին սթափեցնել:

Բազարովը թօթուեց Պետրի օձիքն ու նրան կառքի ղրկեց:

—Տես, եղբօրս չվախեցնես,—ասաց նրան Պաւէլ Պետրովիչը,—նրան բան չասես:

Պետրը սլացաւ. և մինչ նա վազում էր կառք բերելու, երկու հակառակորդները լուռ նստած էին գետնին: Պաւէլ Պետրովիչն աշխատում էր Բազարովին չնայել. բայց էլի չէր ուզում նրա հետ հաշտուել. նա ամաչում էր իր կռուասիրութիւնից, իր պարտութիւնից, ամաչում էր իր այդ բոլոր

արարմունքից, թէև զգում էր, որ դա աւելի լաւ կերպով կարող չէր վերջանալ: «Գոնէ այստեղ ցից եղած չի լինիլ»—մխիթարում էր նա ինքն իրեն. «այդքանից էլ գոհ եմ»: Ծանր, անյարմար լռութիւնը շարունակւում էր: Երկուսն էլ լաւ դրութեան մէջ չէին: Երկուսն էլ գիտէին, որ միւսը իր միտքը հասկանում է: Բարեկամների համար այդ բանը հաճելի է, բայց շատ անհաճելի է ոսոխների համար, մանաւանդ երբ ոչ բացադրութիւն տալ կարելի է, ոչ էլ իրարից բաժանուել:

—Հո ոտներդ պինդ չեմ կապել,—վերջապէս հարցրեց Բազարովը:

—Ոչ, ոչինչ, շատ լաւ է,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը և, մի քիչ յետոյ, աւելացրեց.—եղբօրս կարող չենք խաբել, պէտք է ասել, որ քաղաքական խնդրի պատճառով ենք կռուել:

—Շատ բարի,—ասաց Բազարովը:—Կարող էք ասել, որ ես բոլոր անգլիասէրներին անարգեցի:

—Եւ շատ էլ լաւ կլինի: Ի՛նչ էք կարծում, ինչ է մըտածում մեր մասին այս մարդը,—շարունակեց Պաւէլ Պետրովիչը ցոյց տալով այն գիւղացուն, որը մենամարտից մի քանի րոպէ առաջ Բազարովի մօտով քշել, տարել էր ոտները կապած ձիերը, և այժմ ճանապարհով յետ դառնալիս «աղաներին» տեսել, ու գլխարկն հանել, գլուխ էր տուել:

—Ես ինչ գիտեմ,—պատասխանեց Բազարովը.—ամենից հաւանականն այն է, որ ոչինչ չի մտածում: Ռուս գիւղացին այն խորհրդաւոր անծանօթն է, որի մասին մի ժամանակ այնքան երկար խօսել է տիկին Ռատկլիֆֆը: Ո՞վ կարող է հասկանալ: Նա ինքն էլ իրեն չի հասկանում:

—Հ՛ը, այդպէս էք կարծում,—սկսեց Պաւէլ Պետրովիչը և յանկարծ բացականչեց.—մ՛, մտիկ տուէք, ինչ է արել ձեր յիմար Պետրը: Եղբայրս սրարշաւ այստեղ է գալիս:

Բազարովը ետևը դարձաւ և տեսաւ Նիկոլայ Պետրովիչին կառքի մէջ, գոյնը սպրտնած: Դեռ կառքը չկանգնած նա ցած թռաւ ու դէպի եղբայրը վազ տուեց:

—Այս ինչ բան է,—ասաց նա յուզուած ձայնով.—այս ինչ բան է, Եւգենիյ Վասիլյիչ:

—Ոչինչ չկայ,—պատասխանեց Պաւէլ Պետրովիչը,—ի-

դուր քեզ անհանգիստ են արել։ Մենք պարոն Բազարովի հետ մի փոքր կռիւ ունեցանք և ես դրա համար մի փոքր պատժուեցայ։

—Եւ ինչի՞ց ծագեցաւ դա, ի սէր Աստուծու։

—Ինչպէս ասեմ։ Պարոն Բազարովը սէր Ռոբերտ Պիլի մասին անարգանքով խօսեց։ Շտապեմ աւելացնելու, որ այս բոլոր եղածի մէջ մեղաւորը մենակ ես եմ, իսկ պարոն Բազարովը իրեն շատ լաւ պահեց։ Ես եմ նրան մարտի կոչել։

—Բայց քու վրադ արիւն կայ։

—Ի՜նչ է, կարծում էիր իմ երակիս մէջ ջո՞ւր է հոսում։ Ասենք այս արիւն առնելն ինձ օգուտ էլ է։ Այնպէս չէ՞, բժիշկ։ Օգնիր ինձ կառք նստելու և մելամաղձութեան մէջ ընկնել պէտք չէ։ Վաղը առողջ կլինեմ։ Ա՛յ, այսպէս, շատ լաւ։ Քշիր, կառապան։

Նիկոլայ Պետրովիչը ոտքով կառքի ետևից գնաց։ Բազարովն ուզում էր ետ մնալ։

—Պէտք է ձեզ խնդրեմ, որպէս զի մինչև քաղաքից բժիշկ գալը դուք նայէիք եղբօրս,—ասաց նրան Նիկոլայ Պետրովիչը։

Բազարովը լուռ գլուխը խոնարհեց։

Մի ժամ անց, Պաւէլ Պետրովիչն արդէն ոտքը հմուտ կերպով կապուած, պառկել էր անկողնի մէջ։ Բոլոր տունը տակն ու վրայ էր եղել։—Ֆենիչկայի սիրտն էր անցել։ Նիկոլայ Պետրովիչը ծածուկ ձեռքի ոսկրներն էր ջարդոտում, իսկ Պաւէլ Պետրովիչը ծիծաղում էր, հանաքներ անում, մանաւանդ Բազարովի հետ. նա հագել էր բատիստէ բարակ շապիկ, առաւօտեայ շքեղ կապան ու ֆասը, չէր թողնում, որ պատուհանների վարագոյրները բաց թողնեն, և զուարճալի կերպով գանգատւում էր, որ ստիպուած էր կերակրեղէնից զրկուել։

Սակայն գիշերը վրան տաքութիւն եկաւ. գլուխը ցաւեց։ Քաղաքից բժիշկ եկաւ։ (Նիկոլայ Պետրովիչը ականջ չդրեց եղբօր ասածին, հէնց Բազարովը ինքն էլ այդ չէր ուզում. նա ամբողջ օրը, դեղնած ու ժանտ դէմքով, նստած էր իր սենեակում և միայն շատ կարճ միջոցով գնում էր հիւանդի մօտ, մի երկու անգամ հանդիպեցաւ Ֆենիչկային, բայց սա սարսափահար յետ էր ընկրկում)։ Նոր բժիշկը խորհուրդ տուեց գործ ածել զովարար խմիչքներ, սակայն նա էլ հաստատեց Բազարովի ասածը, թէ ոչինչ վտանգ չկայ։

Նիկոլայ Պետրովիչը նրան ասաց, որ եղբայրը անզգուշութեամբ ինքն է իրեն վիրաւորել, որին բժիշկը պատասխանեց՝—«Հմ»—, բայց իսկոյն էլ մի 25 ռուբլիանոց ստանալով, ասաց. «Հա՛. այդպիսի բան յաճախ է պատահում, ճիշտ որ»։

Գիշերը ոչ ոք ոչ պառկեց և ոչ էլ հանուեց։ Նիկոլայ Պետրովիչը շարունակ մատների վրայ մտնում էր եղբօր մօտ և մատների վրայ էլ դուրս գալիս։ Պաւէլ Պետրովիչը շատ անգամ մոռանում էր ու թեթևակի տնքում, նրան ֆրանսերէն ասում՝ „coucher-vous,“(պառկեցէք)—և խմելու բան էր խնդրում։ Մի անգամ Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկային ստիպեց, որ բաժակով լիմոնադ տայ նրան. Պաւէլ Պետրովիչը աչքերը յառած նայեց նրան, և ամբողջ բաժակը մինչև տակը դատարկեց։ Առաւօտեան դէմ տաքութիւնը փոքր-ինչ աւելացաւ և հիւանդը սկսաւ թեթևակի զառանցել։ Պաւէլ Պետրովիչը սկիզբները անկապ խօսքեր էր արտասանում. յետոյ յանկարծ բաց արաւ աչքերը. և, եղբօրը տեսնելով իր անկողնի մօտ, որ հոգածութեամբ իւր վրայ էր խոնարհած, ասաց.—այնպէս չէ՞, Նիկոլայ, որ Ֆենիչկան ընդհանուր նմանութիւն ունի Նելլիի հետ։

—Ի՞նչ Նելլի, Պաշա։

—Ինչպէ՞ս թէ ինչ Նելլի։ Իշխանուհի Ռ... ն. Մանաւանդ դէմքի վերի մասը։ C'est de la même famille. (միևնոյն ընտանիքից է)։

Նիկոլայ Պետրովիչը ոչինչ չպատասխանեց, բայց ինքն իրեն մտածեց, թէ ինչքա՜ն երկարատև են լինում մարդկանց մէջ հին զգացողութիւնները՝ «Տես, երբ երևան եկա՜ւ», մըտածեց նա։

—Ո՛հ, ինչպէս սիրում եմ այդ դատարկ էակին,—հառաչեց Պաւէլ Պետրովիչը, թախծութեամբ ձեռները գլխի ետևը ձգելով։—Ես չեմ կարող թոյլ տալ, որ պրտկերեսին մէկը յանդգնի կպչել...,—թոթովեց նա մի քիչ յետոյ։

Նիկոլայ Պետրովիչը միայն հառաչեց. նա չէր էլ կասկած տանում, թէ ումն էին վերաբերում այդ խօսքերը։

Միւս օրը, ժամը ութին Բազարովը եկաւ Նիկոլայ Պետրովիչի մօտ։ Նա արդէն իր իրերը կապել-կապկպել էր և իւր բոլոր գորտերը, միջատները և թռչունները բաց թողել։

—Մնաս բարովի՞ էք եկել,—ասաց Նիկոլայ Պետրովիչը՝ նրան դիմաւորելու համար տեղից վեր կենալով։

—Շատ ճիշտ է։

—Ես ձեր վարմունքը հասկանում եմ, և հաւանում եմ։ խեղճ եղբայրս, իհարկէ, մեղաւոր է, և դրա համար էլ իր պատիժն ստացաւ։ Նա ինքն ասաց ինձ, թէ ձեզ այնպիսի դրութեան մէջ է դրել, որ դուք այլապէս վարուել չէիք կարող։ Հաւատացած եմ, որ կարող չէիք խուս տալ այդ մենամարտից, որ… որը որոշ չափով բացատրւում է լոկ այն հակառակութեամբ, որ կար ձեր հայեացքների մէջ։ (Նիկոլայ Պետրովիչը այս անելիս շփոթւում, բառերը չէր գտնում։ Եղբայրս հինուց մարդ է, դիւրագրգիռ և յամառ…։ Էլի փառք Աստուծոյ, որ բանն այսպէս վերջացաւ։ Ես, ինչ որ հարկաւորն է, արել եմ, որպէսզի ձայնը դուրս չգայ…։

—Ես ձեզ կտամ իմ հասցէս. գուցէ բան պատահի, հարկաւոր լինի,—անհոգ կերպով նկատեց Բազարովը։

—Յոյս ունիմ, որ ոչինչ չի պատահիլ, Եւգենի Վասիլյիչ…։ Շատ ցաւում եմ, որ ձեր այստեղ մնալը այսպէս… այսպիսի վախճան ունեցաւ։ Սա աւելի ևս ինձ վիշտ է պատճառում նրա համար, որ Արկադին…։

—Ես երևի նրա հետ կտեսնուեմ,—պատասխանեց Բազարովը, որին այսպիսի «բացատրութիւններն» ու «վշտակցութիւնները» անհամբերութեան զգացմունք էին պատճառում.—իսկ եթէ ոչ, խնդրում եմ, բարևէք նրան և ընդունէք իմ վշտակցութիւնս։

—Ես էլ խնդրում եմ…,—գլուխ տալով պատասխանեց Նիկոլայ Պետրովիչը։ Բայց Բազարովը նրա խօսքի վերջին չսպասեց ու դուրս գնաց։

Պաւէլ Պետրովիչն իմանալով, որ Բազարովը գնալու է, ցանկութիւն յայտնեց նրան տեսնելու, և նրա ձեռքը սեղմեց։ Բայց Բազարովն այս անգամ էլ սառցի նման սառն էր. նա հասկացաւ, որ Պաւէլ Պետրովիչն ուզում էր մեծահոգութիւն ցոյց տալ։ Ֆենիչկայի հետ չկարողացաւ բարով մնաս անել՝—միայն պատուհանից իրար նայեցան։ Նրան թուաց, թէ Ֆենիչկայի դէմքը տխուր էր։ «Երևի կ'կորչի», ասաց նա ինքն իրեն…։ «Դէհ, մի կերպ դուրս կպրծնի»։ Մինչդեռ Պետրը այն աստիճան զգացուեցաւ, որ գլուխը նրա ուսին դրած լաց էր լինում, մինչև որ Բազարովը նրան չդադարեցրեց հարցնելով. «Աչքդ հո աղբիւր չէ», իսկ Դունեաշան հօ, իր յուզմունքը ծածկելու համար ստիպուած էր անտառ

փախչել։ Բազարովը, որ այս բոլոր վշտի պատճառն էր, բարձրացաւ կառքը, ծխախոտ կպցրեց, և երբ որ չորս վերստ անցնելուց յետոյ, ճանապարհի պտոյտքին, վերջին անգամ նրա աչքովն ընկաւ մի շարքի վրայ ձգուած Կիրսանովի ագարակն և նրա նորաշէն բնակարանի շէնքը, նա միայն թքեց ու «անիծեալ ազնուականներ» ասելով աւելի պինդ փաթաթուեց իր վերարկուի մէջ։

Շուտով Պաւէլ Պետրովիչի դրութիւնը թեթևացաւ. բայց հարկադրուած էր մէկ շաբաթի չափ անկողնի մէջ մնալ։ Նա բաւական համբերութեամբ էր տանում իր, ինչպէս ինքն էր ասում, գ ե ր ո ւ թ ի ւ ն ը, միայն խիստ հոգս էր տանում իր արդ ու զարդի վրայ ու շարունակ պատուիրում էր, որ օդեկոլոն սրսկեն տան մէջ։ Նիկոլայ Պետրովիչը ամսագրներ էր կարդում նրա մօտ, Ֆենիչկան առաջուայ նման ծառայում էր նրան, բերում էր բուլիօն, լիմոնադ, թերխաշ ձու, թէյ. բայց ամէն անգամ, որ նա մտնում էր Պաւէլ Պետրովիչի սենեակը, գաղտնի սարսափ էր ընկնում վրան։ Պաւէլ Պետրովիչի անակնկալ վարմունքը տանը եղողներին ամենքին էլ վախեցրել էր, իսկ Ֆենիչկային հօ՝ ամենքից աւելի. մենակ Պրոկոֆիչն էր, որ չէր շփոթուել և պատմում էր, թէ առաջներն էլ էին աղաները շատ անգամ կռւում, բայց միայն ազնիւ աղաներն էին կռւում իրար հետ, իսկ այսպիսի թոկից փախածներին, նրանց կոպիտ վարմունքի համար, պատուիրում էին տանել ախոռ ու ծեծ քաշել»։

Ֆենիչկայի խիղճը համարեա թէ չէր խայթում. բայց ժամանակ առ ժամանակ տանջւում էր մտածելով, թէ կռուի իսկական պատճառն ինքն է. մէկ էլ որ Պաւէլ Պետրովիչը խիստ տարօրինակ աչքով էր մտիկ տալիս իրեն…, այնպէս որ, մինչև անգամ մէջքը նրան դարձրած միջոցին անգամ զգում էր նրա հայեացքը։ Ներքին անդադար յուզմունքից Ֆենիչկան նիհարեցաւ և ինչպէս սովորաբար լինում է, աւելի սիրունացաւ։

Մի անգամ,—առաւօտեան էր,—Պաւէլ Պետրովիչն իրան լաւ էր զգում ու անկողինը թողեց, բազկաթոռի մէջ նստաւ. Նիկոլայ Պետրովիչը նրա առողջութիւնը հարցնելուց յետոյ, բալ էր գնացել։ Ֆենիչկան բաժակով թէյը բերեց ու, սեղանի վրայ դնելուց յետոյ, ուզում էր գնալ։ Պաւէլ Պետրովիչը նրան չթողեց։

—Այդ ո՞ր էք այդպէս շտապում, Ֆեդոսիա Նիկոլաևնա,—սկսեց նա,—ի՞նչ է, գո՞րծ ունիք։

—Ոչ...։ Պէտք է թէյ անեմ։

—Առանց ձեզ Դունիաշան էլ կարող է այդ բանն անել. եկէք, փոքր-ինչ հիւանդի մօտ նստէք։ Ի դէպ ձեզ հետ խօսելիք ունեմ։

Ֆենիչկան անձայն նստեց բազկաթոռի ծայրին։

—Վաղուց է ուզում էի ձեզ հարցնել,—ասաց Պաւէլ Պետրովիչը իւր բեխի ծայրը ձիգ տալով,—կարծես թէ դուք ինձանից վախենում էք։

—Ե՞ս...։

—Այո դուք։ Երբէք երեսիս ուղիղ չէք նայում. ասես թէ ձեր խիղճը մաքուր չլինի։

Ֆենիչկան կարմրեցաւ, բայց նայեցաւ Պաւէլ Պետրովիչի երեսին։ Պաւէլ Պետրովիչը նրան մի տեսակ տարօրինակ երեւաց, և սիրտը իւր կրծքի մէջ կամացուք թրթռաց։

—Խիղճներդ մաքո՞ւր է հո,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Ինչու չպիտի մաքուր լինի որ,—շշնջաց Ֆենիչկան։

—Ի՞նչ պատճառ կայ։ Բայց ո՞ւմ առաջը կարող էք դուք մեղաւոր լինել։ Ի՞մ առաջս։ Այդ անհաւանական բան է։ Այստեղ տան մէջ եղող ուրիշ անձերի առաջ։ Այդ էլ չլինելու բան է։ Հա, գուցէ եղբօրս առաջ։

—Բայց դուք նրան հօ սիրո՞ւմ էք։

—Սիրում եմ։

—Բոլո՞ր հոգով, բոլո՞ր սրտով։

—Ես բոլոր հոգովս սիրում եմ Նիկոլայ Պետրովիչին։

—Ուղի՞ղ։ Հապա մի ինձ մտիկ տուէք, Ֆենիչկա (առաջին անգամ էր, որ նրան այդպէս էր անուանում...)։ Գիտէք հօ—սուտ ասելը մեծ մեղք է։

—Ես սուտ չեմ ասում, Պաւէլ Պետրովիչ։ Որ Նիկոլայ Պետրովիչին էլ սիրելու չլինեմ, էլ ո՞ւր եմ ապրում աշխարքիս վրայ։

—Եւ ոչ ոքի հետ չէ՞ք փոխիլ նրան։

—Ո՞ւմ հետ կարող եմ նրան փոխել։

—Ի՞նչ մարդ կայ։ Հէնց ասենք այն պարոնի հետ, որ այստեղից գնաց։

Ֆենիչկան վեր կացաւ տեղից։

—Տէր Արարիչ Աստուած, ինչի՞ է այս ինձ տանջածներդ,

Պաւէլ Պետրովիչ։ Ի՞նչ եմ արել ձեզ։ Ինչպէ՞ս կարելի է մի այդպիսի բան ասել...։

—Ֆենիչկա, տխուր ձայնով ասաց Պաւէլ Պետրովիչը,—ախր ես տեսայ...։

—Ի՞նչ տեսաք...

—Այնտեղ... ցուլանոցում։

Ֆենիչկան մինչև մազերի արմատը, մինչև ականջի տակը կարմրատակեցաւ։

—Ես ի՞նչ մեղք ունեմ,—հազիւ հազ կարողացաւ ասել նա։

Պաւէլ Պետրովիչը մի փոքր վերկացաւ տեղից։

—Մեղք չունի՞ք։ Չէ՞։ Ամենևի՞ն։

—Աշխարքիս երեսին ես միմիայն Նիկոլայ Պետրովիչին եմ սիրում, և մինչև մահս էլ պիտի սիրեմ,—յանկարծական սաստկութեամբ ասաց Ֆենիչկան, մինչ հեծկլտոցը եկել խեղդել էր կոկորդը։—Իսկ այն որ տեսել էք, ես այն կեանքում կասեմ, որ այդտեղ մեղք չեմ ունեցել, չունեմ, ու լաւ է, որ հէնց այս րոպէիս գետինը պատռուի, սաղ-սաղ մէջը գնամ, քանց թէ այդպիսի կասկած լինի վրաս, ու ես իմ բարերարիս, Նիկոլայ Պետրովիչի առաջ...

Բայց այստեղ ձայնը նրան դաւաճանեց, և միևնոյն ժամանակ էլ զգաց, որ Պաւէլ Պետրովիչը քաշեց իւր ձեռքն ու հուպ տուեց...։ Ֆենիչկան մտիկ տուեց նրա երեսին ու ապուշ կտրեցաւ։ Պաւէլ Պետրովիչը առաջուանից էլ աւելի սպրդնած էր. աչքերը փայլում էին և ամենից զարմանալին այն էր, որ արտասուքի խոշոր, մեն-մենակ մի կաթիլ երեսի վրայով ցած էր գլորւում։

—Ֆենիչկա,—ասաց նա մի տեսակ շշունչով,—սիրեցէք, սիրեցէք եղբօրս։ Շատ բարի, շատ պատուական մարդ է։ Աշխարքիս երեսին ոչ մի մարդու համար չդաւաճանէք նրան, ոչ-ոքի ասածներին մտիկ չանէք։ Մէկ միտք արէք, թէ ինչ սարսափելի բան է սիրել, և սէր չստանալ։ Երբէք չթողնէք իմ խեղճ Նիկոլայիս։

Ֆենիչկայի աչքերը ցամաքեցան և վախն էլ անցաւ,—այնքան մեծ եղաւ նրա զարմանքը։ Բայց ի՞նչ զգաց նա, երբ որ Պաւէլ Պետրովիչը, Պաւէլ Պետրովիչն ինքը նրա ձեռքը իւր շրթունքներին հուպ տուեց, և այդպէս էլ, առանց համբուրելու, կպած մնաց, ու միայն հազիւ երբեմն ջղաձգաբար հոգոց էր հանում...։

«Տէր ողորմեա», մտածեց Ֆենիչկան, «հիւանդութեան գրգիռ չէ»։

Իսկ այդ միջոցին մի ամբողջ կորած կեանք շարժուել էր Պաւէլ Պետրովիչի մէջը։

Արագ քայլերից աստիճանները ճռնչացին...։ Պաւէլ Պետրովիչը հրեց, հեռացրեց իրանից Ֆենիչկային, և գլուխը յետ դցեց բարձի վրայ։ Դուռը բացուեց և երևաց Նիկոլայ Պետրովիչը ուրախ, զուարթ, կարմրած։ Միտեան, նոյնպէս հօր նման զուարթ ու կարմրած, շապիկով թռչկոտում էր նրա կրծքի վրայ ու մերկ ոտները դէմ տալիս նրա գիւղական վերարկուի խոշոր կոճակներին։

Ֆենիչկան վազեց դէպի նա ու ձեռներով նրան ու որդուն փաթաթուելով գլուխը դրեց Նիկոլայ Պետրովիչի ուսին։ Սա զարմացաւ, որովհետև ամօթխած ու համեստ Ֆենիչկան երբէք ուրիշի առաջ գգուանք չէր արտայայտում։

—Այս ինչ է եղել քեզ,—ասաց նա և, եղբօրը նայելով։ Միտեային տուեց Ֆենիչկայի գիրկը.—հիւանդութիւնդ հօ չի ծանրացել,—հարցրեց նա Պաւէլ Պետրովիչին մօտ գալով։

Պաւէլ Պետրովիչը դէմքը թաքցրեց բատիստէ թաշկինակի մէջ։

—Ոչ...այնպէս... ոչինչ չկայ...։ Ընդհակառակն, աւելի լաւ եմ այժմ։

—Ի զուր ես շտապել, անկողինը թողած բազկաթոռի մէջ նստել։ Ո՞ւր ես գնում, աւելացրեց Նիկոլայ Պետրովիչը Ֆենիչկային դառնալով. բայց սա արդէն իր ետեից թրխկացրեց դուռը։—Ես եկել էի, որ իմ հսկային քեզ ցոյց տամ. նա արդէն հօրեղբօրը կարօտել էր։ Այդ ինչու Ֆենիչկան նրան դուրս տարաւ։ Բայց ինչ է եղել քեզ։ Չլինի այստեղ ձեր մէջ մի բան է պատահել։

—Եղբայր,—հանդիսաւոր կերպով ասաց Պաւէլ Պետրովիչը։

Նիկոլայ Պետրովիչը ցնցուեց։ Նա սկսաւ իրան վատ զգալ—ինքն էլ չգիտենալով թէ ինչու։

—Եղբայր,—կրկնեց Պաւէլ Պետրովիչը,—ինձ խօսք տուր, որ իմ մի խնդիրքս կ՚կատարես։

—Ի՞նչ խնդիրք։ Ասա։

—Շատ խնդիր է դա, իմ հասկացողութեամբս կեանքիդ բոլոր երջանկութիւնը դրանից է կախուած։ Այս բոլոր ժա-

մանակս շատ եմ մտմտացել այդ մասին, որ այժմս ուզում եմ ասել քեզ...։ Եղբայր, կատարիր քու պարտականութիւնդ, ազնիւ ու պատուաւոր մարդու պարտաւորութիւնդ, վերջ դիր այդ գայթակղութեան ու վատ օրինակին, որ տալիս ես դու, որ դու մարդկանց մէջ ամենապատուականն ես։

—Ի՞նչ ես ուզում ասել, Պաւէլ։

—Ամուսնացիր Ֆենիչկայի հետ...։ Նա սիրում է քեզ, նա—քու որդուդ մայրն է։

Նիկոլայ Պետրովիչը մի քայլ յետ քաշուեցաւ ու ձեռներն իրար խփեց.

—Դո՞ւ ես այս ասողը, Պաւէլ, դո՞ւ, որին ես միշտ անողոք հակառակորդ եմ կարծել այդպիսի ամուսնութիւններին։ Այս դո՞ւ ես ասողը։ Բայց միթէ չգիտես, որ միմիայն քեզ յարգելուցս էր, որ մինչև այժմ չէի կատարում այն, ինչ որ դու իրաւամբ իմ պարտաւորութիւնս անուանեցիր։

—Ի զո՞ւր ես այդ դէպքում ինձ յարգել,—տխուր ժպիտով պատասխանեց Պաւէլ Պետրովիչը։—Ես էլ եմ սկսում կարծել, որ Բազարովը իրաւացի էր, երբ երեսովս էր տալիս իմ ազնուականութիւնս։ Ոչ, սիրելի եղբայր, հերիք կոտրուենք ու հասարակութեան կարծիքի մասին մտածենք, մենք արդէն ծերացած ու խաղաղ մարդիկ ենք. ժամանակ է այդ ունայն բաները մի կողմ ձգել։ Իսկ որ քու ասածիդ պէս, սկսենք մեր պարտաւորութիւնը կատարել, և դու տես որ, դեռ կարող ենք երջանկութիւն էլ վաստակել։

Նիկոլայ Պետրովիչը վրայ ընկաւ իր եղբօրն ու սկսաւ նրան գրկախառնել։

—Դու իմ աչքս բոլորովին բացիր,—բացականչեց նա։—Ի զուր հօ չէի պնդում, թէ աշխարհիս երեսին քեզ նման բարի ու խելօք մարդ չկայ, իսկ այժմս տեսնում եմ, որ դու ինչքան մեծահոգի, այնքան էլ խոհեմ մարդ ես եղել։

—Զգոյշ, զգոյշ,—ընդհատեց նրա խօսքը Պաւէլ Պետրովիչը.—խոհեմ եղբօրդ վէրքը մի բանալ, որ յիսուն տարեկան հասած՝ ենթասպայի նման մենամարտի էր դուրս եկել։ Ուրեմն վճռուած բան է՝—Ֆենիչկան կլինի իմ... belle soeur (հարսը)։

—Իմ սիրելի Պաւէլս։ Բայց ինչ կասէ Արկադին։

—Արկադի՞ն. նա շատ ուրախ կլինի։ Թէպէտ ամուսնութիւնը նրա սկզբունքներին հակառակ է, բայց դրա փոխա-

րէն հաւասարութեան զգացմունքը չոյլուած կլինի նրա մէջ։ Եւ արդարև, սա ինչ կաստայականութիւն է au dix-neuvieme siècle (տասնիններորդ դարում)։

—Ախ, Պաւէլ, Պաւէլ, թող մէկ էլ համբուրեմ քեզ։ Մի՛ վախի, զգոյշ կանեմ։

Երկու եղբայր համբուրուեցան։

—Ի՛նչ ես կարծում, քու այդ մտադրութիւնդ այժմ և եթ չյայտնենք Ֆենիչկային,—հարցրեց Պաւէլ Պետրովիչը։

—Ի՞նչ կայ շտապելու,—պատասխանեց Նիկալայ Պետրովիչը։—Այդ մասին հո մէջներդ խօսք չի՞ եղել։

—Մեր մէջ խօսակցութի՞ւն։ Quelle idée, (ինչպիսի՜ միտք)։

—Դէ շատ լաւ ուրեմն։ Նախ և առաջ մի առողջացիր, իսկ այս բանը ձեռներիցս չի փախչիլ. դեռ պէտք է մի լաւ միտք անել, մտմտալ...։

—Արդէն հո վճռել ես։

—Իհարկէ վճռել եմ, և հոգով չափ շնորհապարտ եմ քեզ։ Այժմ ես կգնամ. քեզ հանգստութիւն է պէտք. ամեն տեսակ յուզում էլ վնաս է քեզ...։ Բայց դեռ կխօսենք։ Քնիր հոգիս, Աստուած քեզ առողջութիւն տայ։

«Ինչու՞ է նա ինձ այսքան շնորհակալ լինում», մենակ մնալով մտածեց Պաւէլ Պետրովիչը. «կարծես թէ այդ բանն իրեն ձեռքը չէր։ Իսկ հէնց որ նա ամուսնացաւ, ես էլ կը հեռանամ, կգնամ մի տեղ, Դրեզդէն կամ Ֆլօրէնցիա, և կը մնամ այնտեղ, մինչև որ սատկեմ»։

Պաւէլ Պետրովիչը օդեկոլոնով թրջեց ճակատն, ու աչքը խփեց։ Նրա գեղեցիկ, նիհարած գլուխը, ցերեկուայ պայծառ լուսով լուսաւորուած, մեռածի նման, ընկած էր սպիտակ բարձի վրայ...։ Նա հէնց մեռած էլ էր։

XXV

Նիկոլսկոյէ գիւղում, պարտիզում բարձրուղէշ հացենու հովին, փայտէ նստարանի վրայ նստած էին Կատեան ու Արկադիյն. Նրանց մօտ գետնին պառկած էր Ֆիֆին այն գեղարուեստական կիսաբոլորակ ձևով, որ յայտնի է որսորդների մէջ «լուշ-կապարիկի պառկուածք» անունով։ Արկադիյն էլ, Կատեան էլ լուռ էին. Արկադիյն ձեռին բռնած ունէր կիսաբաց մի գիրք,

իսկ Կատեան կողովի մէջ մնացած սպիտակ հացի փշրանքները հաւաքում էր ու ձգում ճնճղուկների փոքրաթիւ ընտանիքի առաջ, որոնք, իրենց յատուկ վախկոտ խիզախութեամբ, թռչկոտում էին և ճռուողում ուղիղ նրանց ոտների տակ։ Մեղմ քամին, տատանելով հացենու տերևները, թէ մթին ճանապարհի վրայ և թէ Ֆիֆիի դեղին մէջքի վրայ յետ ու առաջ էր անում լոյսի բաց ոսկեգոյն բծերը. միապաղաղ ստուերն ընկած էր Արկադիյի ու Կատեայի վրայ. հազիւ երբեմն միայն պայծառ շերտը բոցակիզւում էր Կատեայի մազերի մէջ։ Նրանք լուռ էին. և հէնց նրանց այդ լուռ մնալու մէջ, նրանց կողք կողքի նստուածքի մէջ վստահ մտերմութիւն էր երևում՝—ասես թէ նրանցից ոչ մէկն էլ չէր մտածում միւսի մասին, մինչդեռ իրանց սրտում ուրախ էին, որ միմեանց մօտ են։ Այն օրուանից, որ նրանց վերջին անգամ տեսել էինք, նրանց դէմքերն էլ փոխուած էին՝—Արկադիյն աւելի խաղաղ էր թւում, Կատեան՝ աւելի առոյգ, համարձակ։

—Այնպէս չէ՞,—սկսեց Արկադիյն,—հացենին ռուսերէն շատ յարմար անուն ունի՝ եասէյն (պայծառ), ոչ մի ծառ այնպէս պայծառ ու պարզ չի երևում օդի մէջ, ինչպէս սա։

Կատեան աչքերը վերև բարձրացրեց ու ասաց. «Այո», իսկ Արկադիյն մտածեց. «Այ, սա ինձ չի նախատում, որ գեղեցիկ խօսքերով եմ միտքս արտայայտում»։

—Ես Հայնէի գրուածքները չեմ սիրում,—խօսեց Կատեան՝ աչքով Արկադիյի ձեռքի գիրքը ցոյց տալով—ոչ այն ժամանակ, երբ լաց է լինում, ոչ այն ժամանակ, երբ ծիծաղում է. հապա սիրում եմ, երբ նա մտախոհ է ու թախծալի։

—Իսկ ես սիրում եմ, երբ նա ծիծաղում է,—նկատեց Արկադիյն։

—Այդ ձեր երգիծական հին ուղղութեան մնացորդն է... (Հին մնացորդ,—մտածեց Արկադիյն,—Բազարովը լսի)։ Կացէք, մենք ձեզ կփոխենք։

—Ո՞վ է ինձ փոխելու։ Դո՞ւք։

—Ո՛վ, քոյրս, Պորֆիրիյ Պլատոնովիչը, որի հետ դուք այլ ևս դադարել էք վիճելուց. մօրաքոյրս, որին դուք երեկ չէ միւս օրը եկեղեցի տարաք։

—Կարող չէի հօ մերժել։ Իսկ ինչ կվերաբերուի Աննա Սերգէևնային, գիտէք, որ նա ինքն էլ շատ բաների մէջ համաձայնում էր Բազարովի հետ։

—Այն ժամանակ՝ ձեզ նման քոյրս էլ նրա ազդեցութեան տակ էր։

—Ինձ նման։ Միթէ նկատում էք, որ ես այժմ նրա ազդեցութեան տակից դուրս եմ գալիս։

Կատեան լռեց։

—Գիտեմ,—շարունակեց Արկադիյն,—նա երբէք ձեզ դիւր չէ եկել։

—Ես կարող չեմ նրա մասին դատողութիւն տալ։

—Գիտէք ինչ է, Կատերինա Սերգէևնա։ Ամեն անգամ, որ դուք այդպէս էք ասում, երբէք ձեր ասածին չեմ հաւատացել։ Չկայ մի այնպիսի մարդ, որի մասին մենք ամեն մէկս էլ չըկարողանանք դատողութիւն տալ։ Դուք ուզում էք միայն խօսքը կտուրը ձգել։

—Թէ որ այդպէս է, ուրեմն պիտի ասեմ, որ նա... չէ թէ ինձ դիւր չի գալիս, հապա զգում եմ, որ նա էլ ինձ օտար, ես էլ նրան... Հէնց դուք ինքներդ էլ օտար էք նրան։

—Ինչու։

—Ի՛նչպէս ասեմ... Նա գիշատիչ է, մինչդեռ ես ու դու— ընտանի ենք։

—Ես էլ եմ ընտանի։

Կատեան գլխով արաւ։

Արկադիյն գլուխը քորեց։

—Ախր, Կատերինա Սերգէևնա, իսկապէս ասած ձեր ասածը վիրաւորական է։

—Միթէ դուք գիշատիչ կուզէիք լինել։

—Գիշատիչ չէ, հապա ուժեղ, եռանդուն։

—Այդ բանը ուզելով չի լինիլ... Ահաւասիկ ձեր ընկերը, նա չէ ուզում այդպէս լինել, բայց այդ բանը նրա մէջն է։

—Հմ, ուրեմն կարծում էք, թէ նա մեծ ազդեցութիւն ունէր Աննա Սերգէևնայի վրայ։

—Այո։ Բայց ոչ ոք կարող չէ նրա վրայ ընդ երկար ազդեցութիւն ունենալ,—աւելացրեց Կատեան ցած ձայնով։

—Ինչու էք այդպէս կարծում։

—Քոյրս շատ հպարտ է... այդ չէր ասելիքս... նա մեծ նշանակութիւն է տալիս իր անկախութեան։

—Ո՛վ չէ իւր անկախութեան մեծ նշանակութիւն տալիս —որ, հարցրեց Արկադիյն, ու միևնոյն ժամանակ էլ մտքովն անցկացրեց. «Ինչի՞ է պէտք դա»։ «Ինչի՞ է պէտք դա» մտա-

ծեց նաև Կատեան։ Այն երիտասարդները, որոնք յաճախ համերաշխ ու համակարծիք են լինում, շարունակ նրանց գըլուխներում էլ միատեսակ մտքեր են ծնւում։

Արկադիյն ժպտաց և մի քիչ Կատեային մօտենալով, շըշնջալով ասաց.

—Խոստովանեցէք, որ դուք փոքր ինչ վախենում էք նրանից։

—Ո՞ւմից։

—Նրանից,—առանձնապէս շեշտելով կրկնեց Արկադիյն։

—Ի՞սկ դուք,—իւր կողմից հարցրեց Կատեան։

—Ես էլ, նկատեցէք, որ ասացի՝ ես էլ։

Կատեան մատը թափ տուեց նրա վրայ։

—Այդ ինձ զարմացնում է,—սկսեց Կատեան։—երբէք քոյրս այնպէս լաւ տրամադրուած չէ եղել դէպի ձեզ, ինչպէս այժմ. անհամեմատ աւելի, քան ձեր առաջին գալստեանը։

—Հա՞.

—Միթէ այդ բանը չէի՞ք նկատել։ Այդ ձեզ չի՞ ուրախացնում։

Արկադիյն մտքի մէջ ընկաւ։

—Ինչո՞վ եմ արժանի դարձել Աննա Սերգէևնայի բարեհաճութեան։ Մի՞ գուցէ նրանով, որ ձեր մօր նամակները բերի նրան։

—Այդ բանով էլ, ուրիշ բաներով էլ, որ ես չեմ ասիլ։

—Ինչի՞ է չասելը։

—Չեմ ասիլ։

—Օ՛, գիտեմ. դուք շատ յամառ աղջիկ էք։

—Յամառ եմ։

—Եւ դիտող։

Կատեան աչքի պոչով Արկադիյին նայեցաւ։

—Գուցէ այդ բանը ձեզ զայրացնում է։

Ինչի՞ վրայ էք միտք անում։

—Ես միտք եմ անում, թէ որտեղից է ձեզ մէջ մտել այդ դիտելու ընդունակութիւնը, որը ճիշտ որ կայ ձեր մէջը։ Դուք որ այդպէս վեհերկոտ էք, կասկածամիտ. ամենից խոյս տուող...։

Ես շատ եմ միայնակ ապրել. ուզես-չուզես կմտածես։ Բայց միթէ ես ամենքից էլ խոյս եմ տալիս։

Արկադիյն երախտագիտական հայեացք ձգեց նրա վրայ։

—Այս ամենը շատ լաւ,—շարունակեց նա.—բայց ձեր կացութեան մէջ եղող մարդիկ, ուզում եմ ասել՝ ձեր կարողութիւնն ունեցող մարդիկ, քիչ է պատահում, որ այդ շնորհքըն ունենան. Ճշմարտութիւնը նրանց ականջին, ինչպէս և թագաւորների ականջին, դժուար է հասնում։

—Ես հարուստ չեմ հո։

Արկադիյն զարմացաւ և Կատեայի ասածն իսկոյն չըմբռնեց։ «Ճիշտ որ, ախր բոլոր կալուածքն էլ քրոջն է» մտածեց նա. այդ միտքը նրան անհաճոյ չէր։

—Ինչքան սիրուն ասացիք,— ասաց նա։

—Ի՞նչ կայ որ։

—Սիրուն ասացիք՝—պարզ կերպով, առանց ամաչելու և առանց պարծենալու։ Ի դէպ. երևակայում եմ, որ այն մարդու զգացմունքի մէջ, որը գիտէ և ասում է, թէ ինքը աղքատ է, պէտք է որ մի առանձին, մի տեսակ սնափառութիւն լինի։

—Քրոջս շնորհիւ ես ոչ մի այդպիսի բան զգացած չեմ. խօսքը եկաւ, դրա համար էլ միայն յիշեցի իմ կարողութեանըս մասին։

—Լաւ. բայց խոստովանեցէք, որ հէնց ձեր մէջն էլ մասամբ կայ այն սնափառութիւնից, որ այս րոպէիս յիշեցի։

—Օրինա՞կ։

—Օրինակ, դուք հո—ներեցէք մի այսպիսի հարց տալուս,—հարուստ մարդու չէ՞ք գնայ։

—Թէ որ նրան խիստ սիրելին լինէի...։Ոչ, թւում է, թէ այն ժամանակ էլ չէի գնայ։

—Հա՛, տեսա՞ք,—բացականչեց Արկադիյն և, մի քիչ յետոյ, աւելացրեց.—Իսկ ինչո՞ւ չէիք գնայ։

—Նրա համար, որ երգերի մէջ էլ երգում են անհաւասարութեան մասին։

—Գուցէ դուք ուզում էք իշխել կամ...

—Ո՛հ, ո՛չ. ինչի՞ս է. Ընդհակառակն, ես պատրաստ եմ հնազանդուել. բայց անհաւասարութիւնը ծանր բան է։ Իսկ ինքդ քեզ յարգես ու հնազանդուես—ես այդ հասկանում եմ. դա երջանկութիւն է. բայց լուծի տակ ապրել...։Ոչ, եղածն էլ հերիք է։

—Եղածն էլ հերիք է,—Կատեայի ետեւից կրկնեց Արկադիյն։—Այո, այո,—շարունակեց նա.—իզուր չէ, որ դուք էլ

Աննա Սերգէևնայի արիւնից էք. դուք էլ այնպէս ինքնուրոյն էք, ինչպէս և նա։ Բայց դուք աւելի ծածկամիտ էք։ Հաւատացած եմ, որ երբէք առաջ դուք չէք արտայայտել ձեր զգացմունքը, որքան ուզում է դա խորը ու սրբազան լինի...

—Հապա ինչպէս պիտի լինէր,—հարցրեց Կատեան։

—Դուք խելօք էլ էք. դուք էլ նոյնպէս, եթէ ոչ աւելի, կիրթ բնաւորութիւն ունիք, ինչպէս և նա...

—Խնդրեմ ինձ քրոջս հետ մի համեմատէք,—շտապով ընդհատեց Կատեան նրա խօսքը,—այդ խիստ աննպաստ բան է ինձ համար։ Ասես թէ մոռացել էք, որ քոյրս և գեղեցկուհի է, և խելացի, և...մանաւանդ ձեզ, Արկադիյ Նիկոլայիչ, չի վայելում, որ այդպիսի խօսքեր ասէք, այն էլ մի այսպիսի լուրջ դէմքով։

—Ի՞նչ է նշանակում՝ մանաւանդ ձեզ. և ինչի՞ց էք հետեւցնում, թէ կատակ է արածս։

—Իհարկէ կատակ է։

—Կարծում էք։ Ի՞նչ կասէիք, թէ որ այն ամենին, ինչ որ ասում եմ, հաւատում լինեմ։ Թէ որ իմ կարծիքովս դեռ ասածներս թոյլ են։

—Ես ձեր միտքը չեմ հասկանում։

—Իրա՞ւ։ Դէ այժմ տեսնում եմ՝—ուղիղ որ ձեր գիտելու ընդունակութիւնը չափազանցրել եմ։

—Ինչպէ՞ս։

Արկադիյն ոչինչ չպատասխանեց և երեսը շուռ տուեց, իսկ Կատեան կողովի մէջ մի քանի փշրանք էլ գտաւ ու ձգեց ճնճղուկների առաջ. բայց նա թեւն այնպէս ուժով շարժեց, որ ճնճղուկները, առանց փշրանքները ժողովելու, թըռան գնացին։

—Կատերինա Սերգէևնա,—խօսեց յանկարծ Արկադիյն.—Այդ ձեզ համար, հաւանօրէն, մէկ բան է. բայց գիտցած լինիք, որ ես ձեզ ոչ թէ միայն ձեր քրոջ հետ, հապա աշխարհիս երեսին ոչ ոքի հետ չեմ փոխիլ։

Նա վեր կացաւ տեղից և, կարծես իւր լեզուից թռած խօսքերից վախեցած, արագութեամբ հեռացաւ։

Իսկ Կատեան երկու ձեռքն ու կողովը ձգեց ծնկների վրայ, և գլուխը խոնարհած, երկար նայում էր Արկադիյի ետեւից։ Փոքր առ փոքր ալկարմիրը թեթևակի ներկեց նրա այտերը. բայց շրթունքները չէին ժպտում, և մութ աչքերը

վարանմունք ու մի տեսակ ուրիշ, դեռ ևս անանուն զգացմունք էին արտայայտում։

—Մենա՞կ ես,—նրա կողքին լսվեց Աննա Սերգէևնայի ձայնը։—Արկադիի հետ որ չեկա՞ր պարտեզ։

Կատեան, առանց շտապելու, աչքը դարձրեց քրոջ վրայ (որ գեղանի, նոյն իսկ նուրբ հագնուած, ճանապարհի վրայ կանգնած, բաց հովանոցի ծայրով Ֆիֆիի ականջն էր շարժում), և առանց շտապելու ասաց.

—Մենակ եմ։

—Ես այդ տեսնում եմ,—պատասխանեց քոյրը ծիծաղելով,—ուրեմն նա իր սենեակն է գնացել։

—Այո։

—Միասի՞ն կարդում էիք։

—Այո։

Աննա Սերգէևնան բռնեց Կատեայի կզակից և նրա դէմքը բարձրացրեց։

—Հո չէ՞ք կռուել։

—Ոչ,—ասաց Կատեան և քրոջ ձեռքը կամացուկ յետ քաշեց։

—Ինչպիսի՜ հանդիսաւոր պատասխան ես տալիս, կարծում էի այստեղ կլինի, ուզում էի մէկտեղ զբօսնելու գնալ։ Ինքն է շարունակ այդ բանն ինձնից խնդրում։ Քաղաքից քեզ համար ոտնամաններ են բերել. գնա, փորձիր. դեռ երէկ նկատել էի, որ առաջուայ ոտնամաններդ բոլորովին մաշուած են։ Առ հասարակ դու հարկաւոր ուշադրութիւնը չես դարձնում դրա վրայ, մինչդեռ ինչ սքանչելի ոտներ ունիս։ Ձեռներդ էլ սիրուն են... միայն խոշոր են. պէտք է ուրեմն ոտներովդ գրաւես։ Բայց դու պճնասէր չես։

Աննա Սերգէևնան, թեթևակի շրջազգեստը խշխշացնելով, նոյն ծառուղիով շարունակեց իր ճանապարհը. Կատեան վեր կացաւ տեղից. առաւ Հայնէի հատորը և նոյնպէս գնաց—բայց ոչ ոտնամանը փորձելու։

«Սքանչելի ոտներ», մտածում էր նա դանդաղ ու թեթև կերպով բարձրանալով դարաւանդի արևակէզ եղած քարէ աստիճաններով.—ասում է՝ սքանչելի ոտներ...։ Դէ լաւ, ուրեմն նա այդ ոտների տակ կլինի։

Բայց նա անմիջապէս ամօթ զգաց, և շտապով վերև վազ տուեց։

Արկադին միջանցքով իր սենեակը գնաց. սենեկապանը ետևից հասաւ և յայտնեց, թէ Բազարովը նրա սենեակումն է։

—Եւգենի՜յն,—համարեա վախեցած շշնջաց Արկադին.—վաղո՞ւց է եկածը։

— Հէնց նոր շնորհ բերին, և պատուիրեցին, որ իր գալը Աննա Սերգէևնային իմաց չտանք, հապա հրամայեցին, որ ուղղակի ձեր սենեակը բերենք։

«Չլինի՞ տանը դժբաղդութիւն պատահած լինի», մտածեց Արկադին և, շտապ-շտապ աստիճաններից վեր վազելով, հապճեպով բաց արաւ դուռը։ Բազարովի երեսի արտայայտութիւնը իսկոյն հանգստացրեց նրան, թէպէտ եթէ մի աւելի փորձուած աչք լինէր, հաւանական է, որ այդ անակնկալ հիւրի առաջուայ նման զարձեալ եռանդուն, բայց փոքր ինչ կորացած կերպարանքի մէջ ներքին յուզմունքի նշաններ նկատէր։ Փոշոտած թիկնոցը հագին, գլխարկը գլխին նստած էր պատուհանի մէջ. նա տեղից չվերկացաւ նաև այն ժամանակ, երբ Արկադին աղմկալի բացականչութիւններով վզովն ընկաւ։

—Այ քեզ անակնկալ բան։ Ո՞ր խաչից,—ասում էր նա շարունակ վեր ու վարի մէջ լինելով սենեակում՝ նման մի մարդու, որ ինքը երևակայում է, և ուրիշներին էլ ուզում է ցոյց տալ, թէ ուրախանում է։—Տանը հո ամէն բան կարգին է, ամենքն էլ ողջ առո՞ղջ են, այնպէս չէ՞։

—Ամեն բան կարգին է, բայց ամենքը առողջ չեն,—պատասխանեց Բազարովը։—Շատ մի բլբլացնի, ասա թող կվաս բերեն, նստիր ու լսիր, թէ ինչ եմ քեզ հաղորդելու մի քանի, բայց, վստահ եմ, բաւական զօրեղ խօսքով։

Արկադին խաղաղեց, իսկ Բազարովը պատմեց Պաւէլ Պետրովիչի հետ ունեցած մենամարտը։ Արկադին շատ զարմացաւ և մինչև իսկ տխրեց, բայց հարկ չհամարեց այդ բանն արտայայտելու, նա միայն հարցրեց թէ ուղիղ հօրեղբօր վէրքը վտանգաւոր չէ և, պատասխան ստանալով, թէ վէրքը շատ հետաքրքրական է, միայն ոչ թէ բժշկական տեսակէտով,—ակամայ ժպտաց, մինչդեռ սիրտը ճմլուեց ու ամօթ զգաց։ Բազարովը կարծես այդ հասկացաւ։

—Հապա, եղբայր,—խօսեց նա,—ահա ինչ է նշանակում ֆէօդալների հետ ապրել. Ինքդ էլ ֆէօդալ կդառնաս ու աս-

պետական մենամարտներին կմասնակցես։ Ըհը, ես էլ վերկացայ ու «հայրերի» կողմն ուղղուեցայ,—այսպէս վերջացրեց Բազարովը իր խօսքը,—և ճամբին այստեղ էլ հանդիպեցայ...որպէս զի այս ամենը քեզ պատմեմ, կասէի ես, թէ որ անօգուտ սուտը—յիմարութիւն չհամարէի։ Ոչ, իմ այստեղ հանդիպելս—ինքս էլ չգիտեմ ինչ բանի համար է։ Գիտես, օգտակար է, որ մարդ երբեմն իր քաքուլից բռնի ու ձիգ տայ, տեղիցը արմատահան անի, ա՛յ, ինչպէս բողկն են անում. ես այդ բանն ինձ արի այն օրերս...։ Բայց սիրտս ուզեց մի անգամ էլ մտիկ տալ այն բանին, որից ես ձեռք եմ քաշել, այն թըմբին, ուր ես տնկուած էի։

—Յուսամ թէ այդ խօսքերն ինձ չեն վերաբերում,—յուզուած պատասխանեց Արկադին,—յոյս ունիմ, որ մտադիր չես ինձանից բաժանուելու։

Բազարովն աչքը սեւեռեց նրա վրայ։

—Որպէս թէ շատ ես վշտանալու էլի։ Ինձ թւում է, թէ դու արդէն իսկ հեռացած ես ինձանից։ Խիստ զուարթ ու մաքուր ես...երևի Աննա Սերգէևնայի հետ բանդ լաւ է գնում։

—Ես ինչ բան ունիմ Աննա Սերգէևնայի հետ։

—Նրա խաթրին չէ՞ր քու այստեղ գալդ, աղաւնեակ։ Ի դէպ, ինչպէ՞ս է այնտեղ կիրակնօրեայ դպրոցների բանը, միթէ դու սիրահարուած չես Աննա Սերգէևնային։ Չլինի՞ արդէն խոհեմութեան շրջանդ ես մտել։

—Եւգենի, գիտես, որ միշտ անկեղծ եմ եղել քեզ հետ. կարող եմ հաւատացնել, երդւում եմ, որ սխալւում ես։

—Հմ. նոր խօսք,—ցած ձայնով նկատեց Բազարովը։—Բայց մի տաքանալ ինձ համար այդ հո ամենևին նշանակութիւն չունի։ Ռոմանտիկ մարդ որ լինէր, այսպէս կասէր՝—զգում եմ, որ մեր ճանապարհները սկսում են բաժանուել. իսկ ես ուղղակի կասեմ, որ մենք միմեանցից յափրացել ենք։

—Եւգենի...

—Հոգի ջան, այդ վնաս չունի. կեանքում դեռ ինչքա՜ն բաներից ենք յափրանում։ Իսկ այժմ, ինձ թւում է, որ աւելի լաւ է մնաս բարով ասենք միմեանց։ Այն ժամանակուանից, որ այստեղ եմ, ես շատ վատ եմ զգում ինձ, հէնց իմանաս գլուխս լցուած լինի այն նամակով, որ Գոգոլը գրել է Կալուգայի նահանգապետի կնոջը։ Ի դէպ. չեմ ասել, որ ձիանը յետ անեն։

—Ի՞նչ ես ասում, Եւգենի, այդ անկարելի բան է։

—Ինչո՞ւ։

—Էլ իմ մասին ասելն աւելորդ է. բայց Աննա Սերգէևնայի վերաբերմամբ արածդ մեծ անքաղաքավարութիւն կլինի. նա անպատճառ կուզենայ քեզ տեսնել։

—Է՛, այդտեղ դու սխալւում ես։

—Իսկ ես, ընդհակառակն, հաւատացած եմ, որ ասածս ուղիղ է,—պատասխանեց Արկադին։—Եւ ինչո՞ւ ես կեղծում։ Բանըն որ այդտեղ հասաւ, հէնց ինքդ, նրա համար չես այստեղ եկել։

—Այդ գուցէ և ուղիղ է, բայց և այնպէս սխալւում ես։

Բայց Արկադիի ասածն ուղիղ էր։ Աննա Սերգէևնան ուզեց Բազարովին տեսնել և սենեկապանի միջոցով նրան իր սենեակը հրաւիրեց։ Բազարովը, նրա մօտ գնալուց առաջ շորերը փոխեց. բանից երևաց, որ նա իր շորերն այնպէս էր դարսել, որ նոր զգեստի հանելը հեշտ լինի։

Օդինցեան նրան ընդունեց ոչ թէ այն սենեակում, ուր որ նա այնպէս անակնկալ կերպով իր սէրն էր յայտնել, հապա ընդունարանում։ Նա սիրալիր կերպով մատի ծայրերը մեկնեց Բազարովին, իսկ դէմքն ակամայ լարուած դրութիւն էր արտայայտում։

—Աննա Սերգէևնա,—շտապեց ասելու Բազարովը,—նախ և առաջ պէտք է ձեզ հանգստացնեմ։ Ձեր առաջը գտնւում է մի մահկանացու, որ վաղուց արդէն խելքի է եկել և յոյս ունի, որ ուրիշներն էլ մոռացած կլինեն նրա յիմարութիւնները։ Ես հեռանում եմ երկար ժամանակով, և համաձայնեցէք, որ թէպէտ և մի շատ էլ քնքուշ էակ չեմ, բայց ինձ համար ուրախալի չէր լինիլ հեռանալ այստեղից և մտածել, թէ դուք զզուանքով էք յիշում ինձ։

Աննա Սերգէևնան խորը շունչ քաշեց նման այն մարդուն, որ հէնց նոր է բարձր լեռ բարձրացել, և ժպիտը կենդանացրեց նրա դէմքը։ Նա ձեռքը կրկին մեկնեց Բազարովին, և փոխադարձաբար սեղմեց նրա ձեռքը։

—Անցուկը մոռցուկ է,—ասաց նա,—մանաւանդ որ, խըղճով որ ասենք, այն ժամանակ ես էլ մեղանչեցի եթէ ոչ իմ ծեքծեքումովս, գոնէ մի ուրիշ բանով։ Մէկ խօսք՝ առաջուայ նման բարեկամ լինինք։ Դա երազ էր միայն—այնպէս չէ՞։ Իսկ ո՞վ է երազները միտքը պահում։

—Ո՞վ է միտքը պահում։ Մանաւանդ որ «սէրը»...սարքովի զգացմունք է։

—Իրա՛ւ։ Ինձ համար շատ հաճելի է մի այդպիսի բան լսելը։

Այսպէս էր խօսում Աննա Սերգէևնան, այսպէս էր խօսում և Բազարովը. երկուսն էլ կարծում էին, թէ ճշմարիտն են ասում։ Արդեօք ճշմարտութիւն, կատարեալ ճշմարտութիւն կա՞ր նրանց խօսքերի մէջ։ Նրանք իրանք էլ չգիտէին այդ, ուր մնաց հեղինակը։ Բայց այն ձեւով էին խօսում, որ ասես թէ կատարելապէս իրար հաւատալիս լինէին։

Աննա Սերգէևնան, ի միջի այլոց, Բազարովին հարցրեց, թէ ինչ էր անում Կիրսանովների տանը։ Քիչ էր մնում Բազարովը նրան պատմէր Պաւէլ Պետրովիչի հետ ունեցած մենամարտը, բայց զսպեց իրեն մտածելով, թէ մի գուցէ նա կարծէ, թէ ուզում է իր անձը հետաքրքրական դարձնել, և պատասխանեց, թէ այս բոլոր միջոցին աշխատելիս է եղել։

—Իսկ ես,—խօսեց Աննա Սերգէևնան,—սկզբում Աստուած գիտէ ինչու, թախիծը պաշարել էր ինձ, մինչև անգամ մտածում էի արտասահման գնալ, երևակայեցէք...։ Յետոյ այդ անցաւ. ձեր բարեկամը, Արկադիյ Նիկոլայիչը, եկաւ, ու ես նորից իմ ճամբաս գտայ, նորից իմ դերս ձեռք առի։

—Այդ ինչ դեր է, կարելի՞ է իմանալ։

—Մօրաքրոջ, դաստիարակչուհու, մօր, ինչ անուն ուզում էք տուէք։ Ի դէպ. գիտէ՞ք, առաջ լաւ չէի հասկանում Արկադիյ Նիկոլայիչի հետ ձեր ունեցած սերտ բարեկամութիւնը. նրան բաւական աննշան ոք էի համարում։ Բայց այժմ աւելի լաւ ճանաչեցի, և համոզուեցայ, որ նա խելօք է...։ Իսկ գլխաւորը նա երիտասարդ է, երիտասարդ...չէ թէ մեզ նման, Եւգենիյ Վասիլևիչ։

—Նա դարձեալ ձեր ներկայութեանը քաշւում է,—հարցրեց Բազարովը։

—Միթէ...,—սկսեց Աննա Սերգէևնան և, մի քիչ անելուց յետոյ, աւելացրեց.—այժմ աւելի է վստահանում ինձ, հետս խօսում է։ Առաջ ինձանից խոյս էր տալիս։ Ասենք ես էլ մի շատ նրա ընկերութիւնը չէի որոնում։ Նա ու Կատեան այժմ մտերիմ բարեկամներ են։

Բազարովի սիրտը նեղացաւ։ «Կին ասած չի կարող խորամանկութիւն չբանեցնել», մտածեց նա։

—Ասում էք ձեզանից խոյս էր տալիս,—սառը ծաղրով

պատասխանեց Բազարովը,—բայց, երևի, ձեզանից անյայտ չէ, որ նա ձեզ սիրահարուած էր։

—Ի՞նչ, նա է՞լ,—դուրս թռաւ Աննա Սերգէևնայի շրթունքներից։

—Նա էլ,—խոնարհ գլուխ տալով կրկնեց Բազարովը։—Միթէ՞ այդ չգիտէիք և իմ հաղորդածը նորութիւն էր ձեզ համար։

Աննա Սերգէևնան աչքերը ցած ձգեց։

—Սխալւում էք, Եւգենիյ Վասիլևիչ։

– Չեմ կարծում։ Բայց, գուցէ ինձ չէր վայելի, որ այդ մասին յիշեմ։ «Էլ խորամանկութիւն չանես», աւելացրեց նա ինքն իրեն։

—Ինչո՛ւ չպիտի յիշէք որ։ Բայց կարծում եմ, որ դուք այստեղ էլ րոպէական տպաւորութեանը խիստ մեծ նշանակութիւն էք տալիս։ Սկսում եմ կասկածել, որ չափազանցութիւն անելու տրամադրութիւն ունիք։

—Աւելի լաւ է այդ մասին չխօսենք, Աննա Սերգէևնա։

—Ինչու չխօսել,—պատասխանեց տիկինը և խօսքը ուրիշ բանի վրայ դարձրեց։ Բայց և այնպէս Բազարովի ներկայութեանը նա իրեն անյարմար դրութեան մէջ էր զգում, թէպէտ և նրան էլ ասաց, և ինքն իրեն էլ հաւատացրեց, թէ ամեն ինչ մոռացութեան է տրուած։ Բազարովի հետ ամենահասարակ խօսքեր փոխանակելիս, նոյն իսկ հետը կատակ անելիս, նա երկիւղի թեթև ճնշումն էր զգում։ Այդպէս ահա մարդիկ շոգենաւի մէջ, ծովի վրայ, անհոգ կերպով խօսում են, ծիծաղում, հէնց իմանաս ցամաք հողի վրայ լինին գտնուելիս։ Բայց հերիք է մի աննշան արգելք հանդիպի, մի անսովոր բանի մի ամենաչնչին նշան երևի, անմիջապէս ամենքի երեսներին էլ կ'րևայ առանձին յուզման արտայայտութիւն, որ վկայ է նրանց մշտական վտանգի մշտական գիտակցութեան։

Աննա Սերգէևնայի խօսակցութիւնը Բազարովի հետ՝ երկար չքաշեց։ Նա սկսաւ մտքերի մէջ ընկնել, անուշադիր պատասխաններ տալ և վերջ ի վերջոյ առաջարկեց դահլիճ գնալ, ուր գտնւում էին իշխանուհին ու Կատեան։ «Հապա Արկադիյ Նիկոլայիչն ո՞ւր է» հարցրեց տանտիկինը և, իմանալով, որ ժամից աւելի է, որ չի երևացել, ետևից մարդ ուղարկեց։ Արկադիյին շուտով չգտան՝—նա պարտիզի ամենախուլ անկիւնը քաշուած, և կզակը իրար խաչած ձեռներին յենած, նստել էր մտքերի մէջ թաղուած։ Խոր և նշանաւոր էին այդ մտքերը,

բայց ոչ տխուր։ Նա գիտէր, որ Աննա Սերգէեւնան մենակ նստած է Բազարովի հետ բայց, առաջուայ նման, նախանձ չէր տածում. ընդհակառակն, նրա դէմքը հանդարտիկ պարզւում էր. ասես թէ նա և՛ զարմանում էր մի բանի, և, ուրախանում, և վճռում էր մի բան անելու։

XXVI

Հանգուցեալ Օդինցեը նորամուծութիւններ չէր սիրում, բայց սիրում էր «որոշ չափով ազնուացած ճաշակի փոփոխութիւնը», և այդ իսկ պատճառով էլ իւր պարտիզում, ջերմանոցի ու լճակի միջև, ռուսական աղիւսից շինել էր տուել յունական սրահիկի նման մի բան։ Այդ սրահիկի ետևի պատի մէջ շինել էր տուել վեց հատ փոս ընկած (դոլաբի պէս) տեղեր՝ արձանների համար, որ ուզում էր արտասահմանից բերել տալ։ Այդ արձանները պէտք է ներկայացնէին— Առանձնութիւն, Լռութիւն, Մտածութիւն, Մելամաղձութիւն, Ամօթխածութիւն և Զգացողութիւն։ Արձաններից մէկը, Լռութեան աստուածուհին, մատը բերանին, բերել ու դրել էին իւր տեղը, բայց հէնց նոյն օրը ընդոծինների երեխաները կոտրել էին քիթը, և թէպէտ հարևան գաջբազը խոստացել էր, որ ինքն արձանի քիթը առաջուանից երկու անգամ աւելի լաւ կշինի, բայց և այնպէս Օդինցեը հրամայել էր արձանը վերցնել, որը և ձգել էին ծածկած կալի մի անկեանը, ուր երկար տարիներ մնացել էր՝ կանանց մէջ սնոտիապաշտական սարսափ առաջացնելով։ Սրահիկի առջևի մասը վաղուց ծածկուել էր խիտ բուսած թփերով և համատարած կանաչի մէջ միայն սիւների խոյակներն էին երևում։ Սրահիկի մէջ նոյն իսկ կէս օրուայ շոգին զով էր լինում։ Աննա Սերգէեւնան այն օրից, որ այստեղ մի լորտու էր տեսել, չէր սիրում այդտեղ գալ. բայց Կատեան յաճախ գալիս էր նստում մի մեծ քարի նստարանի վրայ, որ շինած էր դոլաբներից մէկի ներքևը։ Թարմութեամբ ու ստուերով շրջապատուած, նա կարդում էր, գործում, կամ անձնատուր լինում այն կատարեալ լռութեան զգացողութեան, որը, հաւանօրէն, յայտնի է ամենքին էլ, և որի հրապոյրն է կազմում այն գրութիւնը, երբ մենք հազիւ գիտակցելով, լռիկ ունկն-

դիր ենք լինում կենսական լայն ալիքին, որ շարունակ հոսանք է տալիս թէ մեր շուրջը և թէ հէնց մեր մէջը։

Բազարովի գալու յաջորդ օրը Կատեան նստած էր իւր սիրած նստարանի վրայ, և նրա կողքին դարձեալ Արկադին էր նստած։ Ինքն էր խնդրել, որ Կատեան իրա հետը սրահիկ գայ։

Նախաճաշիկի դեռ մէկ ժամի չափ ժամանակ կար. ցօղապատ առաւօտն արդէն տեղի էր տալիս տաք օրուան։ Արկադիյի դէմքը դեռ երէկուայ արտայայտութիւնն էր պահել, Կատեան հոգսալից կերպարանք ունէր։ Քոյրը, թէյից անմիջապէս յետոյ, նրան կանչել էր իւր առանձնասենեակը և, նախապէս գուրգուրելով նրան, մի բան որ միշտ մի փոքր վախեցնում էր Կատեայի աչքը, խորհուրդ էր տուել, որ զգոյշ լինի Արկադիյի հետ, մանաւանդ խոյս տայ նրա հետ առանձնացած զրոյց անելուց, որը իբր թէ արդէն մօրաքոյրն էլ տան մէջ բոլոր եղողներն էլ նկատել են։ Բացի այդ, դեռ նախորդ երեկոյեան Աննա Սերգէեւնայի տրամադրութիւնը լաւ չէր. հէնց ինքն Կատեան էլ շփոթածի պէս էր, ասես թէ իրեն մեղաւոր զգալիս լինէր։ Արկադիյի խնդրքին զիջանելով նա ինքն իրեն խօսք տուաւ, որ սա վերջինը կլինի։

—Կատերինա Սերգէեւնա,—սկսեց Արկադին մի տեսակ վեհերկոտ համարձակութեամբ,—այն օրուանից, որ ես պատիւ ունիմ ձեզ հետ միևնոյն յարկի տակ ապրել, ու շատ բանի մասին խօսել եմ ձեզ հետ, մինչդեռ կայ ինձ համար մի շատ կարևոր... խնդիր, որ դեռ ես չեմ շօշափել։ Դուք երէկ ասացիք, որ այստեղ ինձ փոխեցին,—աւելացրեց նա, միաժամանակ թէ՛ գիտելով և թէ խոյս տալով իւր վրայ ուղղուած Կատեայի հարցական հայեացքից։—Արդարև, ես շատ բանի մէջ փոխուած եմ, և այդ դուք ամենքից լաւ գիտէք,—դուք, որին որ ես, իսկապէս, պարտական եմ իմ այդ կրած փոփոխութիւնս։

—Ե՞ս... ի՞նձ...,—ասաց Կատեան։

—Ես այլ ևս այն անբարտաւան, կռուասէր երեխան չեմ, ինչպէս որ էի այս տեղ գալիս,—շարունակեց Արկադին,—ի զուր հօ չեմ քսաներեքս անցկացրել. առաջուայ պէս դարձեալ ուզում եմ լինել օգտակար, բոլոր ույժերս նուիրել ճշմարտութեան. բայց այլ ևս իմ իդէալներս այնտեղ չեմ որոնում, ուր առաջ էի որոնում. դրանք ինձ... աւելի մօտիկումն

են երևում։ Մինչև այժմս ես ինձ չէի հասկանում, ինձ այնպիսի նպատակներ էր դնում, որ իմ ուժից վեր են...։ Մօտերքս, մի զգացմունքի շնորհիւ, իմ աչքերս բացուեցան...։ Խօսածս շատ պարզ չէ, բայց յույս ունեմ, որ միտքս կհասկանաք...։

Կատեան ոչինչ չէր պատասխանում, բայց Արկադիյին նայելուց դադարեց։

—Կարծում եմ,—նորից խօսեց նա արդէն աւելի յուզուած ձայնով, մինչ խայտիտը նրա վերև, կեչու սաղարթի մէջ անհոգ իւր երգն էր երգում,—կարծում եմ, որ ամեն մի ազնիւ մարդու պարտաւորութիւնն է բոլորովին անկեղծ լինել այն... այն մարդկանց հետ, որոնք... մի խօսքով իրեն մօտիկ անձերի հետ, ուստի և ես... ես մտադիր եմ...

Բայց այստեղ Արկադիի ճառաբանութիւնը կտրուեց. Նա շփոթուեց, կմկմաց և ստիպուեցաւ մի փոքր կանգ առնել. Կատեան դեռ էլի աչքը վերև չէր բարձրացնում։ Երևում էր, թէ նա չէր էլ հասկանում, թէ ինչ էր սրա վերջը, և մի բանի էր սպասում։

—Ես գուշակում եմ, որ ձեզ պիտի զարմացնեմ,—սկսեց Արկադին նորից ուժերը հաւաքելով,—մանաւանդ որ այդ զգացմունքը մասամբ... մասամբ, նկատեցէք, վերաբերում է ձեզ։ Որքան յիշում եմ, երէկ ինձ կշտամբում էիք, թէ լըրջութիւնը պակաս է մէջս,—շարունակեց Արկադին.—մի այնպիսի մարդու պէս, որը ճահճի մէջ մտած, զգում է, որ ամեն մի քայլափոխին աւելի ու աւելի խրւում է խորը, բայց և այնպէս առաջ է շտապում յուսալով, թէ շուտով կազատուի։ —Այդ կշտամբանքը յաճախ ուղղուած է լինում... ընկնում է երիտասարդների գլխին մինչև իսկ այն ժամանակ, երբ որ նրանք դադարում են կշտամբանքի արժանի լինելուց, իսկ եթէ իմ մէջս աւելի ամբարտաւանութիւն կար...։ (Դէ օգնիր ինձ, օգնիր է յուսահատաբար մտածում էր Արկադին, բայց Կատեան առաջուայ պէս գլուխը չէր շարժում)։ Եթէ կարողանայի յուսալ...։

—Եթէ կարողանայի հաւատացած լինել ձեր ասածին,—այդ րոպէին լսուեց Աննա Սերգէևնայի պարզ ձայնը։

Արկադին իսկոյն լռեց, իսկ Կատեան գոյնը գցեց։ Ուղիղ սրահիկը ծածկող թփերի կողքից ճանապարհ էր անցնում։ Աննա Սերգէևնան Բազարովի հետ այդ ճանապարհով

էր գնում։ Կատեան ու Արկադին նրանց չէին տեսնում, բայց նրանց ամեն մի խօսքը, շրջազգեստի խշխշոցը, նոյն իսկ շնչառութիւնը լսում էին։ Խօսողները մի քանի քայլ առին և հակառակի պէս կանգ առան ուղղակի սրահիկի դիմացը։

—Տեսաք,—շարունակեց Աննա Սերգէևնան,—որ երկուսս էլ սխալուեցանք. երկուսս էլ խիստ ջահել չենք, մանաւանդ ես. մենք արդէն կեանք ենք ունեցել, յոգնել ենք, երկուսս էլ—ինչ կայ թաքցնելու—խելօք ենք՝—սկզբում մենք շահագրգռուեցանք միմեանցով, իրար մէջ հետաքրքրութիւն շարժեցինք... իսկ յետոյ...

—Իսկ յետոյ ես անպէտք դարձայ,—վրայ բերեց Բազարովը։

—Ինքներդ էլ գիտէք, որ մեր տարաձայնութեան պատճառն այդ չէր։ Ինչ որ է՝ մենք միմեանց պէտք չունէինք. ահա գլխաւոր պատճառը. մեր մէջ խիստ շատ... ինչպէս ասեմ... համանման բան կար։ Մենք այն գլխից չհասկացանք այդ։ Մինչդեռ Արկադին...

—Դուք պէտք ունիք նրան,—հարցրեց Բազարովը։

—Հերիք է, Եվգենի Վասիլևիչ։ Ասում էք, թէ նա սիրում է ինձ, և ինձ էլ միշտ այնպէս է թուացել, թէ նրան դուր եմ գալիս։ Գիտեմ, որ ես նրա մօրաքրոջ տեղը կանեմ, բայց չեմ ուզում ձեզանից ծածուկ պահել, որ սկսել եմ նրա մասին աւելի յաճախ միտք անել։ Մի առանձին վայելչութիւն կայ այդ նորատի և թարմ զգացմունքի մէջ...

—Այդպիսի դէպքերում խօսքն աւելի գործածական է,—ընդհատեց Բազարովը. նրա հանդարտ, բայց խուլ ձայնից զգացւում էր, որ մաղձը խառնուել է նրա մէջ։—Երէկ Արկադին ինչ որ գաղտնապահ էր դարձել և հետս խօսելիս՝ ոչ ձեր մասին խօսեց, ոչ էլ ձեր քրոջ...։ Այս նշանաւոր բան է։

—Նա Կատեայի հետ բոլորովին եղբօր պէս է,—խօսեց Աննա Սերգէևնան,—և, ես նրա այդ բանը հաւանում եմ, թէպէտ, գուցէ և հարկաւոր չէր թոյլ տալ, որ նրանք այդքան մտերմանային։

—Ձեր մէջ խօսողը—ձեր այդ քոյր լինելու զգացմունքն է,—երկարացնելով ասաց Բազարովը։

—Ի հարկէ... բայց ինչու ենք կանգնել։ Գնանք։ Ի՛նչ տարօրինակ խօսակցութիւն է սա, այնպէս չէ՞. Կարո՞ղ էի

սպասել, որ այսպիսի խօսակցութիւն պէտք ունենամ ձեզ հետ։ Գիտէք, որ ձեզանից վախենում եմ... և միևնոյն ժամանակ վստահանում եմ ձեզ, որովհետև իսկապէս դուք շատ բարի էք։

—Նախ որ ես ամենևին բարի չեմ. իսկ երկրորդ էլ որ ես ձեր առաջ բոլոր նշանակութիւնս կորցրել եմ, և դուք ինձ ասում էք, թէ ես բարի եմ...։ Այդ միևնոյն է, թէ մեռելի գլխին ծաղկեայ պսակ դնես։

—Եւգենիյ Վասիլիչ, մեր ձեռին չէ...,—սկսել էր Աննա Սերգէևնան. բայց քամին փչեց, տերևները խշշացրեց, և առաւ, տարաւ նրա խօսքերը։

—Դուք հո ազատ էք,—ասաց Բազարովը մի քիչ յետոյ։—Ուրիշ ոչ մի խօսք կարելի չէր որոշել. քայլերը հեռացան... ամեն ինչ լռեց։

Արկադիյն շուռ եկաւ Կատեայի կողմը. Կատեան հէնց նոյն տեղն էլ նստած էր, միայն գլուխը աւելի քաշ էր գցել։

Կատերինա Սերգէևնա,—խօսեց Արկադիյն դողդոջուն ձայնով և ձեռները հուպ տուած.—յաւիտեան և անդարձ սիրում եմ ձեզ, և բացի ձեզանից ոչ ոքի չեմ սիրում։ Ուզում էի ձեզ այս բանն ասել, ձեր կարծիքն իմանալ և խնդրել ձեր ձեռքը, որովհետև ես թէ հարուստ չեմ և թէ զգում եմ, որ պատրաստ եմ ամէն տեսակ զոհաբերութիւն անելու... Չէք պատասխանում։ Չէ՞ք հաւատում։ Կարծում էք թեթևամտօրէն է ասածս։ Բայց յիշեցէք այս վերջին օրերս։ Մի՞թէ վաղուց ի վեր չհամոզուեցաք, թէ ուրիշ ամեն բան—լաւ իմացէք—ամեն, ուրիշ ամեն բան վաղուց արդէն անհետ հեռացել է։ Նայեցէք ինձ, մի բառ ասացէք ինձ...։ Ես, ես ձեզ սիրում եմ,— հաւատացէք խօսքիս։

Կատեան ծանրախոհ և պայծառ հայեացքով մտիկ տուաւ Արկադիյին և, երկար խորհելուց յետոյ, հազիւ ժպտալով, ասաց՝—Այո։

Արկադիյն նստած տեղից վեր թռաւ։

—Այո՛. Դուք «այո» ասացիք, Կատերինա Սերգէևնա։ Ի՞նչ է նշանակում այդ խօսքը։ Ա՞յն, թէ ես ձեզ սիրում եմ և դուք հաւատում էք ինձ... Թէ՞... թէ... չեմ համարձակւում աւարտել...։

—Այո,—կրկնեց Կատեան, և այս անգամ Արկադիյն

նրա միտքը հասկացաւ։ Նա խլեց նրա խոշոր, գեղեցիկ ձեռքերը և, ոգևորութիւնից շունչը բռնուած, սրտին սեղմեց։ Նա հազիւ էր կարողանում ոտքի վրայ կենալ և շարունակ կրկնում էր։ «Կատեա, Կատեա...», իսկ Կատեան մի տեսակ անմեղաբար լաց եղաւ՝ ինքն էլ իւր արցունքների վրայ ծիծաղելով։ Ով որ իւր սիրած էակի աչքերին չէ տեսել այդպիսի արտասուք, նա դեռ չէ զգացել, թէ ո՛ր աստիճան մարդս կարող է, ամբողջովին երախտագիտութիւնից ու ամօթից մարած, երջանիկ լինել աշխարքիս մէջ։

Միւս օրը առաւօտեան վաղ Աննա Սերգէևնան հրամայեց, որ Բազարովին կանչեն իւր առանձնասենեակը, և, ակամայ ժպիտը երեսին, նրան տուեց մի ծալած նամակի թուղթ։ Այդ Արկադիյի նամակն էր, դրանով Արկադիյն Կատեայի ձեռքն էր խնդրում։

Բազարովը շուտով կարդաց նամակը, և իւր վրայ ուժ բանեցրեց, որպէս զի չարտայայտէ այն չարախնդիր զգացմունքը, որ վայրկենապէս բորբոքուեցաւ նրա կրծքում։

—Այսպէս հա՛,—ասաց նա,—իսկ դուք, կարծեմ, դեռ երէկ կարծում էիք, թէ նա եղբայրական սիրով է սիրում Կատերինա Սերգէևնային։ Այժմ ի՞նչ էք մտադիր անելու։

—Դո՞ւք ինչ խորհուրդ կտաք,—հարցրեց Աննա Սերգէևնան, շարունակելով ծիծաղել։

—Կարծում եմ,—պատասխանեց Բազարովը նմանապէս ծիծաղելով, թէպէտ և, Աննա Սերգէևնայի նման, ամենևին ոչ ուրախ էր և ոչ էլ ծիծաղն էր գալիս,—կարծում եմ, որ պէտք է երիտասարդներին օրհնել։ Ամենայն կողմից յաջող ամուսին է. Կիրսանովը լաւ կարողութիւն ունի, հօր մինուճար զաւակն է, և հայրն էլ լաւ մարդ է, չի ընդդիմանալ։

Օդինցեան սենեակի մէջ ետ ու առաջ ման եկաւ։ Նրա դէմքը փոփոխաբար մէկ կարմրում էր, մէկ՝ դեղնում։

—Կարծում էք,—ասաց նա։—Ի՞նչ կայ որ. ես արգելք չեմ տեսնում...։ Ուրախ եմ Կատեայի համար... և Արկադիյ Նիկոլայիչի համար։ Ի հարկէ, կսպասեմ հօր պատասխանին։ Հէնց իրեն կուղարկեմ հօրը մօտ։ Ահաւասիկ բանից երևաց, որ ես իրաւացի էի, երբ երէկ ասում էի, թէ մենք երկուս էլ արդէն ծերացել ենք...։ Ինչպէ՞ս է, որ ոչինչ չեմ նկատել։ Զարմանում եմ։

Աննա Սերգէևնան նորից ծիծաղեց, և անմիջապէս շուռ եկաւ։

—Այժմուայ երիտասարդները շատ խորամանկ են դարձել,—նկատեց Բազարովը և նոյնպէս ծիծաղեցաւ։—Մնաք բարով,—խօսեց նա դարձեալ, կարճ լռութիւնից յետոյ։—Կը ցանկամ, որ ամենահաճելի կերպով աւարտէք այդ գործը. իսկ ես հեռուից կուրախանամ։

Օդինցեան շտապով դարձաւ նրա կողմը։

—Միթէ գնում էք։ Ինչու այժմս չմնաք՝ որ։ Մնացէք... ձեր հետ զրոյց անելը զուարճալի է... հէնց դիտենաս անդունդի ափումն ես ման գալիս. Սկզբում վախվխում ես, բայց յետոյ վրադ քաջութիւն է գալիս։ Մնացէք։

—Շնորհակալ եմ ձեր առաջարկութեան համար, Աննա Սերգէևնա, նոյնպէս և իմ զրոյց անելու տաղանդիս վրայ ունեցածդ լաւ համարման համար։ Բայց իմ հասկացողութեամբս ես արդէն իսկ չափազանց երկար մնացի ինձ օտար մթնոլորտի մէջ։ Թռչող ձկները մի առ ժամանակ կարող են մնալ օդի մէջ, բայց շուտով պէտք է չլմփան ջրի մէջ. թոյլ տուէք ես էլ իմ մթնոլորտիս մէջ ընկնեմ.

Օդինցեան մտիկ տուաւ Բազարովին։ Դառն ժպիտը ծամռել էր Բազարովի դէմքը։ «Սա ինձ սիրում է» մտածեց Օդինցեան—և Բազարովը նրա ափսոսը եկաւ, և կարեկցաբար ձեռքը մեկնեց նրան։

Սակայն Բազարովն էլ հասկացաւ Աննա Սերգէևնայի մտածմունքը։

—Ոչ,—ասաց նա և մի քայլ յետ քաշուեցաւ։—Թէպէտ ես աղքատ մարդ եմ, բայց դեռ մինչև այժմ ողորմութիւն չեմ ընդունել։ Մնաք բարով, և առողջ լինիք։

—Համոզուած եմ որ սա վերջին տեսնուածներս չի լինի,—ասաց Աննա Սերգէևնան ակամայ շարժում անելով։

—Աշխարհիս երեսին ինչ ասես չի պատահիլ,—ասաց Բազարովը, գլուխ տուեց և դուրս եկաւ։

—Ուրեմն որոշել ես տուն-տեղ լինել, ճլի,—ասում էր նա նոյն օրը Արկադիյին՝ կկուզ նստած՝ իրերը ճամպրուկի մէջ տեղաւորելով։—Վնաս չունի. լաւ բան է։ Բայց իզուր էիր աշխատում ինձանից ծածկել։ Ես քեզանից բոլորովին ուրիշ բան էի սպասում։ Կամ, չլինի այդ բանը քեզ էլ է շշկլացրել։

—Ուղիղ է, քեզանից բաժանուելիս ես այս բանը չէի

սպասում,—պատասխանեց Արկադիյն,—բայց ինչու ես ինքդ էլ խաբում ասելով՝ «լաւ բան է», կարծես թէ չգիտեմ, թէ դու ինչ կարծիք ունիս ամուսնութեան վրայ։

—Էհ, սիրելի բարեկամ,—ասաց Բազարովը.—այդ ինչ տեսակ ես խօսում։ Հո տեսնում ես ինչ եմ անում՝—ճամպրուկիս մէջ դատարկ տեղ է մնացել և ես այդ տեղը խոտով եմ լցնում. այդպէս նա և մեր կեանքի ճամպրուկը՝—ինչով ուզում ես լցրու, միայն դատարկ չմնայ։ Խնդրում եմ, մի նեղանալ. հաւանօրէն յիշկիս կլինես, թէ ինչ կարծիք ունէի Կատերինա Սերգէևնայի վրայ։ Աղջկերանց մէջ սմանք խելօքի անուն ունին միմիայն նրա համար, որ խելացի կերպով հառաչել գիտեն. բայց քոնը իր գլուխը կպահի, և այնպէս կպահի, որ քեզ էլ իւր ձեռների մէջ կհաւաքի,—էհ, այդ այդպէս էլ հարկաւոր էր։—Նա խուփը ծածկեց ու յատակի վրայից վեր կացաւ։—Իսկ այժմս մնաս բարևի միջոցիս կրկնում եմ... որովհետև խաբելու բան չկայ,—մենք առ միշտ բաժանւում ենք միմեանցից, և դու էլ ես զգում այդ... խելօք բան ես անում. դու մեր դառն, անհամ, յարկազուրկ կեանքի համար չես ստեղծուած։ Քու մէջդ ոչ յանդգնութիւն ունիս, ոչ չարութիւն, հապա ունիս միայն երիտասարդական համարձակութիւն ու երիտասարդական խիզախութիւն. այդ մեր գործին չի գալ։ Դուք, ազնուականներդ ազնիւ հեզութիւնից կամ ազնիւ բորբոքումից դէնը չէք անցնիլ, իսկ այդ դատարկ բան է։ Դուք, օրինակ, չէք կռւում, բայց արդէն ձեզ կտրիճ էք կարծում։

—Իսկ մենք կռուել ենք ուզում։ Է՛հ։ Մեր փոշին՝ քու աչքերդ կ՚ծուրացնի, մեր ցեխը քեզ կկեղտոտի, դու նոյն իսկ մեր բարձրութեանը չես էլ հասել. դու ակամայ զուարճանում ես քեզանով, ինքդ քեզ հայհոյելը քեզ հաճոյք է պատճառում. իսկ մեզ համար այդ բանը տաղտկալի է—մի ուրիշ բան է հարկաւոր, մենք պէտք է ուրիշներին կոտրենք։ Դու պատուական երիտասարդ ես. բայց և այնպէս թրջուած, ազատամիտ աղա ես—է վ ո լ ա տ ո ւ (այսքան միայն), ինչպէս ասում է իմ հայրս։

—Առ միշտ ես բաժանւում ինձանից, Եւգենիյ, տխուր կերպով ասաց Արկադիյն,—և ինձ ասելու ուրիշ խօսք չունիս։

Բազարովը ծոծրակը քորեց։

—Ունիմ, Արկադիյ, ունիմ. ուրիշ խօսքեր էլ ունիմ ա-

սելու, բայց չեմ ասի. այդ ռոմանտիզմ կլինի. այդ նշանակում է—բոլորովին մեղկանալ։ Բայց դու շուտով ամուսնացիր, ու քեզ համար բուն դիր, ու շատ զաւակներ հասցրու։ Նրանք խելքը գլխին մարդիկ կլինին արդէն նրանով, որ իսկը ժամանակին ծնուած կլինին, և ոչ թէ մեզ նման ժամանակից առաջ։ Ըհը, տեսնում եմ ձիերը պատրաստ են։ Ժամանակ է։ Ամենքին մնաք բարով արել եմ...։ Հը, համբուրուե՞նք, ինչ է։

Արկադին ընկաւ իր նախկին դաստիարակչի և ընկերոջ վզովն ու արտասունքները դուրս ցայտեցին նրա աչքերից։

—Ի՜նչ ասել է երիտասարդութիւն,—հանդարտ կերպով արտասանեց Բազարովը։—Բայց ես Կատերինա Սերգէևնայի վրայ յոյս ունեմ։ Կտեսնես, թէ ինչպէս ձեռաց կմխիթարէ քեզ։

—Մնաս բարով, եղբայր,—ասաց նա Արկադիին՝ արդէն կառք նստելուց յետոյ, և ախոռի կտրան նստած զոյգ ճայերը ցոյց տալով աւելացրեց.—Ահա քեզ. ուսումնասիրիր։

—Այդ ինչ է նշանակում,—հարցրեց Արկադին։

—Ի՞նչ։ Միթէ այդքան թոյլ ես բնական պատմութիւնից, կամ մոռացել ես, որ ճայը ամենապատուաւոր, տնարար թռչունն է։ Քեզ օրինակ...։ Մնաք բարով, սինիօր։

Կառքը թխթխկաց ու գնաց։

Բազարովը ուղիղն ասաց։ Երեկոյեան Կատեայի հետ խօսելիս՝ Արկադին բոլորովին մոռացել էր իր դաստիարակչին։ Նա արդէն սկսել էր ենթարկուել Կատեայի ազդեցութեան, և սա այդ զգում էր, և չէր զարմանում։ Միւս օրը Արկադին Մարյինո պիտի գնար Նիկոլայ Պետրովիչի մօտ։ Աննա Սերգէևնան չէր ուզում երիտասարդներին խանգարել, և միմիայն վայելչութեան համար նրանց խիստ երկար չէր թողնում մենակ։ Նա մեծահոգութեամբ նրանցից հեռացրեց իշխանուհուն, որը առաջիկայ ամուսնութեան լուրն իմանալով կատաղութեան արցունք թափեց։ Սկզբում Աննա Սերգէևնան վախենում էր, թէ մի գուցէ նրանց երջանկութեան տեսարանը իրեն համար մի քիչ ծանր թուայ. մինչդեռ բոլորովին հակառակը եղաւ՝—այդ տեսարանը ոչ միայն ծանր չթուեցաւ, հապա դա նրան զբաղեցնում, դա նրան խանդաղատեցնում էր վերջապէս։ Աննա Սերգէևնան այդ բանին թէ

ուրախացաւ և թէ տրտմեցաւ։ «Ինչպէս երեւում է իրաւացի է Բազարովի ասածը»,—մտածեց նա,—հետաքրքրութիւն, լոկ հետաքրքրութիւն էր, և սէր դէպի հանգիստը, և եսականութիւն...։

—Հը՜, տղայք,—ասաց նա բարձր ձայնով,—սէրը արհեստական զգացմունք է։

Բայց ոչ Կատեան և ոչ էլ Արկադին նրա ասածը նոյն իսկ չհասկացան։ Նրանք խոյս էին տալիս նրանից. նրանց մտքից չէր հեռանում այն խօսակցութիւնը, որ ակամայ լսել էին։ Ասենք Աննա Սերգէևնան շուտով նրանց հանգստացրեց, և այդ անելը մի դժուար բան չէր՝—նա ինքը հանգստացաւ։

XVII

Ինչքան ծերուկ Բազարովները քիչ էին սպասում իրենց որդու գալուն, այնքան աւելի եղաւ նրանց ուրախութիւնը նրա անակնկալ վերադարձի վրայ։ Արինա Վլասիևնան այնքան վեր ու վարի մէջ եղաւ, այնքան դէս ու դէն ընկաւ տան մէջ, որ Վասիլիյ Իւանովիչը նրան «կաքաւահաւի» նմանեցրեց՝—ճիշտ որ կարճիկ կոֆտի կտրած պոչը նրան մի տեսակ թռչնի տեսք էր տալիս։ Մինչդեռ ինքը, Վասիլիյ Իւանովիչը մռնչում էր միայն ու չիբուխի սաթը բերանի մէջ մի կողմ առած կծոտում, մէկ էլ ձեռքով բռնում էր վիզը ու գլուխը պտտում, ասես թէ ուզում լինէր փորձել, թէ գլուխը պի՞նդ է ամրացրած, և յանկարծ լայն բաց էր անում բերանը և առանց ձայն հանելու քրքջում։

—Ահագին, վեց շաբաթ ժամանակով եմ եկել, ծերուկ,—ասաց նրան Բազարովը.—ուզում եմ պարապել, տես, չխանգարես։

—Այնպէս կխանգարեմ քեզ, որ երեսիս պատկերն էլ մոռանաս,—պատասխանեց հայրը։

Նա իր խօսքը կատարեց։ Որդուն դարձեալ առանձնասենեակը տալով, նա համարեա թէ թաք էր կենում նրանից, և կնոջն էլ զսպեց, որ աւելորդ քնքշութեան զգացմունքներ չարտայայտէ։ «Մենք, հոգի ջան,—ասում էր կնոջը,—առաջի եկածին Ենիւշկային մի փոքր ձանձրացրինք. պէտք է այժմ աւելի խելօք լինել։ Արինա Վլասիևնան համաձայնում էր ամուսնուն, բայց դրանից շատ բան չէր շահում, որովհետև

Նա իւր որդուն միայն ճաշի միջոցին էր տեսնում և բոլորովին վախենում էր հետը բերան բանալ, խօսել։ Երբեմն հազիւ «Նիւշենկա» կ'ասէր,—և դեռ Բազարովը ետևը չդարձած, կ'ժողովէր ռեդիկիւլի կապերն ու կ'թոթովէր. «ոչինչ, ոչինչ, բան չկայ», և յետոյ կ'գնար Վասիլիյ Իվանովիչի մօտ ու երեսը ձեռքին դէմ տուած, կասէր. «ինչպէս անէինք, որ մի իմանայինք, թէ Ենիւշան այսօր ճաշին ինչ կ'ուզի, բօրշչ թէ շչի»։—«Ինչի՞ չէիր ինքդ հարցնում «իրեն»։ «Հապա՛ որ զահլան տանեմ»։ Սակայն շուտով Բազարովը ինքը դադարեց սենեակում կողպուելուց՝—աշխատելու տենդն անցել էր և տեղի տըւել թախծալի տաղտուկի ու խուլ անհանգստութեան։ Տարօրինակ յոգնածութիւն էր նկատւում նրա բոլոր շարժումների մէջ. մինչև անգամ նրա հաստատուն ու յառաջընթաց խիզախ քայլուածը փոխուել էր։ Նա դադարեց մենակ զբօսնելուց և սկսեց ընկերութիւն փնտրել. թէյը ընդունարանում էր խմում, Վասիլիյ Իվանովիչի հետ բանջարանոցում զբօսնում ու լուռ ու մունջ ծխում. մի անգամ էլ հայր Ալեքսէյի մասին հարցրեց։ Վասիլիյ Իւանովիչը սկզբում ուրախացաւ այս փոփոխութեանը, բայց նրա ուրախութիւնը երկար չքաշեց։ «Ենիւշան աչքս վախեցնում է», ծածուկ գանգատւում էր նա կնոջը. «չէ թէ անգոհունակ է կամ զայրացած, այդ որ լինէր՝ բան չկար. բայց նա վշտացած է, տխուր է—ահա վատը։ Շարունակ լուռ է. գոնէ մեր վրան նեղանար. նիհարում է, երեսի գոյնն էլ մի գոյն չէ»։—«Արարիչ Աստուած» շշնջում էր պառաւը. «վիզը համայիլ կ'կախէի, բայց գիտեմ, չի թողնելու»։ Վասիլիյ Իւանովիչը մի քանի անգամ փորձեց ամենազգոյշ կերպով Բազարովին հարց ու փորձ անել նրա պարապմունքի, առողջութեան, Արկադիյի մասին... Բայց Բազարովը դժկամակելով ու անհոգ պատասխան էր տալիս և մի անգամ, նկատելով, որ հայրը խօսակցութեան մէջ աշխատում է բան փորփրել, սրտնեղած ասաց. «ի՞նչ ես շարունակ չորս կողմս պտոյտ պտոյտ անում։ Այս արածդ առաջուանից էլ վատ է»։—«Դէ լաւ, լաւ, լաւ, բան չկայ» շտապով պատասխանեց խեղճ Վասիլիյ Իւանովիչը։ Առանց հետևանքի մնացին նաև նրա քաղաքական ակնարկները։ Մի անգամ խօսք բանալով գիւղացիների մօտալուտ ազատութեան, և առաջադիմութեան վրայ, յոյս ունէր որդու համակրութիւնը զարթեցնել, բայց նա անտարբերութեամբ ասաց. «երեկ անցնում եմ ցանկապատի մօտով ու լսում, որ այստեղի երեխաները փոխանակ մի որ և իցէ հին երգ ասելու, գոռում են՝ «Հաստատ ժամանակը գալիս է, հոգիս սիրով է ծարաւ...» ահա քեզ առաջադիմութիւն։

Երբեմն Բազարովը գնում էր գիւղ և մի որ և իցէ գիւղացու հետ սկսում. ըստ սովորութեան, ծաղրանքով զրոյց անել. «Հը՛, ախպեր ջան», ասում էր նա «դէ մի կեանքի մասին քո աշխարհայեցութիւնդ պարզիր ինձ. ախր ասում են դուք էք Ռուսիայի բոլոր ապագան և ուժը, պատմութեան մէջ ձեզանով նոր էջ է սկսուելու,— դուք թէ իսկական լեզու, և թէ օրէնք էք տալու»։ Գիւղացին կամ ոչինչ պատասխան չէր տալիս, կամ սրա նման խօսքեր ասում՝ «Մենք կարանք... որ է, ինչքան որ հող ա բաժին ընկել»։—«Դու ինձ հասկացրու, թէ ինչ բան է ձեր աշխարհը (հասարակութիւնը)» ընդհատում էր Բազարովը նրա խօսքը,—դա հո այն աշխարհը չէ, որ երեք ձկների վրայ է հաստատուած»։ *)

—Էդ, աղա ջան, աշխարքն է երեք ձկների վրայ,—հանդուցին, նահապետական բարեհոգի եղանակով ասում էր գիւղացին երկարացնելով,—իսկ մեր հասարակութիւնը, յայտնի բան է, աղեքանց կամքը չի. դուք հո մեր հայրն էք։ Քանի աղէն խիստ պահանջող լինի, էնքան գիւղացիք նրան հաւան կ'կենան։

Այսպիսի խօսքեր լսելով, Բազարովը մի անգամ արհամարհանքով ուսերը վեր քաշեց ու շուռ եկաւ, իսկ գիւղացին իր ճամբան շարունակեց։

—Էդ ինչ էիք խօսում,—հարցրեց նրան մի ուրիշ, միջին տարիքի ու խոժոռ դէմքով գիւղացի, որ հեռու, իւր խըրճթի շեմքին կանգնած, տեսել էր նրանց խօսակցութիւնը։—Չտուած հարկի մասին հո չէ՞ր։

—Ի՛նչ հարկ, ինչ բան,—պատասխանեց առաջին գիւղացին, և նրա ձայնի մէջ ոչ միայն նահապետական արտայայտութեան հետքն անգամ չկար, հապա ընդհակառակն, արհամարհոտ դաժանութիւն էր զգացւում,—հէնց էնպէս, ինչ ասես դուրս էր տալիս. լեզուն քոր էր գալիս. աղա չէ՞ քեզ. ինչ նրա խելքի բանն ա»։

—Ի՛նչ խելքի բանն ա,—պատասխանեց միւս գիւղացին

*) Ռուսերէն Міръ նշանակում է աշխարհ, և համայնք։ Ծ. Թ.

և երկուսն էլ, գլխարկները թափ տալով ու գոտու ծայրերը հաւաքելով, սկսան իրենց գործերի ու կարիքների վրայ խօսել։ Աւաղ, ուսերն արհամարհանքով վեր գցող, գիւղացիների հետ խօսել կարողացող Բազարովը (ինչպէս պարծենում էր Պաւէլ Պետրովիչի հետ վիճելիս), այդ ինքնավստահ Բազարովը չէր կարծիք տանում, որ գիւղացիների աչքում ինքը դարձեալ տակի մասխարի պէս մի բան էր։

Սակայն վերջապէս իրեն համար գործ գտաւ նա։ Մի անգամ Վասիլիյ Իւանովիչը նրա ներկայութեամբ կապում էր մի գիւղացու վիրաւոր ոտքը, բայց ծերունու ձեռները դողդողում էին և չէր կարողանում վիրակապը կարգին փաթաթել, որդին օգնեց, և այդ օրուանից սկսաւ մասնակցել հօր բժշկութեան գործին, և միևնոյն ժամանակ ծաղրել և՛ այն դարմանները, որ ինքն էր խորհուրդ տալիս գործածել, և հօրը, որ անմիջապէս գործ էր դնում այդ։ Բայց Վասիլիյ Իւանովիչն ամենևին չէր շփոթւում Բազարովի ծաղրից, նա մինչև անգամ դրանով մխիթարւում էլ էր։ Իւղոտած գիշերազգեստը երկու մատով փորի վրայ բռնած ու չիբուխը ծխելով, նա գոհութեամբ լսում էր Բազարովի ասածները, և որքան աւելի չարութիւն լինէր նրա խօսքերի մէջ, այնքան աւելի բարեհոգութեամբ քրքջում էր, և երևան հանում իր բոլոր, մինչև վերջին սևացած ատամները։ Նա մինչև անգամ կրկնում էր որդու երբեմն բութ կամ անիմաստ խօսքերը, և օրինակ մի քանի օր շարունակ տեղի-անտեղի կրկնում էր այս՝ «Դէ, այդ իննի բան է» միմիայն այն պատճառով, որ որդին իմանալով, թէ նա առաւօտեան ժամ է գնացել, այդ դարձուածքն էր գործ ածել։ «Փառք Աստուծոյ. թախիծն անցաւ»—կրկնում էր նա իր ամուսնուն. «այսօր ինչպէս գլուխս լուաց. տեսնելու բան էր»։ Եւ այն միտքը, թէ մի այսպիսի օգնական ունէր, բերկրութեամբ և հպարտութեամբ լցնում էր նրան։ «Հապա, հապա», ասում էր նա տղամարդի կապայ հագած ու պոչաւոր գլխանոցով մի որ և իցէ գեղջկուհու գիլեարդի ջրի շիշը կամ քսելու իւղի սրուակը տալով. «դու, սիրելիս, պէտք է ամեն մի րոպէ Աստուծուն փառք տաս, որ որդիս այստեղ հիւր է՝—դու այժմս ամենագիտական ու նորագոյն միջոցով ես բժշկւում, հասկանո՞ւմ ես թէ ոչ։ Ֆրանսիացիների կայսրը Նապոլէոնը, մինչև անգամ նա էլ դրանից լաւ բժիշկ չունի»։ Իսկ գեղջկուհին որ եկել էր յայտ-

նելու, որ «ծակոցքն է դուրս եկել» (թէպէտ այս խօսքերի իմաստը նա ինքն էլ չէր կարող բացատրել), շարունակ գլուխ էր տալիս ու ձեռքը ծոցը տանում, ուր նա երեսսրբիչի ծայրին կապած չորս ձու էր բերել։

Բազարովը մի անգամ նոյն իսկ գազի ապրանք ծախող փերեզակի ատամը հանեց, և թէպէտ այդ ատամը սովորական ատամներից էր, բայց Վասիլիյ Իւանովիչը իբրև հազուագիւտ բան պահեց այդ և, տէր Ալեքսէյին ցոյց տալով, շարունակ կրկնում էր։

—Մի մտիկ տուէք, թէ ինչպիսի արմատներ ունի։ Ի՛նչ ոյժ պէտք է ունեցած լինի Եւգենիս։ Խեղճ փերեզակը օդի մէջ կախ ընկաւ...։ Հաւատա-կաղնի որ լինէր, այն էլ արմատով կհանէր...։

— Գովելի է,—խօսեց վերջապէս տէր Ալեքսէյը, որ չը գիտէր թէ ինչ ասի և ինչպէս ազատուի ոգևորութեամբ գերգռուած ծերուկի ձեռքից։

Մի անգամ հարևան գիւղից մի գիւղացի իր ժանտատենդով հիւանդ եղբօրը բերեց Վասիլիյ Իւանովիչի մօտ. խեղճը երեսի վրայ յարդի վրայ ընկած մեռնում էր. սև բծերը ծածկել էին նրա մարմինը. Նա վաղուց էր գիտակցութիւնը կորցրել։ Վասիլիյ Իւանովիչը ցաւ յայտնեց, որ ոչ ոք միտք չէր արել մի քիչ առաջ դիմելու բժշկութեան և ասաց, որ ազատում չկայ։ Յիրաւի գիւղացին գեղ չհասած՝ եղբայրը ճամբին կառքի մէջ էլ մեռաւ։

Երեք օր անց Բազարովը մտաւ հօր սենեակը և հարցրեց, թէ արդեօք խարանաքար չունի։

—Ունիմ. ինչի՞դ է։

—Պէտք է... վէրք այրելու համար։

—Ո՞ւմ վէրքը։

—Իմ։

—Ինչպէս թէ քո։ Ինչո՞ւ համար։ Ինչ վէրք։ Ո՞ւր է։

—Ահաւասիկ, մատիս վրան է։ Այսօր գնացել էի հարևան գիւղը, այն որ ժանտատենդով հիւանդ էին բերել։ Չգիտեմ ինչու պատրաստւում էին հանգուցեալի մարմինը ճղքել, իսկ ես վաղուց է այդ բանի փորձը արած չէի։

—Յետո՞յ։

—Յետոյ գաւառական բժշկին խնդրեցի, որ թողնի ես անեմ. ու մատս կտրեցի։

Վասիլիյ Իւանովիչը յանկարծ բոլորովին սփրթնեց և, առանց մի խօսք ասելու, վազեց իւր առանձնասենեակը և անմիջապէս խարանաքարը ձեռքին դուրս թռաւ։ Բազարովն ուզում էր քարն առնել ու գնալ։

—Ի սէր Աստուծու,—աղաչական ձայնով ասաց Վասիլիյ Իւանովիչը,—թող ինքս անեմ։

Բազարովը քմծիծաղեց։

—Ի՛նչ սէր ես ունեցել բժշկութիւն անելու։

—Հանաք մի անի, ի սէր Աստուծու։ Ցոյց տուր մատդ. վէրքը մեծ չէ։ Չի՞ ցաւում։

—Հուպ տուր, մի վախի։

Վասիլիյ Իւանովիչը կանգ առաւ։

—Ինչ ես կարծում, Եւգենիյ, աւելի լաւ չի՞ երկաթով այրենք։

—Այդ առաջ պէտք էր անել. իսկ այժմ, իսկապէս, խարանաքարն էլ աւելորդ է։ Թէ որ վարակուած լինիմ, այն ժամանակ արդէն ուշ է։

—Ինչպէս թէ... ուշ է...,—հազիւ կարողացաւ արտասանել Վասիլիյ Իւանովիչը։

—Ի հարկէ, անցածն արդէն չորս ժամից աւելի է։

Վասիլիյ Իւանովիչը վէրքը մի քիչ էլ այրեց։

—Բայց միթէ գաւառական բժիշկը խարանաքար չունէ՞ր։

—Չունէր։

—Ա՜յս ինչ բան է, Տէր Աստուած։ Բժիշկ լինի ու մի այդպիսի անհրաժեշտ բան չունենայ։

—Դու մի նրա նշտրակը տեսնէիր,—ասաց Բազարովն ու սենեակից դուրս եկաւ։

Մինչև իրիկուն և միւս օրն ամբողջ օրը Վասիլիյ Իւանովիչն ամենայն տեսակ հնարաւոր առիթ էր գտնում իւր որդու սենեակը մտնելու, և թէպէտ ոչ միայն նրա վէրքի անունը չէր տալիս, հապա նոյն իսկ աշխատում էր բոլորովին կողմնակի նիւթերի վրայ խօսել, բայց այնպէս յամառութեամբ մտիկ էր տալիս որդու աչքերին և մի այնպիսի վրդովմունքով հետևում էր նրան, որ Բազարովի համբերութիւնը կտրուեցաւ և նա սպառնաց, որ կ'գնայ։ Վասիլիյ Իւանովիչը նրան խօսք տուեց, որ անհանգիստ չի անիլ, մանաւանդ որ Արինա Վլասիևնան էլ, որից նա, ի հարկէ ամեն բան ծածուկ էր պահել, սկսել էր չարունակ հարց ու փորձ անել,

թէ ինչի՞ չի քնում, ի՞նչ է եղել նրան։ Ամբողջ երկու օր նա արտասպնդւում էր, թէպէտ որդու հալը, որին նա թագուն թագուն դիտում էր դարձեալ, մի հալ չէր... բայց երրորդ օրը ճաշին էլ չհամբերեց։ Բազարովը գլուխը կախ գցած նըստել էր և ոչ մի կերակրի ձեռք չէր տալիս։

—Ինչո՞ւ բան չես ուտում, Եւգենիյ,—ասաց նա դէմքին բոլորովին անհոգ արտայայտութիւն տալով։—Կարծես կերակուրը լաւ է պատրաստած։

—Չեմ ուզում—չեմ ուտում։

—Ախորժակ չունի՞ս։ Գլուխդ հօ չի՞ ցաւում,—աւելացրեց նա վեհերկոտ ձայնով։

—Ցաւում է։ Ինչո՞ւ չպիտի ցաւի որ։

Աննա Վլասիևնան շտկուեցաւ ու ականջը սրեց։

—Խնդրեմ չնեղանաս, Եւգենիյ,—շարունակեց Վասիլիյ Իւանովիչը, թոյլ տուր մի զարկերակդ նայեմ։

Բազարովը տեղից վերկացաւ։

—Ես առանց նայելուդ էլ կ'ասեմ, որ տաքութիւն ունիմ։

—Դող է՞լ ունէիր։

—Դող էլ ունէի։ Գնամ պառկեմ. իսկ դուք ինձ լորենու ծաղկի թէյ ուղարկեցէք։ Երևի մրսել եմ։

—Գիտեմ որ այս գիշեր հազում էիր,—ասաց Արինա Վլասիևնան։

—Մրսել եմ,—ասա՛ց Բազարովը և հեռացաւ։

Արինա Վլասիևնան սկսաւ լորու ծաղկից թէյ պատրաստելով զբաղուել, իսկ Վասիլիյ Իւանովիչը մտաւ կողքի սենեակը ու անձայն բռնեց գլխի մազերը։

Այդ օրը Բազարովը մէկ էլ տեղից վեր չկացաւ, և ամբողջ գիշերը ծանր, կէս մոռացութեան մէջ ընկած նիրհով անցկացրեց։ Գիշերը ժամը մէկին դժուարութեամբ բաց արաւ աչքը, կանթեղի լուսով իւր առաջ տեսաւ հօր դժգոյն դէմքը և պատուիրեց, որ հեռանայ. հայրը հնազանդեցաւ, բայց անմիջապէս էլ ոտքի ծայրերով ներս մտաւ և, կիսով չափ պահարանի դռնակների ետևը թաք կացած, անընդհատ որդուն էր նայում։ Արինա Վլասիևնան էլ պառկած չէր և, առանձնասենեակի դուռը հազիւ հազ բաց արած, անդադար մտնում էր ականջ դնելու «թէ ինչպէս է շունչ առնում Ենիւշան» ու Վասիլիյ Իւանովիչին նայելու։ Նա իւր ամուսնու

միայն անշարժ, կզւած մէջքն էր տեսնում, բայց հէնց այդքան էլ էր նրան մի քիչ թեթեւութիւն պատճառում։ Առաւօտեան Բազարովը փորձեց վեր կենալ. գլուխը պտոյտ եկաւ, քթից արիւն գնաց. նորից պառկեցաւ։ Վասիլիյ Իվանովիչը լուռ ու մունջ ծառայում էր նրան։ Արինա Վլասիեւնան ներս մտաւ ու հարցրեց, թէ ինչպէս է։ Բազարովը պատասխանեց՝ «մի քիչ լաւ եմ», և երեսը պատին արաւ։ Վասիլիյ Իւանովիչը երկու ձեռքը թափ տուեց կնոջ կողմը թէ գնա. սա շրթունքը կծեց, որպէս զի լաց չլինի, ու դուրս գնաց։ Ասես թէ տան մէջ յանկարծ ամեն ինչ մթնեց. բոլորի դէմքերն էլ ձգուեցան, տարօրինակ լռութիւն ընկաւ. բակից հեռացրին, գիւղ ուղարկեցին մի ձայնեղ աքլոր, որը երկար ժամանակ չէր կարողանում հասկանալ, թէ ինչու էին իր հետ այդպէս վարւում։ Բազարովը դէմքը պատին պառկած էր դեռ։ Վասիլիյ Իւանովիչն ուզեց զանազան հարցեր տալ նրան։ Բայց այդ հարցերը Բազարովին յոգնեցնում էին, և ծերունին բազկաթոռի մէջ մնաց արձանացած. միայն երբեմն մատներն էր չրխկացնում։ Նա մի քանի րոպէ միայն գնում էր պարտէզ, ասես աննկարագրելի ապշութեամբ բռնուած՝ մնում էր քարացած (առ հասարակ ապշութեան արտայայտութիւնը նրա դէմքից չէր հեռանում) ու նորից որդու մօտն էր գալիս աշխատելով, որ կնոջ հարց ու փորձերից խոյս տայ։ Կինը վերջապէս բռնեց նրա ձեռքից և ջղաձգաբար, համարեա սպառնալով ասաց. «Դէ մի ասա է՞, ինչ ունի»։ Այստեղ նա գլխի ընկաւ և ի պատասխանի նրա հարցման, զոր արաւ, ժպտալու. բայց ինքն էլ սարսափեց, երբ տեսաւ, որ ժպտալու փոխանակ չըգիտես որտեղից ծիծաղ դուրս պրծաւ։ Նա առաւօտուանից բժշկի ետևից մարդ էր ուղարկել։ Կարևոր սեպեց այդ բանն իմացնել որդուն, որպէս զի չլինի թէ նեղանայ։

Բազարովը գահաւորակի վրայ յանկարծ շուռ եկաւ, աչքը սևեռած ու բութ հայեացքով մտիկ տուեց հօրն ու ջուր ուզեց.

Վասիլիյ Իւանովիչը ջուրը տուեց նրան և ի դէպ ճակատն էլ շօշափեց։ Ճակատն այրւում էր։

—Ծերուկ,—ասաց Բազարովը խռպոտ ու դանդաղ ձայնով,—բանս բուրդ է։ Ես վարակուել եմ, և մի քանի օրից ինձ կ'թաղես։

Վասիլիյ Իվանովիչը օրօրուեցաւ, ասես թէ մէկը ոտներին խփած լինէր։

—Եւգենիյ,—թոթովեց նա,—այդ ինչ ես ասում..Տէր ընդ քեզ։ Դու մրսել ես...։

—Ի՛նչ ես ասում,—առանց շտապելու ընդհատեց նրան Բազարովը։—Բժշկի ներելի չէ այդպէս խօսել։ Վարակուելու բոլոր նշաններն էլ կան, ինքդ էլ գիտես։

—Ո՞ւր է...վարակման նշան, Եւգենիյ... ի՛նչ ես ասում։

—Հապա այս ինչ է,—ասաց Բազարովը և շապկի թևը բարձրացնելով ցոյց տուեց մարմնի վրայ դուրս տուած չարագուշակ կարմիր բծերը։

Վասիլիյ Իւանովիչը ցնցուեց և ահից սառեց։

—Ասենք,—խօսեց նա վերջապէս,—ասենք, եթէ... եթէ մինչև իսկ..այդպիսի մի բան... վարակումն...։

—Պիէմիա,—յիշեցրեց որդին։

—Այո...մի տեսակ..եպիդեմիա...։

—Պիէմիա,—խիստ ու որոշ կերպով սկսեց Բազարովը,—չլինի՞ արդէն տետրակներդ մոռահան ես արել։

—Հա, հա, ինարկէ, թող քու ասածը լինի...Բայց դարձեալ կ'բժշկենք քեզ։

—Տես որ չբժշկես։ Բայց բանն այդ չէ։ Չէի կարծում, թէ այսպէս շուտ կ'մեռնեմ. սա, ճիշտն ասած, մի շատ անախորժ պատահմունք է։ Այժմ դու էլ, մայրիկն էլ պիտի աշխատէք օգուտ քաղել ձեր խորին հաւատից. ահաւասիկ հաւատքը փորձի ենթարկելու առիթ։—Նա մի քիչ էլ ջուր խմեց։—Իսկ ես ուզում եմ քեզնից մի բան խնդրել...քանի դեռ գլուխս իմ իշխանութեան տակ է։ Գիտես որ վաղը կամ միւս օր ուղեղս հրաժարական կ'տայ։ Այժմ էլ արդէն վստահ չեմ, թէ մտքերս որոշակի եմ յայտնում, թէ ոչ։ Մինչ պառկած էի, ինձ թւում էր, թէ չորս բոլորքս կարմիր շներ են վազվզում, իսկ դու իմ գլխի վերև փայտամորիկ տեսած որսի շան նման՝ մնացել էիր կանգնած։ Հէնց գիտենաս հարբած լինեմ։ Լա՞ւ ես հասկանում ասածներս։

—Ինչեր ես ասում, Եւգենիյ. բոլորովին կանոնաւոր կերպով ես մտքերդ յայտնում։

—Աւելի լաւ. ասացիր, որ բժշկի ես ուղարկել...Դրանով քեզ ես մխիթարել...ինձ էլ մխիթարես. մարդ ղրկի...

—Արկադիյ Նիկոլայիչին,—վրայ բերեց ծերունին։

—Ո՞վ է Արկադիյ Նիկոլայիչը,—ասաց Բազարովը մտախոհութեամբ...,—Ա՛խ, հա. այդ նետափետուրը։ Ոչ, նրան ձեռք մի տայ. նա այժմ ճայ է դարձել։ Մի զարմանայ. սա դեռ ես զառանցանք չէ։ Դու մարդ ղրկիր Օդինցովային, Աննա Սերգէեւնային, այստեղ մի այդպիսի կալուածատէր կին կայ...Ճանաչում ես։ (Վասիլիյ Իւանովիչը գլխով արաւ)։ Կասես Եւգենիյ Բազարովը բարև էր անում ու ասում, որ մեռնում է։ Կանե՞ս։

—Կանեմ...։Բայց միթէ կարելի բան է, որ դու մեռնես, դու, Եւգենիյ...ինքդ դատիր։ Դրանից յետոյ էլ արդարութիւն կա՞յ։

—Ես այդ չգիտեմ. բայց դու մարդ ղրկիր։

—Այս րոպէիս կուղարկեմ, ինքս էլ նամակ կգրեմ։

—Ոչ, ինչ հարկաւոր է. միայն թող ասի, թէ բարև էր անում, ուրիշ բան պէտք չէ։ Իսկ այժմ ես դարձեալ դէպի իմ շներս դառնամ։ Զարմանք բան. ուզում եմ, որ միտքս կանգ առնի մահուան վրայ, բայց բան չի դուրս գալիս։ Աչքիս մի ինչ որ բիծ է երևում... ուրիշ ոչինչ։

Նա դարձեալ ծանր ծանր շուռ եկաւ պատի կողմը. իսկ Վասիլիյ Իւանովիչը դուրս եկաւ առանձնասենեակից և, կնոջ ննջարանին հասնելով, հէնց ծնկան վրայ վէր ընկաւ սուրբի պատկերի առաջ։

—Աղօթք արա, Արինա, աղօթք արա,—հառաչեց նա,—զաւակներս մեռնում է։

Բժիշկը, հէնց այն գաւառական բժիշկը, որի մօտ խաբանաքար չէր գտնուել, եկաւ և, հիւանդին նայելով, խորհուրդ տուեց սպասողական եղանակի հետևել, և իսկոյն էլ մի քանի խօսք ասեց, թէ կարելի է որ առողջանայ։

—Իսկ դուք տեսած կա՞ք, որ իմ դրութեան մարդիկ Եղիսեան դաշտ գնացած չլինեն,—հարցրեց Բազարովը և, յանկարծ բռնեց գահաւորակի կողքին կեցած ծանր սեղանի ոտքից, ցնցեց ու տեղից շարժեց։

—Ոյժս, բոլոր ոյժս դեռ վրաս է, բայց դարձեալ մեռնելու եմ...։ Ծեր մարդը որ մեռնէ, գոնէ նա կեանքից կշտացած կ'մեռնի, իսկ ես...։Դէ գնա ու ժխտիր, մահ չկայ ասա։ Նա քեզ կ'ժխտի, պրծաւ գնաց։ Այդ ո՞վ է այդտեղ լաց լինում,—աւելացրեց նա մի քիչ լռելուց յետոյ։—Մայրս է։ Խե՜ղճ։ Ու՞մ է այսուհետև իւր հրաշալի բորշը ուտացնելու։ Դու էլ, Վասիլիյ Իւանիչ, կարծես լաց ես լինում։ Դէհ, թէ քրիստոնէու-

թիւնը չի օգնում, գոնէ փիլիսոփայ, ստոյիկ դարձիր։ Չէ՞ պարծենում էիր, թէ փիլիսոփայ ես։

—Ես ինչ փիլիսոփայ եմ,—հեկեկաց Վասիլիյ Իւանովիչն ու արտասուքի կաթիլները ծոր տուին երեսին։

Ժամ ժամի վրայ Բազարովի դրութիւնը ծանրանում էր. հիւանդութիւնն արագ ընթացք ստացաւ, որ սովորական է վիրահատական թունաւորման միջոցին։ Նա դեռ յիշողութիւնը չէր կորցրել և ինչ որ ասում էին, հասկանում էր։ Նա դեռ մաքառում էր։ «Չեմ ուզում զառանցել», շշնջում էր բռունցքները հուպ տուած,—«ինչ յիմարութիւն»։ Եւ իսկոյն էլ ասում էր. «Հը՛, ութնից որ տասը հանենք, քանի՞ կ'մնայ»։ Վասիլիյ Իւանովիչը գժուածի նման էր, մէկ այս միջոցն էր առաջարկում, մէկ այն, և շարունակ որդու ոտքերն էր ծածկում միայն։ «Սառը սաւանի մէջ փաթաթել...սիրտ թափելու դեղ... փորին տաքացնող...արիւն առնել», ասում էր նա լարուած դրութեամբ։ Բժիշկը, որին նա աղաչել էր մնալ, համաձայնում էր նրա ասածներին, հիւանդին լիմոնադ էր խմցնում, իսկ իրեն համար էլ մերթ ծխամորճ էր ուզում, մերթ «ամրացնող-ջերմացնող», այսինքն օղի։ Արինա Վլասիևնան նստած էր դրան տակ ցածլիկ աթոռի վրայ և միայն ժամանակ առ ժամանակ աղօթելու համար էր դուրս գնում. մի քանի օր առաջ նրա ձեռքից ընկել կոտրուել էր արդ ու զարդի հայելին, իսկ այս բանս նա միշտ վատ նշան է համարել. ինքը Անֆիսուշկան էլ բան չէր գտնում նրան ասելու։ Տիմոֆէիչը գնացել էր Օդինցովային իմաց տալու։

Գիշերս Բազարովի համար վատ անցաւ...։Սաստիկ տաքութիւնը նրան տանջում էր։ Առաւօտեան դէմ մի քիչ թեթևացաւ։ Նա խնդրեց, որ Արինա Վլասևնան գայ, իւր մազերը սանդրէ, համբուրեց նրա ձեռքը, և մի երկու ումպ թէյ խմեց։ Վասիլիյ Իւանովիչը մի քիչ կենդանացաւ։

—Փառք Աստուծոյ, ասում էր նա,—ճգնաժամը հասաւ... ճգնաժամը հասաւ։

—Ա՜, ինչ նշանակութիւն ունի բառ ասածդ,—խօսեց Բազարովը։—Նա այդ բառը՝ «ճգնաժամը»՝ գտաւ և արդէն մխիթարուած է։ Զարմանալի բան, որ մարդս դեռ հաւատում է բառերի։ Նրան, օրինակ, յիմար անուանես ու չծեծես, նա կը տխրի, բայց եթէ խելօք ասես ու փող էլ չտաս—գոհութիւն կզգայ։

Բազարովի այս փոքրիկ խօսուածքը, որ նրա առաջուայ կծու ոճն էր յիշեցնում, Վասիլիյ Իվանովիչին խանդակաթ դրութեան հասցրին։

—Ապրես․ հրաշալի է, հրաշալի,—բացականչեց նա ու այնպէս ձեւացրեց, որպէս թէ ծափ է տալիս։

Բազարովը տխուր քմծիծաղեց։

—Հը՛, ինչպէս է ուրեմն, քու ասելովդ ճգնաժամն անցա՞ւ, թէ հասել է։

—Հիմի դու աւելի լաւ ես, ահա իմ տեսածս. ահա ինչն է ինձ ուրախացնում,—պատասխանեց Վասիլիյ Իվանովիչը։

—Դէ շատ լաւ ուրեմն. ուրախանալը երբեք վատ չէ։ Իսկ ա՞ն մօտ է, ուղարկեցի՞ր։

—Հապա չ՚ուղարկեցի՞։

Բազարովի դրութեան թեթեւութիւնը երկար չքաշեց։ Հիւանդութեան (թափը) գրգիռը կրկնուեց։ Վասիլիյ Իւանովիչը նստած էր Բազարովի մօտ։ Այնես թէ մի առանձին տանջանք չարչարում էր նրան. մի քանի անգամ ուզեց բան ասել, բայց չկարողացաւ։

—Եւգենիյ,—ասաց նա վերջապէս,—զաւակս, աչքիս լոյսը, սիրելի զաւակս։

Այս անսովոր բացականչութիւնը ներգործեց Բազարովի վրայ։... Նա գլուխը փոքր ինչ շուռ տուեց և, ըստ երեւոյթին, իրեն ճնշող մոռացութեան լուծից ազատուելու ջանք գործ դնելով ասաց։

—Ի՛նչ է, հայր իմ։

—Եւգենիյ,—շարունակեց Վասիլիյ Իւանովիչը, և Բազարովի առաջ ծունկի եկաւ, թէպէտ և Բազարովն աչքը չէր բաց արել և կարող չէր նրան տեսնել.—Եւգենիյ, դու այժմ աւելի լաւ ես. Աստուած կտայ կառողջանաս. բայց օգուտ քաղիր այս միջոցից, ինձ ու մօրդ մխիթարիր, քրիստոնէական պարտքդ կատարիր։ Որ իմանաս, թէ ինչ եմ զգում այս բանը քեզ ասելիս, սարսափելի է. բայց աւելի սարսափելի կ՚լինի... ախր յաւիտեանս է, Եւգենիյ... մի միտք արա, թէ ինչ...

Ծերունի ձայնը կտրուեցաւ, իսկ որդու դէմքի վրայով, թէպէտ դարձեալ պառկած էր աչքը փակած, մի տարօրինակ բան անցկացաւ։

—Թէ որ այդ բանը ձեզ կմխիթարէ, ինչու չէ, չեմ մերժիլ,—ասաց նա վերջապէս, բայց ինձ թւում է, որ շտապելու բան չկայ։ Ինքդ ես ասում, թէ այժմ աւելի լաւ եմ։

—Լաւ ես, Եւգենիյ, լաւ. բայց ո՞վ գիտէ, հօ ամեն բան Աստուծու ձեռին է, իսկ քրիստոնէական պարտքդ կատարելուց յետոյ...

—Ոչ, դեռ կսպասեմ,—կտրեց խօսքը Բազարովը։—Քեզ հետ ես էլ համաձայն եմ, որ ճգնաժամը հասաւ։ Իսկ եթէ մենք սխալ ենք, ի՛նչ արած. հօ յուշակորոյս մարդկանց էլ են հաղորդում։

—Այդ ի՛նչ ես ասում, Եւգենիյ...։

—Ես կսպասեմ։ Իսկ այժմ ուզում եմ քնել։ Մի՛ խանգարիլ։

Եւ նա գլուխը առաջուայ տեղը դրեց։

Ծերունին տեղից վեր կացաւ, նստաւ բազկաթոռի մէջ և, կզակը ձեռքի մէջ առած, սկսաւ եղունգները կրծոտել...։

Յանկարծ ռեսսորով կառքի ձայնը, այն ձայնը, որ առանձնապէս նկատելի է լինում գիւղական խուլ տեղում, հասաւ ծերունու ականջին։ Թեթեւ անիւներն աւելի ու աւելի մօտենում էին. ահաւասիկ լսուեց ձիերի փռնչոցը... Վասիլիյ Իւանովիչը վեր թռաւ տեղից ու դէպի պատուհան վազեց։ Բակը ներս էր մտնում չորս ձի լծած մի երկտեղ կարետ։ Առանց իրեն հաշիւ տալու, թէ ի՛նչ կարող էր լինել սա, մի տեսակ անմիտ ուրախութեամբ բռնուած, դուրս վազեց դէպի պատշգամբ...։ Նշանազգեստ հագած մի սպասաւոր բաց արաւ կառքի դուռը. սեւ քօղ գցած մի տիկին, վրան սեւ թիկնոց առած, դուրս էր գալիս կառքից...։

—Ես Օդինցեան եմ,—ասաց նա։—Ո՞ղջ է Եւգենիյ Վասիլիչը։ Դուք հա՞յրն էք։ Հետս բժիշկ եմ բերել։

—Բարի հրեշտակ,—բացականչեց Վասիլիյ Իվանովիչը և բռնելով տիկնոջ ձեռքը ջղաձգաբար հուպ տուեց շրթունքին, մինչդեռ Աննա Սերգէեւնայի բերած բժիշկը, ակնոցաւոր, գերմանացու տիպարքով մի կարճլիկ մարդ առանց շտապելու դուրս էր գալիս կառքի միջից։

—Ողջ է, ողջ է դեռ իմ Եւգենիյս, և այժմ արդէն կփրկուի նա։ Կնիկ, ա կնիկ... Երկնքից հրեշտակ է իջել...

—Ինչ է եղել, Աստուած,—թոթովեց պառաւն ընդունարանից դուրս վազելով, և առանց մի բան հասկանալու, հէնց այդտեղ, նախասենեակում ընկաւ Աննա Սերգէեւնայի ոտքերը և սկսեց, գժի պէս, նրա շրջազգեստը համբուրել։

—Ի՞նչ էք անում, այս ինչ էք անում,—կրկնում էր Աննա Սերգէևնան. բայց Արինա Վլասևնան նրան ականջ չէր դնում, իսկ Վասիլիյ Իվանովիչը շարունակ կրկնում էր, «հրեշտակ, հրեշտակ»։

—Wo ist der Kranke? Հիւանդն ուր է,—վերջապէս ասաց բժիշկը զայրացած։

Վասիլիյ Իւանովիչն ուշքի եկաւ։

Այստեղ է. այստեղ, եկէք խնդրեմ, վերտեստեր հերր կոլլեգա,—աւելացրեց նա ըստ հին սովորութեան։

—Է՛, ասաց գերմանացին ու թթու-թթու ժպտաց։

Վասիլիյ Իվանովիչը նրան առանձնասենեակ տարաւ։

—Աննա Սերգէևնա Օդինցևայի բերած բժիշկն է,—ասաց նա որդու ականջին կռացած,—ինքն էլ այստեղ է։

Բազարովը յանկարծ բաց արաւ աչքերը։

—Ինչ ասացիր։

—Ասում եմ, որ Աննա Սերգէևնա Օդինցևան այստեղ է, և այս պարոն բժշկին բերել է քեզ համար։

Բազարովը աչքը շուրջ ածեց։

—Նա այստեղ է…ուզում եմ նրան տեսնել։

—Դու նրան կտեսնես, Եւգենիյ, բայց առաջ պէտք է խօսել պարոն բժշկի հետ։ Որովհետև Սիդոր Սիդորիչը գնաց (այդ էր գաւառական բժշկի անունը), ուստի և հիւանդութեան ամբողջ պատմութիւնը նրանց կպատմեմ, և մենք մի փոքրիկ խորհուրդ կկազմենք։

Բազարովը մտիկ տուեց գերմանացուն։

—Դէ, խօսում էք, շուտ խօսեցէք, միայն լատիներէն չլինի. ես հօ լատիներէն հասկանում եմ, թէ ի՛նչ է նշանակում jam moritur.

—Der Herr scheint des Deutschen mächtig zu sein,—սկսեց Էսկուլապի նոր սանը՝ Վասիլիյ Իւանովիչին դառնալով։

—Իխ…հաբէ…աւելի լաւ է ռուսերէն խօսէք,—ասաց ծերունին։

—Ա՛, լաւ…,—և խորհուրդը սկսուեց։

Կէս ժամ յետոյ Աննա Սերգէևնան Վասիլիյ Իւանովիչի հետից մտաւ առանձնասենեակ։ Բժիշկն արդէն նրան կամացուկ յայտնել էր, թէ հիւանդի առողջանալուն յոյս չկայ։

Աննա Սերգէևնան նայեց Բազարովին…և կանգ առաւ դրանը՝—այն աստիճանի ապշեցրեց նրան այս բորբոքուած

բայց և միևնոյն ժամանակ մեռելային դէմքը իւր պղտոր աչքերով, որոնք ուղղուած էին իրեն։ Ուղղակի մի տեսակ սառըն ու չարատանջ վախ եկաւ վրան. այն միտքը, թէ ինքն այսպիսի զգացմունք չէր զգայ, թէ որ իսկապէս սիրելիս լինէր Բազարովին—վայրկենաբար անցաւ նրա մտքով։

—Շնորհակալութիւն,—զօրով խօսեց Բազարովը.—այս բանին չէի սպասում։ Բարի գործ է այդ։ Ահաւասիկ, ինչպէս որ խոստացել էիք, մի անգամ էլ տեսնուեցանք։

—Աննա Սերգէևնան այնքան բարի էր,—սկսեց Վասիլիյ Իւանովիչը…

—Հայր, մեզ մենակ թող։ Աննա Սերգէևնա, թոյլ կտա՞ք։ Կարծեմ այժմ…

Նա գլխովը ցոյց տուեց իւր փռուած անզօր մարմինը։

Վասիլիյ Իւանովիչը դուրս ելաւ։

—Էհ, շնորհակալութիւն,—կրկնեց Բազարովը։—Արքայավայել է ձեր արածը։ Ասում են, թէ թագաւորներն էլ այցելում են մեռնողներին։

—Եւգենիյ Վասիլևիչ, ես յոյս ունիմ, որ…

—Է՛հ, Աննա Սերգէևնա, աւելի լաւ է ճիշդը ասենք։ Իմ բանս պրծած է։ Անուի տակն ընկայ։ Բանից դուրս է գալիս, որ ապագայի վրայ մտածելու հարկաւորութիւն էլ չի եղել։ Մահը հին բան է, բայց ամեն մէկիս համար էլի նոր է։ Մինչև այժմս դեռ չեմ վախենում… շուտով կհասնի անգիտակցական դրութիւնը, և ֆի՛ւտ։ (Նա թեթևակի շարժեց ձեռքը)։ Էհ, էլ ի՛նչ ասեմ…ձեզ սիրում էի. դա առաջ էլ ոչ մի իմաստ չունէր, իսկ այժմ հօ—աւելի ևս։ Սէրը—ձև է, իսկ իմ սեպհական ձևս արդէն քայքայւում է։ Աւելի լաւ է ասեմ, թէ—ինչքան փառաւոր էք։ Ահաւասիկ հէնց այժմս էլ կանգնած էք—այսպէս սիրուն…

Աննա Սերգէևնան ակամայ ցնցուեցաւ։

—Ոչինչ չկայ, անհանգիստ մի լինիք…նստեցէք այնտեղ… ինձ մի մօտենաք, որովհետև հիւանդութիւնս վարակիչ է։

Աննա Սերգէևնան արագութեամբ անցաւ սենեակը և նստեց Բազարովի պառկած դահաւորակի մօտի բազկաթոռի վրայ։

—Վեհանձն,—շշնջաց Բազարովը։—Ա՜հ, ինչքա՜ն մօտ էք, և ինչ ջահել, թարմ, մաքուր…այս անպիտան սենեակի

մէջ...էհ, մնաք բարով։ Ապրեցէք երկար, դա ամենից լաւն է, և քանի ժամանակ կայ-օգտուեցէք։ Դուք մի տեսէք, թէ ինչ այլանդակ պատկեր է՝—կիսակենդան որդ եմ դարձել, բայց էլի բանի մէջ եմ լինում ինձ համար։ Չէ, ես էլ մի ժամանակ մտածում էի՝—ինչքա՜ն գործեր պիտի անեմ, չեմ մեռնի. ինչպէս թէ մեռնել. դեռ գործ կայ անելու. ես հո հսկայ եմ։ Իսկ այժմս հսկայի բոլոր բանն ու գործն այն է, թէ ինչպէս անի, որ վայելուչ կերպով մեռնի, թէպէտ ում հոգն է նրա մեռնելը...։Ինչ ուզում է լինի պոչ չեմ խաղացնիլ։

Բազարովը լռեց և սկսաւ ձեռքով իւր բաժակը փնտռել։ Աննա Սերգէևնան, առանց ձեռնոցները հանելու ու երկչոտութեամբ շունչ քաշելով, ջուրը տուեց նրան։

—Դուք ինձ կ'մոռանաք,—նորից խօսեց Բազարովը,—մեռածը սաղի ընկեր չի։ Հայրս կ'սկսի ձեզ պատմել, թէ ինչպիսի մարդ է կորցնում Ռուսիան...։Այդ դատարկ բան է. բայց ծերուկին չաշխատէք հակառակն ապացուցանել։ Ինչքան չլինի էլի մխիթարութիւն է։ Մօրս էլ սիրտ տուէք։ Ձեր շրջաններում ցերեկը ճրագով որ մանգաք, այդպիսի մարդիկ չէք գտնիլ...։ Ես պէտք եմ Ռուսիային...։Ոչ, երևում է, որ պէտք չեմ։ Եւ ով է պէտքական։ Կօշկակարը պէտք է, դերձակը պէտք է, մսագործը...միս է ծախում...մսագործը...սպասեցէք, մտքերս խառնւում են...։Այստեղ անտառ կայ...

Բազարովը ձեռքը ճակատին դրեց։

Աննա Սերգէևնան կռացաւ նրա վրայ։

—Եւգենիյ Վասիլևիչ, ես այստեղ եմ..

Բազարովը մէկէն ձեռքը քաշեց և վերկացաւ տեղից։

— Մնաք բարով,—ասաց նա յանկարծական ուժով, և աչքերը վերջին փայլով փայլեցին։—Մնաք բարով...Ախր...այն ժամանակ ես ձեզ չհամբուրեցի...։Փչեցէք առկայծող կանթեղի վրայ և թող մարի...։

Աննա Սերգէևնան շրթունքները կպցրեց նրա ճակատին։

—Եւ հերիք է,—ասաց Բազարովը և ընկաւ բարձի վրայ։—Այժմ...խաւար է...

Աննա Սերգէևնան կամացուկ դուրս գնաց։

—Ինչպէս է,—շշնջալով հարցրեց նրան Վասիլիյ Իւանովիչը։

—Քնեց,—պատասխանեց նա հազիւ լսելի ձայնով։

Բազարովն այլևս չպիտի զարթնէր։ Երեկոյեան դէմ նա

գիտակցութիւնը բոլորովին կորցրեց, իսկ միւս օրը մեռաւ։ Տէր Ալէքսէյը կրօնական ծէսերը կատարել էր նրա վրայ։ Երբ որ վերջին օծումն էին կատարում, երբ որ սուրբ մեռոնը կպաւ Բազարովի կրծքին, նրա մէկ աչքը բացուեցաւ և, երբ որ տեսաւ զգեստաւորուած քահանային, ծխացող բուրվառը, սրբերի պատկերների առաջ վառած մոմերը, կարծես թէ սարսափի ցնցման պէս մի բան արտափայլեցաւ նրա մեռելային դէմքի վրայ։ Իսկ երբ արձակեց վերջին շունչը և տան մէջ ընդհանուր կոծ բարձրացաւ, Վասիլիյ Իւանովիչը խելքը կորցրածի պէս դարձաւ։ «Ես ասում էի, թէ կ'բողոքեմ» խռպոտ ձայնով կանչում էր նա, բորբոքուած ու ծամռուած դէմքով՝ օդի մէջ բռունցքը շարժելով, ասես թէ մէկին սպառնալիք էր տալիս «և կ'բողոքեմ, կ'բողոքեմ»։ Բայց Արինա Վլասևնան, արտասուքի մէջ թաթախուած, քաշ էր ընկել նրա վզովը, և երկուսը միատեղ երեսի վրայ վայր ընկան գետին։ «Այդ կերպով էլ», յետոյ ծառաներին պատմում էր Անփիսուշկան, «կողք կողքի խոնարհեցրին գլուխները, հէնց գիտենաս կէս օրին մակաղած գառներ լինէին...»։

Բայց կանցնի կէս օրուայ տօթը, կ'գայ երեկոն ու գիշերը, այնուհետև կ'վերադառնան խաղաղ բնակարան, ուր քաղցր քունը կտիրէ տանջուածներին ու խոնջացեալներին...։

XXVIII

Վեց ամիս անցաւ։ Ձմեռն էր. անամպ սառնամանիքի դաժան լռութիւնը տիրել էր ամեն տեղ. պինդ ձիւնը ոտքերի տակ ճրճռում էր. ծառերը պատած էին վարդագոյն եղեամով. երկինքը դժգոյն զմրուխտի գոյն ունէր. ծխնելոյզների վրայ մուխի քուլաները գլխարկի նման կեցած էին. առվայրկեան մի բացուող դռներից գոլորշին բարդ-բարդ դուրս էր պրծնում. մարդկանց դէմքը թարմ, ասես թէ կծոտած լինէր. մրսած ձիերը հապճեպով առաջ են վազում։ Յունուարի մէջ էր, օրը մօտենում վախճանին. երեկոյեան ցուրտը աւելի ու պինդ հուպ էր տալիս անշարժ օդը, և արիւնագոյն վերջալոյսը արագ-արագ մարում էր։ Մարյինոյի տան պատուհանները նոր նոր էին լուսաւորւում։ Պրակոֆիյիչը սև ֆրակ ու սպիտակ ձեռնոց հագած, առանձնապէս հանդիսաւոր կերպով եօթը հոգու համար սեղան էր բաց անում։ Դրանից մի շաբաթ առաջ, ծխա-

կան փոքրիկ եկեղեցում, սուս ու փուս, համարեա առանց վկաների երկու պսակ էր կատարուել. պսակուել էին Արկադին ու Կատեան և Նիկոլայ Պետրովիչն ու Ֆենիչկան. իսկ այս օրը Նիկոլայ Պետրովիչը հրաժեշտի ճաշ էր տալիս իւր եղբօրը, որ գործով Մոսկուա էր գնում։ Աննա Սերգէևնան էլ նորապսակներին առատօրէն բաժին հանելով, պսակից անմիջապէս յետոյ նոյնպէս Մոսկուա էր գնացել։

Ուղիղ ժամը երեքին բոլորն էլ սեղանի շուրջ էին հաւաքուած։ Միտեային էլ էին այստեղ նստացրել. նրա համար արդէն ճամկաւոր ապարօշ կրող դայեակ էին բռնել։ Պաւէլ Պետրովիչը բազմել էր Կատեայի ու Ֆենիչկայի միջև. ամուսիններն էլ իրենց կանանց կողքին էին տեղաւորուել։ Մեր ծանօթները վերջին ժամանակներս փոխուել էին՝ ամենքն էլ կարծես թէ գեղեցկացել ու առնականութիւն էին ստացել. մենակ Պաւէլ Պետրովիչն էր լղարել, որից սակայն նրա դէմքի արտայայտիչ գծերն աւելի գեղանի ու գրանսենիօրական էին դարձել...։ Հէնց Ֆենիչկան էլ ուրիշ կին էր դարձել։ Մետաքսեայ նոր զգեստ հագած, թաւշեայ լայն գլխազարդը մազերին, ոսկէ շղթան վզին անշարժ նստած էր յարգանքով. նրա վրայ երեւում էր յարգանք դէպի ինքը, դէպի ամեն բան, որ շրջապատել էր նրան, և մի այնպիսի ձևով ժպտում էր, հէնց գիտենաս ուզում էր ասել. «Դուք ինձ ներեցէք. մեղաւորը ես չեմ»։ Եւ մենակ նա չէր ժպտացողը. ամենքն էլ ժպտում էին, ու նոյնպէս ասես թէ ներողութիւն խնդրում, ամենքն էլ մի քիչ անհամ էին զգում իրենց, մի քիչ տխուր էին, բայց իսկապէս խիստ լաւ դրութեան մէջ էին։ Ամեն մէկն աշխատում էր ծիծաղելի պատրաստակամութեամբ ծառայել միւսին, հէնց իմանաս ամենքն էլ խօսք մէկ եղած՝ մի տեսակ պարզամիտ կատակերգութիւն էին ներկայացնում։ Ամենքից հանգիստը Կատեան էր. նա միամիտ վստահութեամբ նայում էր չորս կողմը, և կարելի էր նկատել, որ Նիկոլայ Սերգէեւիչը արդէն գժուածի պէս սիրել էր նրան։ Ճաշը վերջանալուց առաջ Նիկոլայ Սերգէեւիչը վերկացաւ և, բաժակը ձեռքն առած, ասաց Պաւել Պետրովիչին.

—Դու հեռանում ես մեզանից...դու հեռանում ես մեզանից, սիրելի եղբայր,—սկսեց նա,—իհարկէ, կարճ ժամանակով. բայց և այնպէս չեմ կարող չյայտնել քեզ, որ ես...որ մենք... քանի ես... քանի մենք...Հէնց դժբաղդութիւնն էլ այն է, որ

մենք ճառեր ասել չգիտենք։ Արկադիյ, դու ասա։

—Ոչ հայրիկ, ես պատրաստուած չեմ։

—Իսկ ես շատ լաւ եմ պատրաստուել։ Պարզը, եղբայր, թող քեզ համբուրեմ, ցանկանամ ամենայն բարիք, և շուտով վերադարձիր եկ մեզ մօտ։

Պաւէլ Պետրովիչն ամենքի հետ էլ համբուրուեցաւ. Միտեային էլ իհարկէ. բացի դրանից համբուրեց նաև Ֆենիչկայի ձեռքը որը սա դեռ մի շնորքով տալ էլ չգիտէր, և, երկրորդ անգամ լցրած բաժակը խմելով, խոր թառանչ քաշելով ասաց. «Բաղդաւոր լինիք, բարեկամներս։ Farewell»!—Անգլիական այս յաւելուածն աննկատելի անցաւ. սակայն ամենքն էլ զգացուած էին։

«Բազարովի յիշատակին» շշնջաց Կատեան ամուսնու ականջին, և բաժակը խփեց նրա բաժակին։ Արկադին, ի պատասխանի, պինդ սեղմեց կնոջ ձեռքը, բայց այդ բաժակը բարձրաձայն առաջարկելու սիրտ չարաւ։

Սրանով էլ պիտի վերջանար։

Բայց իցէ թէ ընթերցողներից մէկն ու մէկը ուզէ իմանալ, թէ ինչ է անում այժմ, հէնց այժմ մեր նկարագրած անձերից ամեն մէկը։ Պատրաստ ենք գոհացում տալու։

Մօտերքս Աննա Սերգէևնան ամուսնացաւ, ոչ սիրահարուած, ոչ էլ համոզումով, ռուսական ապագայ գործիչներից մէկի հետ, որ մի շատ խելօք, օրէնսգէտ մարդ է՝ գործնական հաստատուն խոհերով, անդրդուելի կամքով և խօսելու զարմանալի շնորքով,—դա մի բարի և սառցի նման սառն բնաւորութեամբ դեռ մի երիտասարդ մարդ էր։ Նրանք շատ հաշտ են ապրում, և շատ կարելի է երջանիկ էլ լինին...շատ կարելի է և սիրեն իրար։ Իշխանուհի Կ-ն մեռաւ և նոյն իսկ մահուան օրն էլ մոռացուեցաւ։ Հայր ու որդի Կիրսանովները բնակութիւն հաստատեցին Մարյինօյում։ Նրանց գործերը կարգի են ընկնում։ Արկադին գործին տաք կերպով կպած է և նրա «ագարակն» արդէն բաւական խոշոր եկամուտ է բերում։ Նիկոլայ Պետրովիչը Հաշտարար միջնորդ է դարձել և բոլոր ուժով աշխատում է. նա շարունակ շրջում է իրեն յանձնուած տեղերը. երկար ճառեր է խօսում (նա այն կարծիքին է, թէ գիւղացիներին պէտք է խելքի բերել», այսինքն միևնոյն բառերի յաճախ կրկնութեամբ նրանց զահլան տանել), բայց դարձեալ, ճիշտն ասած, լիովին գոհ չի կացուցանում ոչ կըր-

թուած ազնուականներին, որոնք սովոր են մերթ չխկով և մերթ մելամաղձօրէն խօսել մանցիպացիայի մասին (ան-ը քթի մէջ արտասանելով), ոչ էլ անկիրթ ազնուականներին, որոնք՝ առանց այլեայլութեան հայհոյում են «էս մունցիպացիան»։ Սրանց համար էլ, նրանց համար էլ շատ կակուղ մարդ է նա։ Կատերինա Սերգէևնան որդի ունեցաւ անունը Կոլեա, իսկ Միտիան կարգին վազում է ու կանոնաւոր էլ խօսում։ Ֆենիչկան, Ֆեդոսիա Նիկոլաեւնան, ամուսնուց ու Միտեայից յետոյ, ոչ ոքին այնպէս չի պաշտում, ինչպէս իւր հարսին, և երբ որ սա նըստում է դաշնամուր ածելու, պատրաստ է ամբողջ օրերով նրանից չբաժանուել։ Ի դէպ յիշենք նաև Պեօտրին։ Յիմարութիւնից ու իրան ծանր պահելուց նա բոլորովին ընդարմացել է, բոլոր ե-երը եու է արտասանում, բայց նա էլ ամուսնացաւ և բաւական էլ օժիտ առաւ կնոջ հետ, որը քաղաքացի բանջարաբոյծի այն աղջիկն է, որը երկու լաւ փեսացուների մերժել էր միմիայն նրան համար, որ ժամացոյց չունէին. մինչդեռ Պեօտրը չէ թէ միայն ժամացոյց, հապա և լաքաւոր անճիտք կօշիկ ունէր։

Դրեզդէնում, Բրիւլեան ճեմանոցում, ժամը երկսի ու չորսի միջև, ամենաբարձր դասակարգի զբօսանքի դուրս գալու միջոցին, կարող էք հանդիպել յիսուն տարեկանի մօտ, արդէն բոլորովին ալեւորած և ասես թէ պոդագրա ունեցող, բայց դեռ գեղեցիկ, նուրբ հագնուած մի մարդ, որ իւր վրայ կրում է այն առանձին կնիքը, որ ձեռք է բերւում միայն երկար ժամանակ հասարակութեան ամենաբարձր խաւերում ապրելով։ Այդ Պաւէլ Պետրովիչն է։ Նա առողջութիւնը կազդուրելու համար Մոսկուայից գնացել էր արտասահման և բնակութիւն էր հաստատել Դրեզդէնում, ուր աւելի անգլիացիների ու անցւոր ռուսների հետ է լինում։ Անգլիացիների հետ իրեն պարզ, համարեա համեստ, բայց ոչ առանց արժանապատուութեան է պահում. նրանք փոքր ինչ ձանձրալի են համարում նրան, բայց նրա մէջ տեսնում ու յարգում են կատարեալ ջենտըլմէնը a parfect gentleman»։ Ռուսների հետ աւելի բաց է, ազատութիւն է տալիս իւր մաղձին, իրեն էլ, նրանց էլ հեգնում. բայց նրա այս բոլոր արածն էլ շատ սիրուն, և անհոգ, և վայելուչ է դուրս գալիս։ Հետեւում է սլաւեանաֆիլների հայեացքներին—յայտնի է, որ դա բարձր դասակարգի մէջ très distingué է համարւում։ Ոչ մի ռուսական բան չի կարդում,

բայց նրա գրասեղանի վրայ գտնուած կայ գիւղական տրեխի նման շինած արծաթէ մոխրաման։ Ռուս տուրիստները շատ են նրա ետեւից քաշ ընկնում։ Մատվէյ Իլյիչ Կոլեազինը, որ ժամանակաւոր ընդդիմադիրների մէջ է, Բոհեմիայի հանքային ջրերն ուղեւորելիս, վեհօրէն այցելեց նրան. իսկ բնիկները, որոնց նա, սակայն, քիչ է հանդիպում, քիչ է մնում պաշտեն նրան։ Ոչ ոք այնպէս շուտ ու հեշտ կերպով կարող չէ պալատական երաժշտութեան, թատրոնի և այլ տոմսեր ձեռք բերել, ինչպէս der Herr Baron von Kirsanoff-ը. Նա ձեռքից եկածին չափ շարունակ բարիք է անում. թէպէտ քիչ-քիչ, բայց դարձեալ աղմուկ է հանում, աչքի ընկնում,—ի զուր հօ չէր մի ժամանակ հռչակ ունեցել բարձր դասակարգի մէջ. բայց ծանր է նրա կեանքը ..աւելի ծանր, քան թէ կ'կարծէր...։ Բաւական է աչքդ ձգես նրա վրայ ռուսաց եկեղեցում եղած միջոցին, երբ առանձնակի պատին կռթնած, մտքի ծովն է ընկնում և, շրթունքները պինդ սղմած, երկար ժամանակ մնում է անշարժ, յետոյ յանկարծ ուշքի է գալիս և սկսում համարեա թէ աննկատելի կերպով երեսը խաչ հանել...։

Կուկուշկինան էլ է արտասահման ընկել։ Այժմ Հայդելբերգումն է և արդէն ոչ թէ բնական գիտութիւններ է ուսումնասիրում, հապա ճարտարապետութիւն, որի համար, իւր ասելով, նոր օրէնքներ է գտել։ Առաջուայ նման դարձեալ մօտ մօտ է անում ուսանողներին, մանաւանդ երիտասարդ ռուս ֆիզիկոս ու քիմիկոսներին, որոնցով լցուած է Հայդելբերգը, և որոնք, սկզբներում իրերի վրայ իրենց ունեցած լուրջ հայեացքովը զարմացնում են գերմանացի պրոֆեսորներին, իսկ վերջը նոյն պրոֆեսորներին զարմացնում են իրենց կատարեալ անգործութեամբ ու բացարձակ ծուլութեամբ։ Այդպիսի երկու-երեք քիմիկոսների հետ, որոնք չեն կարողանում թթուածինն ազոտից զանազանել, բայց որոնք ամեն բան ժխտում են և լի են անձնապաստանութեամբ, մէկ էլ մեծն Ելիսեւիչի հետ, Պետերբուրգի քարերն է մաշում Սիտնիկովը, որ նոյնպէս պատրաստւում է մեծ դառնալու և, իւր ասելով, Բազարովի «գործն» է շարունակում։ Ասում են, մօտերքս չգիտեմ ով նրան ծեծել է, բայց նա էլ յետ չէր մնացել—մի մութ լրագրի մէջ խծկած մի մութ յօդուածի մէջ ակնարկութիւն էր արել, թէ իրեն ծեծողը վախկոտի մէկն է։ Նա այդ բանը հեգնութիւն է համարում։ Հայրը առաջուայ նը-

ման էլ ծառայեցնում է նրան, իսկ կինը նրան յիմար...և գրական մարդ է համարում։

Ռուսիայի հեռաւոր անկիւններից մէկում գիւղական մի հանգստարան կայ։ Սովորաբար մեր բոլոր հանգստարանների նման, դա էլ տխուր պատկեր ունի՝ շրջապատող փոսերը վաղուց լցուած են արօտով. փայտէ գորշ խաչփայտերը խոնարհել են և փտում իրենց մի ժամանակ ներկած կտրան տակին. տապանաքարերը բոլորն էլ տեղերից շարժուած են, հէնց գիտենաս մէկը տակից նրանց բրթում լինի. երկու-երեք ճղակոտոր ծառեր հազիւ հաղ շուաք են անում. ոչխարներն անարգել ման են գալիս գերեզմանների վրայ...Բայց գերեզմանների մէջ կայ մէկը, որին մարդու ձեռք չի կպչում, որին ոչ մի անասուն ոտքի տակ չի տալիս՝—մենակ թռչուններն են նստում նրա վրայ և արշալոյսին իրենց երգերն ասում։ Երկաթէ վանդակով պատած է դա, երկու ծայրին տնկած երկու մատղաշ եղևնի—Եւգենիյ Բազարովն է թաղուած այդտեղ։ Մօտիկ գիւղից այդ գերեզմանի վրայ յաճախակի գալիս են երկու զառամեալ ծերունիներ—մարդ ու կին։ Նրանք իրար օգնելով, ծանր քայլերով գալիս են գերեզման. մօտենում են վանդակապատին, ծնգան վրայ վայր ընկնում, և երկար, և դառնապէս լաց լինում, և երկար, և ուշադրութեամբ մտիկ տալիս լուռ քարին, որի տակ պառկած է իրենց որդին, մի երկու կարճ բան բառեր ասում միմեանց, քարի վրայից փոշին սրբում, մէկ՝էլ եղևնու ճիւղն ուղղում, և դարձեալ աղօթում, և չեն կարողանում բաժանուել այն տեղից, որն ասես թէ նրանց աւելի մօտ է կացուցանում իրենց որդուն, իրենց ուրդու յիշատակին...Միթէ իրենց աղօթքը, իրենց արտասուքն անպտուղ է մնալու։ Միթէ սէրը, սուրբ, անձնուէր սէրն ամենակարող չէ։ Ո՛հ, ոչ։ Ի՛նչ բուռն, մեղսալից, անհնազանդ սիրտ ուզում է ծածկուած լինի գերեզմանի մէջ, նրա վրայ բուսած ծաղիկները, իրենց անմեղ աչքերով անխռով կերպով մտիկ են տալիս մեզ՝—լոկ յաւիտենական հանգստի մասին չեն խօսում նրանք, «անտարբեր» բնութեան այս մեծ հանգստի մասին. նրանք խօսում են նաև յաւիտենական հաշտութեան և անվախճան կեանքի մասին...։

ԼՈԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ
ՀՍՍՌ-СССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0177459